ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ФИЛОЛОГИЯ
JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
PHILOLOGY

№ 2(50)
2026

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի
Журнал «Вестник Ереванского университета. Филология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"
Three issues of “Journal of Yerevan University. Philology” are published annually. The journal has been published since 2010. It is the successor of “Journal of Yerevan University” published in 1967-2009

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ – РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ – EDITORIAL BOARD

Գլխավոր խմբագիր՝
Главный редактор:
Editor-in-chief:
Ավետիսյան Լևոն *(բ.գ.թ., դոց., l.avetisyan@ysu.am)*
Аветисян Левон *(к.фил.н., доц.)*
Avetisyan Levon *(Ph.D. in Philology, Associate Professor)*

Ավետիսյան Յուրի *(բ.գ.դ., պրոֆ., yuriavetisyan@ysu.am)*
Аветисян Юрий *(д.фил.н., проф.)*
Avetisyan Yuri *(Sc.D. in Philology, Professor)*
Գասպարյան Սեդա *(բ.գ.դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ, sedagasparyan@ysu.am)*
Гаспарян Седа *(д.фил.н., проф., член.кор. НАН РА)*
Gasparyan Seda *(Sc.D. in Philology, Professor, NAS RA Corresponding Member)*
Զէքիեան Պօղոս-Լեւոն *(պ.գ.դ., ԳԱԱ արտասահմանյան թղթակից անդամ, պրոֆ., Իտալիա, zkybhs@gmail.com)*
Зекиян Погос-Левон *(д.ист.н., иностранный член НАН РА, проф., Италия)*
Zekiyan Poghos-Levon *(Sc.D. in History, NAS RA Foreign member, Professor, Italy)*

Կատվալյան Վիկտոր *(բ.գ.դ., պրոֆ., viktorkatvalyan@mail.ru)*
Катвалян Виктор *(д.фил.н., проф.)*
Katvalyan Victor *(Sc.D. in Philology, Professor)*
Կարապետյան Շուշան *(բ.գ.թ., ԱՄՆ, shushankarapetian@gmail.com)*
Карапетян Шушан *(к.фил.н., США)*
Karapetyan Shushan *(Ph.D. in Philology, USA)*
Մատթեոսյան Վարդան *(պ.գ.թ., ԱՄՆ, varny1@yahoo.com)*
Маттеосян Вардан *(к.ист.н., США)*
Matteosyan Vardan *(Ph.D. in History, USA)*
Մարտիրոսյան Հրաչ *(բ.գ.թ., Նիդերլանդներ, hrchmartirosyan@gmail.com)*
Мартиросян Грач *(к.фил.н., Нидерланды)*
Martirosyan Hrach *(Ph.D. in Philology, Netherlands)*
Չոլաքյան Հակոբ *(պ.գ.դ., Սիրիա,* hagopcholakian@hotmail.com*)*
Чолакян Акоп *(д.ист.н., Сирия)*
Cholakyan Hakob *(Sc.D. in History, Syria)*
Պետրոսյան Դավիթ *(բ.գ.դ., պրոֆ.,* davidpetrosyan@ysu.am*)*
Петросян Давид *(д.фил.н., проф.)*
Petrosyan David *(Sc.D. in Philology, Professor)*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❋ СОДЕРЖАНИЕ ❋ CONTENTS

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ
LITERARY CRITICISM

Աշխեն Ջրբաշյան – Արևմտահայ և արևելահայ տաղաչափության մի քանի սկզբունքային տարբերությունների մասին…… 6

Ашхен Джрбашян – О некоторых принципиальных различиях между западноармянской и восточноармянской метрикой

Ashkhen Jrbashyan – On Some Fundamental Differences between Western Armenian and Eastern Armenian Metrics

Նվարդ Վարդանյան – Աշխարհի առասպելաբանաստեղծական պատկերը Ավետիք Իսահակյանի պոեզիայում …… 26

Нвард Варданян – Мифопоэтический образ мира в поэзии Аветика Исаакяна

Nvard Vardanyan – The Mythopoetic Image of the World in the Poetry of Avetik Isahakyan

Նաիրա Բալայան – Կարոտի և նահանջի պատկերայնությունը Արմեն Դարյանի պատմվածքներում…… 36

Наира Балаян – Образность тоски и отступления в рассказах Армена Даряна

Naira Balayan – The Imagery of Longing and Withdrawal in Short Stories of Armen Daryan

Նաթելլա Հովակիմյան – Ժամանակի խնդիրը Էլվին Բրուքս Ուայթի «Շարլոթի սարդոստայնը» վեպում…… 51

Нателла Овакимян – Концепт времени в романе «Паутина Шарлоты» Элвина Брукса Уайта

Natella Hovakimyan – The Concept of Time in the Novel "Charlotte's Web" by Elwyn Brooks White

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫКОЗНАНИЕ
LINGUISTICS

Գայանե Մուրադյան, Անի Սիմոնյան – Իրականության կեղծում և թշնամանքի հրահրում. ատելության խոսք և պատերազմի խոսույթ (անգլ.)... 67
Гаянэ Мурадян, Ани Симонян – Фабрикация реальности и производство вражды: язык и конструирование военного дискурса (на англ.)
Gaiane Muradian, Ani Simonyan – Fabricating Reality and Manufacturing Enmity: Hate Speech and the Construction of War Discourse

Աստղիկ Չուբարյան, Մարինե Էվոյան – Ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունների խոսույթային գործաբանական գործառույթները որպես միջանկյալ կառույցներ (անգլ.)..... 79
Астгик Чубарян, Марине Эвоян – Дискурсивно-прагматические функции аппозитивных относительных предложений как вставных конструкций (на англ.)
Astghik Chubaryan, Marine Evoyan – Iscourse-Pragmatic Functions of Appositive Relative Clauses as Parenthetical Constructions

Նարինե Դիլբարյան, Մանե Աղաջանյան – Խաչատուր Աբովյանի ուղեգրությունների նորակազմությունները..... 92
Нарине Дилбарян, Мане Агаджанян – Новообразованные слова в путевых заметках Хачатура Абовяна
Narine Dilbaryan, Mane Aghajanyan – Neologisms in Khachatur Abovyan's Travel Writings

Սիրանուշ Հովհաննիսյան – Բայի ժխտական երևութաբանությունը. չլինելու անվանումը լեզվում..... 107
Сирануш Оганесян – Феноменология глагольного отрицания: номинация небытия в языке
Siranush Hovhannisyan – The Phenomenology of Verbal Negation: The Nomination of Non-Being in Language

Ռուզաննա Կարապետյան – Գիտական դիսկուրսում ժխտման արտահայտման եղանակները. միջլեզվական շարահյուսական հետազոտություն անգլերենում, ռուսերենում և հայերենում (ռուս.)..... 120
Рузанна Карапетян – Способы выражения опровержения в научном дискурсе: межъязыковое синтаксическое исследование в английском, русском и армянском языках
Ruzanna Karapetyan – Expression of Refutation in Scientific Discourse: A Cross-Linguistic Syntactic Study in English, Russian and Armenian (in Rus.)

Սիլվա Պապիկյան – Դիտարկումներ իրանական ծագման «դիմելաձև – կոչում – տիտղոս» իմաստային խմբի որոշ հատկական փոխառությունների մասին…… 131

Сильва Папикян – Наблюдения за некоторыми экзотизмами семантической группы «форма обращения – звание – титул» иранского происхождения

Silva Papikyan – Observations on Some Exoticisms of Iranian Origin in the Semantic Group "Form of Address – Rank – Title"

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ
ЖУРНАЛИСТИКА
JOURNALISM

Աստղիկ Ավետիսյան – Նշանային բազմաշերտություն հայկական թվային միջավայրում. լեզու, պատկեր և հանրային հաղորդակցություն …… 142

Астхик Аветисян – Семиотическая многослойность в армянской цифровой среде: язык, изображение и публичная коммуникация

Astghik Avetisyan – Semiotic Multilayering in the Armenian Digital Environment: Language, Image, and Public Communication

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 6-25
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.006

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՏԱՂԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԵՆ ՋՐԲԱՇՅԱՆ[*]
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննության են առնված արևելահայ և արևմտահայ բանաստեղծության մի շարք սկզբունքային տարբերություններ, որոնք ի հայտ են եկել հատկապես XIX դարի կեսերից: Դա մի ժամանակաշրջան էր, երբ աշխարհաբար լեզվի գեղարվեստականացման առաջին քայլերն էին արվում, և լեզվի երկու ճյուղերի հնչյունական, շեշտային, արտասանական տարբերությունները ցայտուն կերպով դրսևորվում էին նաև բանաստեղծական խոսքի կառուցման ձևերում: X-XII դդ. ձևավորված վանկական ոտանավորը մշակել էր մի շարք սկզբունքներ, որոնք անցան հաջորդ դարաշրջանների բանաստեղծությանը և հիմնավորվեցին Մխիթարյանների տեսական աշխատություններում (Բագրատունի, Հյուրմյուզյան, Տիրոյան, Ղազիկյան և այլք): Կարևորագույն հարցը, որ ծագում էր այդ ընթացքում, վերաբերում էր բանաստեղծական տողում կայուն շեշտերի (կոնստանտների) կարևորությանը և դրանց ռիթմաստեղծիչ գործառույթին: Մխիթարյանները պարտադիր էին համարում անդամահատումը շեշտով ընդգծելը, այնինչ XIX դարավերջի արևելահայ պոեզիան արդեն հրաժարվում էր այդ սկզբունքից և առավել կարևորում անդամների վանկական հավասարությունն ու շարահյուսական ինքնուրույնությունը: Երկու լեզուների տաղաչափական այդ տարբերություններն աննկատ չեն մնացել և նույնիսկ առիթ են տվել արևմտահայերի կողմից անհարկի քննադատությունների: Այդպիսի օրինակ է Ա. Ղազիկյանի գրախոսականը («Բազմավէպ», 1899, թիվ 4)՝ գրված Ալ. Ծատուրյանի բանաստեղծական ժողովածուի առիթով: Հայկական պոեզիայի երկու հատվածների համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ արևմտահայ վանկական ոտանավորը ինչ-որ առումով միջանկյալ ձև է, որը միավորում է շեշտային և վանկական սկզբունքները: Սա է նաև պատճառը, որ արևմտահայ պոեզիան նախընտրում էր քառավանկ և եռավանկ անդամները, քանի որ շեշտի կայուն դիրքի

[*] **Աշխեն Ջրբաշյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ
Ашхен Джрбашян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянской литературы и теории литературы ЕГУ
Ashkhen Jrbashyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the YSU Chair of History of Armenian Literature and Literary Theory
Էլ. փոստ՝ ashjrbashyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0002-7493-352X

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 18.05.2026
Գրախոսվել է՝ 25.05.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

պահանջը բանաստեղծներին ստիպում էր օգտագործել ավելի կարճ անդամներ, իսկ արևելահայ բանաստեղծության մեջ հնգավանկ անդամներն ավելի գերիշխող դիրք ունեն։

Բանալի բառեր – *տաղաչափություն, ռիթմագիտություն, վանկական ոտանավոր, շեշտի կայուն դիրք, բառաբաժանում, Արսեն Ղազիկյան, արևելահայ պոեզիա, արևմտահայ պոեզիա, բառերի սղում, բառերի երկարացում*

Ներածություն

Հայ տաղագիտության պատմության մեջ, սկսած XIX դարի կեսերից, առանցքային բանավեճ է մղվել հայկական ոտանավորի բնույթի հարցի շուրջ։ Այդ բանավեճը գերազանցապես վերաբերել է բանաստեղծական խոսքում շեշտերի ռիթմական դերին, տաղաչափական համակարգի բնույթին և այլն։ Սկզբնավորվելով դեռևս Մխիթարյանների օրոք՝ տաղաչափական հարցերի շուրջ մղվող վեճն ունեցել է դրսևորման տարբեր ձևեր և զարգացման տարբեր փուլեր։ Իսկ ավելի ուշ՝ 1930-ական թթ., Մ. Աբեղյանն իր «Հայոց լեզվի տաղաչափություն (մետրիկա)» աշխատության մեջ մշակեց մեր բանաստեղծության շեշտային բնույթի վերաբերյալ տեսությունը, որն ունեցավ ինչպես անվերապահ հետևորդներ, այնպես էլ լուրջ քննադատներ[1]։

Կարևորագույն հարցը, որ ծագում էր այդ ընթացքում, արտասանական շեշտերի դասավորության և դրանց ռիթմաստեղծիչ գործառույթի հարցն էր։ Եթե խնդրին մոտենանք տաղագիտության մեջ մշակված դասական սկզբունքներով, ապա պետք է արձանագրենք հետևյալ հանրահայտ իրողությունը. բառաշեշտի կայուն տեղ ունեցող լեզուներում, ինչպիսիք են, օրինակ, հայերենը և ֆրանսերենը, գործում են տաղաչափական այլ սկզբունքներ, քան բառի շեշտային դիրքից կախված լեզուներում (օրինակ՝ ռուսերենում, անգլերենում կամ գերմաներենում)։ Ընդ որում՝ այդ տարբերությունները բավական ակնառու դրսևորվել են ազգային բանաստեղծությունների զարգացման տարբեր փուլերում։ Ըստ այդմ՝ հայկական ոտանավորի առանցքային բնույթը համարվել է *վանկականը* (սիլաբիկը), իսկ շեշտի կայուն դիրք չունեցող լեզուներում՝ *վանկաշեշտականը* (սիլաբոտոնիկականը) կամ մաքուր *շեշտականը* (տոնիկականը)։ Մխիթարյանները (Ա. Բագրատունի, Էդ. Չյուրմյուզյան, Ա. Այտընյան, Ս. Գասպարյան և այլք) ակնհայտ նմանություններ են տեսել հայ և ֆրանսիական բանաստեղծությունների միջև՝ մասնավորապես շեշտադրելով, որ երկուսն էլ «թուական» (վանկական) բնույթ ունեն։ Այն լեզուները, որոնք ունեն բառաշեշտի կայուն տեղ (օրինակ՝ ֆրանսերենը և ճապոներենը), պոեզիայի ժամանակակից ուսումնասիրողներից Դ. Աթրիջն անվանում է «վանկա-ժամանակային», քանի որ այդտեղ շեշտը ռիթմաստեղծիչ գործոն չէ, և «խոսողն իբրև ռիթմային համարժեքություն ընկալում է ***վանկերը***, այլ ոչ թե **շեշտերի**

[1] Հայ տաղագիտության պատմության մեջ այս վեճերի մասին ավելի մանրամասն տե՛ս **Զրբաշյան Ա.,** Տաղաչափության հարցեր, Եր., «Արմավ», 2022, էջ 54-64, 89-105։

միջև եղած ընդմիջումները: Այս տարբերության ակնհայտ արտահայտություններից մեկն այն է, որ **վանկա-ժամանակային լեզուների** տաղաչափության մեջ **տողի վանկերի քանակն** ավելի կարևոր է, քան **շեշտերի թիվը և դրանց դասավորությունը» (**Attridge, 72): Ընդհանուր առմամբ նմանատիպ մոտեցում է դրսևորվում նաև հայկական ոտանավորի քննության նկատմամբ՝ դիտարկելով այն վանկական տաղաչափության համատեքստում:

Սակայն այս դեպքում ծագում է մեկ այլ հարց. արդյո՞ք վանկային հավասարության սկզբունքով կառուցվող հայկական ոտանավորը լիովին անտարբեր է շեշտերի և դրանց դիրքի նկատմամբ, թե՞ այնուհանդերձ կարելի է հանդիպել որոշ ձևերի, որոնցում շեշտերը ռիթմական որոշակի դեր են կատարում: Մյուս կողմից, ի՞նչն է առիթ տվել մի շարք ուսումնասիրողների (Մ. Աբեղյան)՝ հայկական ոտանավորը համադրելու, ասենք, գերմանական պոեզիայի հետ:

Հայ տաղագիտության մեջ թերևս ամենաքիչ ուսումնասիրված ոլորտը *ռիթմագիտությունն*[2] է (ռիթմիկան), այլ կերպ ասած՝ նույն չափերի շրջանակներում ռիթմական տարբեր իրացումների վերլուծությունը, որի միջոցով հնարավոր է բացահայտել ինչպես առանձին բանաստեղծների, այնպես էլ մի ամբողջ դարաշրջանի ռիթմական առանձնահատկություններն ու դրանց զարգացման ընթացքը: «Եթե **տաղաչափությունը** լայն իմաստով պատմական գիտակարգ է,- գրում է Բ. Տոմաշևսկին,- այսինքն՝ ուսումնասիրում է այն կոնկրետ չափերը, որոնք ունեն պատմականորեն սահմանափակ գոյություն, ապա **ռիթմագիտությունը** պատմական գիտակարգ է բառի առավել նեղ իմաստով, քանի որ այն ուսումնասիրում է տիպական երևույթներ, որոնք մշտապես դրսևորվում են բավականին նեղ և խիստ սահմաններում՝ բնութագրելով հեղինակի, գրական հոսանքի, դպրոցի կամ ժամանակաշրջանի բանաստեղծական անհատական ոճը» (ընդգծումը – Ա. Ջ.), (Томашевский, 2007, 67):

Ակնհայտ է, որ չափը և ռիթմը տարբեր իրողություններ են, և արտաքուստ նույն չափի շրջանակներում մենք կարող ենք հանդիպել ռիթմական միանգամայն տարբեր իրացումների: Դա ակնառու երևում է նույն չափով գրված տարբեր բանաստեղծությունների համեմատական քննության մեջ: **Խոսելով պոեզիայում չափի ու ռիթմի առաջնային և երկրորդային դերի մասին՝ ժամանակակից ուսումնասիրողներից մեկը գրում է. «Նախափորձնական (a-priori)** մոտեցման համար չափի գործառույթն առաջնային է, իսկ ռիթմը հանդես է գալիս իբրև դրա իրականացում: Դրան հակառակ՝ **փորձի վրա հիմնված (a-posteriori) մոտեցման** դեպքում առաջնային իրողությունը ռիթմն է, մինչդեռ չափը երկրորդային ձև է» (ընդգծումը – Ա. Ջ.), (Pilshchikov, 100): Ընդ որում՝ էական տար-

[2] Տարբեր ժողովուրդների տաղագիտական ուսումնասիրություններում ավանդաբար կողք կողքի հանդես են գալիս *մետրիկան* (տաղաչափական քննությունը) և *ռիթմիկան* (կոնկրետ չափերի ռիթմական տարաբնույթ դրսևորումները): Մենք նպատակահարմար ենք գտնում այդ ոլորտը առանձնացնել *ռիթմագիտություն* եզրույթով:

բերություններ կան բոլորին ծանոթ, բոլորի կողմից միանշանակ կերպով ընկալվող չափերի և նոր, անծանոթ չափերի միջև, որոնց ռիթմը հաճախ թաքնված է (ըստ Մ. Լոտմանի՝ *իմպլիցիտ է*), և դրանց պետք է աստիճանաբար ընտելանալ: Օրինակ՝ 8-վանկանի երկանդամ տողը, որը միջին դարերից մինչև մեր օրերը լայնորեն տարածված է մեր բանաստեղծության երկու հատվածներում, ի հայտ է բերում ռիթմական և հատածային դադարների աննախադեպ բազմազանություն, որը ակնառու երևում է ինչպես տարբեր դարաշրջանների, այնպես էլ տարբեր բանաստեղծների երկերի տաղաչափական քննության ընթացքում:

Մեզանում ռիթմագիտության խնդիրներն առավել ևս կարևորվում են մեր գրականության երկու հատվածների (արևելահայ և արևմտահայ) գոյությամբ, քանի որ գործ ունենք լեզվական որոշակիորեն տարբերվող իրողությունների, ինչպես նաև բանաստեղծական խոսքի կառուցման՝ դարերից եկած տարբեր ավանդութային համատեքստի հետ: Իսկ պոեզիայի տաղաչափական կառուցվածքը, ինչպես հայտնի է, անմիջականորեն արձագանքում է լեզվական տեղաշարժերին և ի ցույց դնում չափի ու ռիթմի հարաբերակցության հիմնախնդրի հետ կապված ամենատարբեր իրողություններ: Ցանկացած բանաստեղծություն սկիզբ է առնում ռիթմական որոշակի ազդակներից (տարբեր ուսումնասիրողներ տարբեր անվանումներ են տալիս այդ երևույթին՝ «ռիթմական իմպուլս» (Տոմաշևսկի), «ռիթմական դիզայն» (Ժիրմունսկի), «ռիթմական իներցիա», «ռիթմական ուղղություն» (Յակոբսոն) և այլն), որոնց միջոցով որևէ կոնկրետ չափ ստանում է իր մասնավոր իրացումը. «Ահա թե ինչու բանաստեղծության ներքին երևույթները պետք է դիտարկել, այսպես ասած, երեք կտրվածքով. նախ տվյալ կոնկրետ բանաստեղծության անհատական կառուցվածքի տեսանկյունից..., երկրորդ՝ այն տեսանկյունից, թե ինչպես է այդ անհատական փաստի մեջ իրացվում ընտրված ձևի սահմաններում գործող տաղաչափական որևէ ավանդական և անառարկելի օրենք (օրինակ՝ «ռուսական քառոտնյա յամբի ընդհանուր կանոնները»), և երրորդ՝ այն կոնկրետ ռիթմական իմպուլսի տեսանկյունից, որը կարգավորում է առանձին ձևերի տիպային ընտրությունը տվյալ բանաստեղծի երկերում կամ տվյալ բանաստեղծական ոճի շրջանակում» (Томашевский, 2007, 71):

Արևմտահայ և արևելահայ բանաստեղծության համեմատական քննություն

Այս առումով ուսումնասիրության հետաքրքիր նյութ են տալիս մեզանում լայնորեն տարածում գտած տաղաչափական մի շարք ձևերի ռիթմական իրացումների համեմատական քննությունը արևելահայ և արևմտահայ պոեզիաներում, դրանց նմանությունների և առանցքային տարբերությունների վերհանումը, ինչպես նաև տաղագիտական աշխատություններում այդ հարցերի լուսնաբանումը: Խոսքը վերաբերում է մասնավորապես շեշտերի դիրքի, դրանց կատարած դերի, անդամահատման սկզբունքների, բառաբաժանման եղանակների և նման հարցերի քննությանը:

Պետք է նշել, որ սիլաբիկ (վանկական) ոտանավորն իր դասական ձևերում, ինչպես հանդես է եկել, ասենք, ֆրանսիական կամ լեհական պոեզիաներում, վանկային հավասարությունից բացի, ունեցել է նաև շեշտերի կայուն դիրքից (այսպես կոչված՝ *կոնստանտներից*) որոշակի կախում, որը պայմանավորված է եղել պոետական որոշակի ավանդույթներով: Այսպես, ֆրանսիական «ալեքսանդրյան ոտանավորը», որով ստեղծագործել են ինչպես կլասիցիստները, այնպես էլ հետագա շրջանի բանաստեղծներն ու դրամատուրգները, յուրաքանչյուր 6-րդ վանկից հետո պահանջում էր որոշակի դադար և միաժամանակ շեշտ: Ռոման Յակոբսոնն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել տարբեր լեզուներում հատածների գործառութային և իմաստային տարբերություններին: Մասնավորապես, ֆրանսիական «ալեքսանդրյան ոտանավորում» (12/6+6/) հատածը (ցեզուրան) նույնականանում է *շարահյուսական դադարի* հետ (այսինքն՝ հատածներն առանձնացնում են շարահյուսական և իմաստային համեմատաբար ինքնուրույն միավորներ), և այդ իրողության արմատավորումը Յակոբսոնը կապում է Նիկոլա Բուալոյի «Քերթողական արվեստ»-ում ձևավորված ավանդույթի հետ: Սակայն, նրա համոզմամբ, պարտադիր չէ, որ հատածը համընկնի շարահյուսական միավորի ավարտի հետ. օրինակ, չեխական և ռուսական պոեզիաներում հատածը ոչ միայն շարահյուսական միավորն է բաժանում երկու մասի, այլև հաճախ նույնիսկ բառահատման պատճառ է դառնում: «Քանի որ Բուալոն նույնականացրեց ալեքսանդրյան ոտանավորի հատածը շարահյուսական դադարի հետ,- գրում է Ռ. Յակոբսոնը,- հետագայում դա հանգեցրեց այդ երկու հասկացությունների (հատածի և դադարի – *Ա.Ջ.*) լիակատար խառնաշփոթի, և արդյունքում շատերի համար հատածը դարձավ շարահյուսական դադարի հոմանիշ՝ հարմարեցված տողի մեջ որոշակի դիրքի: Այստեղից էլ՝ ֆրանսիացի ռոմանտիկների կողմից ալեքսանդրյան ոտանավորի հատածի լուծարման վերաբերյալ խոսակցությունները… Այնինչ բառաբաժանման հարցը… չեխական ոտանավորի համար չափազանց էական է և այդ պատճառով բազմիցս բարձրացվել է անցյալ և ներկա հարյուրամյակում չեխական ոտանավորի տեսաբանների կողմից» (Якобсон, 32): Եթե վանկաշեշտական ոտանավորում շեշտերի պարբերականությունը անշեշտ վանկերից հետո առաջացնում է դրանց կրկնության միանգամայն բնական «սպասում», ապա վանկական ոտանավորում այդպիսի սպասումի բաղադրիչ են արտասանական դադարները, որոնք կարող են ուղեկցվել նաև նախահատածային շեշտերով:

Կայուն ավանդույթների վրա է ձևավորվել նաև հայկական վանկական ոտանավորի ռիթմիկան, և այդ ավանդույթները, անշուշտ, որոշակիորեն տարբեր են արևմտահայ և արևելահայ հատվածներում: Սա է նաև պատճառը, որ մեր վանկական ոտանավորի ուսումնասիրություններում հաճախ ենք հանդիպում իրար հակասող, երբեմն տրամագծորեն տարբեր կարծիքների ու մեկնաբանությունների:

Վանկական ոտանավորը հայկական պոեզիայում իր առաջին քայլերն է կատարել միջնադարում՝ X-XII դարերում: Ընդ որում, եթե ավելի վաղ շրջանի բանաստեղծությունը կառուցվում էր անհավասար անդամներով, ապա այդ անհավասարությունն աստիճանաբար սկսում է նվազել, և վանկական հավասարանդամ ոտանավորը գրավում է իր հաստատուն տեղը[3]: Ներսես Շնորհալին (XII դար) կատարելության հասցրեց մի շարք ձևեր, որոնք հետագա շրջաններում, մինչև մեր օրերը, մշտապես օգտագործվել են մեր բանաստեղծների կողմից: «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության մեջ Մ. Աբեղյանը գրում է. «Շնորհալու գործածած չափերը խիստ բազմազան են: Մի քանի չափական ձևեր նա այնպես զարգացրել է և ռիթմիկ դարձրել, որ օրինակելի են մնացել և մեր հին գրականությունից նույնիսկ նորին են անցել: Կարելի է ասել, որ հաջորդներն իսկապես նրա փորձերն են միայն գործադրել, շատ քիչ բան փոխելով» (Աբեղյան, 106-107):

Իսկ ի՞նչ առանձնահատկություն ուներ մեր միջնադարյան վանկական ոտանավորը, որի սկզբունքներն անցան նաև պոեզիայի զարգացման հաջորդ փուլերին: Իբրև օրինակ վերցնենք հենց Շնորհալու պոեզիան. այստեղ անդամների վերջում արտասանական դադարներն ուղեկցվում են նաև շեշտերով, որոնք, մի կողմից, ընդգծում են անդամի ավարտը, մյուս կողմից՝ դառնում ռիթմական լրացուցիչ գործոն բանաստեղծության համար: Ահա մի հատված Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմից, որը գրված է 8/4+4/ երկանդամ տողերով.

Ծովն ի միջի / իմ ծածանէր,
քաղցրիկ օդո/վըն ծիծաղէր,
զԱղտեղութիւն / տըղմին մաքրէր,
ըզհրապարակ/սըն զարդարէր (Շնորհալի, 57):

Ինչպես տեսնում ենք, մի շարք բառեր (օդո՛/վըն, ըզՀրապարա՛կ/սըն) բաժանվում են երկու անդամների միջև, քանի որ կարևոր ռիթմական գործոն էր անդամի՝ շեշտով ավարտելը, իսկ դրա շարահյուսական ամբողջականությանը, կարելի է ասել, գրեթե ուշադրություն չէր դարձվում: Ճիշտ է, այդ շեշտերն այնքան ուժեղ չեն, որքան տոնիկական համակարգերում, բայց, այնուամենայնիվ, դրանցով է պայմանավորվում ոտանավորի ռիթմական միասնականությունը (4-րդ և 8-րդ վանկերի շեշտադրումը): Կարելի է պնդել, որ Շնորհալու պոեզիայում արդեն ձևավորվում են տաղաչափական այնպիսի սկզբունքներ, որոնք նույնությամբ պետք է անցնեին արևմտահայ բանաստեղծությանը և գոյատևեին մինչև XX դար: Շնորհալու ողջ պոեմում չենք հանդիպում որևէ տողի, որտեղ շեշտերի կայուն դասավորությունը խախտված լինի, իսկ բառաբաժանման օրինակները վերաբերում են գերազանցապես *ը* ձայնավոր ունեցող վանկով ավարտվող բառերին: Շատ դեպքերում էլ տեսնում ենք գաղտնավանկի կամ հոդի սղումներ, որոնք նույնպես պայմանավորված են տաղաչափական

[3] Այս դրույթն իր գրքում մանրամասն մշակել և բազմաթիվ օրինակներով հաստատել է Ավ. Բահաթրյանը (տե՛ս **Բահաթրեան Ավ.,** Հին հայոց տաղաչափական արվուստը, Շուշի., 1891):

պահանջներով: Բանաստեղծական տողում գաղտնավանկի *ը*-երի տեղադրման ավանդույթը նույնպես սկզբնավորվել է XI-XII դդ., երբ իր վերջնական ձևավորումն էր ստանում վանկական ոտանավորը, և յուրաքանչյուր վանկի հավելումը կամ սղումը կարևոր դեր էր կատարում: Իսկ մինչ այդ ստեղծագործող բանաստեղծների՝ Կոմիտաս կաթողիկոսի, Ստեփանոս Սյունեցու կամ Գրիգոր Նարեկացու պոեզիայում այդպիսի օրինակներ չկան, քանի որ բառերի երկարացումը տեղի էր ունենում բացառապես ձայնի բարձրացմամբ: Եթե սրան ավելացնենք նաև այդ շրջանում հանգի արմատավորումը, ապա կարելի է վստահորեն պնդել, որ արդեն միջնադարում կայունանում էր վանկական ոտանավորի այն տեսակը, որը ժառանգաբար փոխանցվելու էր նաև նոր ժամանակների աշխարհաբար բանաստեղծությանը:

Շեշտերի և անդամների զուգակցման այդ բավական կայուն և արմատավորված սկզբունքն իր տեսական հիմնավորումն է գտել նաև XIX դարի տաղագիտական աշխատություններում: Արսեն Բագրատունին (Անթիմոսյան), որի «Քերականութիւն գաղղիական» աշխատության մի ծավալուն հատված (523-590 էջերը) նվիրված է տաղաչափության խնդիրներին, հայկական և ֆրանսիական, նաև իտալական ոտանավորների միջև մեծ թվով նմանություններ է նկատում, որոնք կապված են այդ լեզուների հնչյունական առանձնահատկությունների հետ. նրանք չունեն հաստատուն երկար և սուղ վանկեր, իմաստով են ընտրում երկարությունն ու սղությունը և վանկերի թվով են սահմանում տողերի չափը: Տաղաչափության այս ձևը Բագրատունին կոչում է *թվական*, որտեղ, ըստ նրա, պարտադիր է նաև անդամների վերջում ուժեղ շեշտերի առկայությունը: Այսպիսով, հայկական ոտանավորը, Բագրատունու համոզմամբ, և՛ անդամավոր է, և՛, միևնույն ժամանակ, տողերում շեշտերի դիրքն է կայուն, որով այն միջին տեղ է գրավում թվական (վանկական) և շեշտական համակարգերի միջև. «Արդ թուի մեզ թէ մեր ոտանաւորն ոչ է լոկ անդամատութեամբ առ հանգիստ տալոյ ’ի վերջս անդամոցն և այնպէս զչափսն յորինելոյ, այլ մանաւանդ շեշտիւ՝ որպէս զիտալացւոցն և զանգղիացւոց: Եւ քանզի առ մեզ սովորաբար ’ի վերջս բառից կայ շեշտն, անդ հատանի և անդամն, զի շեշտն ըստ կարգի պատահեսցէ. ուստի անդամքն վասն շեշտին են, եւ շեշտիւն բաժանին: Իսկ ուր ուրեք և ’ի մէջ բառից կամ ’ի սկիզբն գտանիցի շեշտն… զի և անդանոր հատանի անդամ» (Անթիմոսեան, 561): Այլ կերպ ասած՝ քանի որ մեր լեզվում բառերի զգալի մասը վերջահար շեշտ ունի, անդամի և շեշտի համընկնումները տեղի են ունենում բնական ճանապարհով, բայց այն դեպքերում, երբ շեշտը բառավերջում չէ, Բագրատունին պարտադիր է համարում բառի բաժանումը երկու անդամների միջև, որպեսզի անդամը չավարտվի անշեշտ վանկով: Նշենք նաև, որ շուրջ քառորդ դար անց (1847) Վերգիլիոսի «Մշակականքի» թարգմանության առաջաբանում առաջ քաշած «հայկական չափի» իր տեսության մեջ Բագրատունին թեև ուղղակիորեն չի խոսում շեշտերի դիրքի կարևորության մասին, բայց այդ չափի գործնական իրացումներում մենք տես-

նում ենք անդամների սահմանազատում պարտադիր շեշտադրությամբ[4]: Ավելին՝ Բագրատունու համար անդամի ավարտը ուղղակիորեն հավասարազոր էր շեշտին:

Մխիթարյան մեկ այլ նշանավոր բանասերի՝ Եղ. Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ» (1839) բանաստեղծական ուղեցույցում նույնպես մեր ոտանավորը համարվում է անդամավոր՝ զուգակցված վերջահար ուժեղ շեշտով (Հիւրմիւզեան, 2-4): Բագրատունու և Հյուրմյուզյանի մշակած այս դրույթները հենվում էին X-XII դարերում ձևավորված հայ միջնադարյան վանկական բանաստեղծության տաղաչափական սկզբունքների վրա և երկար ժամանակ ուսուցանվել ու պարտադիր են համարվել Մխիթարյան բանաստեղծների միջավայրում: Այդ սկզբունքներից էին՝ ա) անդամների ավարտին արտասանական ուժեղ շեշտերը, բ) երկու անդամների միջև բառի կիսվելը, եթե այն չի ավարտվում շեշտով, գ) որոշ բառերում գաղտնավանկի արհեստական սղումը՝ վանկերի քանակը պահպանելու համար: Այս սկզբունքների ակնառու արտահայտությունն են «Տաղք Մխիթարեան վարդապետաց» ժողովածուի երեք հատորները (1852-1854), որտեղ տարբեր տարիների իրենց բանաստեղծական փորձերն են ամփոփել Ա. Բագրատունին, Եղ. Հյուրմյուզյանը, Մ. Ջախջախյանը, Ե. Թովմաճանը և Մ. Ավգերյանը:

XIX դարի կեսերից մինչև XX դարասկզբի արևմտահայ պոեզիայի քննությունը ցույց է տալիս, որ բանաստեղծական ավանդույթով ժառանգված և տաղագիտական աշխատություններում իրենց տեսական հիմնավորումն ստացած այդ սկզբունքները մեծ մասամբ պահպանվել են, իսկ եթե չեն պահպանվել, ապա համարվել են որոշակի շեղումներ կամ տաղաչափական մեղանչումներ: Մյուս կողմից, այդ շեղումները կամ, այսպես կոչված, «մեղանչումները» արդյունք էին բանաստեղծական խոսքի բնական զարգացման և ձևավորված օրենքների շրջանակներից դուրս գալու մղման: Արևմտահայ բանաստեղծները, մանավանդ նրանք, ովքեր կրթություն էին ստացել կամ ստեղծագործում էին Մխիթարյանների միջավայրում (Ալիշան, Պեշիկթաշլյան, Վարուժան և այլք), փորձում էին հավատարիմ մնալ դարավոր ավանդույթներին, մասնավորապես՝ շեշտադրության և անդամահատման կարգին: Ավելին, մշակվում էին արտասանական մի շարք եղանակներ բառը մեկ վանկով կրճատելու կամ երկարացնելու համար. երբեմն միևնույն բառը նույն բանաստեղծության շրջանակում արտասանվում էր մի դեպքում երկվանկ, մեկ այլ դեպքում՝ միավանկ՝ կախված գրության ձևից, ասենք՝ *վըրայ* կամ *վրայ*, *քաղցըր* կամ *քաղցր*: Ղևոնդ Ալիշանն այդ սկզբունքները կիրառել է ինչպես գրաբար, այնպես էլ իր աշխարհաբար գործերում: Ահա մի հատված նրա «Շուշանն Շաւարշանայ» պոեմից, որը գրված է 7/4+3/ վանկական չափով.

---

[4] Արսեն Բագրատունու «հայկական չափի» տեսության և դրա դրսևորումների մասին հայկական պոեզիայում տե՛ս **Ջրբաշյան Ա.,** Արսեն Բագրատունու «հայկական չափի» տեսության արձագանքները հայ տաղագիտության մեջ, էջ 120-136 // Հայագիտության հարցեր, թիվ 3 (15), 2018:

Յայնոր աչա/ցըն կամար
Ցած գայ երկիրս / ու խոնարհ.
Երկինքն ասէ, / իմ գահի՝
Սանդուխտ պիտէ՛ր / թագուհի.
Ծով՝ իմ ծըփան/ցըս ծիրան՝
Սանդուխտ ասէ / տա՛յր հրաման (Ալիշան, 250)։

Ինչպես տեսնում ենք, այստեղ կան բառահատումներ (աչա/ցըն, ծըփան/ցըս), հոդերի և գաղտնավանկի սղումներ (*երկիրս, հրաման՝* իբրև երկվանկ բառեր), որոնց միջոցով բանաստեղծը հնարավորություն է ստանում կարգավորելու վանկերի թիվը տողում և, որ ամենակարևորն է, պահպանելու շեշտերը բոլոր տողերի 4-րդ և 7-րդ վանկերի վրա։ Մեր կատարած դիտարկումները հիմք են տալիս պնդելու, որ Ալիշանի պոեզիայում բացակայում են այնպիսի տողեր, որտեղ անդամները չեն ավարտվում շեշտով։ Ճիշտ է նկատել Յու. Ավետիսյանը. «Ալիշանի գեղարվեստական փորձին բնավ խորթ չեն... արհեստական հոդազեղչում, որոշիչ հոդի կամ գաղտնավանկի **ը**-երի հավելում, բառի անհարկի կրճատում կամ սղում՝ տաղաչափական նպատակներով» (Ավետիսյան, 73)։ Իհարկե, պետք է նկատել, որ դրանք ոչ այնքան «անհարկի» կրճատումներ կամ հավելումներ են, որքան մեր ոտանավորի պրակտիկայում արմատավորված ձևեր, որոնց անվերապահորեն հետևում էին արևմտահայ շատ բանաստեղծներ։

Մկրտիչ Պեշիկթաշլյանից մեզ հասած շուրջ յոթ տասնյակ բանաստեղծություններում (գրաբար և աշխարհաբար) անդամավերջի պարտադիր շեշտերը պահպանված են, սակայն գրեթե չկան բառահատումներ, ինչի շնորհիվ նրա քերթվածքներն ավելի բնական ու երաժշտական են հնչում։ Ու թերևս դա է հետագայում առիթ տվել Ա. Չոպանյանին՝ գրելու. «...Ոտանավորը երաժշտություն է ամեն բանե առաջ, ու ոևէ մեղանչում երաժշտականության դեմ աններելի պետք է ըլլա բանաստեղծության մեջ. մեզ մոտ, բանաստեղծը՝ նեղը մնալուն պես՝ կզոհե երաժշտականությունը։ Հյուրմյուզն ու Պեշիկթաշլյանն են, որ ամենեն ավելի հարգած են այդ պայմանը իրենց տաղաչափված էջերուն մեջ, ու նույնիսկ Պեշիկթաշլյանի մոտ կգտնենք անկարելի տողեր...» (Չոպանյան, 1988, 654)։ Թեպետ Պեշիկթաշլյանը, ինչպես ասացինք, խուսափում է անդամների միջև բառը բաժանելուց, սակայն գաղտնավանկի *ը*-երի և հոդերի սղումը՝ ի շահ չափի, նրա բանաստեղծություններում նույնպես լայնորեն կիրառվում է։ Թերևս դրանք է Չոպանյանն անվանում «անկարելի տողեր»՝ իբրև օրինակ բերելով «Թէ երգք թռչին սիրողաբար...»-ը։

Պետրոս Դուրյանի պոեզիայում նույնպես հիմնականում պահպանված են այդ շրջանում ընդունված տաղաչափական կանոնները՝ հոդազեղչում, *ը*-երի սղում, հավելում կամ անցում հաջորդ անդամին և այլն։ Ահա «Ջ’ նե պաշտեմ» բանաստեղծությունից մի քառատող.

Լուսինը ո՛չ / ներա վարդն, 7/4+3/
Եվ ոչ ալ վար/դը ունի

Ճառագայթու/մը ներա,
Ճառագայթո՛ւմ / սիրողի (Դուրյան, 65)։

Սակայն Դուրյանի բանաստեղծություններում հանդիպում ենք նաև շեշտով չավարտվող տողերի կամ անդամների, որոնք լիովին բացակայում են Պեշիկթաշլյանի մոտ։ Այդպիսի տողերով լեցուն են «Լճակը», «Տրտունջքը», նաև այլ բանաստեղծություններ, որտեղ տողերը թեև չունեն կանոնավոր շեշտեր, բայց շատ ավելի բնական են հնչում և չեն կաշկանդում բանաստեղծին՝ անմիջականորեն զեղելու իր հույզերն ու պոռթկումները.

Լճա՛կ, *դու* ես / թագուհիս,
Ջի թ՚ հո*վե* մ՚ ալ / խորշոմիս...
Հոն հր*դեհ* կա / ո՛չ մատյան...[5] (Դուրյան, 53)։

Մեծարենցից սկսած՝ արևմտահայ պոեզիայի տաղաչափական պատկերն սկսում է փոխվել. այստեղ շատ սակավ են դառնում հոդազեղչումները (ինչպես՝ «Ու լեցուր խցիկս,(5) / մինչև կաթոգին (5)»), իսկ բառահատումները տեղի են ունենում բացառապես բառավերջի *ը* հնչյունի առկայության պարագայում («Վըճիտ, ինչպես / լույսե արցուն/քը մանկան», «Հորդ ալիքնե/րը մութին» և այլն)։ Միևնույն ժամանակ հանդիպում ենք մեծ թվով այնպիսի տողերի, որտեղ անդամահատումը շեշտի հետ չի համընկնում։ Սրանով իր ուղին էր հարթում վանկական ոտանավորի որակապես նոր տեսակը, որը գնալով պետք է ընդլայներ իր տիրույթները։ Այդ տեսանկյունից դիտարկենք «Վայրկյան» բանաստեղծությունը, որը գրված է 11/4+4+3/ չափով (շղատառերով նշված են նախահատածային անշեշտ վանկերը).

Թույլ շրշյուն *մը*, / հետո բույր *մը* / մըշկենի.
Ու համրագին / գիրքը ձեռքես / կ՚ իյնա վար.
Երազներու / պերճուհին *է* / որ կ՚անցնի,
Ու կը փոթի / ծովակն հոգվույս / մեղմավար։

Ու կը փոթի / ծովակն հոգվույս / մեղմավար,
Եվ ալիք *մը* / թևը բացած / կը վազե
Գրկել ափունքն / իղձիս ոսկի / երազե... (Մեծարենց, 86)։

Այստեղ էապես փոխվում է բանաստեղծության ռիթմիկան, քանի որ բերված 7 տողերից առնվազն 4-ում կա շեշտերի կայուն դիրքի խախտում։

Բանաստեղծական տողի կառուցման, անդամահատման և շեշտադրության մոտավորապես նույնատիպ եղանակներ է կիրառել նաև Ռուբեն Սևակը.

Ի՛նչ *անուշ է* / հանդարտիկ հովն / իրիկուան,
Մայրամուտի / քաղցրի՛կ շնչո/վը լեցուն.
Ծաղիկնե*րը* / կը մթագնին, / կը հեւան.
Կը նըւաղի / թռչնիկին եր/գը ցնծուն.
Ի՛նչ *անուշ է* / հանդարտիկ հովն / իրիկուան (Սեւակ, 651)։

[5] Շեղատառերով նշված են նախահատածային շեշտերը։

Հետաքրքիր նյութ է տալիս Դ. Վարուժանի պոեզիայի տաղաչափական քննությունը: Նրա վաղ շրջանի պոեզիայի և մասնավորապես «Սարսուռներ»-ի տաղաչափական արվեստի վրա իրենց տեսանելի կնիքն են թողել Մխիթարյանների մշակած պոետական սկզբունքները, որոնց նա ուսանել էր Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, մասնավորապես՝ չափի, հանգի, շեշտի դիրքի, տողի կառուցման առումներով: Տողերի անդամահատման ժամանակ նա նույնպես պարտադիր կերպով պահպանում է շեշտադրության կայուն կարգը՝ շատ հաճախ բառերը կիսելով անդամների միջև: Վարուժանի մյուս ժողովածուներում («Ցեղին սիրտը», «Հեթանոս երգեր» և «Հացին երգը») մուտք են գործում տաղաչափական նոր ձևեր, օրինակ՝ 10-վանկանի երկանդամ (5+5) տողերը, որտեղ կայուն շեշտերը հաճախ բացակայում են, բանաստեղծը կարծես հատուկ ջանք չի գործադրում շեշտերի դիրքի կանոնավորության համար, ավելին՝ այդ շեշտերը զրկվում են ընդգծված ռիթմական գործառույթից: Հնգավանկ չափերում խոսքն ավելի հանդարտ ու երաժշտական է, չկան ուժեղ շեշտեր և բառային հատումներ:

Այս տեսանկյունից հետաքրքիր է դիտարկել նաև XIX-XX դդ. արևելահայ պոեզիայի ռիթմական բնույթը, անդամահատման սկզբունքներն ու դրանց կապը շեշտադրության հետ: Հանգամանալի քննությունը ի ցույց է դնում հետևյալ պատկերը. հայ նոր գրականության ձևավորման սկզբնական փուլերում արևելահայ վանկական ոտանավորը նույնպես հնարավորինս հավատարիմ էր միջնադարից եկող տաղաչափական սկզբունքներին: Խոսքը մասնավորապես վերաբերում է Հ. Ալամդարյանի, Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի չափածո ժառանգությանը: Ավելի ուշ՝ XIX դարի երկրորդ կեսին, արևելահայ պոեզիայում սկսել են գործել անդամահատման այնպիսի սկզբունքներ, որոնք կախված չեն շեշտի դիրքից. ճիշտ է, շեշտը և անդամի ավարտը մեծ մասամբ համընկել են, սակայն դա արդյունք է մեր լեզվում շեշտի վերջահար դիրքի: Ներկայացնենք Հովհ. Թումանյանի գործերից օրինակներ: Ահա «Գութանի երգը» (1887) բանաստեղծությունից երկու հատված (շղատառերով նշված են այն անդամները, որոնց վերջում արտասանական շեշտ չկա).

Արի՛, գութան, / վարի՛ գութան,
Օրն եկել է / ճաշ դառել...

Պարտատերը / գանգատ գնաց,
Քյոխվեն կըգա, / կըծեծի... (Թումանյան, 28):

Կամ «Երազ» (1892) բանաստեղծությունից մի քառատող.

Մութն էր երկինքը / ոչ ոք չը տեսավ
Բնության գործը / գիշերվա մթնում,
Միայն առավոտ, / երբ որ լուսացավ,
Փայլում էր ցողը / կանաչ դաշտերում (Թումանյան, 110):

Դիտարկենք նաև Ավ. Իսահակյանի՝ դարավերջին (1897) գրված հայտնի բանաստեղծությունից մի հատված.

Սև աչերեն / շա՛տ վախեցի՛ր,-
Էն մութ, անծեր / *գիշեր է,*
Մութըն *ա՛հ է,* / չարքեր շա՛տ կան,-
Մև աչերը / մի՛ սիրե... (Իսահակյան, 1973, 76)։

Կամ ավելի ուշ գրված «Հավերժական սերը» (1914) բալլադի սկիզբը.

Հուսակերտ է / *ապարանքը* / Թադմորի,
Անապատում, / որպես երազ / ոսկեհյուս,
Յոթն հարյուր / սյունի վրա / մարմարի
Սլանում է / *աշտարակը* / երկնասույզ (Իսահակյան, 1977, 179)։

Վահան Տերյանի պոեզիայից վերցված բազմաթիվ օրինակներով նույնպես կարելի է ակնառու կերպով ցույց տալ արևելահայ ոտանավորի ռիթմական առանձնահատկությունները։ Ահա «Fatum» բանաստեղծության սկիզբը.

Կախարդական / *մի շղթա կա* / երկնքում՝
Աներևույթ, / *որպես ցավը* / խոր հոգու.
Իջնում է նա / հուշիկ, որպես / իրիկուն,
Օղակելով / *լույս աստղերը* / մեկմեկու (Տերյան, 33)։

Այս և նմանատիպ այլ օրինակներից ելնելով՝ վստահորեն կարող ենք պնդել, որ արևելահայ բանաստեղծությունը բավական անտարբեր է անդամավերջը շեշտով ընդգծելու՝ միջնադարյան պոեզիայից եկող «պահանջի» նկատմամբ, բառի վերջում *ը* ձայնավոր ունեցող բառը, որպես կանոն, չի հատվում, այլ ընկալվում է բառի հետ իբրև մեկ ամբողջություն։ Ավելին, այդպիսի բառահատումները արհեստական են դիտվում, և դրանցից հնարավորինս խուսափում են։ Մեկ այլ առանձնահատկություն նույնպես պետք է նշել՝ իբրև արևելահայ և արևմտահայ բանաստեղծությունների տարբերիչ գիծ։ Հայտնի է, որ հաճախ բանաստեղծները տեղադրում են գաղտնավանկի *ը*-երը՝ նշելու համար դրանց արտասանության կարևորությունը և վանկաստեղծիչ գործառույթը։ Սակայն արևելահայ բանաստեղծության մեջ *ը*-երի տեղադրումը հաճախ կամայական է, իսկ երբեմն էլ բացակայում է՝ համարվելով ինքնին ենթադրվող։ Օրինակ՝ *սյունի վրա* անդամում Իսահակյանը չի գրում *վըրա*, քանի որ այն գրեթե երբեք չի կարող արևելահայ լեզվում սղվել և արտասանվել միավանկ։ Այնինչ արևմտահայ բանաստեղծների մոտ նույն քառատողի շրջանակում անգամ կարող է նույն բառը մի դեպքում երկվանկ, մեկ այլ դեպքում միավանկ արտասանվել, այսինքն՝ սղվել կամ երկարացվել, ինչպես Վարուժանի առաջին ժողովածուից բերված այս օրինակում.

Անոր *վըրա* / պիտի հալի / խանդն հոգվույս,
Անոր *վըրա* / պիտի սիրտս հար / քըրտընի,
Ինչպես կարմիր / և սարսըռուն /արշալո՛ւյս
Մը՝ սեզերուն, / հասկերուն *վրա* / գարունի (Վարուժան, 14)։

Արևելահայ և արևմտահայ բանաստեղծության տաղաչափական տարբերությունների քննությունը տեսական աշխատություններում

Մեր ժողովրդի երկու հատվածների բանաստեղծական խոսքի, տաղաչափական կառուցվածքի տարբերություններն ակնհայտորեն իրենց զգացնել են տվել XIX դ. երկրորդ կեսից և հատկապես երկու դարերի սահմանագծին, երբ արևելահայ հատվածում հանդես եկան այնպիսի նշանավոր բանաստեղծներ, ինչպիսիք են Ալ. Ծատուրյանը, Հովի. Հովհաննիսյանը, Հովի. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և այլք: Այդ տարբերություններն աննկատ չեն մնացել մի շարք արևմտահայ բանասերների համար և նույնիսկ առիթ են տվել անհարկի քննադատությունների: Բերենք մեկ օրինակ. 1898 թ. Մոսկվայում լույս է տեսնում Ալ. Ծատուրյանի բանաստեղծությունների երկրորդ հատորը, որի առիթով «Բազմավէպ»-ում տպագրվում է Մխիթարյան նշանավոր բանաստեղծ և թարգմանիչ Արսեն Ղազիկյանի գրախոսականը: Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Ծատուրյանի բանաստեղծական ձիրքը, նրա զգացմունքների անկեղծությունն ու անմիջականությունը՝ Ղազիկյանն անդրադառնում է նաև բանաստեղծի կատարած թարգմանություններին՝ գրելով. «Մի և նոյն զգացումները, մի և նոյն ախորժը կ'ունենայ մարդ կարդալով թարգմանութիւնները՝ որոնք կերպով մը շարայարութիւն են Ծատուրեանի քնարին հնչմանց, կամ արձագանգ անոր թրթռումներուն» (Ղազիկյան, 176): Սակայն, ինչպես երևում է գրախոսականի հետագա շարադրանքից, Ղազիկյանին անհանգստացնում է հատկապես Ծատուրյանի թարգամնությունների (և ոչ միայն) տաղաչափական ձևը, մասնավորապես՝ անդամների վերջում շեշտից հրաժարվելու բնական միտումը, որի շուրջ բանասերը ծավալում է մի բավական երկար հեռակա բանավեճ. «Լեզուն ընդհանրապէս սահուն՝ թէ՛ ինքնագիր քերթուածոց և թե՛ թարգմանութեանց մէջ. միակ թերութիւն՝ որ կը տեսնուի, է անուշադրութիւն տաղաչափական օրինաց, ներդաշնակութեան, շեշտերու, որուն վրայ կ'ուզենք հոս քիչ մը երկարօրէն խօսիլ, վասն զի սոյն անուշադրութիւնը կը տեսնուի նաև տաճկահայ բանաստեղծից քերթուածներուն մէջ, և **կամաց կամաց վախ կայ օրէնքի փոխուելու**» (ընդգծումը մերն է - Ա.Ջ.), (Ղազիկյան, 177): Ինչպես տեսնում ենք, Ղազիկյանին անհանգստացնում է շեշտի հանդեպ վերաբերմունքի փոփոխության միտումը արևմտահայ պոեզիայում, որը, անկասկած, բնական գործընթաց էր, բայց Մխիթարյանների շրջանում՝ դեռևս անընդունելի: Թեպետ Դուրյանի բանաստեղծություններում, ինչպես ցույց ենք տվել, արդեն նկատելի է նման «անուշադրություն», բայց Ղազիկյանն անհանգստացած է այդ միտումի ծավալման վտանգից: Իսկապես, ընդամենը մեկ տասնամյակ անց դարասկզբի արևմտահայ պոեզիան (Մեծարենց, Սևակ, Վարուժան) արդեն տարբեր չափերով դրսևորելու էր այդ նոր միտումները՝ կարծես փորձելով հրաժարվել բանաստեղծության՝ դարերով մշակված մի շարք ավանդույթներից:

Իսկ ինչի՞ց էր անհանգստացած Ղազիկյանը, կամ ո՞ր օրենքի մասին էր նա խոսում: Խոսքը վերաբերում էր առաջին հերթին հոդով ավարտվող բառերը

անդամների միջև կիսելու արմատավորված սկզբունքին, որը կարծես այնքան հեշտորեն զանց էին առնում արևելահայերը. «Հայկական տաղաչափութեան մէջ օրէնք է՝ որ անդամատութիւնը, որչափ կարելի է, շեշտաւոր բառերու վրայ իյնայ. և ը գիրը՝ որ շեշտուելու ընդունակ չէ՝ յաջորդ անդամին անցնի. անհերքելի ճշմարտութիւն մըն է այս, և անհաւանները զուր պիտի աշխատին գտնել անդամատութիւն մը՝ որ կատարուած ըլլայ ը ի վրայ…» (և. տ., 177)։ Ղազիկյանը պնդում է, որ այդ կանոնը մեզանում ձևավորվել է դեռևս Սահակ Պարթևից, Նարեկացուց, Մագիստրոսից, Շնորհալուց՝ հասնելով մինչև Բագրատունի։

«Անհերքելի ճշմարտություն» համարելով իր նշած «օրենքը»՝ Ղազիկյանը վստահաբար պնդում է, որ Ծատուրյանն իր թարգմանություններում խախտել է մեր տաղաչափական կարևորագույն կանոններից մեկը, մասնավորապես՝ բառավերջի *ը*-ի անցումը մյուս անդամին, որով ձևավորվող հատածները, ըստ նրա, բնական են և ոչ արհեստածին։ Միևնույն ժամանակ նա նաև զգուշացնում է բռնազբոս հատածներից, որոնք անբնականորեն «ճեղքում են» բառը՝ բերելով այդպիսի մի քանի օրինակ մեր Շարակնոցից։ «Առոգանութիւնը պետք չէ զոհուի երաժշտութեան,-գրում է նա,- վասն զի եթէ զոհուի ալ, բաղձացուած ներդաշնակութիւնը առաջ չի գար, երբ լեզուին ոգւոյն հակառակ է այն» (և. տ., 178)։ Սակայն՝ «…յարաշեշտ բառերուն մէջ, անդամը պէտք է լմննայ շեշտաւոր վանկին վրայ, և միւս վանկը անցնի յաջորդ անդամին. ինչպէս կը տեսնուի Շնորհալւոյն հետեւեալ տողերուն մէջ.

Որպէս և յա՛յն/ժամ ըզնոսին.
Վարեն մինչ յա՛յն/կոյս անբընակ» (և. տ., 178)։

Քննադատելով Ծատուրյանին տաղաչափական «մեղանչումների» համար՝ նա բերում է մի քանի տողի օրինակ, որտեղ, ըստ նրա, առկա են այդպիսի «խախտումներ», քանի որ շեշտն ընկած է նախավերջին վանկի վրա. «Զոհ բերեց կեանքը / իւր ազգի փառքին», «Քաղցր կաթօտը / ջերմ փայփայելով», «Մաշող վշտերը / տալով մոռացման», «Եւ թռա՛ւ երգը / սըլացաւ արագ» և այլն։ Պետք է փաստել, որ այս տողերն արևելահայ լեզվում հնչում են միանգամայն բնական, բայց Ղազիկյանի համոզմամբ դրանք զուրկ են որևէ ներդաշնակությունից. «Ի զուր է փնտռել ներդաշնակութիւն ըսուած բանը այս և ուրիշ ասոնց նման շատ տողերու մէջ…» (և. տ., 177),- գրում է նա։

Իբրև տաղաչափական բարեհնչունության կարևորագույն պայման՝ Ղազիկյանը պահանջում է կիսել ոչ միայն *ը*-ով ավարտվող բառերը, այլև այնպիսի բառեր, որոնք արևմտահայերենում շեշտ են կրում նախավերջին վանկի վրա (*ա՛յս/պէս, ա՛յն/պէս, ո՛ր/պէս* և այլն)։ Սակայն պետք է նշել, որ նմանատիպ բառերի (ցուցական և հարցական դերանունների) շեշտադրությունը արևելահայերենում ավելի ազատ է։ Ռ. Պապայանն իր հոդվածում օրինակներ է բերում «ինչպես» բառի տարբեր շեշտադրումների Չարենցի պոեզիայում. «Օրինակ, վանկային չափերով գրված գործերում Ե. Չարենցը շեշտի նշանը դնում է վերջին վանկի վրա.

Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած։

Ընդհակառակը, վանկա-շեշտային և համաշեշտային ոտանավորներում հարցական նշանը տեղափոխվում է.

Ես ի՞նչպես կանչեմ հիմա,
Որ ձայնս լսես ու գաս» (Պապայան, 187)։

Այս օրինակները լավագույնս վկայում են այն մասին, որ նման բառերի շեշտադրությունը արևելահայերենում բավական ազատ է, ավելին՝ դրանք կարող են տարբերվել տարածքից տարածք, խոսվածքից խոսվածք և այլն։ Մյուս կողմից, քանի որ հայերենում շեշտն ուժեղ չէ, այն հաճախ կորչում է արտասանական ընդհանուր հյուսվածքում, և վանկական ոտանավորի ռիթմավորումը տեղի է ունենում գերազանցապես ի հաշիվ բառաբաժանումների և արտասանական դադարների։ Բ. Տոմաշևսկին, դիտարկելով բառաշեշտի կայուն տեղ ունեցող լեզուներում (օրինակ՝ ֆրանսերենում, լեհերենում և այլն) շեշտի դերը, շատ նուրբ դիտարկում է անում. «...Շեշտը... միայն ձևավորում է բառի արտասանությունը, սակայն չի մասնակցում հաղորդակցական ակտին. դա պարզապես մեխանիկական հավելում է բառին, որի մասին պետք չէ մտածել, պետք չէ ընկալել։ Հետևաբար միանգամայն բնական է, որ այնտեղ տարբերություններ չեն նկատում շեշտված և անշեշտ վանկերի միջև։ Միայն դպրոցում են սովորեցնում՝ ինչ է շեշտը. առօրյա կյանքում շեշտը կարծես գոյություն չունի» (Томашевский, 1959, 307)։

Արևելահայ և արևմտահայ պոեզիաների մյուս կարևոր տարբերությունը, որ բխում է լեզվական և հնչյունական առանձնահատկություններից, հետևյալն է. արևմտահայերն ավելի հակված են արագ արտաբերելու չշեշտված վանկերը, սղելու գաղտնավանկի *ը*-երը և միավորելու հաջորդ բառին, երկարացնելու բառերը, որը միջնադարից եկող երգային պոեզիայի ակնհայտ ազդեցության արդյունք է։ Այնինչ արևելահայերի պոեզիայում, մասնավորապես՝ XX դարի սկզբներից, բոլոր վանկերն արտաբերվում են գրեթե հավասար, այդ թվում՝ նաև գաղտնավանկերը, և սա է պատճառը, որ դրանք կարող են հատուկ չընդգծվել *ը*-ի տեղադրմամբ։ Օրինակ՝ Չարենցը «ձայնս» բառում *ը* չի տեղադրում, սակայն մենք այն արտասանում ենք, այնինչ արևմտահայ բանաստեղծության մեջ *ը*-ն չտեղադրելը կնշանակեր անպայմանորեն գաղտնավանկի սղում և բառի՝ մեկ վանկով կրճատում։ Նկատենք՝ Ղազիկյանն իր գրախոսականում զարմանքով նշում է, որ գաղտնավանկի *ը*-ն Ծատուրյանը երբեմն չի դնում, և բերում է հետևյալ օրինակը՝ «Գրաւիչ էիր / դու նոցա համար»՝ պնդելով, որ *գրավիչ* բառի մեջ գաղտնավանկի *ը*-ի բացակայությունը հնգավանկ անդամը դարձնում է քառավանկ։ Արևմտահայերը երբեմն սղում են նաև երկհնչյունները։ 1906 թ. Դ. Վարուժանին գրված իր նամակներից մեկում Ա. Չոպանյանը գրում է. «(Այդ քերթվածին մեջ, նորեն երկու տող *իան* միավանկ եք ըրած (դիակին, միամոր), *իան* երկվանկ է՝ հայերենի մեջ, վերոհիշյալ երկու բառերը եռավանկ են)» (Չոպանյան, 1980, 86)։

Իսկապես, արևելահայ և արևմտահայ հատվածում զարգացող բանաստեղծությանը չպետք է մոտենալ նույն չափանիշներով. մեր լեզվի երկու ճյուղերի

շեշտային, հնչյունական ու քերականական տարբերությունները հանգեցրել են նաև տաղաչափական էական տարբերությունների, որոնք չնկատել հնարավոր չէ։ Էդ. Ջրբաշյանը, դիտարկելով բազմաթիվ օրինակներ Իսահակյանի, Տերյանի և Չարենցի բանաստեղծություններից ու պոեմներից և կատարելով ճշգրիտ հաշվարկներ, ցույց է տալիս, որ այդ երեք բանաստեղծների մոտ «տողամիջի գլխավոր շեշտերի տեղափոխությունը տատանվում է հատածների ընդհանուր թվի 16-ից 38 տոկոսի միջև» (Ջրբաշյան, 194), այսինքն՝ բավական մեծ թվով դեպքերում (երբմեն մեկ երրորդից ավելին) արևելահայ բանաստեղծները չեն պահպանում նախահատածային շեշտերը։ Նմանատիպ հաշվարկ է կատարել Ռ. Պապայանը արևմտահայ բանաստեղծների՝ Պ. Դուրյանի, Մ. Մեծարենցի և Դ. Վարուժանի բանաստեղծությունների վերաբերյալ՝ ցույց տալով, որ երկանդամ տողերում կայուն շեշտերի տեղաշարժը Դուրյանի մոտ 2.5 տոկոս է, Մեծարենցի մոտ՝ 2.9, Վարուժանի պոեզիայում՝ 4.4 տոկոս։ Եռանդամ չափերում պատկերը մի փոքր այլ է՝ համապատասխանաբար 3.6, 3.6, 4.7 տոկոս։ Այս տարբերություններն ինքնին շատ խոսուն են և ի ցույց են դնում դարասկզբի արևելահայ բանաստեղծության ավելի ազատ վերաբերմունքը շեշտի դիրքի հանդեպ, անդամներում առավելապես վանկային հավասարության պահպանումը և տարաբնույթ վանկերի հավասար արտասանությունը։

Հիմք ընդունելով Յու. Տինյանովի այն դրույթը, որ բանաստեղծական ցանկացած համակարգ իրենից ներկայացնում է շեշտային և վանկային գործոնների ոչ թե միավորում է, այլ պայքար (Тынянов, 40), Ռ. Պապայանը նշում է, որ «շեշտային հատկանիշի աճի հետ զուգահեռ տեղի է ունենում վանկային հատկանիշի նվազում։ Այդ հատկանիշները միմյանց հետ գտնվում են հակադարձ համահարաբերակցական կապի մեջ» (Պապայան, 183)։ Այս հաշվարկներից ակնհայտ է դառնում, որ արևելահայ պոեզիան իր գերակշիռ մասով վանկային է, այսինքն՝ ռիթմը ձևավորում է արտասանական ֆրազներով (իմաստային-շարահյուսական միավորներով), մինչդեռ արևմտահայ պոեզիան պարտադիր տակտավորման իր պահանջով անտեսում է կարծես շարահյուսական ֆրազավորումն ու առաջին պլան մղում արտասանական շեշտերի միջվանկային պարբերականությունը։

Սա է նաև պատճառը, որ արևմտահայ պոեզիան գերազանցապես կառուցված է քառավանկ և եռավանկ անդամներով, քանի որ շեշտի կայուն դիրքի պահանջը բանաստեղծներին ստիպում է օգտագործել ավելի կարճ անդամներ, իսկ արևելահայ բանաստեղծության տարերքը հնգավանկ անդամներն են, որոնք թույլ են տալիս ձևավորել ավելի երկար ֆրազներ՝ չկիսելով դրանք երկու տարբեր անդամների միջև։ Այդ տարբերությունները մեկնաբանվել են երբեմն իբրև որակական զարգացման արդյունք, իբրև կլասիցիզմից անցում ռոմանտիզմին. «Այսպես, օրինակ, կլասիցիզմի շրջանի ոտանավորը կարելի է մեկնաբանել իբրև ավելի շեշտային, ռոմանտիզմի դարաշրջանի ոտանավորը՝ ավելի վանկային» (Навасардян, 166), սակայն նույն ռոմանտիզմի և նեոռոմանտիզմի շրջանակներում (Դուրյան, Մեծարենց, Վարուժան) կարելի է տեսնել

ինչպես էական տարբերություններ, այնպես էլ անվերապահ հավատարմություն Մխիթարյանների տաղաչափական սկզբունքներին։

Հետևաբար կարող ենք պնդել, որ արևմտահայ պոեզիան, դուրս չգալով վանկական ոտանավորի ընդհանուր ծիրից, այնուամենայնիվ, ինչ-որ առումով միջանկյալ ձև է շեշտային և վանկական ոտանավորների միջև, մանավանդ դա վերաբերում է քառավանկ անդամներով տողերին, որոնք յուրօրինակ պեոնների (մասնավորապես՝ IV պեոնի) դեր են կատարում։

Հետևաբար, այն պնդումը, որ «մեր բառաշեշտի համեմատաբար թույլ բնույթը հնարավորություն չի տալիս, որ շեշտադրությունը դառնա ոտանավորը կազմակերպող հիմնական գործոն» (Ջրբաշյան, 169) կամ՝ «մեր լեզվում շեշտային կոնստանտների պահպանումը ռիթմական վճռական նշանակություն չունի» և «դադարում է տաղաչափական որոշիչ դեր խաղալուց» (ն.տ. 195), բացարձակ ճշմարտություն է արևելահայ բանաստեղծության համար, սակայն, ինչպես տեսնում ենք, արևմտահայ հատվածում հաճախ գործում են բանաստեղծության ռիթմականության բոլորովին այլ որակներ։

Այնուհանդերձ պետք է արձանագրել, որ XX դարի երկրորդ տասնամյակից սկսած՝ տաղագիտական աշխատություններում շեշտի հանդեպ վերաբերմունքն արդեն որոշակիորեն սկսում է փոխվել նաև Մխիթարյանների շրջանում և արևմտահայ բանասերների աշխատություններում։ Այսպես, Աթանաս Տիրոյանը նշում է, որ անհրաժեշտություն չկա անդամի ավարտը մշտապես ընդգծելու սուր շեշտով. դա կարող է հոգնեցնել և ձանձրալի լինել. «Բայց թէ որ միշտ այսպէս սուր շեշտով բաժնուին տողերու անդամները, արտասանութիւնը՝ թէ և կորովի՝ բայց պարտասեցուցիչ կը դառնայ, և շեշտերու միակերպութիւնն ալ գուցէ աւելի տաղտկալի պիտոր ըլլայ՝ քան թուաչափ վանկերով անդամատութիւնը» (Տիրոյեան, 1912, 440)։ Տիրոյանն առանձնացնում է անդամահատման երեք ձև՝ շեշտով, հանգստով, ինչպես նաև՝ «շեշտով-հանգստով խառն անդամատուած» (Տիրոյեան, 1913, 23)՝ յուրաքանչյուրից բերելով համապատասխան օրինակներ։ Նա նաև նշում է այն դեպքերը, երբ անդամն ավարտվում է վերջին վանկի վրա շեշտ չկրող բառով, օրինակ՝ *նո՛յնպես, գրե՛թէ, մա՛նաւանդ* և այլն, այսինքն՝ անդամի վերջը չի համընկնում շեշտի հետ (ի դեպ, այս նույն բառերի օրինակներն իր «Առձեռն բանաստեղծութիւն» աշխատության մեջ բերում էր Եդ. Հյուրմյուզյանը՝ ցույց տալով, թե ինչպես պետք է դրանք կիսել երկու տարբեր անդամների միջև (յա՛յն/ժամ, յայ՛ն/կոյս և այլն)՝ անդամավերջի շեշտը պահպանելու համար, գրեթե նույնական օրինակներ էր բերում նաև Ղազիկյանը իր գրախոսականում)։ Այս ամենով հանդերձ՝ Տիրոյանը որևէ բացառություն չի անում *ը* հնչյունով ավարտվող բառերի համար. «Բառերու վերջին վանկին մէջ գտնված ը գիրը կամ հնչումը բնաւ չի կրնար բառին հետ մնալով՝ անդամի մը վերջին վանկը կազմել, այլ միշտ յաջորդ անդամին կ՚ անցնի...» (ն.տ., 24)։ Այս կանոնը, ինչպես տեսանք, լիովին պահպանում էին մեր բանաստեղծները՝ սկսած Ներսես Շնորհալուց։

Հ. Թիրյաքյանի «Հայկական տաղաչափութիւն» (1922) ուսումնասիրության մեջ արդեն կարևորվում է ոչ թե անդամի և շեշտի, այլ անդամի և բառի համընկնումը. սա, ըստ էության, արդեն մաքուր վանկական ոտանավորի պահանջ էր: Եթե Բագրատունին, Հյուրմյուզյանը և այլք պնդում էին, որ հատածի հիմնական պայմանը շեշտն է, ապա Թիրյաքյանի համար կարևորվում էր իմաստը. «Նկատելի էական պայմանը այն է որ, ո՛ր կերպ կտրատում ալ ընդունուի տողի մը, պէտք է ա՛յնպէս պատշաճի որ թէ՛ իմաստը չարաչար հօշոտմամբ չչարչարուի, թէ՛ գնացքը չկասի եւ թէ՛ արտաբերութիւնը չդժուարանայ: Հոս է արուեստագետին ճարտարութիւնը» (Թիրեաքեան, 63):

Այստեղ կատարենք մի շատ կարևոր դիտարկում. այն դեպքերում, երբ անդամը և իմաստը համընկնում են, ռիթմական միավորներ են դառնում արտասանական ֆրազները, իսկ եթե անդամների տարանջատման պայմանը միայն շեշտն է, որն ուղեկցվում է հաճախ նաև բառահատումով, ապա դա թույլ չի տալիս արտասանական դադար տալ անդամների վերջում, և բանաստեղծական ռիթմը ֆրազային բնույթից տեղաշարժվում է դեպի շեշտայինը: Լսելի են դառնում առավելապես շեշտերը, իսկ անդամների վերջում տրվող դադարները վերանում են, փոխարինվում արտասանական տակտավորմամբ: Ահա այսպիսի սկզբունքային տարբերություններ են նկատվում մեր երկու հատվածների բանաստեղծական ժառանգության մեջ, և դրանց ուսումնասիրության ընթացքում անպայման պետք է հաշվի առնել ռիթմական այդ առանձնահատկությունները:

АШХЕН ДЖРБАШЯН – ***О некоторых принципиальных различиях между западноармянской и восточноармянской метрикой***.– В статье рассматривается ряд фундаментальных различий между восточноармянской и западноармянской поэзией, которые особенно ярко проявились в середине XIX века. Это был период, когда предпринимались первые шаги по художественному освоению разговорного (новоармянского) языка, и просодические (фонетические, акцентные) различия двух ветвей языка четко отразились в формах построения поэтической речи. Силлабический стих, сформировавшийся в X-XII веках, развил ряд принципов, которые перешли в поэзию последующих эпох и были обоснованы в теоретических работах Мхитаристов (Багратуни, Хюрмюзян, Тироян, Хазикян и др.). Важнейшим вопросом, возникшим в тот период, было значение устойчивых ударений (констант) в поэтической строке и их ритмообразующая функция. Мхитаристы считали обязательным подчеркивать артикуляцию с помощью ударения, в то время как восточноармянская поэзия конца XIX века уже отказалась от этого принципа и придавала большее значение слоговому равенству и синтаксической независимости частей. Эти различия в ритмической структуре двух языков не остались незамеченными и даже послужили поводом для необоснованной критики со стороны западноармянских авторов. Одним из таких примеров является рецензия А. Хазикяна («Базмавеп», 1899, № 4), написанная по поводу нового поэтического сборника Ал. Цатуряна. Всестороннее исследование двух ветвей армянской поэзии показывает, что западноармянский силлабический стих в некотором смысле является промежуточной формой, сочетающей в себе тонические и силлабические принципы. Именно поэтому западноармянская поэзия преимущественно строится на четырех- и трехсложных частях, поскольку требование стабильного ударения заставляет

поэтов использовать более короткие отрезки, в то время как восточноармянская поэзия более склонна к использованию пятисложников.

Ключевые слова: *стихосложение, ритмика, слоговой размер, устойчивые ударения, словораздел, Арсен Хазикян, восточноармянская поэзия, западноармянская поэзия, сокращение слов, удлинение слов*

ASHKHEN JRBASHYAN – ***On Some Fundamental Differences between Western Armenian and Eastern Armenian Metrics.*** – The article examines a number of fundamental differences between Eastern Armenian and Western Armenian poetry, which became particularly evident in the mid-19th century. This was the period when the first steps were taken toward the artistic development of the spoken (New Armenian) language, and the phonetic, accentual, and pronunciation differences between the two branches of language were also clearly reflected in the forms of poetic speech. Syllabic verse, which was formed in the 10th-12th centuries, developed a number of principles that passed into the poetry of subsequent eras and were substantiated in the theoretical works of the Mkhitarists (Bagratuni, Hyurmuzian, Tiroyan, Khazikyan, and others). The main question that arose during that period was the meaning of stable stresses (constants) in the poetic line and their rhythm-forming function. The Mkhitarists considered it essential to emphasize articulation with stress, while Eastern Armenian poetry of the late 19th century had already abandoned this principle and attached greater importance to the equality of syllables and the syntactic independence of parts. These differences in the rhythmic structure of the two languages did not go unnoticed and even have provided a pretext for unwarranted criticism by Western Armenians. One such example is A. Khazikyan's review (Bazmavep, 1899, No. 4), written on the occasion of a new collection of poems by Al. Tsaturyan. A comprehensive study of the two branches of Armenian poetry reveals that Western Armenian syllabic verse is, in a sense, an intermediate form, combining stress and syllabic principles. This is precisely why Western Armenian poetry is predominantly built on tetra- and trisyllabic parts, since the requirement for stable stress forces poets to use shorter parts, while Eastern Armenian poetry is more inclined to use pentasyllables.

Key words: *versification, rhythm, syllabic meter, stable stress, word division, Arsen Khazikyan, Eastern Armenian poetry, Western Armenian poetry, abbreviation of words, lengthening of words*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Աբեղյան Մ. (1970)։ Երկեր, հ. Դ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. (Abegyan M. (1970): Erker, h. D, Er., HSSH GA hrat.):
Ալիշան Ղ. (1858)։ Նուագք, Գ, Վենետիկ, Սբ. Ղազար (Alishan G. (1858): Nuagq, G, Venetik, Sb. Gazar):
Անթիմոսեան Ա. (1821)։ Քերականութիւն գաղղիական, Վենետիկ, Սբ . Ղազար (Antimosean A. (1821): Qerakanut'yun gaggiakan, Venetik, Sb. Gazar):
Ավետիսյան Յու. (2002)։ Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Եր., ԵՊՀ հրատ. (Avetisyan Yu. (2002): Arevmtahay banastexgtut'yan lezun, Er., EPH hrat.):
Դուրյան Պ. (1971)։ Երկերի ժողովածու երկու հատորով, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. Duryan P. (1971): Erkeri zogovacu erku hatorov, h. 1, Er., HSSH GA hrat.):
Թիրեաքեան Յ. (1922)։ Հայկական տաղաչափութիւն, Նյու-Յորք (Tireaqean H. (1922): Hajkakan tagachaput'yun, New-York):

Թումանյան Հ. (1988)։ Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հարտ. (Tumanyan H. (1988): Erkeri liakatar zogovacu, h. 1, Er., HSSH GA hrat.):

Իսահակյան Ավ. (1973)։ Երկերի ժողովածու, հ. 1, Եր., «Հայաստան» (Isahakyan Av. (1973): Erkeri zogovacu, h. 1, Er., «Hayastan»):

Իսահակյան Ավ. (1977)։ Երկերի ժողովածու, հ. 2, Եր., «Հայաստան» (Isahakyan Av. (1977): Erkeri zogovacu, h. 2, Er., «Hayastan»):

Հիւրմիւզեան Եդ. (1839)։ Առձեռն բանաստեղծութիւն համառօտեալ, Վենետիկ, Սբ. Ղազար (H'yurm'yuzean Ed. (1839): Artsern banastegcut'yun hamaroteal, Venetik, Sb. Gazar):

Ղազիկեան Ա. (1899)։ Գրախօսական ակնարկներ, «Բազմավէպ», 1899, հ. 4 (Gazikyan A. (1899): Grakhosakan aknarkne r, «Bazmavep», 1899, h. 4):

Մեծարենց Մ. (1981)։ Երկերի լիակատար ժողովածու, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ. (Mecarenc M. (1981): Erkeri liakatar zogovacu, Er., HSSH GA hrat.):

Ներսես Շնորհալի (1968)։ Յաղագս երկնի և զարդուց նորա, Հայելուկներ, Ողբ Եդեսիոյ, Եր., «Հայաստան» (Nerses Shnorhali (1968): Yagags erkni ev zarduc nora, Hanelukner, Vogb Edesioj, Er., «Hayastan»):

Չոպանյան Ա. (1980)։ Նամականի, Եր, «Սովետական գրող» (Chopanyan A. (1980): Namakani, Er., «Sovetakan grog»):

Չոպանյան Ա. (1988)։ Երկեր., Եր., «Սովետական գրող» (Chopanyan A. (1988): Erker, Er., «Sovetakan grog»):

Պապայան Ռ. (1973)։ Վանկային և շեշտային սկզբունքների հարաբերությունը հայ ոտանավորում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, թիվ 1 (Papayan R. (1973): Vankayin ev sheshtayin skzbunqneri haraberut'yuny hay votanavorum, «Banber Erevan hamalsarani», 1973, 1):

Ջրբաշյան Էդ. (1976)։ Պոետիկայի հարցեր, Եր., «Հայաստան» (Jrbashyan Ed. (1976): Poetikaji hartser, Er, «Hayastan»):

Սեւակ Ռ. (1997)։ Երկեր, Էջմիածին, Մայր աթոռ (Sevak R. (1997): Erker, Echmiacin, Mayr ator):

Տերյան Վ. (1985)։ Բանաստեղծություններ. Լիակատար ժողովածու, Եր., «Սովետական գրող» (Teryan V. (1985): Bananstegcut'yunner. Liakatar zogogvacu, Er., «Sovetakan grog»):

Տիրոյեան Աթ. (1912)։ Բանաստեղծական լեզուն և հայկական չափին գրաւած տեղը, «Բազմավէպ», 1912, թիվ 10-11 (Tiroeyan At. (1912): Banastegcakan lezun ev hajkakan chapin gravac tegy, «Bazmavep», 1912, 10-12):

Տիրոյեան Աթ. (1913)։ Արուեստ տաղաչափութեան, Վենետիկ, Սբ. Ղազար (Tiroeyan At. (1913): Aruest tagashaput'yan, Venetik, Sb. Gazar):

Навасардян В. С. (1987): К Вопросам метрики восточноармянского стиха, «Բանբեր երևանի համալսարանի», № 3 (Navasardyan V. (1987): K voprosam metriki vostochnoarmqnskogo stikha, «Banber Erevan hamalsarani», № 3):

Тынянов Ю. (1965): Проблемы стихотворного языка. Москва, «Советский писатель» (Tinyanov Yu. (1965): Problemi stikhotvornogo yazika, Moskva, «Sovetskij pisatel»):

Томашевский Б. В. (1959): Стилистика и стихосложение, Ленинград (Tomashevskij B. V. (1959): Stilistika I stikhoslojenie, Leningrad):

Томашевский Б. В. (2007): Избранные работы о стихе. Учебное пособие, СПб., Изд. СПбГУ (Tomashevskij B. V. (2007): Izbrannie raboti o stikhe. Uchebnoe posobie, SPb., Izd. SPbGY):

Якобсон Р. (1923): О чешском стихе преимущественно в сопостовлении с русским, РСФСР, Гос. Изд. (Yakobson R. (1923): O chekhsom stikhe preimushchestvenno v sopostivlenii s pusskim, RSFSR, Gos. Izd.):

Attridge Derek (1982):The Rhythms of English Poetry, London-N.-Y., Routledge.

Pilshchikov, Igor (2024): The Concepts of "Verse", "Meter" and "Rhythm" in Russian Verse Theory // Studia Metrica et Poetica 11.1 (2024): 91–117.P. 100. https://doi.org/10.12697/SMP.2024.11.1.

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 26-35
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.026

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ[*]
Երևանի պետական համալսարան

Աշխարհի առասպելաբանաստեղծական պատկերը յուրակերպ դրսևորում ունի գեղարվեստական խոսքում: Լինելով աշխարհի երկրորդային մշակումը նշանային համակարգերի միջոցով՝ այն հիմնականում խարսխվում է նախնական առասպելաստեղծ աշխարհայացքի, արխայիկ կառույցների և արքետիպերի վրա (Топоров 1992, 161): Բանաստեղծական խոսքը մետաֆորիկ է, և գրողները շատ անգամ ակամա օգտվում են ժողովրդական մտածողության ունիվերսալ նշանային համակարգերից՝ դրանց հիմքով ստեղծելով նորերը:

Իսահակյանի քնարերգությունը խորությամբ հետազոտվել է հայ գրականագետների աշխատություններում, ուսումնասիրվել են գաղափարական, բովանդակային հարուստ շերտերը, որոնք այլազան գեղարվեստական դրսևորումներ են ստանում բանաստեղծական խոսքում:

Մեր ելակետը տվյալ դեպքում աշխարհի իսահակյանական պատկերում նշանային որոշ դրսևորումների քննության ճանապարհով դրանց ակունքներում եղած առասպելական պատկերացումների բացահայտումն է՝ մարդու և տիեզերքի, տարածության և ժամանակի, ձայնի և լռության որոշ արտահայտումներում, դրանց իսահակյանական մեկնությունն ու վերաձևակերպումը բանաստեղծական ինքնատիպ աշխարհում:

Բանալի բառեր – *Ավ. Իսահակյան, պոեզիա, աշխարհի առասպելաստեղծ պատկեր, տիեզերք, ձայն և լռություն, տարածություն, ժայռ, ծով, կատարածաբանական առասպելներ*

[*] **Նվարդ Վարդանյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող

Нвард Варданян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянской литературы и теории литературы имени академика Гранта Тамразяна ЕГУ, старший научный сотрудник отдела фольклора Института археологии и этнографии НАН РА

Nvard Vardanyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the YSU Chair of History of Armenian Literature and Literary Theory after Academician Hrant Tamrazyan, a Senior Researcher at the Department of the Folkloristics of the Institute of Archeology and Ethnography of the NAS of the RA

Էլ. փոստ՝ vardanyan.nvard@ysu.am ORCID ID: https://orcid.org/0000-0002-3888-3668

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 09.02.2026
Գրախոսվել է՝ 11.02.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

Բանաստեղծը և տիեզերքը

Մարդ – տիեզերք փոխհարաբերությունները յուրակերպ պատկերումներ են ստանում քնարերգության մեջ: Աշխարհի սուբյեկտիվ ընկալման կերպով պայմանավորված՝ գրողը վերստեղծում է աշխարհը ոչ թե իրենից դուրս, այլ հենց իր քնարական հերոսի ներսում՝ հոգում և սրտում: Իսահակյանի գրչին բնորոշ առանձնահատկությունը՝ բոլոր երևույթներն ու ապրումները հասցնել չափազանցումների՝ իրենց ծայրահեղ, գերադրական արտահայտումներով, այստեղ ևս յուրատիպ դրսևորում է ստանում. զանազան հիպերբոլիկ պատկերումներով աշխարհին իր ընդգրկումով փոքրանում է այնքան, որ տառացիորեն տեղավորվում է քնարական հերոսի սրտում. բանաստեղծական սիրտը մի յուրօրինակ երկինք է դառնում, որում իրենց տեղն ունեն բոլոր արարածների աստղերը («Սիրտս երկինք է… // Ամեն արարած // Աստղ ունի այնտեղ - // Գահ ունի այնտեղ»)[1]: Իսահակյանական այս չափումներում ոչ թե մարդն է տիեզերքում, այլ տիեզերքն է մարդու մեջ.

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ երկինքն է երգում (96):

Կամ՝ աշխարհը տեղավորվում է գրողի սիրող գրկում.

Լալիս է աշխարհն իմ սիրող գրկում,
Համայն աշխարհի բախտն եմ ես երգում (513):

Համաշխարհային վշտի մոտիվի խաղարկումներում մարդու ցավի մասշտաբներն են գերազանցում տիեզերական չափումներին.

Ոչինչ է մարդը՝ փոշի փոշու մեջ,
Իր ցավը, սակայն, տիեզերքից մեծ (513):

Նույնպիսի խաղարկում է անում Իսահակյանը մազից կախված մարդկային ճակատագրի առասպելական մոտիվի առնչությամբ: Մազի կամ կյանքի թելի կտրվելու մոտիվը ճակատագրի մասին պատկերացումներում մարդու մահվան հետ է կապվում: Կտրվող մազի առասպելը հանգում է նաև Մազե կամրջի հավատալիքին (Հարությունյան 2000, 437-442): Իսահակյանի բանաստեղծական աշխարհում միֆական այս պատկերը բոլորովին տարբեր դրսևորում է ստացել. մազից կախված է ոչ թե մարդը, այլ տիեզերքը, և այդ մազի միակ ապավենը բանաստեղծի սիրտն է:

Տիեզերքն այս անսահման
Իր ծանրությամբ ահագին
Կախված է սոսկ մի մազից,-
Եվ այդ մազն է իմ հոգին (477):

---

[1] **Իսահակյան Ավ.,** Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 1, Եր. , «Գիտություն» հրատ., 2003, էջ 85: Ավ. Իսահակյանի բանաստեղծություններից կատարվող մեջբերումները հիմնականում վերցված են այս հատորից, որին հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով միայն էջը:

Այս առումով բանաստեղծը կարծես նույնանում է Աստծուն: Ուշագրավ մի բանաստեղծության մեջ, որ վերնագրված է «Գիրք ծննդոց» (480), աշխարհի արարչագործության յուրօրինակ նկարագիր է տալիս բանաստեղծը: Աստված լույսը և այդ լույսը ըմբռնող էակին՝ մարդուն, իր մտքից և հոգուց է ստեղծում:

«Եվ լինի լույս», Աստված ասաց,
Եվ իր մտքից հեղեղացավ
Եվ ծավալվեց լույսը հզոր:
…Եվ երբ տեսավ անեղն Աստված
Որ բարի է լույսը հզոր՝
Մի շիթ առավ իրեն հոգուց,
Փոխադրեց
Օվկիանոսի ջրերի մեջ
Եվ ստեղծեց այնտեղ փոքրիկ
Այն էակը խորհրդավոր,
Որն ըմբռնեց լույսը հզոր:
Եվ այս վսեմ ու հրաշափառ
Ըմբռնումի ակնթարթով
Ավարտվեցավ
Օրինակարգ ու ներդաշնակ
Անհուն շենքը տիեզերքի
Անհուն հոգում այս էակի:
Եվ այդ եղավ
Արարչության օրը վերջին
(480-481):

Այսպիսով, «տիեզերքի անհուն շենքը» արարչագործ այս էակի հոգում է, ճիշտ այնպես, ինչպես աշխարհը տեղավորված է բանաստեղծի սրտում:

Տիեզերքի ձայնը և լռությունը

Աշխարհի պատկերի մյուս ուշագրավ դրսևորումը Իսահակյանի բանաստեղծական աշխարհում ձայնի ու լռության պատկերումն է: Իսահակյանը խաղարկում է հեքիաթային տարածված մոտիվը, ըստ որի՝ բնության ձայնը՝ թռչունների լեզուն հասկանալու գերբնական շնորհը, տրվում է միայն ընտրյալներին. «Ա՛խ, կար ժամանակ, // Ես այնպե՛ս ներհուն // Իմանում էի // Հավքերի լեզուն» (426), սակայն «կյանքի դժնի խաղերին» տրվելով՝ մարդը կորցնում է այս հրաշագործ կարողությունը:

Տիեզերական ձայնի և լռության ավելի ամբողջական և զուտ իսահակյանական պատկեր է ներկայացնում ***տիեզերական զանգը***[2]: 1898 թ. գրված մի բանաստեղծության մեջ մարդ-տիեզերք հիպերբոլիկ պատկերումներում բանաստեղծի սիրտը տիեզերական չափումների է հասել, գրկել և իրենով պատել է աշխարհը և զանգի պես ղողանջում է:

Ձայն-ձուն չըկա, սիրտս է միայն –
Մեծ լըռության վեհ լեզուն՝
Տիեզերքը գըրկած համայն –
Զանգի նըման ղողանջում… (157)

Բանաստեղծական խոսքը այսպիսով դառնում է տիեզերական «մեծ լռության լեզուն»: Բազմաթիվ բանաստեղծություններում հայտնվող այս պատկերն իր առավել ամբողջական դրսևորումն է ստանում «Տիեզերական զանգ» բա-

[2] Տիեզերական զանգի իսահակյանական պատկերավորման մասին տե՛ս **Իսահակյան Ավիկ**, Գիտական կենսագրություն, Գիրք առաջին (1895-1900), Եր., «Գիտություն», 2000, էջ 484-487:

նաստեղծության մեջ: Եթե բանաստեղծական հոգին, ինչպես որ արարչագործականը, տիեզերքն իր մեջ է կրում, ուրեմն բանաստեղծական խոսքը տիեզերական ձայնի արտահայտությունն է, և բանաստեղծի լեզվով տիեզերքն է խոսում:

Տիեզերքը ողջ – մի մեծ, անհուն զանգ,
Եվ հոգիս – նրա լեզվակը վսեմ (207):

Տիեզերքն ունի իր ձայնը, իր ղողանջը. դա բնության լեզուն է: Դեռ պոեզիայի ծագման՝ պաշտամունքային հիմների ժամանակից սկսած՝ քուրմ-բանաստեղծներն են համարվել աստվածների այն ընտրյալները, որոնց տրված է եղել տիեզերքի լեզուն հասկանալու շնորհը, աշխարհը խոսքերով վերստեղծելու գերբնական քերթողական ձիրքը (Վարդանյան 2023, 160-573): 1899-ին «Հիշատակարանում» կատարած մի ուշագրավ գրառման մեջ Իսահակյանն ուղղակիորեն է հիշատակում բնության այս ձայնի մասին՝ բանաստեղծական պատկերավորում լինելուց բացի՝ ներկայացնելով այն որպես իրական ապրում. «*Երբ ամայի, անբնակ, անմարդ, չոր բնության մեջ եմ դուրս գալիս... հենց կեսօրին, շոգին, մի տեսակ ձայն եմ լսում, կարծես բնությունը դնկում է — դը՛նկդը՛նկ*» (Իսահակյան 1977, 263-264):

Այս պատկերը զարգանում է բանաստեղծությունից բանաստեղծություն՝ ստանալով նորանոր դրսևորումներ: Բանաստեղծն իրեն համարում է տիեզերական զանգի լեզվակը:

Ճշմարտությունը մի հատ է միայն,
Եվ նա իմ մեջն է – անոթն եմ նորա.
Լեզվակը զանգի տիեզերական
Իմ մեջն է հնչում – բարբառն է նորա (Իսահակյան 2011, 217):

Տիեզերքն իր հոգում կրող բանաստեղծը լսում է նրա ղողանջը, և այս իմաստուն ձայնը մարդկանց փոխանցելը դառնում է նրա՝ որպես բանաստեղծ-մարգարեի կոչումը:

Եվ ղողանջում է տիեզերքն ամեն –
Եվ իմ հոգումն է, իմ հոգին է այն,
Որ ղողանջում է – ես մարգարե եմ…
…Եվ դեպի ամբոխն իջնում եմ ահա
Նո՛ր կտակներով, նո՛ր պատգամներով.
Դեպ նրա հոգին գահավիժում եմ՝
Նրան խայթելու և քարոզելու,
Ե՛վ արտասվելու, և՛ այրվելու…(207)

Բանաստեղծի այս մարգարեացումը նրան բարձրացնում է սովորական մարդկանցից, տիեզերքի իմաստուն ձայնը մարդկանց փոխանցելու նրա յուրահատուկ շնորհը ստեղծում է վերև/ներքև, աստվածային/մարդկային՝ աշխարհի առասպելական կառույցին բնորոշ մոդելը: Բանաստեղծը աստծու պես վերևից է իջնում դեպի ամբոխը: Այս պատկերը վերստին արծարծում է Օլիմ-

պոսի մասին հնավանդ պատկերացումը, որ հայ առասպելաբանության պարագայում կապվում է Մասիսի հետ (Պետրոսյան 2020, 158-178), և Իսահակյանի պոեզիայում ևս հաճախ հիշատակվող Մասիսի բարձունքի պատկերը որոշակի առասպելական պատկերացումների փոխանցողն է դառնում:

Ծովի, լեռան և ժայռի պատկերը

Ընդհանրապես, լեռը և ժայռը հաճախ հանդես եկող խորհրդանիշներ են Իսահակյանի բանաստեղծական պատկերակառույցում: Քնարական հերոսի ձգտումը դեպի լեռան գագաթը, այնտեղ լինելու զգացողությունը, այնտեղ թաղվելու փափագը կրկնվում են տարբեր բանաստեղծություններում:

Իմ սիրտն այնտեղ է – հայրենի հզոր
Լեռների գլխին, արծիվների մոտ… (342)

Խաղարկելով Ռոբերտ Բըրնսի «Իմ սիրտը լեռներում է» հայտնի պատկերը, որի անգերազանցելի արտահայտությունն է Սարոյանի հայտնի պիեսը, Իսահակյանը միևնույն ժամանակ ստեղծում է իր պոեզիային հատուկ պատկեր-խորհրդանիշների նշանային մի համակարգ, որը խորապես կապված է նրա բանաստեղծական աշխարհի փիլիսոփայությանը: Միֆական պատկերներ է ներկայացնում քնարական հերոսի սիրտը կտցող, սուր մագիլներով կուրծքը պատռող ու դեպի լեռները տեղափոխող արծվի պատկերումը.

Եվ արծիվ մի սև իջավ սըրարշավ,
Իջավ երկնքից և կուրծքըս փըշրեց
Եվ սիրտըս կըտցեց, և սիրտս տարավ
Դեպի վե՛հ լեռներ, ժայռեր բարձրաբերձ (332):

Մեկ ուրիշ բանաստեղծության մեջ բանաստեղծն ինքն է խնդրում լեռների սևաթույր արծվին սուր ճիրաններով հանել մարդկանց օրենքներով շղթայված իր սիրտը և թաղել խրոխտ լեռնագագաթներում (352):

Պրոմեթևսի առասպելի ակնարկն այստեղ ակնհայտ է, սակայն ի՞նչ համատեքստում: Մարդկությանը աստվածային հուրը հասցրած և ժայռին գամված Պրոմեթևսի լյարդը կտցող արծիվը կատարում էր Զևսի հրամանը՝ պատժելով հերոսին: Իսահակյանն ինքն է ուզում ենթարկվել այս խոշտանգմանը՝ հավանաբար զուգահեռ ստեղծելով Պրոմեթևսի և իր քնարական հերոսի միջև, որոնք երկուսն էլ հանուն մարդկության բարօրության էին գործում: Ի վերջո, Իսահակյանի քնարական հերոսին խորթ չէ փրկչաբանական գործառույթը, և, ինչպես հաջորդիվ կտեսնենք, լեռան և ժայռի խորհրդապատկերներն այստեղ առանցքային դեր ունեն:

Իսահակյանի բանաստեղծությունների նշանային համակարգի քննությունն ի հայտ է բերում հետևողականորեն կրկնվող մի համադրություն՝ ծով, ծովի մեջ բարձրացող ժայռ, ժայռի կամ լեռան կատարին թևաբախող արծիվ: Նշանային այս դրսևորումները շատ մոտ են աշխարհի առանցքի մասին հնա-

գույն հայկական պատկերացումներին, որոնք հատկապես հարուստ դրսևորումներով մեզ հասել են միջնադարյան բազմատարբերակ ծիսերգի ձևով (Մնացականյան 1956, 304-326)։

– Ահա տեսէ՛ք. զի՞նչ կայր ծովին,
Որ նաւն ուռամբ գայր։
……
– Ձագն ի ձուին,
Ձուն ի բնին,
Բունն ի ճղին,
Ճուղն ի ծառին,
Ծառն ի տփին,
Տուփն ի բեմին,
Բեմն ի վիմին,
Վէմն ի նաւին,
Նաւն ի ծովին,
Ծովն ի տակին,
Տակն աւազին,
Որ կու ծփայր ծովն.
(Մնացականյան 1956, 317, 322)։

Սարգիս Հարությունյանը ծիսերգն իրավացիորեն համարում է «Տիեզերական մոդելավորված բարդ ու բազմաստիճան պատկերման մի բացառիկ նմուշ» (Հարությունյան 2000, 25)։ Ծովի մեջ՝ նավ, նավի վրա՝ վեմ, վեմի վրա՝ բեմ, վրան՝ ծառ, ծառի վրա՝ թռչուն. այս կառույցը հանգեցնում է համաշխարհային ջրհեղեղի առասպելին (Հարությունյան 2000, 27)։ Քառսային ջրերի մեջ տատանվող նավի պատվարն ու հենարանը ջրհեղեղի վախճանաբանական առասպելում սարն է դառնում, որի վրա հանգրվանում է տապանը։

Այս պատկերներին շատ հարազատ է Իսահակյանի հայտնի բանաստեղծությունը։

Կենսական ծովի հույզերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վես ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։
Հողմ ու փոթորիկ շուրջըս են հածում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր։
Ինձնի՛ց բռնեցեք, խորտակվող մարդիկ,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,
Ձեր խարիսխները ոտքիս տակ ձգեք,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր (102)։

Ժայռը քնարական հերոսի փոխաբերությունն է, ծովն ալիքների փոխարեն հույզերից է կազմված, նավի փոխարեն հիշվում են խարիսխները, սակայն պատկերը կրկնում է աշխարհակործանման առասպելի կառույցը, որտեղ փրկչաբանական գործառույթը ստանձնում է ինքը՝ քնարական հերոսը՝ որպես մի ժայռ, որպես աշխարհը կանգուն պահող ամուր մի առանցք։ Ժայռի՝ որպես հուսալի և ամուր հենասյան պատկերումներ հանդիպում են նաև Իսահակյանի այլ բանաստեղծություններում («Մեջքըս դեմ տամ քանց ժեռ-լեռ…», 123)։

Ուշագրավ է, որ համամարդկային վշտի թեմատիկայում և համընդհանուր փրկչաբանական մոտիվում հիշատակվում է ժայռը, իսկ երբ խոսքը հայրենիքի և հայոց ազատության մասին է, այստեղ Մասիսն է հիշատակվում: Նույն կերպ, եթե տիեզերական ճշմարտությունների մասին ***տիեզերական զանգն*** է ղողանջում բանաստեղծի «լեզվակ-լեզվով», ապա հայրենիքի տագնապների մասին ղողանջում է Մասիսի վրայի ***ազատության զանգը***: Այս պատկերը հատկապես տեսանելի է «Մասսա մանուկ» վիպասքում և զարգանում է նաև այլևայլ բանաստեղծություններում: Այսպիսի պատկերներում Մասիսի, ազատության զանգի և Մասիսի գագաթին թևածող արծվի պատկերները հայրենիքի ազատության խորհրդաբանությամբ են արտահայտվում:

Ընդհանրապես, ինչպես ժայռը աշխարհի համար, այնպես Մասիսը հայրենիքի համար յուրօրինակ առանցքի դեր են կատարում: Հայրենի լեռների՝ որպես հզոր հսկաների ավանդազրույցը նոր շունչ է ստանում Իսահակյանի պոեզիայում՝ ժամանակի առասպելական չափումները հասցնելով մինչև աշխարհաստեղծման սկիզբ: Հայրենի լեռներին և հատկապես Սիսին ու Մասիսին ռազմի կոչը հնչում է որպես առասպելական ժամանակի վերադարձի կոչ, որպես առասպելի տարժամանակյա կրկնություն:

Է՛յ, Սիս-Մասի՛ս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս-Մասի՛ս. ջա՛ն տղերք,
Դուք տասի չափ-հազարի չափ,
Ձեզի մեռնիմ, ջա՛ն տղերք:
…Առյուծի պես, հայ-ախպրտանք,
Վու՛հ, վրա տանք դուշմընին (181):

Մասիսի պատկերներում մի յուրօրինակ հանրագումարի է գալիս աշխարհի տարածաժամանակային պատկերը: Մասիսը ոչ միայն տարածական առումով հայրենիքի առանցքն ու հենասյունն է, այլև հավերժության ցուցիչը («Արարատի ծեր կատարին դար է եկել վայրկյանի պես ու անցել», 462): Մասիսի՝ որպես հայրենիքի սյուն-առանցքի պատկեր-խորհրդանիշը հայտնվում է նաև հայ այլ բանաստեղծների պոեզիայում: Հիշատակելի է հատկապես Շիրազի հայտնի «Կտակը»:

Ընդհանրապես, լեռանը վերաբերող պատկերները քողարկված առասպելական շերտեր են բացահայտում Իսահակյանի պոեզիայում: Դեպի լեռները ձգտող քնարական հերոսին հատուկ են աշխարհաթողության մոտիվները. մարդկության շղթայող օրենքներից հոգնած բանաստեղծը դեպի լեռներն ու լեռան բարձունքն է ձգտում, որն ազատության խորհրդանիշն է դառնում, ցանկանում է հեռանալ գորշ ամբոխից, բարձրանալ նրանից (352): Այսպիսի մոտիվները Իսահակյանի պոեզիայում առիթ են տալիս տեսնելու Նիցշեի գերմարդու փիլիսոփայության ազդեցությունը, որը, սակայն, Իսահակյանի պարագայում խորքային էություն չի դառնում, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատում է գրականագետ Ժ. Քալանթարյանը, Իսահակյանի հերոսները ժողովրդի ազատության համար են պայքարում, մինչդեռ Նիցշեի գերմարդը դեմ

էր շատ-շատերի ազատությանը (Քալանթարյան 2002, 21)։ Իսահակյանի պոեզիայի պարագայում մարդկությունից փախչող բանաստեղծը մարդկությանը ճիշտ ուղիով տանելու մասին է երազում, ճշմարիտ արժեքների մասին մարդկանց պատմելով՝ նրանց ավելի լավը դարձնելու երազանքն է փայփայում։ Այստեղից է ծնվում Իսահակյանի քնարական հերոսի բարդ և հակասական կերպարը, որը բնութագրական է ժայռում փակված հերոսի առասպելույթին։ Ե՛վ Միհրի, և՛ Արտավազդի դեպքում մենք գործ ունենք հակասական կերպարների հետ՝ չարի և բարու հատկանիշներով օժտված։ Այս հակասականությունը, որքան էլ տարբեր բացատրություններ ունենա, ծնվում է ժամանակի վախճանն ու նոր սկիզբը նշանավորող կատարածաբանական առասպելի էությունից։ Ժայռում փակվող հերոսը մի կողմից աշխարհակործան է, մյուս կողմից՝ աշխարհաշեն։ Կամ գուցե և այս երկու կողմերը լրացնում են իրար, և սա աշխարհը քանդող և նորից կառուցող հերոսն է, ինչպես որ ցույց է տալիս Իսահակյանը «Սասմա Միհր» պոեմում, նաև էպոսի դիցաբանությանը նվիրված հոդվածում՝ Միհր-Միհրի էպիկական կերպարը վերլուծելիս (Իսահակյան, 2020, 283-298)։ Իսահակյանի դեպքում ևս մարդատյացությունը և անհուն հումանիզմը փոխլրացնում են իրար, և դա ակներև է հատկապես լեռան և ժայռի պատկերի վերլուծությամբ. մարդկանցից դեպի լեռները փախչող քնարական հերոսն ինքը ուզում է մի ժայռ, մի ամուր հենասյուն դառնալ՝ մարդկությանը փրկելու համար։

Մասիսի պատկերի հետ կապված փրկչաբանական առասպելույթի արծարծումն առավել ակնհայտ է դառնում «Մասսա Մանուկ» վիպասքում, որտեղ հայ դիցաբանությանը քաջածանոթ հեղինակը ստեղծել է Մասիսի ճառագող գագաթից հայտնվող արևի և արևամոր՝ մայր և մանուկ Հայաստանի ի հայտ գալու միֆական պատկերը՝ որպես Հայոց աշխարհի լուսաբացի՝ ազգային բանահյուսական ավանդույթին հատուկ մի պատկերավորում (Իսահակյան 2008, 52-177)։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Իսահակյանի պոեզիայում աշխարհի նշանային պատկերը, որոշակիորեն սնվելով առասպելական ակունքներից, բացահայտում է իսահակյանական բանաստեղծական աշխարհընկալման ինքնօրինակ շերտերը, թույլ է տալիս տեսնել աշխարհի կառույցի նախակաղապարի արծարծման հեղինակային կերպը, որտեղ ևս մեկ անգամ բացահայտվում է ազգային և համամարդկային վշտերով ապրող մեծ հումանիստ բանաստեղծը։

НВАРД ВАРДАНЯН – ***Мифопоэтический образ мира в поэзии Аветика Исаакяна.*** – Мифологический образ мира находит уникальное проявление в художественной речи. Будучи вторичной разработкой мира посредством знаковых систем, он в основном опирается на исходное мифологическое мировоззрение, архаичные структуры и архетипы (Топоров 1992, 161). Поэтическая речь метафорична, и писатели часто неосознанно используют универсальные знаковые системы народного мышления, создавая на их основе новые.

Литература Аветика Исаакяна неоднократно становилась предметом анализа в работах армянских литературных критиков, исследовались богатые идеологические и содержательные пласты, которые находят различные художественные проявления в поэтической речи.
В данном случае исходной точкой является обнаружение мифических представлений в их истоках посредством изучения определенных мифопоэтических образов в изображении мира, созданном Исааком: в некоторых выражениях человека и космоса, пространства и времени, звука и тишины, их интерпретации и переформулирования Исааком в уникальном поэтическом мире.

Ключевые слова: *Ав. Исаакян, поэзия, мифопоэтический образ мира, вселенная, звук и тишина, космос, скала, море, эсхотологические мифы*

NVARD VARDANYAN – ***The Mythopoetic Image of the World in the Poetry of Avetik Isahakyan***. – The mythopoetic image of the world has a unique manifestation in poetry. Being a secondary elaboration of the world through sign systems, it is mainly anchored on the initial mythological worldview, archaic structures and archetypes (Топоров 1992, 161). Poetic speech is metaphorical, and writers often unwittingly use the universal sign systems of folk thinking, creating new ones on their basis.
Isahakyan's lyrics have repeatedly been the subject of analysis in the works of Armenian literary critics, the rich ideological and content layers that receive various artistic manifestations in poetic speech have been examined.
Our starting point in this case is the discovery of the mythical notions at their origins through the examination of certain symbolic representations in Isahakyan's mythopoetic picture of the world: in certain expressions of man and the universe, space and time, sound and silence, their interpretation and reformulation in a unique poetic world of Isahakyan.

Key words: *Avetik Isahakyan, poetry, mythopoetic image of the world, universe, sound and silence, space, rock, sea, eschatological myths*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Իսահակյան Ավ. (2003), Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 1, Եր., «Գիտություն» (Isahakyan Av. (2003), *Erkeri liakatar joghovatsu‘ 14 hatorov*, h. 1, Yer., 2003, Gitut‘yun).
Իսահակյան Ավ. (2011), Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 2, Եր., «Գիտություն» (Isahakyan Av. (2011), *Erkeri liakatar joghovatsu‘ 14 hatorov*, h. 2, Yer., Gitut‘yun).
Իսահակյան Ավ. (2008), Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 4, Եր., «Գիտություն» (Isahakyan Av. (2008), *Erkeri liakatar joghovatsu‘ 14 hatorov*, h. 4, Yer., Gitut‘yun).
Իսահակյան Ավ. (2020), Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 11, Եր., «Գիտություն» (Isahakyan Av. (2020), *Erkeri liakatar joghovatsu‘ 14 hatorov*, h. 11, Yer., Gitut‘yun)
Իսահակյան Ավ. (1977), Հիշատակարան, կազմող՝ Արամ Ինճիկյան, Եր. (Isahakyan Av. (1977), *Hishatakan*, Yer.).
Իսահակյան Ավիկ (2000), Գիտական կենսագրություն, Գիրք առաջին (1895-1900), Եր., «Գիտություն» (Isahakyan Avik (2000), *Avetik Isahakyan. gitakan kensagrut‘yun*, Girk‘ arajin (1895–1900), Gitut‘yun hrat., Yerevan).

Հարությունյան Ս. (2000), Հայ առասպելաբանություն, Բեյրութ (Harut‘yunyan S. (2000), *Hay araspetabanut‘yun*, Beirut).

Մնացականյան Ա. (1956), Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ. (Mnatsakanyan A. (1956), *Haykakan mijnadaryan joghovrdakan yerger*, Yerevan, HKhSR GA hrat.).

Պետրոսյան Ա. (2020), Մասիս/Արարատը՝ որպես Օլիմպոս և նրա առասպելները // Լրաբեր հասարակական գիտությունների, № 2, էջ 158-178 (Petrosyan A. (2020), *Masis/Araraty՝ vorpes‘ Olimpos yev nra araspetnery*, *Lraber hasarakakan gitut‘yunneri*, № 2, ej 158–178).

Վարդանյան Ն. (2023), Խոսքի պաշտամունքի և բանաստեղծի՝ որպես քուրմ-ծիսարարի առասպելական ընկալումների շուրջ // Բանահյուսություն և գրականություն / Միջազգային գիտաժողովի նյութեր, Գավառ, էջ 160-273 (Vardanyan N. (2023), *Khoski pashtamunki yev banasteghtsi՝ vorpes‘ k‘urm-tsisarari araspetakan ynt‘alumneri shurj* // *Banahusut‘yun yev grakanut‘yun. Mijazgayin gitajoghovi nyuter*, Gavar, ej 160–273).

Քալանթարյան Ժ. (2002), Անդրադարձներ, Եր., «Զանգակ-97» (Kalant‘aryan Zh. (2002), *Andradardzner*, Yer., «Zangak-97»).

Топоров В.Н. (1992), Модель мира (мифопоэтическая) // Мифы народов мира, Энциклопедия, т. 2, Москва, Советская энциклопедия, сс. 161-164 (Toporov V. N. (1992), *Model‘ mira (mifopoeticheskaya)* // *Mify narodov mira, Entsiklopediya*, t. 2, Moskva, Sovetskaya entsiklopediya, ss. 161–164)

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 36-50
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.036

ԿԱՐՈՏԻ ԵՎ ՆԱՀԱՆՋԻ ՊԱՏԿԵՐԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄԵՆ ԴԱՐՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԱՆ*
ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ

Լիբանանահայ գրող, թարգմանիչ Արմեն Դարյանի գրական ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրավում կարոտի և նահանջի թեմայով պատմվածքները, որոնք դարձել են սույն հետազոտական աշխատանքի առարկան: Քննելով պատմվածքների թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները՝ հոդվածում առաջարկվում է տեսակետ, ըստ որի՝ Դարյանի գեղարվեստական համակարգում կոմպոզիցիոն մասերը, նրանց միահյուսումները արված են կերպարաստեղծման հատուկ միտումով: Ուսումնասիրության նպատակն է պատմվածքներում բացահայտել կարոտի պատկերների ու խորհրդանիշների կիրառման ձևերը և նահանջի մեխանիզմները: Հոդվածում առաջադրված են մի քանի խնդիրներ՝ ա) ուսումնասիրել կարոտի էթնոմշակութային խորհրդապատկերայնությունը, բ) մեկնաբանել պատմվածքների հերոսների անունների ընտրությունը, գ) քննել նահանջի խնդիրը տարեց հերոսների և նրանց զավակների փոխհարաբերությունների համատեքստում: Հետազոտությունը կատարվել է վերլուծական ու համադրական մեթոդներով: Էթնոմշակութային-մարդաբանական մոտեցումներով ուսումնասիրվել է պատմվածքների խորհրդապատկերայնությունը, լեզվահոգեբանական օնոմաստիկ (անունագիտական) գործիքի միջոցով ներկայացվել, մեկնաբանվել են անտրոպոնիմները և դրանց շրջումը, «օտարի բարդույթ»-ի սոցիալ-հոգեբանական մոտեցման միջոցով ներկայացվել են հերոսների կարոտի ձևավորման հայեցակետերը: Հոդվածի արդիականությունը պայմանավորված է Դարյանի պատմվածքների՝ կարոտի և նահանջի պատկերավորման համակարգի նոր, միջգիտակարգային վերլուծությամբ:

* **Նաիրա Բալայան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի սփյուռքահայ գրականության ուսումնասիրման բաժնի ավագ գիտաշխատող, «Հայբուսակ» համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, դասախոս
Наира Балаян – кандидат филологических наук, старший научный сотрудник отдела армянской литературы диаспоры Института литературы им. М. Абегяна НАН РА, доцент, преподаватель, заведующая кафедрой арменоведения Ереванского университета «Айбусак»
Naira Balayan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Department of the Armenian Diaspora Literature at the NAS of the RA Institute of Literature after M. Abeghyan, Associate Professor, lecturer, Head of the Department of Armenian Studies of Yerevan "Haybusak" University
Էլ. փոստ՝ nabalayan@gmail.com, ORCID ID: https://orcid.org/0000-0003-3530-3434

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 19.05.2026
Գրախոսվել է՝ 25.05.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

Բանալի բառեր – *միահյուսված կառույց, օտարի բարդույթ, ինքնության կորուստ, խորհրդապատկեր, անտրոպոնիմ, տոպոնիմ*

Ներածություն

Եղեռնից հետո հայկական գաղթօջախներում ստեղծված գրականությունը հիմնականում բնորոշվում է համակարգային նմանությամբ, որի առանցքում կորուսյալ հայրենիքն է, կարոտը, նահանջը, ինքնության փնտրտուքը, ֆիզիկական ու հոգեբանական հարմարեցման խնդիրները: Այդուհանդերձ, կարոտի և նահանջի գեղարվեստական հայեցակետերը տարբեր կերպ են արտացոլվում ֆրանսիական, ամերիկյան, լիբանանյան և այլ գաղթօջախներում: Ի տարբերություն եվրոպական և ամերիկյան երկրների հայ գաղթօջախների գրականության, որոնցում հայրենիքի հանդեպ կարոտն անչափելի էր, իսկ նահանջը՝ ահագնանալի, լիբանանահայ իրականության մեջ նահանջի խնդիրը Եղեռնից հետո սուր չէր դրված, քանի որ «Մերձավոր և Միջին Արևելքի հայ գաղութները, շրջապատված այլադավան ընդունող հասարակությամբ, համեմատաբար ավելի զորեղ ինքնապաշտպանական մեխանիզմ ունեին ուծացման վտանգի առջև: Առավել ևս շեշտելի է մշակութային բախման բացակայությունը կամ գրեթե բացակայության պարագան» (Դալլաքյան, 2000: 5)։ Լիբանանահայ գաղութը մասնավորապես հիմնված էր Մուսա լեռան գյուղերից միասնաբար գաղթած բնակչության հավաքականության վրա, և կղզիացած այս մշակույթի «ազգային-էթնիկական, կրթական, մշակույթի հզոր կառույցում» (Դալլաքյան, 2000: 5) ընդգծելի է գրողների յուրահատուկ կապը պատմական հիշողությանը, ավանդույթներին ու ինքնության խորհրդանիշներին: ««Հայրենի կարօտանքը» մանավանդ արձակում» (Թեօլեօլեան, 1977: 48), ինչպես նաև նահանջի դրսևորումները կենտրոնաձիգ տեղ են գրավում լիբանանահայ գրողների, այդ թվում Արմեն Դարյանի (Ալֆոնս Ադդարյան, 1924-1989) գրականության մեջ: Նրա ստեղծագործություններում կարոտն ու նահանջը՝ որպես այդպիսիք, համընթաց են ընթանում. հայրերը կարոտի կրողն են, որդիները և թոռները՝ նահանջի, օտարացման, բայց այս ամենը սակավ երևան է գալիս Լիբանանում ապրող հերոսների, իսկ առավելապես՝ Բեյրութից ու Հալեպից Ամերիկա ու Անգլիա գաղթած հերոսների արարքներում և մտքերում: Դարյանը հետևողականորեն դիմել է խորհրդապատկերային և կառուցվածքային որոշակի համակարգերի մեջ կարոտն ու նահանջը գեղարվեստաբանելու սկզբունքին: Նրա պատումներում դրանք առարկայացել են համամարդկային և ազգային խորհրդանշանների՝ մայր, թթենի, ծառ, լեռ, և անունների միջոցով՝ Արամ, Նահապետ, Անդրանիկ, Նորայր՝ հանդես գալով ոչ միայն ավանդական նշանակություններով, այլև նոր՝ շրջված իմաստներ ձեռք բերելով: Դարյանի գեղարվեստական համակարգը չունի խոր, համակողմանի ուսումնասիրություն, և այդ առումով սույն հոդվածը գալիս է մասնակիորեն լրացնելու այդ բացը՝ որպես հետազոտության առարկա դիտարկելով կարոտի և նահանջի թեմատիկ ուղղվածություն ունեցող պատմվածքները: Հոդվածում փորձ է արվում հիմնավորելու կոմպոզիցիոն կառուցվածքների

դերանշանակությունը, համակարգելու և ներկայացնելու մոր, տան, ծառի, լեռան, ձիու խորհրդանշանների օգտագործման միտումները պատմվածքներում, ընդգծելու դրանց կապվածությունը նահանջի ու կարոտի հիմնահարցերին: Առաջին անգամ հայ գրականագիտության մեջ նահանջն և կարոտն արտացոլող անուն-պատկերները ուսումնասիրվում են օնոմաստիկ սկզբունքների տեսանկյունով: Վերոնշյալ մոտեցումները ապահովում են հոդվածի գիտական նորույթն ու արդիականությունը:

Ավանդույթների շարունակություն՝ կոմպոզիցիոն մասերի միահյուսվածքում

«Հայրենի կարօտանքի» և ուծացման թեմաներով ստեղծագործությունները հատկապես հայ գաղթօջախների գրականության մեջ ճանաչվեցին որպես կարոտի և նահանջի գրականություն: Եթե կարոտի գրականությունը «գեղեցիկի, վեհի, կատարյալի գրականություն էր»՝ կապված ազգային ավանդույթներին, մտածողությանն ու հողին (Դեմիրճյան, 1994: 89), ապա ««Նահանջի»՝ իբր եզրի գործածության առաջին իմաստը նշանակել է ազգայինից (բովանդակությունից և ձևից) հրաժարումը» (Դալլաքյան, 2000: 9): Առաջին անգամ «նահանջականություն» եզրը շրջանառության մեջ է դրել «Յառաջ» օրաթերթի աշխատակից Մկրտիչ Երիցանցը, որը, քննադատելով նոր գրողների՝ Շ. Նարդունու, Ն. Պեշիկթաշլյանի, Վ. Շուշանյանի գրելու թեմաները, դրանք համարում է «փախուստի ձգտում մը հայ ներաշխարհէն, նահանջականութիւն մը հայ նորագոյն անցեալին առջեւ» (Երիցանց, 1929: 2)[1]: Շ. Շահնուրից հետո հատկապես ֆրանսահայ գրականության մեջ, պայմանավորված հեղինակային առանձնահատկություններով, շեշտվում էր նահանջի խնդիրը: «Շահնուրն ընդգծում էր նահանջի իրողությունը, Որբունին ընդգծում էր ընտանիքի թշվառ կեցությունը օտար միջավայրում, Հ. Զարդարյանը կարևորում էր հայ մարդու՝ նոր աշխարհում դժվարությունների հաղթահարման գիտակցությունը, գոյատևելու, պայքարով ապրելու հայոց ջանքերը» (Շահինյան, 2013: 121): Չնայած և՛ ֆրանսահայ, և՛ ամերիկահայ գրականությունը սնվում էր ազգային ակունքից, այդուհանդերձ, նրանց վրա անհերքելի էր ժամանակակից Եվրոպայում տիրող գաղափարախոսությունը՝ կապված հետպատերազմյան տրավմայի, անհատի ազգային արժեքների նորովի մեկնաբանման, ինքնության որոնումների խնդիրներին: Այս սերնդի հոգեբանական նկարագիրը համաշխարհային հատույթում դիտարկելու դեպքում անմիջական աղերս է ստեղծվում կորուսյալ սերնդի հետ: Դրա նախնական փորձը արել է Կ. Դալլաքյանը, որը համարում է, որ ո՛չ Շահնուրի, ո՛չ էլ նույն ուղղության գրականությունը բնավ էլ «նահանջի գրականություն» չէ, այլ խիստ արդիական է թե՛ «ազգայինի» ընկալմամբ ու հարցադրմամբ, թե՛ բուն «նահանջի» մեխանիզմի ըմբռնմամբ ու լայնահուն մեկնաբանությամբ» (Դալլաքյան,

[1] Ուշագրավ է, որ հեղինակը չի տալիս Շահնուրի անունը, որը արդեն «Յառաջ»-ում որպես թերթոն տպագրում էր «Նահանջ առանց երգի» վեպը. նույն համարում էր վեպի մի մասը:

2000: 15): Ֆրանսահայ և ամերիկահայ գրականությունը այս տեսակետից «հետպատերազմյան կորուսյալ սերունդ հորջորջված մարդկանց խաթարված կյանքի պատմությունն էր՝ անթաքույց, գերիրապաշտական կոչվող գրականության նորովի ընկալումներով» (Դեմիրճյան, 1994: 87-88):

Լիբանանահայ գրող Արմեն Դարյանը (1924-1990) Եղեռնից հետո այլ երկրներում ապաստան գտած գրողների գրական ավանդույթների շարունակողը եղավ: Նրա գրականության մեջ պատկերվում էին հայ մարդու կարոտն ու նահանջը, բայց մի շարք պատմվածքներում շեշտադրված է գլխավորապես տարեց սերնդի հոգեբանական տրավման՝ առթված կորսված հայրենի եզերքի կարոտից ու օտար երկրում ազգային ինքնության պահպանման ջանքերից: Դարյանի պատումների մեջ տեսանվում է օտար ափերում պարտադրաբար հայտնված հայ մարդու ամենօրյա դրաման, որը սկսվել էր ոչ միայն օտար միջավայրում ծառացած խնդիրներից, այլև իր զավակների և թոռների՝ աստիճանաբար խորացող օտարացումից:

Գ. Սևանը համարում է Դարյանի գրականությունը նոր կարոտի գրականություն[2]. Եղեռնից հետո 2-րդ սերնդի գրողները պատմական հիշողությամբ իրենց ստեղծագործություններում նույնպես պատկերում էին կորսված, հետևաբար իդեալականացված հայրենիքի կարոտը: Հայրենիքի կարոտի ստեղծաբանումը իրապես համազգային երևույթ է. աշխարհաքաղաքական գործընթացներում գաղթական գրողների և նրանց հերոսների հայեցակարգում «ժամանակի ընթացքում տեղի է ունենում հայրենիքի և անցյալի կերպարի իդեալականացում. մի կողմից՝ արտագաղթողի կարոտը տխրություն է, հուզական խանգարում, հայրենիքի կարոտ, որոշակի ռեֆլեքսիա, մյուս կողմից՝ սրանք գործողություններ են, որոնք ուղղված են հայրենիքի հիշողությունը պահպանելուն և տուն վերադառնալուն» (Урядова, 2019: 15): Հայկական կարոտը չտեսած հայրենիքի, նրա ավանդույթների, լեզվի ու ավագներից պատմական հիշողությամբ փոխանցված ժառանգության կորստի ցավով մորմոքվող կարոտն է:

***

Արմեն Դարյանի պատմվածքների հերոսները տարեց ու երիտասարդ հայ գաղթականներն են. ավագները՝ ողբերգական պատմությամբ, անցյալի տրավմատիկ հիշողությամբ, օտար երկրում հայրենի հողի, ազգային ծեսերի ու ավանդույթների սրտմաշուկ կարոտով ու օտար մշակույթի դեմ հանդիման՝ շփոթ ու մոլորված, երիտասարդները՝ հակառակը՝ տրված օտարացմանը: Այսպիսի

[2] Գ. Սևանը, գրելով նոր կարոտի գրականության մասին, այդ ձևակերպումը մե՛կ դնում է չակերտների մեջ (Սևան, 1997: 109), մե՛կ գրում որպես եզրույթ և նշում նոր կարոտի գրողներին՝ Արմեն Դարյան, Սիմոն Սիմոնյան, Հակոբ Ասատուրյան, Վահե Հայկ և այլք: Կար արդեն նոր՝ Խորհրդային Հայաստան, հետևաբար այդ կարոտը բնորոշվում է որպես նոր հայրենիքի կարոտ. «Հայրենի տան կորստյան թախիծ», նրանով բնորոշվող հին կարոտ և «Մայր հայրենիքի պատկերը, որպես խարիսխ ու հենարան, որպես հավատի և տոկունության աղբյուր», այսինքն՝ «արդեն նրանով սկիզբ առնող նոր կարոտ» (Սևան, 1997: 63):

կերպարներ կերտելու ոճը առանձնահատուկ է, և իրականության վերարտադրումը համեմված է խորհրդապաշտական պատկերներով: *«Արմեն Դարյանին հաջողվել է հաճախ մի հատիկ բառով պատկերել մարդկային, ազգային կյանքի մի ամբողջ դրամա, հասնել ընդհանրացման <…> ՝ հասնելով վրձինի այնպիսի դիպուկ երանգահարվածների, որոնք ձեռք բերեն խորհրդանիշ-պատկերների ուժգնություն, հաճախ գրքի ամբողջ մի տպագիր էջը դարձնելով գիր-նկար»* (Գեղամ Սևան, 1997: 85): Հեղինակի՝ կառուցվածքային որոշակի առանձնահատկություններ կիրառելու ունակությունը ստեղծում է պատմվածքների յուրօրինակ պատկերայնություն: Դարյանի պատումներում կոմպոզիցիոն շրջանակները մի քանիսն են. ներկայի սյուժետային դեպքերը համընթաց են անդորրավետ ու երջանիկ անցյալի հետ՝ պատմվածքի մեջընդմեջ շարվածքում ներկայացնելով օտար միջավայրում հայտնված տարեց մարդկանց կերպարները: Եվ հաճախ «*գիր-նկար»-ը վերածվում է գիր-շարժանկարի, ընդսմին՝ այս պատկերները վերաբերում են ոչ միայն կերպարներին, այլև բնության նկարագրություններին («*Անձրևածեծ ու քնատ՝ լույսը կսրսփար հեռուն և չէր համարձակվեր մոտենալ պատուհանին» (Դարյան, 1988:100)), *որոնք երբեմն երբեմն լրացնում են* կերպարների հոգեբանական նկարագիրը*:*

«Թթենին», «Լեռը», «Տունը», «Ձին» պատմվածքները Դարյանը ստեղծել է կառուցվածքային նմանություններով. այս գործերում միահյուսված են երկու և ավելի պատումներ, հաճախադեպ են տեքստ տեքստում կառույցի կիրառումը, կրկնաբերությունների գործածությունը: Պատմվածքների սյուժեն հաճախ պարզվում է հերոսի մենախոսություններով՝ ուղղված ինքն իրեն կամ ուրիշին, իսկ երբեմն էլ պատումը, ինչպես գաղթական գրականության շատ գործեր, էսսեատիպ է, սյուժետային ոչ ամբողջական տարրերով: «Ձին» պատմվածքում հետաքրքիր խաղարկուն կոմպոզիացիա է կառուցում Դարյանը՝ պատումները մեջընդմեջ միահյուսելով իրար: Մենախոսություններով կառուցվում է Մարտիրոսի չպատմված կենսագրությունը՝ ամուսնությունից մինչև հայրենազրկում և ունեզրկում, մինչև ներկայի օղեմոլ վիճակը: Պատմվածքի կառույցը բացվում է հերոսի մանկության տեսարանով, երբ տղան չի հասկանում ձիու՝ ուտելուց հրաժարվելը, և փակվում նույն տեսարանի շարունակությամբ, որտեղ պարզվում է պատճառը. հայրն ընկել էր ընկուզենուց ու մահացել: Ու պատմվածքի այս կիսված պատումի արանքում ցեղասպանված ընտանիքից միակ ողջ մնացած հերոսի հետագա կյանքի պատմությունն է. այն իրացվում է կրկնաբերությամբ («Ձիու խրխիջը արթնցուց զինք» (Դարյան, 1988:169)), որով հրամցվում է հերոսի՝ անիմաստ անցած տարիների բացակա տեքստը: Կորսված հայրենիքի պատկերը արտացոլող ձին պատկերվում է որպես զոռնիմ. այն գտնելը դառնում է հերոսի սևեռուն միտքը, հարբած վիճակից դուրս գալու ցնորական երազանքը:

«Լեռը», «Թթենին» և «Տունը» պատմվածքներում ևս Դարյանը շատ վարպետորեն կիրառում է անցյալի ու ներկայի միահյուսման կառույցը: Ընդ որում՝ միահյուսումները ընթանում են ողջ տեքստում՝ լարված ընդմիջարկումներով

ցույց տալով հեղինակի նպատակայնությունը, այն է՝ ընդգծել անցյալի ողբերգությունը՝ Եղեռնը, հակադրել այն մինչեղեռնյան հովվերգական իրականությանը: «Լեռը» պատմվածքում Եղեռնի պատկերները երևան են գալիս տարեց հերոսի՝ տարագրության ժամանակ սպանված կամ կորած քրոջ՝ Աստղիկի հարսնության համար պահված կոշիկները փայփայելիս: Համբարձումի՝ քրոջ մասին հիշողությունը տեքստի կառույց է մտնում նոր պատումի ձևով՝ ընտանեկան դժբախտությունը միավորելով ազգի արհավիրքին: Իսկ «Թթենին» և «Տունը» պատմվածքներում կարոտալի և միաժամանակ տառապագին անցյալը կառուցվում է Եղեռնը վերապրած ծերունիների՝ Նահապետի ու Արամի՝ թոռների հետ զրույցներում ու պատասխան չակնկալող մենախոսություններում: Ըստ վերոնշյալի՝ Դարյանի գեղարվեստական համակարգում միահյուսման կառույցների ստեղծումը ինքնանպատակ չէ. սրանց արարման վարպետությունը մի կողմից ստեղծում է պատկերային համակարգի՝ շարժանկարին բնորոշ տեսողաընկալունակություն, մյուս կողմից՝ նպաստում է հերոսների ինքնության, բարոյահոգեբանական հարցերի բացահայտմանը կարոտի ու նահանջի համակարգում:

Կարոտի էթնոմշակութային, օնոմաստիկ (անվանաբանական) խորհրդապատկերայնությունը

Դարյանի՝ նահանջի և կարոտի թեմայով պատմվածքների վերնագրերը ևս՝ «Տունը», «Լեռը», «Թթենին», «Ձին», «Մայրը», ընտրված են հատուկ նպատակայնությամբ. նրանք խորհրդանշորեն արտահայտում են հողի և հայրենիքի, ազգային ինքնության պատկերները: Թերևս բացառություն է «Հայկական ողբերգություն» պատմվածքը, որի վերնագիրը ունի բովանդակային ուղերձ. մի ընտանիքի օրինակով հայ ժողովրդի պատմական ողբերգությունը կապվում է նահանջի կործանող ողբերգականությանը:

Վերոնշյալ պատմվածքների խորագրեր-նշանակները՝ տունը, լեռը, թթենին, ձին և մայրը, Դարյանի համար ծառայում են որպես ազգային խորհրդանիշներ: Էթնոմշակութային տեսանկյունից տունը մարդու ինքնակայացման տեղանքն է, լեռը՝ ամրության, անառիկության նշան, թթենին՝ ծառի՝ ինքնության արմատային պատկեր, ձին՝ երազանքի, մարդու և բնության սերտ կապի ցուցիչ, և մայրը՝ որպես կենսատու, արմատային համակարգ: Ազգային շեշտադրում ունենալով տարագիր, մասնավորապես հայ գաղթօջախների գրողների ստեղծագործություններում[3]՝ այս խորհրդանիշները Դարյանի գեղարվեստական համակարգում ծառայում են՝ ներկայացնելու կարոտի ու նահանջի սուր հակասականությունը: Կարոտի ձևավորման մեխանիզմների վրա անմիջական ազդեցություն ունի այն

[3] Լիբանանահայ գրող Պոյաճյանի պատմվածքներին անդրադառնալիս մեր հոդվածում շեշտել ենք տարագիր գրականության մեջ տան, ծառի և այլ առարկաների խորհրդանիշների կարևորությունը (**Բալայան**, 2024: 194-195):

հանգամանքը, թե մարդը ինչպես է լքում հայրենիքը՝ կամավո՞ր, թե՞ արտաքսվելով (Akhtar, 1999: 123–124): Դարյանի տարեց հերոսները պարտադրյալ կամ հոժարակամ են հեռացել Սիրիայից կամ Լիբանանից՝ իրենց զավակներին միանալու Եվրոպայում կամ Ամերիկայում: Նրանք, հանդիպելով որդիների նահանջի վանող տեսարաններին, զղջում են իրենց երկրորդ տունը դարձած Հալեպն ու Բեյրութը լքելու համար. նրանց համար «կյանքի դինամիկ կարծրատիպի վերափոխումը չափազանց ցավոտ է դառնում» (Хрусталева, 2019: 255) և անհնար: Հերոսների կարոտը պատմվածքներում վերածվում է կարոտախտային դրսևորումների, քանի որ, ըստ էթնոհոգեբանական հատկանիշի, հայերը՝ որպես բազմադարյա ազգ, «զգայուն են իրենց պատմության, արմատների, բնության նկատմամբ, գնահատում են ընտանեկան կապերը<…>» (Урядова, 2019:15):

Կարոտի հիմնահարցը Դարյանի գեղարվեստական համակարգում սերտորեն առնչվում է հատուկ անունների կիրառությանը: Դարյանի հերոսների «կայուն և կոդավորված անվանումները» բարդ համակարգ են, որի մեջ արտացոլվում են «որոշակի աշխարհայացքի բնորոշ մշակութային հասկացությունների տարբերություններ» (Рут, 2001: 62): Հերոսների անունները, որ ամփոփում են ազգի որոշակի հատկություններ, խորհրդանշական նշանակություն ունենալով հանդերձ, դիտարկվում են որպես լեզվական գիտակցության էթնոմշակութային նշիչներ (Привалова, 2005): Օնոմաստիկ նշանակության տեսանկյունից՝ Դարյանի կիրառած հայկական հատուկ անունները՝ որպես անտրոպոնիմներ[4] (խորհրդանշորեն գործածված, ազգային հատուկ անունների ամբողջությունը), հիմնային նշանակություն են ստանում, որոնք թույլ են տալիս հասկանալ հայ ազգի պատմությունը, կրոնական պատկերացումները, մշակույթն ու անգամ աշխարհաքաղաքական կապերը: Նահապետը (նախահոր, գերդաստանի մեծի՝ տոհմածառի բնի խորհրդանիշը), նրա որդի Անդրանիկը (վերապրողների առաջին, նահանջող սերունդը), և թոռը՝ Նորայրը (նոր մարդը՝ դեռ չուծացած նոր սերնդի, թաքուն հույսի խորհրդանիշը), «Տունը» պատմվածքի հերոսներն են, որոնք ապրում են տեղախախտված տարածքում՝ Ամերիկայում: Այս երեք սերնդի մարդիկ ապրում են անվանը հարիր գործելաոճով ու հոգեբանությամբ: Նահապետը փորձում է հարմարվել որդու ընտանիքին. Անդրանիկը ամուսնացած է ամերիկացի կնոջ հետ, խոսում է անգլերենով և ենթարկվում կնոջ ցանկություններին ու ցուցումներին: Օտար միջավայրում չխեղդվելու համար տարեց հերոսը փրկության փարոս է դարձնում թոռանը՝ պատմելով կորսված հայրենիքի մասին, սովորեցնելով նրան այբգիմը:

Դարյանի ստեղծագործական համակարգում հաճախադեպ է հատկապես Արամ անվան կիրառությունը: Արամ-ը հայ ժողովրդի լեզվահոգեբանական գի-

[4] Անտրոպոնիմի, ինչպես նաև հոդվածում օգտագործվող այլ եզրույթների՝ տոպոնիմի, դենդրոնիմի, զոոնիմի հայերեն փոխարժեքները այսօր դեռևս հայտնի չեն և մեկ բառով փոխարկելի չեն: Այդ պատճառով դրանք կկիրառվեն տեքստում նույն եզրույթային ձևերով:

տակցության մեջ հանդես է գալիս որպես սոցմշակութային անտրոպոնիմ՝ լինելով նաև էթնոնիմ ու միաժամանակ պատրոնիմ (Петросян 2019: 849-851): Լիբանանահայ գրողի Արամ-ների անվանումը միայն «մարդ» իմաստաբանական դաշտը արտացոլելու միջոցը չէ, այս անվանումը ապրում է հասարակության մեջ, և հենց դրա մեջ իմաստ ունի (Рут, 2001: 61): Արամ անունը Դարյանի արձակում երկու նշանակություն ունի. մի կողմից անվան իմաստային արժեքը անմիջականորեն կապված է սոցիոմշակութային համատեքստին, հետևաբար՝ այն օնոմաստիկ ստերոտիպ է՝ անտրոպոնիմ (Кирпичева, 2016:127), մյուս կողմից՝ Դարյանը շրջել է այս անտրոպոնիմի իմաստը:

Արամը հայ ազգի ինքնության հիմնական կրողն է «Թթենին» պատմվածքում: Նա Եղեռնից հետո գաղթել է Հալեպ, որտեղ էլ նրան հեռավոր Ամերիկայից տասնյակ տարիներ հետո գտնում է 5 եղբայրներից և 3 քույրերից ողջ մնացած միակ քույրը՝ Անին: Նրա, իր մյուս եղբայրների և քույրերի մասին պատմող պապ Արամը փորձում է Միեր թոռան գիտակցության մեջ պատկերել իրենց տոհմածառը: Մինչեղեռնյան հիշողության մեջ Արամի բազմանդամ ընտանիքի տոհմածառը աղերսվում է բակի հարյուրամյա թթենուն, որը այս համատեքստում հանդես է գալիս որպես տիպիկ դենդրոնիմ՝ հաստ բնով ու սաղարթաշատ ճյուղերով աղերսվելով գերդաստանի տոհմածառին, բնորոշվելով «համապատասխան իրականության նմանատիպ հղումային-նշանակային առանձնահատկություններով» (Соколова. 2023: 113): «Ծառ…<…> մեր բակի թթենիէն ալ մե՛ծ…լա՛յն, բայց ի՞նչ օգուտ, զարկին անօրէնները, ջարդուփշուր ըրին…միայն մեր տոհմէն հարիւր տասը հոգի սպաննեցին…» (Դարյան, 1964: 131): Արամի հոր անունը ևս Արամ էր. նա սպանվել էր Եղեռնից՝ Արամի ծնվելուց առաջ: Եղեռնից փրկված Արամի Հայկ եղբայրը ևս որդուն Արամ է անվանակոչում:

«Հայկական ողբերգություն» պիեսատիպ պատմվածքում տեսանելի է Արամ անտրոպոնիմի շրջումը: Պատումը կառուցված է Արամ պապի երկխոսությամբ թոռան՝ Արամի հետ, որն իր ծնողների հետ պիտի հեռանա Ամերիկա: Հեղինակը յուրօրինակ բախում է ստեղծում նահանջի և ազգային գիտակցության միջև: Թոռը ամաչում է համադասարանցիներից իր անվան համար և այն վերափոխելու ցանկությունը հայտնում պապին, բայց և զրույցի վերջում արտասանում է՝ «Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես //Քաջ Վարդանին թո՛ռն եմ ես…» (Դարյան, 1964: 131): Տարեց Արամը փլվում է՝ գիտակցելով, որ մտքերը, որոնցով սնել է փոքր Արամին, դատարկ բառեր են դարձել, հետևաբար՝ թոռնիկի Արամ էթնոնիմի ազգային գաղափարը շուտով չքվելու էր անվան փոփոխությամբ:

Արամ անտրոպոնիմի կազմաքանդումը առավել քան տեսանելի է գեղարվեստական ուրույն կառուցվածքով առանձնացող «Մայրը» պատմվածքում: Ցեղասպանությունով անցած մայրը միակ որդու՝ Արամի կյանքը ապահովագրելու և նրան Ամերիկա ուղարկելու համար խնդրում է բարեկամին իրագործել իր այդ երազանքը: 27 տարի անց միայն հանդիպելով ու ապրելով տղայի ու նրա ընտանիքի հետ՝ մայրը չի հասկանում՝ ինչպես է օտարացած տղայի, նրա օտար կնոջ ու երեխաների պատճառով միանգամից փշրվում: «Արամէն զատ ի՞նչ ունի

այս աշխարհին վրայ, որո՞ւն համար այսքան զրկանքի տոկաց, այսքա՛ն տառապեցաւ» (Դարյան, 1964: 97): Կորսվում է նահանջող Արամի հայկական ինքնությունը, հետևաբար կտրվում է մոր հետ կապը, հող և հայրենիք խորհրդանշող մայր երակը:

«Ձին» պատմվածքում զոռնիմ կերպարի և հերոսի հոգևոր կապի մեկնությամբ Դարյանը վերհանում է ազգային առանձնահատկությունների մշակութաբանական ինքնատիպությունը՝ պատկերելով նախաեղեռնյան անդորրավետ անցյալի ու հետեղեռնյան, օղու մեջ խեղդված ներկայի պատումների հյուսքի մեջ տարուբերվող անտրոպոնիմ հերոսին՝ Մարտիրոսին: Նրա անցյալը մարմնավորվում է ընտանիքի ձիով՝ Սպիտրկով, որի հետ հերոսը վերիրական միասնության մեջ է մանկության տարիներին: «<…>Անոր աչքերուն խոնավ ցոլքը սրածայր ասեղի նման մխվեցավ իր սիրտին մեջ» (Դարյան, 1988: 155): Մարտիրոսը հոգեմտավոր առումով դարձել է յուրատեսակ նահատակ, քանի որ կորցրել է իր տան, արտի ու այգու հետ սերտ առնչվող, իր ընտանիքի ինքնության հետ հարաբերվող ձիուն ու դարձել հարբեցող: Գաղթականի ներկայի անորոշ կյանքում նա, ինչպես Դարյանի մյուս տարեց հերոսները, ապրում է հոգեբանական պաշտպանական մեխանիզմի շնորհիվ, որը «հայտնի է որպես հետընթաց՝ մտավոր վերադարձ անցյալի հարմարավետ գոտիներ, հուզական վերադարձ դեպի մանկություն» (Хрусталева, 2019: 254): Դա Մարտիրոսին հեռացնում է իրականությունից դեպի ինքնազրույց, դեպի ձիերի աշխարհ: «Տարիներե, տարիներե ի վեր, ամեն առավոտ, այսպես պիտի գար այստեղ, ժամերով պիտի նստեր գուղձի մը վրա անհուն գորովանքով դիտելու համար հոն արածող ծեր ձիերը, ինքնիրեն զրուցելով անոնց հետ, իր վաղեմի սրտհատորի մասին անոնցմե լուր մը կորզելու ակնկալությամբ» (Դարյան, 1988: 172): Զոռնիմի անհետացումը հերոսի հայրենի հողում տունը վերագտնելու երազանքի փլուզումն է:

«Լեռը» պատմվածքի Համբարձումը՝ ավանդապաշտ մեծահասակ մարդը, հայրենիքից գաղթել է ընտանիքով ու բնակվել սահմանային Ամուտայում՝ վերադառնալու հույսը փայփայելով, իր աչքի առաջ ամեն առավոտ որպես վերադարձի հույս ունենալով Արարատ լեռը: Հերոսի կարոտը խորհրդանշորեն պարագծում է Արարատի տոպոնիմը, որը ժամանակի ընթացքում, ինչպես հայրենիքի աստիճանաբար աղոտացող պատկերը, մթագնում է հայրենիք վերադառնալու հեռացող հույսի հետ: «Կարոտիս ծուխեն է եղեր. . . Եկու՛ր ասոր հասկցուր, որ հոս եկած տարինիս, ամեն պայծառ արշալույսի կերևեր. այնպե՛ս մոտիկ, այնպե՛ս հստակ կերևեր, որ քիչ մնար ձեռքդ երկարես և դիպչիս. . . » (Դարյան, 1988: 151):

Ինքնության և մասամբ՝ կոլեկտիվ հիշողության պահպանման հետ կապված կարոտը (Урядова, 2019: 16) Եղեռնով անցած ու հայրենիք կորցրած տարեց սերունդը ձգտում է փոխանցել հաջորդ սերնդին, առանձնապես թոռներին, քանի որ գիտակցում է, որ նրանց հայրերը անդառնալիորեն բռնել էին նահանջի ճանապարհը: Այս միտումով են պապերը՝ Նահապետը և Համբարձումը, զրուցում ու ամեն գնով ջերմություն պահպանում անգամ այլախոս թոռների հետ, որպես

հեքիաթ պատմում իդեալականացված հայրենիքի, իրենց գյուղերի դրախտային բնության, իրենց տան ու հողի մասին:

Համբարձումի նահատակ քրոջ՝ Աստղիկի անունը կրող թոռնուհու չպղտորված ու հրաշքի հավատացող աչքերն առանց հեռադիտակի ի վերջո «տեսնում են» Արարատ լեռը: Այսինքն՝ նոր Աստղիկը դառնում է Համբարձումի՝ հայրենիքում՝ Արարատ լեռան ներքո վերապրելու հույսի կրողը: Սակայն Դարյանն ակնարկում է, որ այս հերոսի հույսն ի չիք է դառնալու թոռնուհու՝ Ամերիկա տեղափոխվելուց հետո:

Նոր սերնդի նահանջը ծնողների և զավակների օտարացած հարաբերությունների համապատկերում

«Տունը» և «Մայրը» խորհրդանշական անվանումներով յուրատիպ պատմվածքներում պատկերվում է որդիների նահանջը ծնողների՝ մերժված լինելու և օտարի բարդույթի միջոցով: Հանուն զավակի օտար երկրում հայտնված տարեց մարդու մշակութային ցնցումը խարխլում է նրա՝ որպես հին սերնդի ավանդական աշխարհընկալումը: Նահապետի («Տունը») և Մարիամի («Մայրը») որդիները այլ մշակութային գոտում են՝ արդեն համակերպված օտար միջավայրին և նրա բարքերին, ինչն էլ դառնում է ծնողների և զավակների միջև «հակամարտությունների սկիզբ և հոգեբանական անհամաձայնության պատճառ» (Хрусталева, 2019: 258):

Դարյանը, շարունակելով Շահնուրի ավանդույթը նահանջի համատեքստում, զարգացնում է այն՝ պատկերելով լիովին օտարացած սերնդի ապագան: Եթե Շահնուրի հերոսները օտար կանանց հետ կրքի ու սեռի որոգայթներում են, ապա Դարյանի՝ նոր սերնդի հերոսները արդեն ընտանիք են կազմել օտարազգի կանանց հետ, երեխաներ ունեցել: Առաջին հայացքից օրինական ընտանիքի ներկայացումը հեղինակի կողմից միտված է էլ ավելի սաստկացնելու նահանջի պատկերումը: Հասարակության կողմից ընդունված ընտանեկան մոդելը ճաքճքում է տարեց ծնողների հետ վերսկսվող հարաբերություններից: Դարյանը ցուցադրում է նահանջող որդիների ընտանիքների կեղծ բարոյականությունը. ծնողների հանդեպ որդիական պատասխանատվության հետքայլերը հստակ ցույց են տալիս, թե զավակները ինչքան թուլակամ են ձուլման մարտահրավերների դիմաց: Ի տարբերություն Շահնուրի հերոսների՝ Դարյանի նահանջող հերոսները ինքնակեղեքում և ծնողների, հետևաբար՝ ազգային ինքնության առջև պատասխանատվություն չունեն:

«Տունը» և «Մայրը» պատմվածքների տարեց հերոսների որդիների օտար կանայք չեն ողջունում իրենց ամուսինների՝ ծնողի հետ համատեղ ապրելը: Նահապետի և Մարիամի վախը, թերարժեքության ու խարանադրոշման զգացումները ծնվում են օտարերկրացու բարդույթից, որը չի հաղթահարվում լեզվի չիմացության պատճառով. այն առիթ է դառնում գաղթականների հանդեպ հաճախ դրսևորվող անհարգալից վերաբերմունքի, արհամարհանքի և երբեմն

նույնիսկ խտրականության (Хрусталева, 2019: 256): Նահապետը որդու ստիպմամբ թողել է իր երկրորդ տունը Բեյրութում ու եկել Լոնդոն՝ նրա հետ ապրելու: Պատմվածքի կոմպոզիցիոն տարբեր մասերում՝ մենախոսություն, հիշողություն, գործողությունների ընթացք, երևան է գալիս նահանջի դեմ պայքարող, տառապող ու օտար միջավայրին չհաշտվող տարեց մարդու կերպարը: Անգլիացի հարսի հետ լեզու գտնելու նրա ջանքերը աստիճանաբար ավելի ապարդյուն են դառնում: «Հարսը օրըստօրե ավելի կղպեց բերանը և ժպիտին վերջին հետքն անգամ վանեց շրթներուն վրայեն» (Դարյան, 1988: 112): Հարմարվելու, անգլերեն սովորելու ճիգերը երևան են գալիս կարոտի հետ միահյուսումով. յուրաքանչյուր նոր օտար բառ նրան հիշեցնում է իր կորսված հայրենիքը, ու կարոտը՝ միախառնված ոգու ցավին, նա նոր ուժով է դիմադարձ կանգնում նահանջին. «Օտարը պուլպյուլի նման հայերեն խոսելու ալ ըլլա. չի՛ կրնար հասկնալ, թե քու կուրծքիդ մեջ ի՛նչ կրակ կա անթեղված, հայու սիրտ ըսածդ ինչո՛ւ ատանկ կմխա անընդհատ…» (Դարյան, 1988: 112): Նոր լեզու սովորելու ունակության ներքին արգելափակումն առաջ է գալիս նոր հասարակության մեջ դժվար և բարդ կյանքի հուզական մերժման պատճառով (Хрусталева, 2019: 255): Պատմվածքի հիմքում մի միջադեպ է, որը տեղի է ունենում Նահապետի՝ անգլերեն չհասկանալու հետևանքով: Թոռանը դպրոց ուղեկցելու ժամանակ չոք (կավիճ) բառը նա շփոթում է շոկոլադի հետ, գնում և հյուրասիրում է արգելված քաղցրը երեխային: Ծնողների վիճաբանությունից, երեխային պատժելուց և նրա լացից հետո միայն շփոթահար ու կարկամած ծերունին հասկանում է ամեն ինչ: Հուսահատությամբ պայքար մղելով օտար բարքերի դեմ՝ համառ ու սևեռուն վարքագծով այս մարդը հայտնվում է ողբերգազավեշտական իրավիճակում (Մարության, 2019: 326): Եթե «Լեռը» պատմվածքում Արարատ լեռն է որպես վերադարձի խորհրդապատկեր ավանդվում թոռանը, ապա այս պատմվածքում Նահապետը իր մեծ տան մաշված լուսանկարը փոխանցում է Նորայր թոռանը՝ տունը ներկայացնելով որպես հայրենիքի ու ինքնության խորհրդանիշ, որպես վերադարձի փայփայված հույս:

«Մայրը» պատմվածքում է՛լ ավելի ողբերգական շեշտերով է ներկայացվում նահանջի թեման. այստեղ արդեն ազգային ինքնության հետդարձի որևէ հույս չկա: 27 տարի անց վերջապես Մարիամը կարողանում է միանալ Ամերիկայում ապրող որդուն: Եթե մինչ գնալը մայրը ջերմությամբ է մտածում որդու ամերիկացի կնոջ մասին, ապա արդեն Ամերիկայում նույն տանը բնակվելիս զարմանքով ու տառապանքով բացահայտում է հարսի օտարությունը: «Ուզեց խօսիլ իր կարօտի մասին, բայց յուսահատեցաւ, երբ իր հայերէն բառերը անհաղորդ մնացին ամերիկուհիին համար» (Դարյան, 1964: 95): Դարյանը ուրվագծում է նահանջի շարունակական քայլերը մինչև վերջնակետ. օտար երկիր գնալուն և օտար կնոջ հետ ընտանիք կազմելուն հաջորդում է ազգային անվան փոփոխությունը. թոռան անվան Կարապետ պատրոնիմը փոխվում է օտար Չառլիի: Դարյանի երիտասարդ հերոսները, ավելի քիչ հիշելով ու կարոտելով անցյալը (դրա

ծավալը փոքր է, և այն ավելի արագ է մոռացվում), ավելի հեշտությամբ են հարմարվել նոր կյանքին (Урядова, 2019: 14), և նրանց հոգեբանական հարմարեցումը չի բերել ինքնության ճգնաժամի, կորստի զգացման: Դա է պատճառը, որ Մարիամի Արամ որդին արդեն հարգանք չունի մոր ողբերգական կյանքի խորհրդանիշ սև գլխաշորի հանդեպ. սոցիալ-մշակութային այլալեզու միջավայրում հայտնված տարեց մայրը ամոթահար լինելով համաձայնում է բացելու ճերմակած մազերը՝ սիրելի որդուն կնոջ հետ վեճից զերծ պահելու համար:

Ծնող-զավակ օտարված հարաբերության՝ օրեցօր խեղաթյուրվող պատկերը Դարյանը դիտարկում է մոր՝ ցեղասպանությունից փրկած միակ որդու հանդեպ ունեցած անպարագիծ սիրո ու խանդաղատանքի, նրան ստորացուցիչ կենցաղային խնդիրներից անխոով պահելու ցանկության ծիրում: «Ինչպե՞ս պատմէ թէ Արամին բացակայութեան, երբ հիւր կու գա, հարսը սենեակին դուռը կը կողպէ իր վրայ: Երբ թոռնիկը դպրոցէն կը վերադառնայ, զինք կը զըրկէ անոր տեսքէն» (Դարյան, 1964: 97):

Հընթացս որդիական երախտագիտության վերացման՝ ցուցադրվում է որդու բարոյական անկման սոսկալիությունը. Արամը մորը տանից հանում է՝ այդուհետև իր խանութի մի անկյունում գիշերելու համար: Որդիների նահանջի գիտակցումը ավագ սերնդի համար Դարյանը նմանեցրել է մահվանը հավասարազոր զգացման. «Խանութին փեղկերը գերեզմանաքարին մը պէս աղմուկով փակուեցան իր վրայ» (Դարյան, 1964: 100):

Նման համեմատություն ենք տեսնում նաև «Լեռը» պատմվածքում: Համբարձումի տղան հեռանում է Ամերիկա՝ տանելով իր ընտանիքը և հոր նահատակ քրոջ անունը կրող դստերը: Համբարձումի՝ գաղթելուն պատրաստվող որդու՝ արկղները փակելու մուրճի ձայնը հոգեբանական խոր պատկեր է արտացոլում. «Ու թվեցավ անոր, թե տղան, այսպես, իր դագաղի կափարիչն է, որ կփակե. . . Եվ ուսերը կորացան ու մեջքը կքեցավ ավելի» (Դարյան, 1988: 151):

Դարյանի աշխարհայացքում նահանջը պատկերվում է միշտ նույնը՝ անկախ երկրից: Ֆրանսիա գաղթած Լևոնը՝ Արամի եղբայրը («Թթենին»), միշտ մնում է այնտեղ որպես օտարական, այնինչ «երբ ամուսնացաւ եւ ունեցաւ մանչ մը եւ աղջիկ մը, անոնք առաջին մեկ օրէն դարձան ֆրանսահպատակ» (Դարյան, 1964: 132-133): Նահանջի ողբերգականությունը Դարյանը պատկերում է սարկազմիկ արտահայտություններով: Լևոնի որդին զոհվում է համաշխարհային պատերազմում, ու Դարյանը կարճ հետգրություն է ավելացնում՝ Ֆրանսիայի համար (Դարյան, 1964: 133): Ըստ էության, բացի Լիբանանում ապրողներից, նահանջը ավելի է ընդգծվում այլ երկրներ գաղթած երիտասարդ հերոսների դեպքում: Այնինչ ազգային արմատներին կառչած տարեց հերոսները, հիշողությամբ ապրելով իրենց կորցրած հայրենիքում, մնում են օտարական՝ որոնելով կորսված հայրենիքի հետ կապված ինքնությունը, մոռանալով ապրելու փոքրիկ ուրախությունները: «Բագրատին առողջ խնդուքը մնացեր էր իրենց հեռաւոր թթենիին տակ, և Բագրատը այլեւս երբեք չկրցաւ ժպտիլ ամբողջ կյանքին ընթացքին» («Թթենին», Դարյան, 1964: 133):

Եզրակացություն

Լիբանանահայ գրող Արմեն Դարյանը շարունակել է գրական ավանդույթները այն գրողների, որոնց գրականությունը ուղղված է հայրենի եզերքի կարոտի ու օտար հողում ինքնությունը պահպանելու ջանքերին: Դարյանի պատմվածքներում կարոտի և նահանջի պատկերումը իրացվում է միահյուսված կառույցների միջոցով, որոնց արարման վարպետությունը նպաստում է հերոսների ինքնության, բարոյահոգեբանական նկարագրի բացահայտմանը:

Դարյանի գեղարվեստական համակարգում կարոտի ու նահանջի հակասականությունը պատկերվում է խորհրդանշաններով՝ մայր, թթենի, լեռ, ձի, որոնք նաև պատմվածքների վերնագրեր են: Հանդես գալով որպես տոպոնիմ, զոոնիմ, դենդրոնիմ՝ նրանք դառնում են ազգային ինքնության էթնոմշակութային ցուցիչներ: Դարյանի պատմվածքներում հստակ ընտրված են նաև հատուկ անունները՝ Արամ, Նահապետ, Նորայր և այլն: Դարյանը ուրույն պատկերավորություն է տվել Արամ անունին. այն, ավանդական էթնոնիմ լինելով, պատմվածքներում շրջել է իմաստը՝ դառնալով նահանջի և ուծացման բացասական անտրոպոնիմ:

«Տունը» և «Մայրը» պատմվածքներում զավակների և թոռների հետ աստիճանաբար խորացող օտարացման համապատկերում նահանջի պատկերներ են ստեղծվում օտար երկիր՝ զավակի մոտ գնացած տարեց ծնողի մշակութային ցնցման միջոցով: Դրան հակառակ՝ նահանջող հերոսների հոգեբանական հարմարեցումը օտար երկրի միջավայրին չի հանգեցրել նրանց ինքնության ճգնաժամին, կորստի զգացմանը: Նահանջող զավակի արարքների բարոյական սոսկալիության պատկերմամբ Դարյանը, դարձի որևէ հնարավորություն չթողնելով, ընդգծում է նահանջող սերնդի ամբողջական ուծացումը:

НАИРА БАЛАЯН – *Образность тоски и отступления в рассказах Армена Даряна*.– Рассказам ливано-армянского писателя и переводчика Армена Дарьяна, тематически связанным с феноменами тоски и отчуждения, принадлежит особое место в его художественном наследии. Анализируя тематические и структурные особенности рассказов, в статье отмечается, что композиционные части и их взаимосвязи в художественной системе Дарьяна созданы с особым намерением для формирования образов персонажей. Цель исследования — выявить способы использования образов тоски и символики, а также механизмы отступления. В работе решаются следующие задачи: а) анализ этнокультурной символики тоски; б) интерпретация антропонимов и особенностей их использования; в) рассмотрение проблемы отступления в контексте отношений пожилых персонажей с их взрослыми детьми. Методологическую основу исследования составляют аналитический и сравнительный методы. Символика рассказов изучается с опорой на этнокультурно-антропологические подходы; антропонимический материал интерпретируется средствами лингвопсихологического ономастического анализа; аспекты состояний тоски рассматриваются через социально-психологическую модель «комплекса чужака». Научная новизна работы определяется междисциплинарным подходом к анализу концептов тоски и отступления в прозе А. Дарьяна, а также уточнением их роли в формировании авторской художественной системы.

Ключевие слова: *структура переплетения*, *интертекстуально-переплетённая структура, комплекс чужака, утрата идентичности, символический образ, антропоним, топоним*

NAIRA BALAYAN – *The Imagery of Longing and Withdrawal in Short Stories of Armen Daryan*.– The short stories of the Lebanese-Armenian writer and translator Armen Daryan that explore the phenomena of longing and estrangement occupy a distinctive place in his literary legacy. Examining the thematic and structural features of the stories, the article notes that the compositional parts and their interconnections in Daryan's artistic system are created with a specific intention for character formation. The aim of the study is to identify the methods of depicting images of longing and symbols, as well as the mechanisms of withdrawal. The research addresses the following tasks: (a) to analyze the ethnocultural symbolism of longing; (b) to interpret the anthroponyms and the particularities of their use; (c) to examine the issue of withdrawal in the context of the relationships between elderly characters and their adult children. The methodological basis of the study includes analytical and comparative approaches. The symbolic layer of the stories is examined through ethnocultural and anthropological perspectives; the anthroponymic material is interpreted by means of linguopsychological onomastic analysis; and the formation of the characters' longing is approached through the socio-psychological model of the "stranger complex." The scientific novelty of the research lies in its interdisciplinary approach to the concepts of longing and withdrawal in Daryan's prose, as well as in clarifying their role in shaping the author's artistic system.

Key words: *interwoven structure, stranger complex, loss of identity, symbolic image, anthroponym, toponym*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Բալայան, Ն. (2024): Հիշողություն, տուն, հավատ. Էդուարդ Պոյաճյանի «Հողը» ժողովածուն // *Գրականագիտական հանդես*, 2 (29), էջ 179-200: DOI: 10.54503/1829-0116-2024.2-179 [Balayan, N. (2024). Hishoghut'yun, town, havat. E'duard Poyatchyani "Hoghy"' jhoghovac'un // *Grakanagitakan handes*, 2 (29), e'j 179-200].

Դարյան, Ա. (1964): *Խարիսխեն հեռու*. Բեյրութ: Ատլաս. [Daryan, A. (1964). Xarisxen her'u. Beyrut': Atlas].

Դարյան, Ա. (1988): *Մեր հացը*. Երևան: Սովետական գրող: [Daryan, A. (1988). Mer hacy'. Yerevan: Sovetakan grogh].

Երիցանց, Մ. (1929): Նշմարներ եւ տպաւորութիւններ. *Յառաջ*, 1996 (Ե տարի), էջ 2: [Yericanc, M. (1929). Nshmarner ev tpavorut'yunner. *Yar'aj*, 996 (E tari), e'j 2].

Թէօլէօլեան, Մ. (1977): *Դար մը գրականութիւն*, հտ. Բ. Բոստոն: Հ.Բ.Ը. Միութեան Ալեք Մանուկեան մշակութ. Հիմնադրամ: [T'e'ole'olean, M. (1977). Dar my' grakanut'yun, ht. B. Boston: H.B.Y'. Miut'ean Aleq Manukean mshakut'. himnadram].

Շահինյան, S. (2013): Հրաչ Զարդարյան // *Էջմիածին*: ԿԹ(Զ), էջ 113-123: [Shahinyan, T. (2013). Hrach Zardaryan // *E'jmiac'in*: KT'(Z), e'j 113-123].

Դալլաքյան, Կ. (2000): *«Նահանջի գրականություն» հասկացության հարցի շուրջ // Լրաբեր հասարակական գիտությունների*, 2(2), էջ 3-15: [Dallaqyan, K. (2000). «Nahanji grakanut'yun» haskacut'yan harci shurj // *Lraber hasararakan gitut'yunneri*, 2(2), e'j 3-15].

Դեմիրճյան, Ռ. (1994): Կարոտի և նահանջի թեման սփյուռքահայ գրականության մեջ // *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1(1), էջ 85-90: [Demirtchyan, R'. (1994). Karoti ev nahanji t'eman sp'yur'qahay grakanut'yan mej // *Lraber hasararakan gitout'yunneri*, 1(1), e'j 85-90].

Սևան, Գ. (1997): *Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985)*. Երևան: ԳԱԱ. «Գիտություն»: [Sevan, G. (1997). Sp'yur'qahay grakanut'yan patmut'yan urvagc'er (1946-1985). Yerevan: GAA ''Gitut'yun''].

Մարության, Թ. (2019): Ցեղասպանության արտացոլումը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում // *Գիտական Արցախ*, 1(2), 322-334: [Marut'yan, T'. (2019). Ceghaspanut'yan artacolumy' Simon Simonyani steghc'agorc'ut'yunnerum // *Gitakan Arcax*, 1(2), e'j 322-334].

Кирпичева, О. (2016) Социокультурные антропонимические стереотипы. *Известия Волгоградского государственного социально-педагогического университета. Филологические науки, 3, сс.127-130.* [Kirpicheva, O. (2016) Sociokul'turnye antroponimicheskie stereotipy. *Izvestiya Volgogradskogo gosudarstvennogo social'no-pedagogicheskogo universiteta. Filologicheskie nauki*, 3, ss.127-130].

Петросян, А. (2019), Армянские этнонимы в свете данных этногонического предания. *Индоевропейское языкознание и классическая филология*, XXIII, сс. 843-855. DOI:10.30842/ielcp230690152362 [Petrosyan, A. (2019), Armyanskie etnonimy v svete dannyh etnogonicheskogo predaniya. *Indoevropeyskoe yazikoznanie i klassicheskaya filologiya*, XXIII, ss. 843-855].

Привалова, И. (2005). *Интеркультура и вербальный знак (лингвокогнитивные основы межкультурной коммуникации).* Moskva: Gnozis. [Rut, M. (2001). Antroponimy: razmyshleniya o semantike. Izvestiya Ural'skogo gosudarstvennogo universiteta, 20, ss. 59-64].

Рут, М. (2001). Антропонимы: размышления о семантике. *Известия Уральского государственного университета*, 20, сс. 59-64. [Rut, M. (2001). Antroponimy: razmyshleniya o semantike. *Izvestiya Ural'skogo gosudarstvennogo universiteta*, 20, ss. 59-64].

Соколова, М. Г.(2023) Реализация традиционных образов сравнения компаративных тропов с диминутивными дендронимами в русской поэзии XIX–XXI веков. *Известия Саратовского университета. Серия: Филология. Журналистика,* 23(2). Сс. 108–114. DOI: 10.18500/1817-7115-2023-23-2-108-114 [Sokolova, M. G. (2023) Realizaciya tradicionnyh obrazov sravneniya komparativnyh tropov s diminutivnymi dendronimami v russkoj poyezii XIX–XXI vekov. *Izvestiya Saratovskogo universiteta. Seriya: Filologija. Zhurnalistika,* 23(2), ss. 108–114].

Урядова, А. (2019). Ностальгия эмиграции: эмоции, память, история. *Вестник Ярославского государственного университета: Серия Гуманитарные науки*, 2 (48), сс. 13-17. [Uryadova, A. (2019). Nostal'giya emigracii: emocii, pamyat', istoriya. *Vestnik Yaroslavskogo gosudarstvennogo universiteta: Seriya Gumanitarnye nauki*, 2 (48), ss. 13-17].

Хрусталева, Н. (2019). Переживание психической травмы и печали в условиях эмиграции. *Вестник Санкт-Петербургского университета*. 12(1), сс. 253–260. [Hrustaleva, N. (2019). Perezhivanie psihicheskoj travmy i pechali v usloviyah emigracii. *Vestnik Sankt-Peterburgskogo universiteta*. 12(1), ss. 253–260].

Akhtar, S. (1999). The Immigrant, the Exile, and the Experience of Nostalgia. *Journal of Applied Psychoanalytic Studies,* 1(2), pp. 123–130.

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 51-66
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.051

ԺԱՄԱՆԱԿԻ ԽՆԴԻՐԸ ԷԼՎԻՆ ԲՐՈՒՔՍ ՈՒԱՅԹԻ «ՇԱՐԼՈԹԻ ՍԱՐԴՈՍՏԱՅՆԸ» ՎԵՊՈՒՄ

ՆԱԹԵԼԼԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Բնությունն ամերիկյան գրականության հայտնի թեմաներից է, որ սովորաբար զուգորդվում է մանկական գրականության հետ: Վերջինիս արտահայտման հաճախ հանդիպող առանձնահատկություններից են կենդանիների անձնավորումը և դրա միջոցով *իրական* կյանքում որոշակիորեն ընդգծված կերպարների, իրավիճակների ու դեպքերի վերակերտումը հեքիաթի *անիրական* աշխարհում: Երբեմն դրան ավելանում է փիլիսոփայական հիմնարար գաղափարների արտահայտումը, որ ներկայացնում է դրանց մեկնաբանությունը տվյալ հեղինակի կողմից: Ստեղծված տեքստը հաճախ կրում է հեքիաթին բնորոշ կարևորագույն հատկանիշ՝ *հրաշք*: Է. Բ. Ուայթի ստեղծագործությունը նշված առանձնահատկությունների յուրօրինակ համադրություն է, քանի որ խտացնում է դրանց կարևոր տարրերը, ընդ որում՝ բաղադրիչներից վերջինը վեպում արտահայտման բազմակի, մինչև իսկ հակադիր ձևեր ունի, ինչը վեպն առավել յուրօրինակ է դարձնում՝ տալով մեկնաբանության լայն հնարավորություններ:

Բանալի բառեր – *ժամանակ, շարժում, բնություն, հասարակություն, փոփոխություն, զարգացում, սոցիալիականացում, մահ, կյանք*

Ներածություն

Էլվին Բրուքս Ուայթի ստեղծագործության վերաբերյալ հիմնարար աշխատությունները սակավ են, բայց ներառում են հետաքրքիր և դիպուկ դիտարկումներ, որոնք հիմնականում մարդու և բնության միջև դարեր շարունակ ծառացած պատնեշի շուրջ են ծավալվում: Հեղինակի ստեղծագործության վերաբերյալ ուսումնասիրությունների սակավությունը, ինչպես և մինչ այժմ լայն ուշադրության չարժանացած թեման սույն հոդվածը դարձնում են *արդիական*: Հոդվածում ուսումնասիրվում է *ժամանակի* խնդիրը Էլվին Բրուքս Ուայթի «Շարլոթի սարդոստայնը» վեպում: Քննարկվում են ներքոգրյալ *խնդիրները*.

* **Նաթելլա Հովակիմյան** – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Нателла Овакимян – аспирантка кафедры зарубежной литературы ЕГУ
Natella Hovakimyan – PhD Student at the YSU Chair of Foreign Literature
Էլ. փոստ՝ natella.hovakimyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0009-0004-3431-3109

Ստացվել է՝ 06.02.2026
Գրախոսվել է՝ 13.02.2026
Հաստատվել է՝ 09.06.2026

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2026

• ժամանակի փիլիսոփայական կատեգորիային առնչվող խորհրդանիշները,
• կերպարների զարգացումը ժամանակի համատեքստում,
• մահը՝ որպես ժամանակի բնական շրջափուլ և մարդու մեղսագործության հետևանք:

Ժամանակի խորհրդանիշները

«Շարլոթի սարդոստայնը» վեպում արծարծվող հիմնական թեմաներից մեկը ժամանակի խնդիրն է, ու վեպում էական նշանակություն ունեն թեմային առնչվող մի շարք խորհրդանիշներ: Որպես առաջին խորհրդանիշ կարելի է դիտարկել *գլխավոր հերոսուհուն՝ Շարլոթին*: Հեղինակը նրա չափի մասին պատկերացում տալու համար վեպի սկզբում համեմատում է նրան կոնֆետի, իսկ վերջում՝ նրա ձվերի բոժոժը՝ քաղցր բամբակի հետ, և այս քաղցրությունը շեշտվում է մարդկանց համար նրա ցանկալի լինելը արտահայտելու նպատակով: «Սարդ» բառն անգլերենում ունի «պտտվել», «շրջան կազմել» իմաստները (spider-to spin), ինչն անմիջապես ստեղծում է հավերժության ու ժամանակի պատկեր: Շարլոթը միանգամից չի ներկայանում Ուիլբըրին. սկզբից Ուիլբըրը լսում է նրա ձայնը, որ հանդիպում է խոստանում հաջորդ առավոտյան (White, 1980:31), այսինքն՝ ինչ-որ փուլ է պետք անցնել ժամանակին առերեսվելու համար: Ուիլբըրին հանդիպելու առաջին օրը Շարլոթը ողջունում է նրան «salutations» բառով, որով դիմում են և՛ ժամանող, և՛ մեկնող մարդկանց: Նույն բառով են Շարլոթի ձագերը ողջունում և հրաժեշտ տալիս Ուիլբըրին: Վերջինիս՝ ճանճերով սնվելու վերաբերյալ տված հարցին Շարլոթի պատասխանը բովանդակում է միջատների մի մեծ շարք՝ ճանճեր, փայտոջիլներ, մորեխներ, բզեզներ, ուտիճներ, թիթեռներ, ծղրիդներ և այլն, ինչպես հերոսն է ասում՝ «ցանկացած բան, որ իմ սարդոստայնում հայտնվելու չափ անուշադիր է» (White, 1980:39): Սա ևս ցույց է տալիս, որ սարդի կերպարը հեղինակը կերտել է որպես *ժամանակի* խորհրդանիշ: Երբ Ուիլբըրը խնդրում է նրան չասել իրեն այդ ամենը, Շարլոթն ասում է, որ ինքն այդպես է ստեղծված և ժառանգել է դա իր ծնողներից ու չգիտի՝ ով է եղել առաջին սարդը, որ հղացել է սարդոստայն հյուսելու գաղափարը: Եվ բացի այդ, եթե ինքը չուտի միջատներ, նրանք «չափազանց շատ կբազմանան ու կավերեն մոլորակը» (White, 1980:39-40), վերջինը մարդու մահկանացու լինելու ֆենոմենի բացատրություններից մեկն է, իսկ մեջբերման առաջին մասը ստեղծում է սարդերի պատմության դիախրոնիկ պատկեր, որը ցույց է տալիս թե՛ բնության մեջ կյանքի ցիկլային շարժումը, թե՛ ժառանգական հաջորդականության ապահովման մի նմուշ, ինչը նկատվում է նաև, երբ Շարլոթը մերժում է Ուիլբըրի հետ տոնախմբությանը մեկնելու առաջարկը՝ նշելով, որ պատճառը իր ապագա ձագերն են. եթե փորձենք տալ ավելի լայն ձևակերպում, կասենք, որ պատճառը, ըստ էության, կյանքի շարունակելիության ապահովման խնդիրն է:

Շարլոթը կարճատես է: Սա նշանակում է, որ նրա համար տարբերություն չկա՝ ով է մեռնողը կամ ծնվողը, նրա համար բոլորը նույնն են ու պիտի արժանանան նույն ճակատագրին, ինչը երևում է այն տեսարանում, որում նա Ուիլբըրին ասում է, որ պետք է Թեմփըլթոնի համար բավարար չափով սնունդ պահել (White, 1980:64), չնայած Թեմփըլթոնը սիրելի չէր գոմում ոչ մեկի համար. *ժամանակի ընթացքը հավասարապես ազդում է բոլորի վրա*:

Հաջորդ խորհրդանիշը *սարդոստայնն* է: Վերջինիս հեղինակը անդրադարձել է վեպի հրատարակումից դեռ շատ տարիներ առաջ՝ 1929 թվականին, կնոջը գրված նամակում, որում կար «Բնական պատմություն» վերնագրով բանաստեղծություն: Քեթրինն այդ ժամանակ հղի էր, և կնոջ հետ հասունացող կապը պատկերելու համար Է. Բ. Ուայթը նկարագրում է սարդի՝ թել առ թել սարդոստայն հյուսելու տեսարանը, ներկայացնում, թե ինչպես են սարդոստայնաթելերը միանում իրար, ինչպես իրեն կնոջը կապող անտեսանելի թելերը.

> *«Այսպես ես առաջ եմ գնում, ինչպես սարդերը*
> *Սարդոստայնում, որտեղ ճշմարտություն է նշմարվում,*
> *Ու մի մետաքսե թել եմ քեզ ձգում,*
> *Որ վերադառնամ»* (White, 2007:89):

Սա նոր կյանքի սկիզբն է, սարդոստայնի հյուսման ընթացքը նմանեցվում է կյանքի արարման ֆենոմենին, այդ պատճառով է ճշմարտությունը «տեղավորվում» սարդոստայնի վրա, իսկ *վերադարձը* հիշեցնում է կյանքի ցիկլային շարժումը: Հեղինակը վեպում հատուկ ուշադրության է արժանացնում սարդոստայնի ֆենոմենին. այն բարակ է ու նուրբ, բայց ավելի ամուր, քան երևում է: Սարդը հաճախ վերահյուսում է այն, քանի որ վրան հայտնվող միջատները անցքեր են բացում դրա վրա, և սրան այսչափ մանրամասն անդրադառնալով՝ հեղինակը ներկայացնում է կյանքի ինքնավերականգնվող էությունը: Կյանքը վերահյուսվում է, ինչպես սարդոստայնը: Շարլոթը ևս հրաշք է համարում հյուսման ընթացքը, դրա համար է իր ձվերն ամուր պահող բոժոժը բնութագրում «գլուխգործոց» (magnum opus - լատ. «հիանալի աշխատանք») բառով, ու նույն կերպ է տեսնում սարդոստայնը հեղինակը. *«Մշուշապատ առավոտներին սարդոստայնը իրապես գեղեցիկ էր: Ամեն սարդոստայնաթել զարդարված էր ցողի տասնյակ կաթիլներով, կարծես նրբաճաշակ քող լիներ, ու անգամ Էրվին նկատեց դա»* (White, 1980:77):

Է. Բ. Ուայթը վեպում ստեղծում է խորհրդանիշներ, որոնք վերաբերում են թե՛ ժամանակին և թե՛ ազատությանը: Իր «Ազատություն» էսսեում նա գրում է. «Իմ առաջին ու ամենամեծ սերը եղել է ազատությունը, անսահման *գրավիչ* այս օրիորդը, այս *վտանգավոր* ու *գեղեցիկ* [ընդգծումները – Ն. Հ.] վսեմ էակը, որ վերահաստատում ու պահպանում է բոլորիս» (White, 1940:3): Ուիլբըրը, դեռ երկուամսական լինելով, ձանձրանում է. *«Երբ բակում եմ, գնալու այլ տեղ չկա, միայն գոմն է, իսկ երբ գոմում եմ, գնալու այլ տեղ չկա, միայն բակն է»*

(White, 1980:16), ու նրան ձանձրացնում է իր չգիտակցված անազատությունը, քանի որ երբ նա սագի խորհրդով փախուստի փորձ է անում, նրան դուր է գալիս ազատությունը, համակարգից դուրս լինելը, սակայն այդ համակարգում կան տարրեր, որոնք ձգում են նրան, ու նա վերադառնում է: Պահանջմունքի բավարարման անհրաժեշտությունը նա զգում է ոչ թե տրամաբանական, այլ բնազդային մակարդակում: Երբ սագը հարցնում է՝ նրան դո՞ւր է գալիս այդ ազատությունը, նա վստահ չի լինում. *«Դուր է գալիս… այսինքն՝ կարծում եմ՝ հավանում եմ», իսկ հետո հեղինակը գրում է. «Իրականում ցանկապատից դուրս Ուիլբըրը օտարություն էր զգում՝ իրեն մեծ աշխարհից բաժանող ոչինչ չունենալով»* (White, 1980:17): Ազատության գաղափարը արտահայտվում է նաև ճոճանակի միջոցով: Այն ոչ միայն *ժամանակի* (վեպում ճոճանակին տրված նշանակությունից բացի՝ հաշվի առնելով նաև դրա արտաքին նմանությունը ժամացույցին), այլ նաև ապստամբ ոգու, ժամանակի պարտադրանքով ի հայտ եկած տաբուների մեջ ազատության հասնելու խորհրդանիշ է: Երեխաները նրա վրա մոռանում են ամեն ինչ, ազատ են զգում, «ազատագրված» իրենց ծնողներից, որոնք մղոններ հեռվից վախենում են այդ ճոճանակից՝ կարծելով, թե իրենց երեխան կընկնի, բայց *«ոչ մի երեխա երբեք չէր ընկնում»* (White, 1980:69): Է. Բ. Ուայթի վեպում ճոճանակն այնպես է պատրաստված, որ արտաքին ազդեցության անհրաժեշտություն չկա (White, 1980:68-69), նրա վրա հայտնվողն անհպում սկսում է ճոճվել: Տոնավաճառում տիկին Էրըբլը զգուշացնում է երեխաներին, որ «ամուր բռնվեն ճոճվելիս» (White, 1980:131). սա հնչում է ինչպես զգուշացում մի բանից, որն անխուսափելի է: Այս ճոճանակը նման է Է. Ա. Պոյի «Ճոճանակն ու հորը» պատմվածքում առկա համանուն օբյեկտին: Պատմվածքը սկսվում է տեսարանով, որում հերոսն ասում է, որ իր լսած վերջին խոսքը իր մահվան դատավճիռն է, որից հետո նա միայն աղմուկ է լսում. «Այդ աղմուկն իմ հոգում պտտման գաղափար առաջացրեց, թերևս որովհետև նման էր պտտվող ջրաղացքարերի ձայնին… Հենց այդ պահին էր, որ իմ ուղեղում գեղեցիկ մեղեդու պես հնչեց գերեզմանի քաղցր անդորրի գաղափարը… Հետո լռություն և անդորր իջավ, և տիեզերական խավարը դուրս մղեց մնացած ամեն ինչ...» (Պո, 1983:69-70): Նման խորհրդանիշներ առկա են նաև քննարկվող վեպում՝ ջրաղացքարերի «պտույտը», ինչպես և գերեզմանի «քաղցր» անդորրը: Երկու դեպքում էլ ներկայացվում է կյանքի շրջապտույտը, և քանի որ այդ շրջապտույտի փուլերից մեկը մահն է, այն քաղցր է համարվում, ընդունելի և բնական: Հետո Է. Ա. Պոն նկարագրում է ֆոսֆորային թեթև լույսով ողողված սենյակը, որը դիտելիս հերոսը նկատում է մի շատ կարևոր պատկեր. «Դա ժամանակի նկարն էր, ինչպես այն սովորաբար պատկերում են, բայց գերանդու փոխարեն նրա ձեռքին մի բան կար, որն ինձ առաջին հայացքից հին ժամացույցների վրա կախված ճոճանակ հիշեցրեց: Ես ուշադիր նայում էի այդ նկարին (որն ուղիղ իմ գլխավերևում էր), երբ ինձ հանկարծ թվաց, թե ճոճանակը շարժվում է: Հաջորդ պահին ես համոզվեցի, որ դա իսկապես այդպես է» (Պո, 1983:76): Հետո ավելանում է ճոճանակի

տատանման թափը. «Ցա՛ծ, շարունա՛կ ցած, նույնքան անողոք, նույնքան անխուսափելի: Ես շնչահեղձ էի լինում, ջղաձգորեն կծկվում էի նրա ամեն մի ճոճումից» (Պո, 1983:79): Երբ հերոսին վերջապես հաջողվում է խուսափել հսկա ճոճանակի մահացու հարվածից, առաջին բառը, որ գալիս է նրա մտքին, «ազատություն»-ն է (Պո, 1983:81), այսինքն՝ երբ հերոսին չի սպանում ժամանակի մահաբեր հարվածը, իսկ սա սովորաբար լինում է, երբ մարդը դեռ երեխա է, քանի որ երեխան չունի հասուն մարդու՝ ժամանակի զգացումը և ընկալումը, նա իրեն ազատ է զգում, և նույն ազատությունն է, որ զգում են Է. Բ. Ուայթի մանուկ հերոսները ճոճանակին: Իր «Ազատություն» էսսեում նա գրում է. «Մարդու ազատությունը կարող է երկու ձևով արտահայտվել. մեկը նրա՝ որպես մոլորակի վրա ապրող կենդանի էակի բնազդային ազատությունն է, մյուսը՝ գործնական ազատությունը, որ նա ստանում է որպես մարդկային հասարակության արտոնյալ անդամ» (White, 1940:3), և այդ «գործնական» ազատությունը երեխաները ձեռք չեն կարող բերել, քանի դեռ ենթակա են բնազդայինին:

Հաջորդ խորհրդանիշը շրջանաձև *կարուսելներն* են, որ պտտվում են իրենց առանցքի շուրջը: Վեպում հեղինակը անդրադառնում է դրանցից միայն մեկին, որ ուղղահայաց է, սակայն նկարում կարելի է տեսնել հորիզոնականը ևս (White, 1980:132): Այս կարուսելներին զուգահեռ հիշենք տեսարանը, որում գոմի նկարագրության մեջ հեղինակն այնտեղ դասավորված իրերը թվարկելիս նշում է նաև *սրաքարը* (White, 1980:14): Սա վեպում թերևս ամենալավ թաքցված խորհրդանիշներից է, քանի որ նախ՝ կլոր է, գործի է գցվում իր առանցքի շուրջը պտտելով, հետո՝ կարող է անվրեպ փոշիացնել իրեն հպվող ամենակարծր առարկաները: *Այս խորհրդանիշների ամեն պտույտը ցույց է տալիս ժամանակի ընթացքը, փոփոխությունների տարեկան շրջանը:*

Մեկ այլ խորհրդանիշ է *«8» թիվը.* այն խորհրդանշում է անվերջությունը: Վեպում նրան առնչվում ենք մի քանի տեսարանում: Առաջինը սարդի ոտքերի քանակն է, ինչը կապվում կերպարի՝ որպես ժամանակի խորհրդանիշ կերտված լինելու մասին ավելի վաղ նշված գաղափարին: Հաջորդը Ֆերնի տարիքն է, որ հուշում է, որ Ֆերնի հետ տեղի ունեցող փոփոխությունները մշտապես կատարվում են բոլոր մարդկանց հետ: Թվին հանդիպում ենք նաև սագի ձվերի տեսքով. դրանք ութն են, ինչը խորհրդանշում է կյանքի անվերջ վերստեղծվող էությունը, ու հատկանշական է, որ ձվերից միայն յոթն են նոր ծնունդ տալիս, սրանով անդրադարձ է կատարվում անվերջության մեջ ոչ միայն ծնունդի, այլ նաև մահվան անխուսափելիությանը, և նկատենք, որ ձուն, որից սագ չի ծնվում, փրկում է Շարլոթին և Ուիլբըրին. հեղինակը դարձյալ կապում է մահը ծնունդին՝ վերահմաստավորելով այն: Թիվը տեսնում ենք նաև համայնքային տոնավաճառի նախորդ օրվա տեսարանում, երբ Էրըբլների ընտանիքի բոլոր անդամները երեկոյան ժամը ութին քնած էին (White, 1953:118), ինչը ժամանակի ընթացքում մշտնջենական քնին, այսինքն՝ մահվանն առերեսվելու խորհրդանիշ է, ինչպես նաև տեսարանում, որում Ուիլբըրը սարդոստայն հյուսելու

անհաջող փորձ է անում, ու Շարլոթը բերում է Քուինսբորոյի կամրջի օրինակը՝ ասելով, որ մարդկանցից ութ տարի պահանջվեց այն կառուցելու համար. *«Մարդիկ նրա մի կողմից մյուսն են գնում անդադար՝ մտածելով, որ հակառակ կողմում իրենց ավելի լավ բան է սպասում, սակայն եթե նրանք կանգնեին կամրջի վրա և համբերատար սպասեին, գուցե ինչ-որ լավ բան հայտնվեր, բայց ո՛չ, մարդիկ անընդհատ շտապում են»* (White, 1953:60):

Հերոսների զարգացումը ժամանակի համատեքստում

Վեպի մանուկ հերոսները ժամանակի ընթացքում ենթարկվում են փոփոխությունների, միևնույն ժամանակ նկատվում է հասուն կերպարների մտավոր քարացածությունը, ինչը խոչընդոտում է ժամանակի բնական պահանջով առաջ եկող փոփոխությունների իրագործման հնարավորություններին: Երբ Ուիլբըրին առաջին անգամ հաջողվում է լքել իր առաջին տաք ու ապահով տունը, նա սկսում է երկմտել՝ արդյոք պետք է փախչի՞, թե՞ վերադառնա (White, 1980:19), նա իրականում չգիտի՝ ինչ է իրեն սպասում դրսում, և չիմացությունը նրա մեջ առաջացնում է վախի զգացում դրսի աշխարհի նկատմամբ: Երկրորդ գլխում («Ուիլբըր») հեղինակը ներկայացնում է իրականություն, որում ամեն օրը ուրախ է, ամեն գիշերը՝ խաղաղ: Ուիլբըրի համար տնակ է կառուցվում «խնձորի ծաղկած ծառի տակ» (White, 1980:8): Լ. Օ. Ուեյքը նկատում է, որ ծառի ընտրությունը պատահական չէ, սա նման է դրախտի. սա ապահով կյանքն է երկրի վրա, մանկությունը, որը, սակայն, չի կարող տևել երկար (Wake, 2007:83): Երրորդ գլուխը («Փախուստ») ներկայացնում է Ուիլբըրի առաջին առերեսումը մեծ աշխարհին, որից նա հրաժարվում է, քանի որ վախենում է, իսկ չորրորդ գլուխը («Միայնություն») սկսվում է միայնությամբ, անընդհատ տեղացող հորդ անձրևով, որի պատճառով անիմաստ է դառնում Ուիլբըրի՝ նախապես մանրամասնորեն ծրագրած ժամանակացույցը: Մանկությունը սովորաբար կապվում է ազատության, չպլանավորված, չկաղապարված կյանքի հետ, ու այն պահին, երբ Ուիլբըրը փորձում է իրեն սահմանափակել *՝իր առջև ժամային արգելքներ դնելով*, ավարտվում է նրա մանկությունը, և նա ոտք է դնում հասունացման փուլ, և այս փոփոխությունն արտահայտվում է նաև նրանով, որ իր ժամանակացույցում նա նշում է, որ պատրաստվում է մեկ ժամ լուռ կանգնել ու խորհել՝ ինչ է առհասարակ «ապրելը» (White, 1980:26):

Փոփոխություններից չի խուսափում մեկ այլ կերպար ևս՝ Թեմփըլթոնը: Նրան ներկայացնելու համար հեղինակը գործածում է դրական հատկանիշ ցույց տվող բառեր՝ դիմացից ավելացնելով «ոչ» ժխտական մասնիկը, ու նույն բառը նա գործածում է՝ պատասխանելու իրեն ուղղված ցանկացած խնդրանքի: Սա նրա ներհակ տրամադրվածությունն է արտաքին աշխարհի պահանջով եկող փոփոխությունների նկատմամբ, ինչը հետագայում փոխվում է՝ անկախ նրա կամքից. *«Ոչ մի խնդիր, ենթարկվում եմ ամեն ինչի»* (White, 1980:57):

Սկզբում մշտապես միայնակ հանդես եկող հերոսը վերջում սոցիալականացվում է, դառնում «կենդանական հասարակության մասը»: Թեմփըլթոնը վեպի երկրորդ կեսում օգնում է Շարլոթին Ուիլբըրի համար սարդոստայն հյուսել, գիտակցության է բերում ուշագնաց եղած Ուիլբըրին (White, 1980:149), շնորհավորում է Շարլոթին, երբ լսում է ձագերի լուրը (White, 1980:167), համաձայնում Շարլոթի ձվերի բոժոժը հասցնել Զաքըրմենի ագարակ (White, 1980:183):

Փոփոխություններ է կրում նաև Ֆերնը: Նա մարմնավորում է եկած բոլոր մարդկանց, որոնք այդպես էլ պատասխան չեն գտնում իրենց հարցերին՝ ինչո՞ւ կա աշխարհը, ինչո՞ւ կա անարդարություն, ինչո՞ւ կա խտրականություն, ինչո՞ւ է մարդու ժամանակը սահմանափակ, և եթե այն սահմանափակ է, իրավունք ունի՞ որևէ մեկը կրճատելու այն, ու նա ըմբոստանում է.

– Դու պետք է սովորես տիրապետել քեզ:

– Տիրապետե՞լ ինձ: Սա կյանքի ու մահվան հարց է, ու դու խոսում ես ինձ տիրապետելու մասի՞ն (White, 1980:2):

Զաքըրմենի ագարակում հայտնվելուց հետո Ուիլբըրը նոր ընտանիքում այլևս չի ընդունվում որպես սիրելի կենդանի: Այստեղ պատմությունը փոխում է ուղին՝ Ֆերնի տեսանկյունից անցնելով Ուիլբըրի տեսանկյանը: Սկզբում թվում է՝ Ֆերնն ու Ուիլբըրը անբաժան ընկերներ են լինելու. Ֆերնը փրկում է նրա կյանքն ու խնամում նրան, բայց հետո հանձին Հենրի Ֆասսիի՝ գտնում մեկին, որ խթանում է նրա օտարացումը Ուիլբըրից: Ֆերնի վերաբերմունքը կենդանու հանդեպ փոխվում է իր և Ուիլբըրի մեծացմանը զուգընթաց: Կյանքի մասին մարդկանց պատկերացումները, ըստ Ա. Ռուշդիի, ձևավորվում են քաղաքակրթական-մշակութային փոխանցումների արդյունքում, այսինքն՝ ինդիվիդուալների ցանկություններն առաջանում են համայնքի՝ նախապես նրանց համար «կազմած ծրագրի» համաձայն (Rushdy, 1991:37), սա նկատվում է Ֆերնի կերպարի զարգացման ընթացքին հետևելիս: Ուիլբըրի հետ Ֆերնը վերաբերվում էր, ինչպես տիկնիկի հետ, ու սա վկայող փաստ է տեսարանը, որում Ֆերնը մանկասայլակում տիկնիկի կողքին պառկեցնում է նաև Ուիլբըրին և դիտում իր երկու «նորածիններին»՝ զգուշորեն տեղաշարժելով մանկասայլակը, որ չարթնացնի նրանց (White, 1980:9), ինչն առավել համոզիչ է դառնում գրքում Գ. Ուիլյամսի պատկերազարդած նկարներով (White, 1980:6, 11): Ա. Ռուշդին այս տեսարանը համեմատում է Էյվըրիի՝ ոտքից գլուխ զինված խոհանոց մտնելու տեսարանի հետ՝ նշելով, որ սա նման է մշակութային այն դաստիարակությանը, որը հետագայում փոխելու է Ֆերնի ցանկությունների շրջանակը այնպես, ինչպես փոխել է Էյվըրիինը (Rushdy, 1991:53): Նույն ձևով սարդոստայնն ու նրա վրա գրված բառերը ազդում են և՛ մարդկանց, և՛ կենդանիների վրա, ուստի կարելի է եզրակացնել, որ սարդոստայնը ներկայացնում է նաև սոցիալ-հասարակական համակարգը, ըստ որի ձևավորվում է համայնքը, և Ֆերնը փրկում է Ուիլբըրին՝ համայնքի և նրա արժեքների մասին չունե-

նալով *գիտակցված* գաղափար, մինչդեռ Շարլոթը փրկում է Ուիլբըրին՝ ունենալով հստակ գիտելիք մարդկային համայնքի, ինչպես և փոփոխությունների մասին, որոնց ենթարկվում են անհատները ժամանակի ընթացքում:

Համայնքային տոնավաճառը բերում է Ֆերնին և Էյվըրիին երանելի ազատությունը, *«և նրանք կարող են վազել դեպի հրաշալի արկածները, և դրանցում չեն լինի ծնողներ, որ հսկեն նրանց, ու նրանք կլինեն ուրախ ու ազատ»* (White, 1980:131), այսինքն՝ տոնավաճառում երեխաներն առաջին անգամ միայնակ առերեսվում են կյանքին: Հասունացումը Ֆերնի մոտ արտահայտվում է ոչ միայն Ուիլբըրի նկատմամբ ուշադրության նվազմամբ, այլև նրա՝ կյանքի նոր փուլ ոտք դնելով. *«Նա հագավ իր ամենագեղեցիկ զգեստը, քանի որ գիտեր, որ տոնավաճառում տեսնելու է տղաների»* (White, 1980:119): Սա ոչ թե երեխայության, այլ կանացիության արտահայտություն է: Վեպի երկրորդ կեսում, երբ որոշվելու է Ուիլբըրի ճակատագիրը, հերոսուհին նախընտրում է ժամանակն անցկացնել Հենրիի հետ: Անցումը մանկությունից հասունություն տեղի է ունենում դրանք իրարից սահմանազատող կարևոր փուլով՝ պատանեկությամբ: «Ստյուարթ Լիթըլ» վեպի գլխավոր հերոս Ստյուարթը ևս ենթարկվում է այդ փոփոխությանը: Նրա առաջին աշխատանքը լինում է նավավարությունը, ու դա նրան շատ է դուր գալիս. «Ավելի ուրախ երբեք չեմ եղել» (White 1973:37): Ստյուարթի դեպքում Է. Բ. Ուայթը ներկայացնում է տղամարդու հասունացման ընթացքը, Ֆերնի դեպքում՝ կնոջ: Ստյուարթը ստեղծագործության վերջում որոշում է շարժվել դեպի հյուսիս, «ճանապարհը երկար էր թվում, սակայն նա զգում էր, որ ճիշտ ուղղությամբ է գնում» (White 1973:131):

Նման տեսարան առկա է նաև քննարկվող վեպում Ուիլբըրի մասնակցությամբ. երբ նա առաջին անգամ ցանկապատից դուրս է հայտնվում, նրա առաջ բացվում է անծայր անտառը, այստեղ ևս նշվում է, որ ճանապարհը հերոսին երկար էր թվում, սակայն նա չգիտեր՝ վերադառնա՞լ, թե՞ ոչ, բայց երբ բոլորը սկսում են վազել նրա հետևից, նա զգում է, որ կցանկանար տուն վերադառնալ (White, 1980:19), սա խորհրդանշում է նրա՝ արտաքին աշխարհ դուրս գալու համար անպատրաստ լինելը: Ըստ Մ. Գուբարի՝ «*դեպի հյուսիս ուղևորվել*»-ը փոխաբերություն է, որ խորհրդանշում է հասունացումը, և ինչպես Ստյուարթը, այնպես էլ Ֆերնը վերջում շարժվում են դեպի հյուսիս (Gubar, 2003:106-107). *«Երբ տիկին Էրըրը պատահաբար նայեց աստղալից երկնքին ու տեսավ իր փոքրիկ դստերը Հենրի Ֆասսիի մոտ նստած օդում ավելի ու ավելի վեր բարձրանալիս և տեսավ՝ ինչ երջանիկ տեսք ունի Ֆերնը, նա միայն տարուբերեց գլուխը»* (White, 1980:139): Նման մոտեցում առկա է նաև «Կարապի շեփորը» վեպում: Վերջինում ներկայացված է երկու զուգահեռ պատմություն, որոնցից մեկի կենտրոնում Սեմն է, մյուսի կենտրոնում՝ «Լուիս» անունով կարապը: Սեմն ու Լուիսը մտերմանում են, սկսում միասին հաճախել դպրոց, գտնում իրենց առաջին աշխատանքը, սակայն եթե Սեմն օգնում է Լուիսին, քանի որ հետաքրքրված է թռչուններով, ապա Լուիսը գրել և կարդալ է սովորում, որ կարողանա խոստովանել իր սերը սիրելի կարապին՝ Սերինային, և երբ նրան

հաջողվում է նվաճել Սերինայի սիրտը, *նրանք ևս դեպի հյուսիս են ուղևորվում*, դեպի Կանադա, որտեղ պետք է ծնվեին նրանց ձագերը (White 2000:243):

Բևեռների նման սիմվոլիզմը, ի դեպ, լիովին հիմնավորված է. դեռ սկզբում Զաքըրմենի գոմ տեղափոխվող *փոքրիկ* Ուիլբըրը տեղավորվում է գոմի *հարավային* կողմում (White, 1980:14): Դրանից բացի՝ բևեռներին անդրադարձ լինում է նաև, երբ Զաքըրմենը բացում է գոմի հյուսիսային դուռը (White, 1980:178), և հետո նկարագրվում է, թե ինչպես է մի փոքրիկ սարդ դուրս թռչում, հեռանում գոմից, սա խորհրդանշում է անցումը մանկությունից դեպի հասունություն: *Ազատության և հասունացման հասնելու նախապայման է ընտանիքից բաժանումը:* Ստյուարթը, Լուիսն ու Սեմը հեռանում են տնից, իսկ Ֆերնի ծնողները նրան թույլ են տալիս եղբոր հետ իրենցից առանձնանալ համայնքային տոնավաճառում: Հենրիի հետ առաջին ժամադրությունից ստացած տպավորությունների նկարագրության մեջ Ֆերնը նշում է, որ դա իր «երբևէ անցկացրած ամենալավ ժամանակն էր» (White, 1980:143), սա նույն արտահայտությունն է, որով Ստյուարթը նկարագրում է իր ազատության մի քանի րոպեները նավի վրա: Մանկության ավարտը պսակվում է ճանապարհորդությունների մի նոր, լիովին այլ հոսքի սկզբով: Սկզբում Ֆերնն օժտված է կենդանիների լեզուն հասկանալու ունակությամբ, բայց վերջում կորցնում է այն, և այդ բաժանման սահմանն աղոտացված է վեպում: Հաշվի առնելով նշվածը՝ կարող ենք առաջ քաշել վարկած առ այն, որ վեպում տեղ գտած մարդ-կենդանի բոլոր դիալոգներն իրականում մանուկ Ֆերնի երևակայության արդյունքն են, և սրա համար կան մի շարք հիմնավորումներ, որոնցից ամենաակնհայտն այն է, որ *ուղիղ երկխոսություն* Ֆերնի և որևէ կենդանու միջև չի լինում: Բացի դրանից՝ սարդի և ձկան պայքարի մասին Շարլոթի պատմած պատմությունը տիկին Էրբըբլին վերապատմելիս Ֆերնն ասում է. *«Չե՞ս կարող ուղղակի պատկերացնել ձկան ծանրության տակ ճկվող սարդոստայնը»* (White, 1980:106): Բնօրինակում գործածված «see» բառը, որ տեքստում թարգմանեցինք որպես «պատկերացնել», ցույց է տալիս մանուկ հերոսի՝ մտքում էիդետիկ (eidetikos-հուն. պատկերներին կամ իմացությանը վերաբերող, eidesis-գիտելիք, eidos-ձև, eidetic-մտավոր լինելու համար չափազանց մանրամասն ու կենդանի. այս բառը Ֆերնի պատկերացումների առնչությամբ գործածում է Փ. Քոստելլոն (Costello, 2016:21)) պատկերներ ստեղծելու ունակությունը: Իսկ Լ. Օ. Ուեյքը, բերելով Զաքըրմենների շան օրինակը, նկատում է, որ բոլոր կենդանիները չէ, որ խոսում են վեպում, և հավելում, որ խոսող կենդանիները յուրահատուկ կապ ունեն Ֆերնի հետ (Wake, 2007:86-87):

Շարլոթն իրեն բնութագրում է «versatile» բառով, որ նշանակում է «ճկուն», «բազմափոփոխական», ու սա փոփոխություն է, որին, ըստ բժիշկ Դորիանի, ենթարկվելու է նաև Ֆերնը. *«Ապշեցուցիչ է՝ ինչպես են փոխվում երեխաները տարեցտարի»* (White, 1980:111): Ֆերնը և նրա ընտանիքը կրում են «Էրբըբլ» ազգանունը. բառն անգլերեն նշանակում է «*հերկելի*», և սա խորհրդանշում է

նրանց՝ *փոփոխություններին հակամետ լինելը*: Փ. Քոսթելլոն գրում է, որ ըստ բժիշկ Դորիանի՝ երեխաները սովորեցնում են մեծահասակներին, որ պետք է ճկուն լինել. մարդիկ ներքևում են, հողին ամուր կառչած, և ճկունությունն է, որ կարող է մարդուն տալ հնարավորություն դառնալու «օդագնաց» (Costello, 2016:22) (այս բառով հեղինակը բնորոշում է Շարլոթի ձագերին, որոնք ծնվելուց հետո հեռանում են): Մարդը կյանքի, մահվան ու ժամանակի անվերջ հարաբերությունների կենտրոնում է, ու փոփոխություններն օգնում են նրան զարգանալու՝ այդպիսով պահպանելով նրա գոյությունը: Բնության և հասարակության միջև առկա պատնեշը լավագույնս ներկայացված է բժիշկ Դորիանի և տիկին Էրըբլի երկխոսության մեջ.

– Չեմ հասկանում՝ ինչու եք ասում, որ սարդոստայնը հրաշք է. այն ընդամենը սարդոստայն է:

–Երբևէ փորձե՞լ եք ինքներդ հյուսել:

–Ո՛չ, բայց ես կարող եմ անձեռոցիկ ասեղնագործել և գուլպա գործել:

–Իհարկե՛, բայց ինչ-որ մեկը սովորեցրել է Ձեզ, այնպես չէ՞:

–Մայրս է սովորեցրել:

–Լավ, ո՞վ է սովորեցրել սարդին: Փոքրիկ սարդն առանց ցուցումների գիտի՝ ինչպես հյուսել սարդոստայն, մի՞թե դա հրաշք չեք համարում[1]*:*

–Կարծում եմ՝ այո: Ես երբեք այդ տեսանկյունից չէի նայել դրան: Մեկ է, չեմ հասկանում՝ ինչպես են այդ բառերը հայտնվել սարդոստայնի վրա, չեմ հասկանում ու չեմ սիրում այն, ինչ չեմ հասկանում (White, 1980:109-110):

Տիկին Էրըբլը կաղապարված հասարակության վառ ներկայացուցիչ է, բնական ինչ-որ երևույթներ հասկանում է, քանի որ բացատրվում են տրամաբանորեն, սակայն կտրականապես մերժում է ընդունել դրանք: Նա առավել անհանգստանում է բնությունը սիրող դստեր համար, քան զենքի նկատմամբ հակում ունեցող որդու, քանի որ նրա համար անբնական է դստեր, ոչ թե որդու պահվածքը: Երեխաների ծայրահեղ տարբեր լինելն առավել տեսանելի է դառնում, երբ Ֆերնը գումար է խնդրում տիկնիկի ու փուչիկի, իսկ Էյվըրին՝ քաղցրակրեմի ու *«խաղալիք ինքնաթիռի համար, որ պետք է վարեր այնպես, որ նրանով հարվածեր այլ ինքնաթիռի»* (White, 1980:130): Ակնհայտ են առաջին ցանկության դրական մղումները, սակայն նկատենք նաև երկրորդում առկա ագրեսիան ու սննդի նկատմամբ հակումը: Բժիշկ Դորիանի կերպարը հեղինակը կերտել է ի հակադրություն տիկին Էրըբլի կերպարի: Նրա մասին հեղինակը գրում է միայն, որ նա երկար մորուք ուներ (White, 1980:107), սակայն ընդունել սա որպես արտաքինի նկարագրություն պետք չէ, քանի որ այդ դեպքում նա մի փոքր երկար կանդրադառնար կերպարի արտաքինին, իսկ այս դեպքում հերոսն իմաստնության խորհրդանիշ է, և խորհրդանշական են նաև

[1] Իր «Կարապի շեփորը» վեպում Է. Բ. Ուայթը նույն բառերն է գործածում՝ ներկայացնելու թռչնի բույնը. «Որտեղի՞ց գիտի թռչունը՝ ինչպես հյուսել բույն: Ոչ ոք նրան երբեք չի սովորեցրել» (White 2000:28)):

երկխոսության՝ վերը նշված տեսարանը պատկերող նկարները. տիկին Էրբըլը նստած է անհանգիստ, հենված չէ բազկաթոռին, ամուր բռնել է պայուսակը, իսկ սա խորհրդանշում է նրա չափազանց սոցիալականացված լինելը, և իսկ բժիշկ Դորիանը հանգիստ հենվել է բազկաթոռին և *փակել աչքերը* [ընդգծում – Ն. Հ.] (White, 1980:108-109): Այստեղ հեղինակը տիկին Էրբըլի կերպարի միջոցով ներկայացնում է կաղապարված հասարակությունը, հակադրություն ստեղծում հասարակության և բնության միջև: Հասարակությունը պարփակվում է իր ստեղծած սահմաններում, մինչդեռ ժամանակը չի ճանաչում ոչ մի սահման ու ընթանում է իր բնական հունով, և երբ մարդը հրաժարվում է տեղի տալ նրա հզորությանը ու ըստ նրա հոսքի՝ վերափոխել իր ստեղծած պատնեշները, ժամանակը կոտրում է իր առաջ ծառացած ցանկացած պատնեշ՝ արդյունքում ոչնչացնելով նաև մարդուն:

Մահվան խորհրդանիշը և ժամանակը

Վեպում ժամանակի խնդրին զուգահեռ առանցքային դեր ունի մահվան թեման: Կյանքի ավարտը սովորաբար արտահայտվում է երկու ձևով. մեկը բնական մահն է, որին ժամանակի անխաթար հոսքում բախվում են բոլորը, մյուսը՝ սպանությունը, մի էակի ոչնչացումը մեկ այլ էակի կողմից: Մարդկանց գերակայությունը կենդանիների հանդեպ Է. Բ. Ուայթի ստեղծագործություններում բացահայտում է նրա վերաբերմունքը կենդանիներից սնունդ ստանալու մշակույթի հանդեպ: Ուիլբըրին Ֆերնին նվիրելու տեսարանին հաջորդող տեսարաններից մեկում հեղինակը ներկայացնում է նոր խոհանոց մտնող Էյվըրիին, որ ոտքից գլուխ զինված է (White, 1980:4): Սրանով նա մարդու մեղսագործ բնույթն է ներկայացնում: Նա դեռ երեխա է, սակայն հասարակությունը պարտադրում է նրան մեծանալ համոզմունքով, որ որպես ֆիզիկապես ավելի ուժեղ էակ՝ ինքն ունի գերակայություն իրենից թույլ էակների հանդեպ, և կարևոր հանգամանք է այն, որ հաշվի է առնվում ոչ թե մարդու *բանական* լինելը, այլ *ֆիզիկական* ուժը (հիշենք գրքի երկրորդ էջում պատկերված նկարը, որում Ֆերնը փորձում է ֆիզիկական ուժով հաղթել հորը՝ թույլ չտալով սպանել Ուիլբըրին. ի տարբերություն եղբոր՝ նա դեռ չի հասել այն փուլին, երբ մարդն սկսում է ընկալել ֆիզիկական ուժերի տարբերությունը), մի բան, որ գործում է նաև կենդանիների մոտ, սակայն եթե կենդանին սպանում է մեկ այլ կենդանու՝ բնական պահանջներից դրդված, ապա մարդու դեպքում այլ է: Շարլոթը սպանում է միջատների, որոնք իր կենսամիջոցն են, ու միևնույն ժամանակ կանխում վտանգը, որ նրանք չափազանց շատ կբազմանան:

Բնության մաս կազմող էակները միմյանց վնասելու միտում չունեն, ու բնության այս ներդաշնակությունը հեղինակն արտահայտում է նաև կենդանիների հավաքին տալով «ժողով» անունը (այսպես է վերնագրված 12-րդ գլուխը), ու սրան հակադրվում է բառը, որով նա ներկայացնում է քահանայի ճառը հանրության առաջ՝ «քարոզ»: Սրան զուգահեռ հիշենք տեսարանը, որում Ֆերնը միջատ է գտնում ազնվամորու միջից ու դեն նետում պտուղը (White,

1980:70), այսինքն՝ բնական մի էակ, որով գոյություն է պահպանում բնության մաս կազմող մյուս էակը, մարդու համար տհաճ և անընդունելի է այն պատճառով, որ նրան իր գոյությունն ապահովելու համար անմիջականորեն անհրաժեշտ չէ: Է. Ռաթելը գրում է, որ նպատակ ունենալով մեղմացնել մարդկանց վերաբերմունքը Ուիլբըրի նկատմամբ՝ Շարլոթը նախ փորձում է ցույց տալ նրանց, որ Ուիլբըրը ևս «ինդիվիդուալ» է, ունի «սուբյեկտիվություն», ինչը խթանում է ընթերցողի ներգրավվածությունը Ուիլբըրին կառնոֆալոգոցենտրյալ [բառը գործածում է Ժ. Դերրիդան՝ նկատի ունենալով կենդանիներից սնունդ ստանալու մշակույթը, որ մսակեր (carno-carnivorous) մարդուն, մասնավորապես տղամարդուն (phallus), առավելություն է տալիս լոգոս (խոսք) չունեցող կենդանու նկատմամբ] շրջանակից հեռացնելու գործում (Ratelle, 2014:334): Զաքըրմենի անվան մեջ էրըբլներն «Անքլ» բառը ևս նշում են. հասկանալի է, որ Զաքըրմենը նրանց արյունակիցն է, սակայն սա նաև կերպարի տարածված լինելու գաղափարին է հարում, և սա է պատճառը, որ համայնքային տոնավաճառում Ուիլբըրի գլխավոր հակառակորդին հեղինակը դարձյալ նույն անունն է տալիս («Անքլ»)՝ փորձելով ցույց տալ նրա՝ որպես կերպարի տարածված լինելը, նրանում սուբյեկտիվության բացակայությունը և ամբողջից անանջատելի լինելը, ու սա արտահայտվում է նաև նրանով, որ Անքլը մրցույթում հաղթողի մրցանակն է ստանում, մինչդեռ Ուիլբըրը՝ *հատուկ*: Իր «Ազատություն» էսսեում Է. Բ. Ուայթը գրում է. «Ոչ թե գրված, այլ ասված բառն է տագնապային իրավիճակներում շարժում ամբոխների: Գրվածքը յուրաքանչյուր ոք իր ձևով է հասկանում, ոչ նրանով, որով իր կողքինն է հասկացել» (White, 1940:4):

Շարլոթը գրվածքներով է պայքարում մարդկանց դեմ, քանի որ այն, ինչ մարդկանց կողմից ընկալվում է ոչ միանշանակ, տալիս է մեկնաբանելու լայն հնարավորություններ: Շարլոթի կերպարի մեջ հեղինակը խտացրել է իմաստնությունն ու բնականությունը: «Թեև նա ընդունում է մահվան անխուսափելիությունը և դիտում այն որպես կյանքի բնական շրջափուլ, սակայն դեմ է գնում ոչ բնականին՝ սպանության մարդաստեղծ ավանդույթին, ուստի նաև ազատության խորհրդանիշ է, ազատություն հասարակական-սոցիալական բոլոր պայմանականություններից և ավանդույթներից: Ըստ Ա. Շիհի՝ Շարլոթն ապացուցում է, որ արտատեսակային ոչ բռնի համակեցությունը ոչ միայն հնարավոր է, այլ նաև անհրաժեշտ, և սրան հասնելու համար անհրաժեշտ է նաև մտքի ու արտահայտման ազատություն (Shih, 2016:251-252):

Ուիլբըրը, լսելով իր սպանության մասին լուրը, արտասվելով բղավում է՝ *«փրկեցե՛ք ինձ, փրկեցե՛ք»* (White, 1980:50), բայց հստակ մեկին չի ուղղում խոսքը, նա չի հասկանում՝ որն է անարդարության պատճառն առհասարակ, ինչու ինքը պիտի սպանվի, ինչու կա մահը, և ինչու են բոլորը դատապարտված մահանալու: Իր «Խոզի մահը» էսսեում Է. Բ. Ուայթը նկարագրում է մի քանի օր ու գիշեր, որ ինքն անցկացրել է մի հիվանդ խոզի հետ, որին ի սկզբանե մտադիր էր սպանել. «Խոզի տառապանքները շուտով դարձան երկրային

խղճուկության մարմնացումը» (White, 1979:21), – գրում է նա իր էսսեում, և ըստ Ք. Շամայի՝ այդ զգացումը դարձավ այս գիրքը գրելու նրա հիմնախթաններից մեկը (Schama, 2011): «Հարփըր & Րոու» հրատարակչության խմբագիր Ուրսուլա Նորդստրոմին ուղղված նամակում արծարծելով ագարակներում ապրող կենդանիներին սպառնացող մահվան վտանգի թեման՝ Է. Բ. Ուայթը գրում է. «Ես խոզ եմ պահել, օր օրի ավելի եմ ծանոթացել խոզիս հետ, և նա էլ ինձ հետ: Ես չեմ ուզում դավաճանել մարդու կամ այլ էակի: Մարդու պարտականությունն է լինել հուսալի, և ինձ անհանգստացնում էր այն, որ այդպիսին չեմ խոզիս համար» (https://www.themarginalian.org/2013/10/15/e-b-white-on-charlottes-web/):

Մ. Սիմսը գրում է, որ Է. Բ. Ուայթըն ընդունում է մահը որպես բնական երեվույթ, քանի որ եթե կա ծնունդ, կա նաև մահ, և չնայած որ մահն անխուսափելի է, անխուսափելի է նաև կյանքի հաջորդ շրջանը (Sims, 2011:205): Է. Բ. Ուայթը երաժշտության ու բնության միջոցով է ներկայացնում կյանքի շրջապտույտը. վեցերորդ գլուխը («Ամռան օրեր») սկսվում է ամառնամուտի չքնաղ նկարագրությամբ. շնչում է ողջ բնությունը, ծաղկում են ծառերն ու ծաղիկները, ու այս նորաթուխ կյանքը բնորոշող ամենակարևոր իրադարձությունը լինում է սագի ձագերի ծնունդը, որի մասին մայր սագից հետո առաջինը Շարլոթն է իմանում (White, 1980:44): Սա կյանքի սկիզբն է, ու սրան հակադրվում է տասնհինգերորդ գլուխը («Ծղրիդները»), որում հեղինակը նկարագրում է ամռան ավարտը ծղրիդների միջոցով: Վերջիններս իրենց պարտավորությունն են համարում զգուշացնել բոլորին, որ «ևս մեկ ամառ է մեռնում», և սա ցույց է տալիս բնության համակերպվածությունը մահվան գոյության հետ: Բնությունը ճանաչում է ժամանակի գերիշխանությունը, մեռնում է ու դարձյալ վերածնվում. «Ճահճի մոտ թխկին լսեց ծղրիդների երգն ու անհանգստությամբ վառ կարմիր կապեց» (White, 1980:114): Է. Բ. Ուայթն իր «Եվս մեկ անգամ դեպի լիճը» էսսեում հիշում է իր մանկության տարիներին անցկացրած ամառները լճի ափին, պատմում՝ ինչպես է տարիներ անց ինքը բերում իր որդուն նույն այդ վայրը, սակայն սկսում է հորդառատ անձրև տեղալ, բոլորը, այդ թվում և նրա որդին, մտնում են ջուրը՝ լողալու, և որդուն լողալիս տեսնելիս հեղինակը «զգում է մահվան սառնությունը» (White, 1979:202), սա ներկայացնում է եղանակային փոփոխությունների նույն սիմվոլիզմը, որը քննարկվող վեպում ներկայացված է Ուիլբըրի՝ մանկությունից հասունություն անցման նկարագրության մեջ:

– Դե, ես գեղեցիկ չեմ խոսում: Բառերով չեմ կարող արտահայտել քո նվերը, բայց դու փրկել ես ինձ, Շարլո՛թ, և ես ուրախությամբ կտայի կյանքս քեզ համար, իրոք կտայի:

– Դու իմ ընկերն ես, դա արդեն մեծագույն բան է: Ես քեզ համար սարդոստայններ էի հյուսում, որովհետև հավանում եմ քեզ: Ի վերջո ի՞նչ է կյանքն ինքնին. մենք ծնվում ենք, ապրում մի փոքր ու մեռնում: Սարդի կյանքը ճանճեր բռնելու և ուտելու մի խառնաշփոթ է: Քեզ օգնելով՝ ես հավանաբար փորձում

էի գոնե մի քիչ բարձրացնել իմ կյանքը: Աստծուն է հայտնի, որ կյանքը կարող է արժևորվել դրանով» (White, 1980:164):

Պարզ է, որ Ուիլբըրը իրոք երախտապարտ է Շարլոթին, սա առավելապես պարտքի զգացում է, քան իր քայլի դիմաց ոչինչ չակնկալող էակի զգացում, սա հասարակության կողմից ստեղծված բարոյական համակարգի ընդունում է այդ հասարակության մաս սկզբում չկազմող էակի կողմից, ինչպես Թեմփլթոնի դեպքում էր:

Շարլոթի մահվան նկարագրության մեջ հեղինակը գրում է, որ բոլորն ամեն ինչ հավաքում էին՝ վերադառնալու իրենց տուն, կյանքը դրանից հետո շարունակվելու էր իր բնական հունով: Ոչ ոք չկար Շարլոթի մոտ, երբ նա մահացավ, ոչ ոք չիմացավ, որ ամենի հիմքում այդ մոխրագույն սարդն էր (White, 1980:171): Մարդն առավել հակված է նկատելու ժամանակի թռիչքը, երբ հարազատ մեկին է կորցնում, սակայն դա ընդամենը մի պահ է, հետո նա դարձյալ վերադառնում է իր առօրյային ու մահացածին հիշում է միայն նրա հետ կապված հիշողություններով, ու դա կապված է նրա սպասումների հետ: Սպասելիս մարդը ոչ թե ժամանակի ընթացքն է նկատում, այլ իրեն նպատակակետից բաժանող հեռավորությունը. *«Կյանքը միշտ հարուստ ու կայուն է, երբ սպասում ես, որ ինչ-որ բան պատահի կամ ծնվի»* (White, 1980:176):

Վեպը սկսվում է Ուիլբըրի ծնունդով, ավարտվում Շարլոթի մահով ու փոքր սարդերի ծնունդով: Սա կյանքի պտտվող անիվն է: Թվում է՝ ծնունդը մարում է կորստի ցավը, սակայն *«Ուիլբըրը երբեք չմոռացավ Շարլոթին: Չնայած նա սիրում էր նրա երեխաներին ու թոռներին, նոր ծնված սարդերից ոչ մեկը չկարողացավ զբաղեցնել նրա տեղը Ուիլբըրի սրտում: Նա իր ուրույն տեղն ուներ: Հաճախ չի պատահում, որ հայտնվում է մեկը, որ թե՛ ճշմարիտ ընկեր է, թե՛ լավ հեղինակ: Շարլոթը երկուսն էր»* (White, 1980:184):

Եզրակացություն

Վեպում ներկայացված են մարդու, կենդանիների և բնության միջև արտատեսակային և ներտեսակային փոխհարաբերությունները: Հեղինակն առաջ է քաշում կենդանիների սպանդի դարավոր ավանդույթի խնդիրը՝ ներկայացնելով այն որպես մարդու մեղսագործ բնույթի հետևանք: Բնությունը նա ներկայացնում է որպես կատարյալ ներդաշնակության նմուշ, որի համար հավասարապես ընդունելի են *ծնունդը* և *մահը*: Հեղինակը բնությունը ներկայացնում է որպես ինքնավերականգնվող, վերստեղծվող էություն, որը չի ընդունում մարդու իշխանատենչ նկրտումներն իր նկատմամբ, պայքարում է դրանց դեմ և ի վերջո հաղթանակում: Հեղինակը *ժամանակի* փիլիսոփայական կատեգորիային առնչվող խորհրդանիշներ է կերտում՝ շեշտելու *ծնունդի* և *մահվան* առկայությունը աշխարհում, որտեղ կա շարժում, որովհետև վերջինս իր գոյությամբ ենթադրում է ժամանակի առկայությունը, և քանի որ սա զուտ բնական ֆենոմեն է, ընդունելի է բնության բոլոր տարրերի համար և ազդում է դրանց վրա

հավասարապես: Է. Բ. Ուայթը, հանձին Ֆերնի, ներկայացնում է մարդու զարգացման ընթացքը՝ նկարագրելով փոփոխությունները, որոնց նա ենթարկվում է ժամանակի ընթացքում հասարակության ազդեցությամբ:

НАТЕЛЛА ОВАКИМЯН – *Концепт времени в романе «Паутина Шарлоты» Элвина Брукса Уайта*. – Природа является распространённой темой в американской литературе, часто ассоциируемой с детской литературой. Одной из её общих черт является олицетворение животных, что позволяет воссоздавать персонажей, ситуации и события, напоминающие волшебный мир, но при этом опирающиеся на элементы реальной жизни. Авторы часто наполняют эти повествования фундаментальными философскими идеями, интерпретируя их через рассказ. Созданный текст часто несёт в себе важнейшую отличительную черту сказки - волшебство. Произведение Э. Б. Уайта представляет собой уникальное сочетание этих черт, поскольку в нём сгущены их основные элементы, а последний из компонентов имеет множественные и даже противоположные формы выражения, что делает роман более интересным и оригинальным, открывая широкие возможности для интерпретации.

Ключевые слова: *время, движение, природа, общество, изменение, развитие, социализация, смерть, жизнь*

NATELLA HOVAKIMYAN – ***The Concept of Time in the Novel "Charlotte's Web" by Elwyn Brooks White*.–** Nature is a prevalent theme in American literature, commonly associated with children's literature. One of its common features is the personification of animals, which allows for the re-creation of characters, situations and events reminiscent of the *unreal* world, yet grounded in elements of *real* life. Authors often infuse these narratives with fundamental philosophical ideas, interpreting them through storytelling. The created text often carries a most important characteristic feature of a fairy tale: *wonder*. E. B. White's work is a unique combination of these features because it condenses their essential elements, and the last of the components has multiple, and even opposite forms of expression which makes the novel more interesting and unique, offering wide possibilities for interpretation.

Key words: *time, movement, nature, society, change, development, socializing, death, life*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Պո Է. Ա., Ճոճանակն ու հորը, Անուրջներ և մղձավանջներ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983 [Poe E. A., Tchotchanakn u hore, Anurjner yev mghdzavanjner, Yerevan, Sovetakan grogh, 1983]:

Gubar M., Species Trouble: The Abjection of Adolescence in E. B. White's Stuart Little, The Lion and the Unicorn, Volume 27, Number 1, 2003, The Johns Hopkins University Press, pp. 98-119.

Ratelle A., Ethics and Edibility in Charlotte's Web, Johns Hopkins University Press, The Lion and the Unicorn, Volume 38, Number 3, September 2014, pp. 327-341.

Rushdy A., "The Miracle of the Web": Community, Desire, and Narrativity in *Charlotte's Web,* The Lion and the Unicorn, Volume 15, Number 2, Johns Hopkins University Press, 1991, pp. 35-60.

White E. B., Charlotte's Web, Harper and Row Publishers, New York, Evanstone, San Francisco,

London, 1980.
White E. B., Death of a Pig, Essays of E. B. White, Harper Colophon Books, Harper & Row Publishers, New York, Hagerstown, San Francisco, London, 1979, pp. 17-24.
White E. B., Natural History, Letters of E. B. White, New York, London, Toronto, Sydney, Harper Perennial, 2007, p. 89.
White E. B., Once More to the Lake, Essays of E. B. White, Harper Colophon Books, Harper & Row Publishers, New York, Hagerstown, San Francisco, London, 1979, pp. 197-202.
White E. B., Stuart Little, New York, Harper & Row, 1973
White E. B., The Trumpet of the Swan, New York, Harper Collins Publishers, 2000.
Sims M., The Story of Charlotte's Web: E. B. White's Eccentric Life in Nature and the Birth of an American Classic, New York, Walker & Company, 2011.

Համացանցային աղբյուրներ

Costello P., Toward a Phenomenology of Transition: E. B. White's Charlotte's Web and a Childs Process of Reading Herself into the Novel, 2016 //https://www.academia.edu/30219178/Toward_a_Phenomenology_of_Transition_E._B._White_s_Charlotte_s_Web_and_a_Child_s_Process_of_Reading_Herself_into_the_Novel (01.08.2024).
Schama C., How E.B White Wove Charlotte's Web, 2011 //https://www.smithsonianmag.com/arts-culture/how-eb-white-wove-charlottes-web-180497405/ (05.08.2024).
Shih A., The Intellectual Scale of Children's Fantasy: Telling Ideas in the Works of Lewis Carroll, J.M. Barrie, A.A. Milne, and E.B. White, University of California, Los Angeles, 2017 // https://escholarship.org/content/qt4mr2q296/qt4mr2q296.pdf (01.08.2024).
Wake L. O., E. B. White's Environmental Web, University of Nebraska – Lincoln, 2007 // https://digitalcommons.unl.edu/cgi/viewcontent.cgi?article=1008&context=englishdiss
White E. B., Freedom //HCC Learning Web (hccs.edu) (05.03.2020).
White E. B., To Ursula Nordstrom, North Brooklin //https://www.themarginalian.org/2013/10/15/e-b-white-on-charlottes-web/ (05.08.2024).

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 67-78
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.067

FABRICATING REALITY AND MANUFACTURING ENMITY: HATE SPEECH AND THE CONSTRUCTION OF WAR DISCOURSE

GAIANE MURADIAN[*], **ANI SIMONYAN**[**]
Yerevan State University

The escalation from interpersonal clashes to systemic state violence is a reality skillfully constructed through language. In today's digital world, the line between free expression and deliberate verbal aggression or hate speech has become dangerously blurred, allowing political leaders and media outlets to fuel war-mongering discourse through multimodal means. Therefore, this article explores the complex mechanisms of hate speech and its ability to manipulate public opinion and fabricate consent for hostility. Using discourse analysis (including narrative analysis, critical discourse analysis, and multimodal analysis) as the primary methodology, the study identifies manifestations of hate speech that frame opponents as existential threats through systemic bias and manipulation. The findings suggest that linguistic brainwashing provides moral justification for aggression and emphasize that understanding the nature of provocative language is a vital societal defense. In an era where social media dictates the boundaries of truth, decoding military discourse is essential to countering polarization and preserving a shared objective reality.

Key words: *hate speech, war discourse, provocative language, falsified data, discrimination. in-group/out-group*

Introduction

The 21st century has witnessed numerous transformations in the fields of media and technology. Modern media is filled with social advertisements, psychological videos,

[*] **Gaiane Muradian –** Dr. of Philology, Professor at the YSU Chair of English Philology
Գայանե Մուրադյան – բանասիրական գիտությունների դոկտոր, ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր
Гаянэ Мурадян – доктор филологических наук, профессор кафедры английской филологии ЕГУ
Email: g.murad@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0002-7588-5849
[**] **Ani Simonyan –** PhD Student at the Chair of English for Cross-Cultural Communication, Yerevan State University
Անի Սիմոնյան – ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի ասպիրանտ
Ани Симонян – аспирант кафедры английского языка для межкультурной коммуникации ЕГУ
Email: ani-simonyan-94@mail.ru ORCID ID:https://orcid.org/0000-0002-7403-1913

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 20.04.2026
Գրախոսվել է՝ 23.04.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

and shows productive, meaningful and peaceful conversations in various speech situations, however, rules and regulations are often violated during interactions making it impossible to avoid hate speech and war discourse respectively. Even if there are some rules to control the discriminatory discourse, there can always be found ways to violate them.

Social media sites and online news broadcasts serve as a mirror to reflect the current situation in the world. The fact that the Internet is now full of hatred and threats is very upsetting. Feeling free to express their ideas, people lose control and stop distinguishing the boundaries between freedom of speech and hostility. The problem requires immediate action as it is not realized only at a level of an individual but rather at a state level. The language of media is very often biased, antagonistic and often misleading as technology has made self-expression much easier than ever before.

It is not always easy to decode and understand the information behind the actual words used to construct and convey meaning. Hence, there is a need to think critically and have awareness about how to comprehend discourse in any interaction or speech situation with the aim of revealing the true message, the psychology of the speaker, the hidden intent and power relations. To go deeper into the meaning and to try to understand the various layers in the intent – discourse analysis can be applied. Discourse analysis is a qualitative research method of studying written, spoken and visual language in context to reveal meaning, power and social dynamics. It goes beyond the words and sentences and examines the context revealing the ways that contribute to the construction of meaning including non-verbal communication, sound, color, images (Shaw & Bailey, 2009).

As a comprehensive term, discourse analysis encompasses narrative analysis, critical discourse analysis and multimodal analysis. This method aims at examining natural language and the ways it can be used to construct meaning and social identities, and is commonly employed in such fields as political, social and cultural studies where context is of utmost importance. Without context, sentences are most often merely individual texts that do not reveal the entire message and serve as obstructions for the perception of information. It is only through their interconnection with other texts preceding and very often following them that the meaning becomes clear. Discourse analysis is trying to detect the factors that make texts meaningful and how they contribute to the constitution of social reality by "making meaning" (Phillips & Hardy, 2011, p. 4).

According to J. P. Gee (2011) language is always the reflection of different contexts and various perspectives. Consequently, discourse analysis allows us to decipher the latent messages in every speech situation and the nuances emphasizing power and authority. Discourse analysis is widely used in politics to go below the surface-level information and penetrate into the real message which is not obvious without context and additional cues.

Building Enmity: How Language Maps the Road to War

Being a natural human emotion, hatred can be manifested constantly and transitorily. Hence, we can distinguish between temporary severe anger and permanent hatred that might not be very conspicuous but can flare up at times. Hatred is conveyed verbally, visually and in written texts leading to the formation of **hate speech/hate discourse** which can be expressed in a variety of ways including the spread of disgust, contempt, blasphemy and slander, disapproval verbal arrogance and belittling.

When nothing is done to overcome hatred, it can culminate to its peak which is highly dangerous, posing threat to diverse social, ideological, racial, religious, ethnic and political groups. It can result in cleansing and symbolic or physical elimination of the opposite side. What is very important, hatred mostly revolves around identity-related issues. Sometimes differences in social, racial or ethnic identities become a reason for a conflict especially when one of the sides has a wish to expand its geography or to reach economic, religious or political power in the region or in the world (Hannachi, 2023). This is generally expressed in the form of reciprocal accusations, isolation of the side that is in a less favorable position, through discriminatory language trying to exalt one nation over the other to show how just, rightful and fair one side is, and how unjust and unfair the other side is. As a matter of fact, people do not take much notice of the language encouraging hatred and violence, thinking that those are merely words which will not escalate into serious actions or a full-blown conflict. However, it has been proved in a number of instances that words can prepare the ground for further action.

According to Hrant Dink Foundation (HDF), factors like cultural background, national identity, ethnicity, race, sex are the basis of hate speech and contribute to the marginalization of the vulnerable ones. The HDF posits that the media acts as a **"culture transmitter"** that can normalize and legitimize conflict (Güvengez, et al., 2020, p.8). When media outlets use identity markers, such as race, ethnicity, or sex, as a basis for **"symbolization"** (using an identity trait to convey a negative message) or **"distortion"** (making unfair generalizations), they contribute to the social polarization and the systematic marginalization of these groups (ibid, p.10). Although media has the power and influence to soften the tense situation, to normalize the differences and to promote diversity, today the opposite is being done more often than not.

As the European Commission against Racism and Intolerance (ECRI) suggests, hate speech is defined as the use of expressions that spread, incite, promote, or justify racial hatred, xenophobia, anti-Semitism, or other forms of hatred based on intolerance and comes in many forms of expression advocating, inciting, promoting and justifying hatred, violence and discrimination against a person or a group for various reasons (ECRI, 2015). It is a threat to the democratic society as, in case of being ignored, it can lead to violence and violation of human rights. Being an extreme form of intolerance, it can result in hate crimes as violence and hate speech are closely intertwined. Of course, it is very important to ensure freedom of speech but open calls to incite violence should be prohibited, and the boundary between hate speech and freedom of speech should not be blurred.

War discourse (call of arms in the outbreak of a war or an armed conflict) and hate speech are expressed widely in today's political speeches in particular. Language and social conduct play their mediating roles in persuading people to join one of the sides involved in the conflict by dividing masses into **in-groups** and **out-groups**. For example, the quote below from an interview of President of Ukraine V. Zelensky to the BBC on April 14, 2022 (conducted by Clive Myrie in Kyiv) focuses on his frustration with European countries (specifically Germany and Hungary) that were at the time resisting a full embargo on Russian energy exports.

*We don't understand how you can **make money out of blood**. Unfortunately, this is what some countries have been doing. European countries. For example, the oil embargo. I think this is one of the key issues. We do see that some are not ready for it.*

All trade must be stopped with Russia so that it can't sponsor the killing of our children so that dollars and euros shouldn't be paid for our blood.

This example shows how political discourse uses moral high grounds to draw sharp lines between *us* and *them*. By framing an economic decision (energy imports) as a moral choice between life and death, Zelensky effectively humanizes the victims while dehumanizing the financial transactions of the opposition. The in-group is defined by shared suffering and moral clarity. It includes Ukraine and its citizens (identified as the ones shedding *blood* and losing *our children*) and the allies (by implication, any country that has agreed to the embargo and stopped trading with Russia, aligning themselves with the "right" side of the conflict. The out-group is defined by greed and complicity. It includes Russia (the primary aggressor, framed as the entity that *sponsors the killing*) and hesitant European countries (specifically Germany and Hungary) which are framed as prioritizing *dollars and euros* over human life. By choosing trade over an embargo, they are cast as others who are indirectly profiting from the blood of the in-group. The humanizing mechanism is worked out through the following expressive means:

- ✓ The metonymy replaces *oil revenue* with *blood money***.** This makes the trade feel like a physical assault rather than a commercial contract;
- ✓ By stressing vulnerability, by mentioning *our children*, Zelensky appeals to universal protective instincts, making the out-group's hesitation seem not just politically slow, but fundamentally inhumane.
- ✓ The language emphasizing the in-group/out-group divide forces the listener to choose. You are either with the *children* (in-group) or you are with the *dollars and euros* (out-group). There is no middle ground for neutral economic policy in this rhetorical framework.

From a multimodal perspective, it should be mentioned that beyond the text, the multimodal impact is amplified by Zelensky's visual presentation. Dressed in a military fleece rather than a formal suit, he sits in a darkened, functional room in Kyiv. This visual uniform strips away the persona of a distant politician and replaces it with that of a front-line commander. It serves as a non-verbal anchor for his words; when he speaks of *blood* and *our children*, the visual reality of his wartime surroundings validates his moral authority and reinforces the urgency of the in-group's suffering. The weight of the discourse is also carried through the heavy pauses, the direct eye contact with Clive Myrie (and by extension, the Western viewer), and a tone that fluctuates between exhaustion and sharp indignation. These multimodal elements transform the oil embargo from a dry policy debate into an innate plea. By leaning into the camera when mentioning *dollars and euros*, he uses his physical presence to confront the viewer, making the out-group's economic hesitation feel like a hateful personal betrayal witnessed in real-time.

War is a type of organized social behavior and the role of language in mobilizing powers against the enemy and legitimizing open violence cannot be underestimated. The aim is to urge smaller groups to join larger ones. The construction of a shared identity ensures the success of the process. The out-groups are viewed as enemies and their actions are treated like a threat to the well-being and safety of the nation. Hence, the aim of political leaders is to justify their cause in starting the war and make their people believe in the final success. War rhetoric is used to emphasize the defensive aspect of the conflict which means that leaders need to persuade their nations that entering the war is the only sensible solution and the right way out of the situation. It is crucial to point

that the enemy has started the conflict posing a threat to their safety, thus the out-group or the aggressive enemy leaves no choice but respond to their action. For example, Azerbaijani President Aliyev's speech delivered during a meeting on July 15, 2022, reveals a sophisticated rhetorical strategy. Like the Zelensky example provided above, Aliyev uses moral high grounds to transform a complex territorial conflict into a binary struggle between justice and injustice.

The Second Karabakh War is our ***glorious history****. This war was* ***inevitable****. I have said this many times, and I want to say it again:* ***the war was inevitable and led to the restoration of justice, international law, and the national dignity of the Azerbaijani people.***

By stating the war was *inevitable,* Aliyev employs a common legitimization tactic. If a war is inevitable, the leader is merely responding to a historical necessity. This frame removes the moral burden of the outbreak of conflict. It suggests that diplomacy (the out-group's failed domain) was exhausted, leaving no choice but a military solution. It positions the state as a passive actor forced into an active role by the circumstances or the enemy's obstinacy. Aliyev defines the Azerbaijani in-group not just through territory, but through emotional and psychological restoration. By mentioning *national dignity***,** he taps into decades of collective trauma: specifically the feeling of humiliation following the First Karabakh War in the 1990s. The in-group is now framed as a proud people who have finally stood up. The war is presented as a healing of the national psyche, making the military action a prerequisite for the people's self-worth.

While not explicitly named in this specific sentence, the out-group (Armenia and the OSCE Minsk Group) is defined by their failure. If Aliyev is restoring *justice and international law*, the out-group is implicitly categorized as the embodiment of injustice and lawlessness**.** By framing the conflict as a legal and moral *restoration*, the opposing side's presence in the territory is categorized as an "error" that needed correction. He uses specific high-value keywords to bridge the gap between small groups and the larger national cause. This appeals to the intellect and the global community, justifying the war as a "police action" to enforce UN resolutions and framing the 2020 conflict not as an act of aggression, but as a "liberation war" that enforced UN Security Council resolutions regarding territorial integrity which had remained unfulfilled since the 1990s. In Aliyev's discourse, the hateful language serves to legitimize violence by coating it in the language of legality**.** He moves the conversation away from the horror of war and focuses on the *glorious* result. By framing the war as the only way to achieve *justice*, he ensures that any internal dissent or external criticism is viewed as an attack on the Azerbaijani *national dignity*. Visually, Aliyev frequently delivers such addresses from government halls or at the inauguration of reconstruction projects in recaptured territories. In this way he transforms the *glorious history* from a rhetorical claim into a physical reality. His formal suit and the prominent placement of the Azerbaijani flag serve as a non-verbal signal of state stability, suggesting that the war was not a descent into chaos, but a disciplined, institutionalized restoration of *international law* and *national dignity*. This multimodal impact is intensified by Aliyev's assertive delivery. He employs a steady, rhythmic cadence and a firm vocal tone that conveys finality. When he speaks of the war as *inevitable*, he often uses downward hand gestures or taps the podium – a kinesic marker of authority. This top-down communicative style reinforces the in-

group's identity as a disciplined nation that has successfully transitioned from victimhood to victory, making the *restoration of justice* feel like an objective, accomplished fact. Aliyev's direct gaze into the camera targets the in-group to instil pride, and the out-group to project defiance. By maintaining a posture of victor's composure, he reinforces the narrative that the military solution was the only "sensible" path, visually legitimizing the state's use of power as an act of historical necessity.

The provocative, biased, hateful discourse of war leaders cannot appear immediately. Its roots should be looked for in history, culture, ethnicity, religion (Güvengez, et al., 2020). Such discourse aims at suppressing and deemphasizing every piece of information that seems to be positive and favorable for those who are not in-group. It is argued that war language is not just about describing conflict but is a discursive tool used to construct social identities – specifically by framing the *us* (in-group) as morally superior and the *them* (out-group) as a hostile threat that must be neutralized. In other words, speakers who spread hatred and hostility, try to illustrate the in-group in the best light emphasizing their **"rightfulness"** and **"legitimacy"** (Hodges, 2015, p.1). It is crucial to show that war is imposed to them and the most reasonable response in the existing situation is to fight, and here come various language means to persuade that war is the only means to achieve their goals. To sound more convincing, the above mentioned war leaders and the media use literary tools (euphemism, metaphor, idiom) extensively: *border conflict* instead of *war* (Armenian media), *rival* instead of *enemy* (Armenian media), *individuals who left voluntarily* instead of *refugee* (Azerbaijani media), *special military operations* instead of *war* (Russian media and BBC), *only black and white, good and evil* (Zelensky), *brave enough to put an end to evil* (Zelensky), *They just need to do their homework* (Aliev), *They wanted more than they could digest* (Aliev), *not a cold war, not a hot war* (Zelensky), *fighting the occupiers with fire and sword of international law* (Zelensky), *on the white horse again* (Aliyev), *raise the white flag* (Zelensky).

When media and political actors normalize hate speech under the guise of national interest, they do more than justify a current conflict; they form a ground for the next one. Understanding war discourse and hate speech patterns is not just an academic exercise in linguistics, it is rather a necessary act of defence. By recognizing how our natural emotions of fear and belonging are being engineered, we gain the ability to question the so-called *inevitable* and find a path back to a language of humanization rather than elimination.

State-led indoctrination in modern war discourse

There are a number of cases of conflict situations all over the world but we have taken a look at two of them: Armenia-Azerbaijan and the Russia-Ukraine wars. In this respect there are numerous instances of hate speech and violent behavior on the Internet and social networking websites, recorded videos about war crimes to scare, intimidate and spread an atmosphere of fear and hostility.

The Russia-Ukraine war actually started in 2014 when Russia invaded the Crimea, and again escalated on February 24, 2022. As in case of any war situation, hate speech and war discourse are an inextricable part of war leaders' speeches, articles and various presentations of the conflict. Some instances of provocative language are discussed below.

On June 20, 2025 International Economic Forum's plenary session of question-and-answer part, Putin made the following "joke":

*I consider Russians and Ukrainians to be **one people**. In that sense, all of Ukraine is ours. There is a saying: **wherever a Russian soldier sets foot, that is ours**.*

According to Sperber and Wilson (1986), RARCs can form part of an explicature, a richer, context-based interpretation that arises through decoding, disambiguation, reference resolution, and other pragmatic processes. In other words, the meaning of an utterance with an RARC goes beyond simply adding together the content of the two clauses (Khalifa 1999: 27–28; Cornilescu 1981).

(9) *The difference these days is that while most of his younger Vietnam colleagues have moved on to more restful fields like editing, book writing and speechmaking, Arnett,* ***who's pushing 60****, is still out there on the ragged edge. [COCA, News,1991]*

(10) Jacey Norton and her husband, Joe, of Framingham, Mass., started the Korean Adoption Circle to help families like themselves. The Nortons adopted two Korean children, and as they visited with other white adoptive parents, they realized that the children, ***who had rarely seen an Asian adult,*** *were under the impression that they would grow up to be Caucasian. [COCA, News,2000]*

As can be seen from both examples, the inter-clausal semantic relationship between the main clause (MC) and the RARC is not expressed explicitly. In (9), the RARC *who's pushing 60* conveys concession, but the concessive meaning is implied (*though Arnett is nearly 60, he's still working actively in a risky field*), highlighting the contrast between age and activity. Hence, the RARC conveys more than just descriptive information; it implicitly reveals a contrast.

Though in (10) the RARC does not contain any causal connector like *because*, the **causal relation between the MC and RARC is still inferred.** The RARC explains **why** the children mistakenly believed they would grow up to be Caucasian: ***"Because*** *the children didn't often see Asian adults, they thought they would grow up to look like white people*". This type of implicit causal explanation is a means to express cause tentatively, leaving the correct interpretation for the listener to infer.

These examples illustrate how RARCs can enrich the utterance by implicitly expressing semantic relations such as concession and cause, making the message more informative and pragmatically coherent.

Pragmatic Functions of Subjectivity Appositive Relative Clauses (SARCs)

The third type of ARCs is the SARC, which expresses the speaker's or writer's subjective stance by conveying their personal judgment or attitude toward the proposition of the main clause. SARCs explicitly or implicitly add an evaluative, commentary, or attitudinal dimension that further describes or qualifies the content of the MC.

According to Loock (2010), speakers can use ARCs to introduce an opinion, a comment or a judgement on the propositional content of the MC sometimes without realizing that they digress temporarily from the natural course of discourse creating a discrepancy, "a break between two levels: the referential/objective level vs. the commentary/subjective level. The ARC contains markers of modality, such as modal auxiliaries, vocabulary denoting judgment or appreciation."

Loock (2010) distinguishes between explicit and implicit subjectivity in ARCs. Subjectivity can be explicit when speakers use clearly evaluative or judgmental words, as in the examples mentioned below, where they directly express their own or others' opinions.

(9) The expressed objectives of the Concord Lyceum, established in 1828, were the "improvement in knowledge, the advancement of Popular Education, and the diffusion of useful information throughout the community," words that could have been lifted from the constitution of the Mississippi Society. Despite the twenty-five years and fifteen hundred miles between them, the founders of both societies shared similar ideals, ***which perhaps should not be a surprise****, as these were widely-held nineteenth-century American ideals. [COCA, Academic, 2017]*

(10) Now I don't think this is the moment to attempt to unpack, repack, explicate, reaffirm, or criticize Benjamin. It is striking though that we still seem to be haunted, almost plagued, by the same concerns, and I mean not only what I might call the anthropological concerns of that essay but as well the political concerns of that essay, ***which I***

think we might simply say has aged relatively well in that it continues to irritate us thirty-five or forty years later. *[COCA, Academic,2004]*

Both examples use SARCs to add the speaker's personal opinion or judgment to a factual statement, drawing a clear demarcation line between the objective and subjective dimensions, namely between what is stated as fact and how the speaker wants the reader to interpret it. In Example (11), the SARC *which perhaps should not be a surprise…* tentatively suggests that the similarity of the nineteenth-century ideals is not surprising. With the help of the modal markers *perhaps* and *should*, the speaker offers a restrained and hedged evaluation of the situation, indirectly getting the reader to perceive and accept the similarity as normal or expected. This makes the comment feel more like a polite suggestion rather than a firm opinion.

In Example (12), the SARC *which I think we might simply say has aged relatively well…* explicitly expresses the speaker's personal evaluation. The author does not merely state a fact but offers a reflective judgment about the essay's ongoing impact. The pragmatic function is rather interesting since it balances the impact of the markers of modality used in close proximity: first, the epistemic marker *I think* shows a slightly stronger and more personal evaluation, which is followed by *we might simply say*, which considerably softens the assertion, making it tentative. Finally, the hedge *relatively* reduces the force of the evaluation. Although the speaker tries to soften the impact of the evaluation, the comment feels more direct compared with that of example (11).

Thus, both SARCs interrupt the factual flow to add personal judgment, but in example (11) it is done in a more subtle, tentative way, while in example (12) it is based on a clearer and more personal opinion. This difference affects how strongly the reader is guided to accept the speaker's viewpoint.

As far as implicit subjectivity is concerned, it does not directly express the speaker's or writer's personal attitude or evaluation; on the contrary, the author's opinion is implied and hidden within the language instead of being stated openly. This makes the statement sound objective, but it actually reflects a personal judgment. Because of this, readers might not notice it and may accept it as a fact. Unlike explicit subjectivity, implicit subjectivity seems neutral or factual but indirectly conveys a subjective perspective, which is perceived differently depending on the situational context and the interpersonal relations between interlocutors. It often involves presuppositions and may depend on the way the information is framed.

Here is how Loock (2010) classifies implicit subjectivity: "Sometimes the subjectivity is so implicit that we need to create an extra subcategory of ARCs between relevance and subjectivity ARCs. … We consider such ARCs as an exploitation of the complex inter-clausal link we mentioned earlier. Such a technique enables the speaker to say things without encoding them linguistically but paving the way for inferences that readers are meant to make."

Below is a classic example of **implicit subjectivity:**

(11) A little way down, standing water had turned an empty stretch of land into a pond, and a building under construction had gained a perfect moat. The farther south I went, the worse the smells became. In Stuy Town I spent some time with New York Cares and visited my father's 75-year-old cousin, ***who cheerfully talked about the relentless dark, sick neighbors, and watching the cars float by on the road that had become a river.*** *[COCA, Blog,2012]*

In this example, the SARC *who cheerfully talked about the relentless dark, sick neighbors, and watching the cars float by…* shows implicit subjectivity through irony. The word *cheerfully* functions as an ironic presupposition trigger and carries significant pragmatic value. It assumes that the cheerfulness is real or relevant. However, the grim circumstances *(the relentless darkness, sick neighbors, and flooded streets)* make this attitude doubtful, leaving it for the reader or the listener to notice the contrast. Thus, there is a clear mismatch between what is explicitly said and what is implied. This mismatch creates an ironic tone rather than an objective evaluation.

Thus, these examples demonstrate that SARCs are a powerful tool for explicitly and implicitly embedding the speaker's perspective into discourse. Their pragmatic functions can range from polite comment or remark to strong evaluation or irony, depending on how readers perceive, interpret, and respond to the MC's content.

Conclusion

This study has examined the discourse-pragmatic functions of ARCs as parenthetical constructions that extend well beyond their traditional peripheral role. The findings reveal that CARCs, although syntactically subordinate, frequently carry foregrounded information and actively advance the discourse by establishing causal, temporal, or contrastive relations. RARCs provide backgrounded details that clarify and legitimize antecedents, enriching their meaning through situational context and implicit semantic relations such as cause or concession, while SARCs convey the speaker's viewpoint, ranging from polite comments to irony, depending on the listener's interpretation of the main clause. Despite their structural dependence, all three types of ARCs demonstrate significant pragmatic independence, thereby enriching discourse across a variety of communicative contexts.

ԱՍՏՂԻԿ ՉՈՒԲԱՐՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ԷՎՈՅԱՆ – *Ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունների խոսույթային գործաբանական գործառույթները որպես միջանկյալ կառույցներ* – Հոդվածում վերլուծվում են ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունների խոսույթային գործառույթները՝ հիմնվելով Չեյֆի (Chafe, 1976) տեղեկատվության կառուցվածքավորման տեսության վրա, ըստ որի՝ գլխավոր նախադասության և ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասության տեղեկատվական կարգավիճակները էականորեն տարբեր են։ Մասնավորապես, գլխավոր նախադասությունը կրում է առաջնային բովանդակություն, մինչդեռ ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունը ապահովում է ֆոնային տեղեկատվություն։ Թեև ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունները լայնորեն ուսումնասիրվել են ձևաբանական և շարահյուսական տեսանկյուններից, դրանց իմաստաբանական արտահայտումը ու գործաբանական մեկնաբանությունը համեմատաբար սակավ ուշադրության են արժանացել։

Լուքի (Loock, 2010) դասակարգման հիման վրա տարբերակվում են ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունների երեք հիմնական տեսակներ՝ շարունակական (continuative appositive relative clauses, CARCs), առնչական (relevance appositive relative clauses, RARCs) և սուբյեկտիվ ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասություններ (subjectivity appositive relative clauses, SARCs)։ Եթե RARCs-ը և SARCs-ը, որպես կանոն, ապահովում են հավելյալ տեղեկություն և ֆոնային բովանդակություն, ապա CARCs-ը առանձնանում է այն բանով, որ իրադարձությունները

ներկայացնում է գլխավոր նախադասության հետ նույն տեղեկատվական մակարդակում՝ երկու նախադասություններն էլ դարձնելով առաջնային միավորներ։
Գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև ոչ հստակ տարբերակումը վկայում է այն մասին, որ ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունները չեն կարող դիտվել որպես զուտ լրացուցիչ կամ երկրորդական բաղադրիչներ. դրանք էականորեն նպաստում են ասույթի ընդհանուր իմաստին՝ հաստատելով իմաստաբանական և ժամանակագրական տարբեր հարաբերություններ նախադասությունների միջև: Այդ հարաբերությունները, որոնք արտահայտում են պատճառականություն, հետևանք, հակադրություն կամ զիջում, ձևավորում են ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասությունների իմաստաբանական կշիռը և բացահայտում դրանց իլոկուտիվ ուժի փոփոխականությունը տարբեր համատեքստերում և տարբեր խոսակիցների միջև։

Բանալի բառեր – *ոչ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասություններ, տեղեկատվության կառուցվածքավորում, խոսույթային գործաբանություն, առաջնային–ֆոնային փոխազդեցություն, միջանկյալ կառույցներ*

АСТГИК ЧУБАРЯН, МАРИНЕ ЭВОЯН – *Дискурсивно-прагматические функции аппозитивных относительных предложений как вставных конструкций*. – В данной статье рассматриваются дискурсивные функции аппозитивных относительных предложений (АОП) на основе теории информационного структурирования, предложенной Чейфом (Chafe, 1976). Эта теория предполагает, что информационный статус главного предложения (ГП) и АОП значительно различается: главное предложение передаёт информацию переднего плана, тогда как АОП предоставляют фоновую информацию, при этом именно главное предложение играет решающую роль в интерпретации всего высказывания. Несмотря на то, что АОП подробно изучались с морфологических и синтаксических позиций, их семантическое представление и прагматическая интерпретация остаются относительно мало исследованными.
На основе классификации Лука (Loock, 2010) выделяются три основных типа АОП: континуативные аппозитивные относительные придаточные (continuative appositive relative clauses — CARCs), релевантные АОП (relevance appositive relative clauses — RARCs) и субъективные АОП (subjectivity appositive relative clauses — SARCs). В то время как RARC и SARC, как правило, предоставляют поддерживающую информацию и служат фоном, CARC представляют собой особый тип, поскольку они выражают события на том же информационном уровне, что и главное предложение, эффективно помещая обе части высказывания на передний план. Это размытое разграничение между главным и придаточным предложением указывает на то, что АОП — это не просто дополнительная информация, а полноценные элементы высказывания, вносящие значительный вклад в его значение путём установления различных семантических и хронологических связей между частями предложения. Эти межпредложенческие связи, включая, но не ограничиваясь причинностью, следствием, противопоставлением или уступкой, формируют семантическую значимость АОП и выявляют вариативность их иллокутивной силы в зависимости от контекста и участников речевого взаимодействия.

Ключевые слова: *аппозитивные относительные придаточные, информационное структурирование, прагматика дискурса, соотношение переднего и фонового плана, вставные конструкции*

Ethics Statement
The authors confirm that all ethical requirements regarding the research have been met.

Conflict of Interest Statement
The authors confirm that there is no conflict of interest.

References

Arnold D. (2007). Non-Restrictive Relatives are not Orphans. Journal of Linguistics, 43, 2, 272– 309.
Burton-Roberts N. (1999). Language, linear precedence and parentheticals. The Clause in English, 33–52. Amsterdam/ Philadelphia: John Benjamins.
Chafe W. L. (1976). Givenness, contrastiveness, definiteness, subjects, topics and point of view. Subject and Topic, 25–55. New York: Academic Press.
Cornilescu A. (1981). Non-restrictive Relative Clauses, an Essay in Semantic
Description. Revue roumaine de linguistique, 26.1, 41–67.
Cotte P. (1997). Grammaire linguistique. Paris: CNED Didier Erudition.
Del Gobbo F. (2007). On the syntax and semantics of appositive relative clauses. Parentheticals,173–201. Amsterdam/Philadelphia: John Benjamins.
Del Gobbo F. (2003). Appositives at the Interface. PhD dissertation, University of California, Irvine.
Demirdache H.K. (1991). Resumptive chains in restrictive relatives, appositives and dislocation structures. Massachusetts Institute of Technology.
Depraetere I. (1996). Foregrounding in English Relative Clauses. Linguistics, 34, 699–731.
Emonds J. (1979). Appositive Relatives Have No Properties. Linguistic Inquiry, 10.2, 241–243.
Fabb N. (1990). The Difference between English Restrictive and Nonrestrictive Relative Clauses. Linguistics, 26, 57–78.
Fowler H. W., Fowler F. G. (1949). The King's English. Oxford: Clarendon Press.
Grice H. P. (1975). Logic and conversation. Studies in Syntax and Semantics III: Speech Acts, 41– 58. New York: Academic Press.
Haegeman L. (1991). Parenthetical Adverbials: the radical orphanage approach. Aspects of Modern linguistics, 232– 254. Tokyo: Kaitakushi.
Heringa H. (2011). Appositional Constructions. Groningen: LOT: Netherlands Graduate School of Linguistics.
Hopper P., Thompson S. A. (1980). Transitivity in Grammar and Discourse. Language 56, 251– 299.
Huddleston R., Pullum, G. K. (2002). The Cambridge Grammar of the English Language. Cambridge: CUP.
Jackendoff R. (1977). X-bar Syntax: A Study of Phrase Structure. Cambridge, MA: MIT Press.
Khalifa J. C. (1999). A Propos des relatives appositives. Syntaxe, sémantique, pragmatique. Anglophonia, 6, 7–29.
Labov W. (1972). The transformation of experience in narrative syntax. Language in the Inner City. Philadelphia: University of Pennsylvania Press.
Lee-Goldman R.(2012). Supplemental relative clauses: internal and external syntax. Journal of Linguistics 48(3), 573–608.
Loetscher A. (1973). On the Role of Nonrestrictive Relative Clauses in Discourse. Papers from the Ninth Regional Meeting, Chicago Linguistic Society (April 13–15), 356–368.
Loock R. (2010). Appositive relative clauses in English: discourse functions and competing structures. John Benjamins Publishing.
McCawley J. D. (1988). The Syntactic Phenomena of English, Volume 2, Chapter 13. Chicago: CUP.
Potts C. (2005). The Logic of Conventional Implicatures. Oxford: OUP.
Safir K. (1986). Relative clauses in a theory of binding and levels. Linguistic Inquiry 17(4), 663–89.
Sells P. (1984). Syntax and Semantics of Resumptive Pronouns. Ph.D. thesis, University of Massachusetts, Amherst.
Sperber D., Wilson D. (1986). Relevance: Communication and Cognition. Oxford: Blackwell.
Thompson S. A. (1987). Subordination and Narrative Event Structure. Coherence and Grounding in Discourse, 435– 454. Amsterdam/Philadelphia: John Benjamins.
Vries M. de. (2006).The syntax of appositive relativization: on specifying coordination, false free relatives, and promotion. Linguistic Inquiry 37(2), 229–70.
Vries M. de. (2012). Parenthetical main clauses – or not? On appositives and quasi-relatives. Main Clause Phenomena: New Horizons, 177–202. Amsterdam: John Benjamins.

Online sources

Davies, M. (2008–). The Corpus of Contemporary American English (COCA). Retrieved from https://www.english-corpora.org/coca/

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 92-106
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.092

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ*, ՄԱՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ**
Երևանի պետական համալսարան

Մեծ լուսավորիչ պատվանունը կրող Խաչատուր Աբովյանը գրականություն է մտել ոչ միայն աշխարհաբարով և Քանաքեռի բարբառով գրված երկերով, այլև գրաբարով: Նրա գրաբարագիր ժառանգության ուշագրավ մասն են կազմում ուղեգրությունների ժանրին պատկանող երկու առանցքային գործեր, որոնցից առաջինը նկարագրում է Ֆրիդրիխ Պարրոտի գլխավորած արշավախմբով դեպի սրբազան Մասիսի գագաթ վերելքի պատմությունը, իսկ երկրորդն իր աշակերտներին հասցեագրված ճանապարհորդական նոթերն են Թիֆլիսից դեպի Հայաստան ներքին խորհրդական սենատոր բարոն Հանի և նրա տիկնոջ հետ՝ Շուլավերից Լոռի, Ալեքսանդրապոլ, Անի, ապա՝ Սարդարապատ, Արմավիր և Էջմիածին: Տեղագրական և ժողովրդագրական կարևորագույն տեղեկություններ պարունակող այս ոչ մեծածավալ գրական երկերում Աբովյանը հարյուրից ավելի նորակազմ բառեր է կիրառում, որոնց զգալի մասը նորաբանություններ են, այսինքն՝ նոր հասկացությունների՝ գիտությունների, պաշտոնների, պետական-հասարակական կյանքի իրողությունների անվանումներ, որոնց մեծամասնությունը համագործածական է դարձել արդի արևելահայերենում, շրջանառության մեջ է դնում օտար նվաճողների կողմից անվանափոխված տեղանունների մոռացված բնիկ հայկական ձևերը, ստուգաբանում է դրանք: Հետազոտված նորակազմությունները ստեղծվել են գրաբարի բառակազմական և իմաստաբանական օրինաչափություններին համապատասխան: Հին հայերենի բառաստեղծման մեծ ներուժը կիրառելով՝ գրողն ապացուցում է, որ լեզվի ինքնության պահպանման կարևոր կռվանը ոչ միայն քերականական համակարգն

* **Նարինե Դիլբարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ
Нарине Дилбарян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ
Narine Dilbaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics
Էլ. փոստ՝ narine.dilbaryan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0000-0003-1212-0029
** **Աղաջանյան Մանե** – ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Мане Агаджанян – аспирантка кафедры истории армянского языка и общей лингвистики ЕГУ
Mane Aghajanyan – PhD Student at the YSU Chair of the History of Armenian Language and General Linguistics Էլ. փոստ՝ mane.aghadzhanyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0009-0002-1001-2024

Ստացվել է՝ 13.05.2026
Գրախոսվել է՝ 18.05.2026
Հաստատվել է՝ 09.06.2026

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2026

է, այլև ամենից առաջ բառապաշարը, որն ունակ է արտացոլելու ժամանակի բոլոր փոփոխությունները։

Բանալի բառեր – *Խաչատուր Աբովյան, ուղեգրություններ, գրաբար, արդի արևելահայերեն, բառապաշար, նորակազմություններ, նորաբանություններ, եզրույթներ*

Ներածություն

1829-1838 թթ. Խաչատուր Աբովյանը, լինելով կրթյալ և նվիրյալ հոգևորական, իր տարբեր ժանրերի գրական երկերը գրում է հին հայերենով՝ գրաբարով։ Բանասիրական և պատմական տեսանկյունից չափազանց ուշագրավ այս շրջանին են պատկանում նրա կարևորագույն ուղեգրությունները, ամենից առաջ «Ճանապարհորդութիւն պարոն պրոֆեսսոր Պարրոտի եւ Խաչատուր դպրի Աբովեան։ Համառօտ ստորագրութեամբ հանդերձ Արարատեան լերին, որ է ՄԱՍԻՍ», այն թվագրված է. «Ի 1829 ամի Տեառն, ի սեպտեմբերի 9, ի Սուրբ Էջմիածին», ապա՝ «Առ բարեսնունդ եւ սիրելի աշակերտս իմ», վերջինս գրվել է «ի 25 մայիսի 1838 ամին, յէջմիածին»։ Ինչպես ակնհայտ է վերնագրից, այն նախատեսված է աշակերտների համար, ըստ էության յուրօրինակ ուղեցույց է, պատմական, ազգագրական ու տեղագրական հարուստ տեղեկություններ պարունակող ուսուցողական նյութերի ժողովածու, որոնց միջոցով ամենայն հայոց ուսուցիչ դարձած Աբովյանը ձգտում է հայ աշակերտների մեջ արթնացնել ու ձևավորել հայրենագիտություն և հայրենատիրություն՝ Լոռիից Փամբակ, ապա՝ Անիից Արմավիր, Սարդարապատ, Էջմիածին ու Երևան։ Խ. Աբովյանը հիշյալ ուղեգրությունների միջոցով ձևակերպում է բանաձևային հստակեցում ունեցող պատգամ՝ հայրենիքը սիրում են ճանաչելով. *«Քանի՛ցս, քանիցս ամօթ կալաւ զիս՝ զի օտար կին ոք ի հարցանելն զանուան տեղեաց պատահելոց մեզ՝ մնայի ափիբերան։ Այս խրատ լիցի մեզ, սիրելի ընկերակիցք իմ, զի ուր և լիցուք, ջանադիր լիցուք քաջ նկատել և իմանալ զանուանս և զպատմութիւն այնոցիկ և տարաբախտութիւն ազգին մերոյ, բայց ես լռեմ»*[1]*։*

Գրաբարով է թարգմանված նաև Ֆրիդրիխ Պարրոտի «Ուղևորություն դեպի Արարատ» գիրքը, որն Աբովյանը սկսել է 1835 թվականի մարտի 27-ից, բայց անավարտ է թողել։ Նշենք, որ ուղեգրական բովանդակության այս ինքնուրույն և թարգմանական գործերը լույս են ընծայվել Խաչատուր Աբովյանի երկերի լիակատար ժողովածուի յոթերորդ հատորում՝ համապատասխան ծանոթագրություններով, որոնց մի մասը կարևոր արձանագրումներ են պարունակում Աբովյանի լեզվաբանական հայացքների և հայոց նոր գրական լեզվի զարգացման մասին նրա պատկերացումների ու ձգտումների վերաբերյալ[2]։ Եվ միայն

[1] **Աբովյան Խ.** (2025)։ Ուղեգրություններ, Խ. Աբովյանի տուն-թանգարան, Եր., էջ 70։

[2] Տե՛ս **Աբովյան Խ.** (1956)։ Երկերի լիակատար ժողովածու, 7-րդ հատոր, Հայկական ՍՍՌ հրատարակչություն, Եր.։

շուրջ 70 տարվա դադարից հետո բոլորովին վերջերս Խ.Աբովյանի տուն-թանգարանի ջանքերով առանձին գրքով լույս տեսան Խ.Աբովյանի ուղեգրությունները, ընդ որում՝ առաջին անգամ գրաբարից աշխարհաբարի են փոխադրվել գրաբարով գրված վերոնշյալ երկու ուղեգրությունները[3]:

Մեր այս հետազոտությունը նվիրված է մեծատաղանդ գրողի ուղեգրությունների լեզվի բառապաշարին, որի միջոցով կփորձենք բացահայտել, թե հին հայերենի վերակենդանացման և վերստին ժողովրդախոսակցական լեզու դարձնելու ուղղությամբ ինչպիսի ծրագրեր է ունեցել Աբովյանը և, ի վերջո, ինչու է հրաժարվել այդ ճանապարհից՝ հին հայերենի հիմքի վրա բարբառների և ժողովրդախոսակցական լեզվի միջոցով նոր գրական լեզու ձևավորելու, զարգացնելու ուղին ընտրելով: Հետագայում *Լուսավորիչ* պատվանունը վաստակած Աբովյանը հայտնի է որպես կրթության և գրականության ոլորտում նոր գրական հայերենի առջև դարպասները բացելու և ժողովրդական լեզվով հայոց գրականությունն ու կրթությունն առաջ մղելու իր շրջադարձային ջանքերով:

Աբովյանի գրական, հոգևոր ժառանգության շուրջ տասնամյակներով ձևավորվել է որոշակի կածրատիպ, թե նա ի սկզբանե գրաբարը համարել է անցյալի վերապրուկ և անվարան առավելություն է տվել բարբառներին ու առօրյա խոսակցական լեզվին՝ աղճատելով նվիրյալ հոգևորական եղած գրողի, ուսուցչի, ազգային գործչի խորքային վերաբերմունքը գրաբարի հանդեպ: Այդ իսկ պատճառով արդիականացված գրաբարով գրված նրա երկերը գրեթե դուրս են մղվել լեզվաբան հետազոտողների ուշադրության դաշտից: Այն հանգամանքը, որ Խաչատուր Աբովյանը գերազանց տիրապետել է գրաբարին, հաստատում են գրաբարով գրված նրա բազմաթիվ գործերը՝ և՛ գեղարվեստական, և՛ չափածո, և՛ արձակ, և՛ հրապարակախոսական, և՛ նամակագրական: Աբովյանի գրաբարագիր ժառանգության մարգարիտները դեռ սպասում են իրենց նոր լեզվաբան ուսումնասիրողներին պահոցների կամ տարբեր հին հրատարակությունների խեցիներում: Այդ գործերը բացահայտում են Աբովյանի կյանքի այն շրջանը, երբ երիտասարդ, հայրենասեր հոգևորականը, ապա Դորպատի համալսարանի նախանձախնդիր, հեղափոխական ուսանողը տոգորված էր գրաբարը՝ իբրև համաժողովրդական լեզու վերակենդանացնելու, վերաշինելու գաղափարով: Իսկ այդ համազգային նպատակը պահանջում էր գրաբարը բարձրացնել որակապես նոր մակարդակի՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին, հարստացնելով ձևավորված նոր հասկացությունների ու իրողությունների անվանման համար ստեղծվող նոր բառերով՝ ինչպես փոխառյալ, այնպես էլ բարբառային, հեղինակային, ինչպես նաև գրաբարով գրված գեղարվեստական երկերով: Ճիշտ է, հետևողական փորձերից հետո Աբովյանը հրաժարվում է հին հայերենի վերակենդանացման փորձերից, քանի որ ժամանակի ժողովրդական-խոսակցական հայերենն արդեն

[3] Տե՛ս **Աբովյան Խ.** (2025): Ուղեգրություններ:

ձևավորված ինքնուրույն վտակ էր՝ մայր գետից հեռացած, բայց Աբովյանի ստեղծած բազմաթիվ նորակազմությունները, եզրույթներն ու գիտաբառերը գրաբարագիր նրա գործերից սահուն անցում են կատարում նոր հայերեն՝ անխախտ դարձնելով հին և նոր գրական հայերենների ժառանգորդական կապը։

Դեպի Արարատ լեռը

Քննությունը սկսենք «Ճանապարհորդութիւն պարոն պրօֆեսսօր Պարրոտի եւ Խաչատուր դպրի Աբովեան. Համառօտ ստորագրութեամբ հանդերձ Արարատեան լերին, որ է Մասիս» ուղեգրության նորակազմություններից՝ դրանք ենթարկելով իմաստաբանական և ձևաբանական վերլուծության, միաժամանակ բացահայտելով գրողի կիրառած գործուն բառակազմական կաղապարները։ Առանձին կնշենք փոխառյալ և օտար բառերը՝ փորձելով բացահայտել լեզվական և արտալեզվական այն գործոնները, որոնց ազդեցությամբ Աբովյանը ջանացել է հարստացնել հին գրական հայերենի բառապաշարը։ Հետազոտության ընթացքում կիրառել ենք տարաժամանակյա քննության, համեմատության, վերականգնման, ինչպես նաև բառավիճակագրական նկարագրության լեզվաբանական մեթոդները։ Բառապաշարը քննել ենք հին հայերեն (գրաբար) → նոր գրական հայերեն (աշխարհաբար) երկմիասնության մեջ։

Յուրօրինակ ոճով շարադրված ուղեգրություններն Աբովյանին նորովի են բացահայտում՝ ցույց տալով բառաստեղծ-բառաշինարար լինելու շնորհը։ Աբովյանական նորակազմություն համարել ենք այն բառային միավորները, որոնք վկայված չեն ՆՀԲ-ում, ապա՝ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի»[4] աշխատություններում։

Ուղեգրություններում առկա նորակազմ բառերը հին հասկացությունների անվանումների նոր հոմանիշներ են և նոր հասկացություններ արտահայտող բառեր։ Այսպես՝ ուղեգրություններում Աբովյանը ստեղծում է հետգրաբարյան շրջանի մասնագիտությունների անվանումներ՝ **հանքաբան, տնկաբան, աստղաբաշխ**, **օդաչափ**, ընդ որում, ի տարբերություն «Դորպատյան օրագրեր»-ի, որտեղ ևս նա կիրառում է այս բառերը, զուգահեռաբար չի բերում դրանց փոխառյալ տարբերակները։

«Ճանապարհորդութիւն պարոն պրօֆեսսօր Պարրոտի եւ Խաչատուր դպրի Աբովեան» երկում գտել ենք 28 նորակազմ միավոր, որոնք վկայված չեն ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ ԱԲՀԼ-ում։ Նշենք, որ այս ուղեգրությունը բացվում է «Նախասահմանութիւն» չափածո ընդարձակ բանաստեղծությամբ, որտեղ Աբովյանը Նարեկացու «Մատեան ողբերգութեան» հերոսի տվայտանքներով փորձում է հասնել աստվածային Սուրբ երրորդությանը, հանդգնում մերձենալ Երկնային հոր սեղանին և օթևանին (փոխաբերությամբ առլեցուն այս աղոթք-ձոներգի

[4] **Հայր Մկրտիչ Աւգերեան եւ Հայր Գրիգոր Ճէլալեան** (1865)։ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Սուրբ Ղազար, Վենետիկ։ **Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան,** հ. 1, 2 (1979, 1981)։ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր.։

մեջ Աստծո **օթարանն** ու սեղանը Արարատ լեռն է), ապա զգալով հողածնի իր անկարությունն ու թշվառությունը՝ անառակ որդու օրինակով նա աղերսում է ներողամիտ լինել իր հանդեպ՝ անարժանին չհեռացնել Հոր գրկից, չնետել սանդարամետ՝ հավիտյան տանջանքների: Ձոներգում Աբովյանը գործածել է 3 նորակազմություն՝ **շնորհածիր, ակնահայեաց** և **հիւրել**: **Շնորհածիր** բարդությունն ունի *գոյական+հողակապ+գոյական* հայերենում ամենակենսունակ կաղապարը, որն արտահայտում է հատկանիշ՝ *շնորհներով գծված* իմաստով, ***կենդանագիծ*** բառի հոմանիշն է՝ Աստուծո պատկերը բացահայտող: **Ակնահայեաց** բառն արդեն *գոյական+հողակապ+բայահիմք* կաղապարն ունի գործողության հատկանիշի իմաստով՝ *ակնահայաց նշմարել, աչքերը հառած տեսնել*[5]: **Հիւրել** պարզ բայն այսօր կենսունակ չէ, բայց իմաստով թափանցիկ է՝ *հյուրընկալվել* բարդ բայի նախօրինակն է:

Այժմ անդրադառնանք բուն ուղեգրության մեջ վկայված նորակազմությունների բնութագրին: Նորակազմություններից 22-ը գոյականներ են, որոնցից 12-ը *-ութիւն* բնիկ ածանցով ստեղծված պարզ կամ բարդ վերացական անուններ են՝ **լեզուագիտութիւն, կացնահարութիւն, հանքաբանութիւն, հետամտութիւն, ձիւնահեղութիւն, յարգութիւն, նեղսակրութիւն, շնորհաւորութիւն, տնկաբանութիւն, սողոսկնութիւն, փորձառութիւն, օթութիւն**: **Տնկաբանութիւն**-ը, **հանքաբանութիւն**-ը, **լեզուագիտութիւն**-ը նորաբան եզրույթներ են, որոնք անվանում են ժամանակին ձևավորված գիտությունները, և դրանցից կարող են կազմվել այդ մասնագիտությունների կրողների անվանումները՝ **տնկաբան, հանքաբան, լեզուագէտ**: **Տնկաբանութիւն**-ը մշակովի բույսերի ուսումնասիրությանը վերաբերող գյուղատնտեսական գիտություն է, իսկ **հանքաբանութիւն** եզրույթը ժամանակակից ձևակերպմամբ *երկրաբանություն* է, **լեզուագիտութիւն**-ը ներկայիս արդի արևելահայերենում գործածական է, բայց որպես մասնագիտության անվանում կենսունակ դարձավ *լեզվաբանություն* բառը: Էդ.Աղայանի բառարանում *լեզվագիտություն* բառն ունի երեք իմաստ. առաջին երկուսը վերաբերում են լեզվի իմացության կրող կամ շատ լեզուներ իմացող լինելուն և միայն վերջին՝ երրորդ իմաստով այն *լեզվաբանության* հոմանիշն է[6]: Նորակազմ գիտաբառ-եզրույթ են նաև **ֆիզիքական արհեստ, բժշկական, մաթէմաթիգական արհեստ** կապակցությունները, որոնցից առաջինն ունի *բնագիտություն* իմաստը, երկրորդը՝ *բժշկագիտություն*, իսկ վերջինը՝ *մաթեմատիկա*: Ընդհանրապես *արհեստ* բառը Աբովյանը կիրառում է *գիտություն* նշանակությամբ: Իր ժամանակի համար նոր այս մասնագիտությունների հայերեն անվանումներն Աբովյանը գործածում է ուղեգրության այն հատվածում, որտեղ հականե-հանվանե ներկայացնում է իր վեց նորագյուտ ընկերներին: Մեջբերենք այս հատվածից մի փոքր դրվագ՝ բացահայտելու Ա-

[5] Հմմտ. **Աբովյան Խ.** (1956): Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ13:
[6] Տե՛ս **Աղայան Էդ.** (1976): Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., էջ 537:

բովյան փաստավավերագրի ստուգապատում լինելը. երիտասարդ հոգևորականը կարծես երկաթյա վստահ էր, որ դարերի համար է գրում իր ուղեգրությունը՝ որպես Արարատի գագաթը ելնելու հերոսապատում, որտեղ ամեն ինչ պետք է հավաստի և ճշգրիտ լինի, որպեսզի ոչ ոք և ոչինչ չմոռացվի կամ ստվերվի, միաժամանակ նա իր խոսքը օժտում է բարձր հուզականությամբ. Աբովյանն անսահման հպարտ էր, որ հոչակավոր, աշխարհ տեսած, կիրթ մարդիկ եկել են Հայաստան՝ Արարատի գագաթը բարձրանալու, և իրեն բաժին է ընկել նման բարձր պատիվ ու առաքելություն՝ նրանց ուղեկցելու: Այսպես. «Առաջինն և գլխավոր սոցա էր նա ինքն պարոն պրոֆեսսոր Պարրօտն՝ պատուով՝ *Նդվօրնիյ սովետնիկ*, այր ազնվական… կատարեալ ոչ միայն ըստ օրինի կրթութեանցն, այլ նաեւ մարդկային և քաղաքական վիճակի անուանի **աշխարհաշրջիկ** լեալ յամենայն մայրաքաղաքս Եւրոպիոյ, եւս և ի վերայ մեծամեծ լերանց Ասիոյ եւ Եւրոպիոյ, պարկեշտ յամենայն վարս… գիտակ **ֆիզիքական արհեստից** եւ **բժշկականութեան** եւս և զանազան լեզուաց: 2. Բասիլիոս Թէոդորոս. ազգաւ Ռուս, այր բարգաւաճ ուսմամբ՝ տեղեակ **մաթէմաթիգական, աստղաբաշխական արհեստից** ևս զանազան լեզուաց:

3. Մաքսիմոս Բէհագել. ազգաւ Գերմանացի, ծնեալ ի Ֆէդրիսհօֆ գեղջ՝ որ ի սահմանս Դէրպտու և զարգացեալ ի նոյն համալսարանի, այր հեզահոգի և մարդասէր, գիտակ **հանքաբանութեան**, նկարչութեան և զանազան արհեստից:

4. Կարոլոս Շիման. ծնեալ ի Գուրլանդ՝ որ ի շրջակայս Միտավայ քաղաքի ազգաւ Գեր‹մանացի›, զարգացեալ ի նոյն համալսարանի, այր շնորհագեղ և զուարթերես. գիտակ **կենդանաբանութեան և բժշկական արհեստից** և զանազան լեզուաց:

5. Յոլիոս Հէյն. Գեր‹մանացի›, ծնեալ ի Դէրպտ քաղաքի և զարգացեալ ի նմին համալսարանի՝ պատանի հրաշագեղ և համեստակենցաղ՝ տեղեակ տնկաբանութեան և բժշկական արհեստից և զանազան լեզուաց»[7]: *Սույն հատվածի նորաբանությունները նշել ենք թավով:*

Հետաքրքիր է, որ գրաբարում, ապա և արդի արևելահայերենում համագործածական **յարգանք, շնորհաւորանք, օթեւան** ածանցավոր կազմությունների հետ, կամ դրանց փոխարեն Աբովյանը ստեղծում է ***-ութիւն*** ածանցով նոր կառույցներ՝ **յարգութիւն, շնորհաւորութիւն, օթութիւն**: *-ութիւն* ածանցը հնդեվրոպական *tion ածանցից է ծագում՝ *-ոյթ* և *-իւն* ածանցների բաղարկումից[8]: Լ. Հովսեփյանը գրաբարում համարում է վերջածանցավոր բառերի բաց խմբեր կազմող ածանցներից մեկը՝ *-ումն, -ական, -իչ, -ող* մասնիկների հետ մեկտեղ[9]: Նման ածանցներով ստեղծված բառերի իմաստը մթագնած չէ, իմաստային,

---

[7] **Աբովյան Խ.** (1956): Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 22-23:

[8] Հմմտ. **Ջահուկյան Գ.** (2010): Հայերենի ստուգաբանական բառարան, Եր., էջ 811:

[9] Տե՛ս **Հովսեփյան Լ.** (1987): Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 188:

գործառական առանձնահատկությունները հստակ են: Արդի արևելահայերենում նշյալ ածանցները փոփոխություններ չեն կրել և շարունակում են բնիկ կամ փոխառյալ արմատներից շարունակ նոր բառերի բաց, այսինքն՝ անընդհատ համալրվող շարքեր ստեղծել: Երիտասարդ Աբովյանը հակված էր իր շարադրանքը հարստացնել նորակազմություններով՝ վեր հանելով գրաբարի բառակազմական մեծ ներուժը, այն համապատասխանեցնելով իր ժամանակի պահանջներին:

Յուրօրինակ կառուցվածք ունի **նեղսակրութիւն** նորագյուտ բառը, որը նշանակում է *նեղություններ կրելը՝ դժվարությունը*, այն բաղադրված է *նեղս* գրաբարյան հոգնակի հայցականից և *կիր* բայարմատից, որոնց միացել է *-ութիւն* գոյականակերտ ածանցը. «Մնացեալ անդէն զաւուրս երիս, յետ բազմադիմի տարժանմանց և **նեղսակրութեանց**՝ հասեալ նոցա մինչև ց 13.000 ոտնաչափ բարձրութիւնս և ո՛չ կարացեալ այլևս բարձրանալ ընդ զառիվերս, դարձան յետս առ մեզ, ուր ի **օթութիւն** ինչ ևս պատահեալ պարոն պրոֆեսսորին, որով և ի սակաւ միջոցս մնաց արգելեալ»: Արդի հայերենում համագործածական բառ է դարձել ուղեգրության մեջ վկայված **փորձառութիւն** բարդածանցավոր միավորը, իսկ **ծաղկախոտ** գեղեցիկ կաղապարն ավելի շատ բնորոշ է բանաստեղծական խոսքին և վկայված է արդի հայերենի բառարաններում: Ինչպես նաև **սառցատուն** հոդակապավոր բարդությունը[10], Աբովյանն այսպես պատկերավոր է բնութագրում Արարատի բարձունք տանող տարածքը, որը ծածկված էր **ձիւնաշեղջերով.** ահա ևս մեկ գեղարվեստական նորագյուտ գոյական:

Ուղեգրության ժանրը Աբովյանը դարձնում է բանաստեղծական՝զուտ փաստական, ստուգապատում շարադրանքը հարստացնելով գեղարվեստական գեղեցիկ պատկերներով, որոնք հիմնականում վերաբերում են դեպի լյառը Մասիս տանող ճանապարհի բնության նկարագրությանը նորագյուտ ածականների միջոցով: Ուղեգրության մեջ գտել ենք 25 նորակազմ ածականներ, որոնք վկայված չեն ո՛չ ՆՀԲ-ում, ո՛չ «Առձեռն բառարանում»՝ **աստղաբաշխական, բնահոս, գետանման, գերեզմանանման, գորովասիրտ, դառներերս, դառնամրրիկ, դժոխասասան, երեքգագաթեան, լուտերական, ծանրածանր, համեստակենցաղ, հօտանման, հնաշէն, ձիւնասաստ, շամբախիտ, շիրիմաձեւ, մանրաքար, մարմանդաբեր, վաղեմնափոխ, վտանգաբեր, վշտամբեր, փղձկասիրտ, քաջագետ, օդաչափական**:

Ինչպես արդեն ակնհայտ է, նշյալ գրեթե բոլոր ածականներն արդի արևելահայերենում համագործածական և բովանդակությամբ թափանցիկ կառույցներ են, բառակազմական կենսունակ կաղապարներ՝ ածանցավոր, բարդ, բարդածանցավոր: 26-ից միայն մեկն է նորաբանություն՝ փոխառյալ **լուտերական** բառը, որը հայերենում քրիստոնեական դավանաբանության այս հոսանքի հիմնադրի՝ Մարտին Լյութերի անունով տառադարձվում է *լյութերական:* **Օդաչափական**-ը (օդի ջերմաստիճանը չափող) նորաբան եզրույթ է, արդի

[10] Հմմտ՝ **Աղայան Էդ.** (1976): Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 626 և 1281:

արևելահայերենում *օդերևութաբանական* ածականի նախաձևը: **Երեքգագաթեան** ածականն այժմ կիրառական չէ, որովհետև փոխարինվել է *եռագագաթ* կազմությամբ: -*եան*-ը հնդեվրոպական ածանց է, որն ունի սեռական-տրական հոլովաձևերի իմաստ[11]: Հետագայում այն կդառնա հայոց ազգանվանակերտ հիմնական մասնիկը: **Աստղաբաշխական** եզրույթն արդի արևելահայերենում իմաստափոխվել է, կորցրել իր համագործածական բնույթը. մինչև 20-րդ դարի 40-ական թվականները այն դեռ գիտաբառ էր: Ստեփանոս Մալխասյանցն իր բառարանում *աստղաբաշխությունը* սահմանում է. «…գիտութիւն, որն ուսումնասիրում է երկնային մարմինների տեսանելի, իսկական շարժումները, նրանց մեծութիւնը, հեռաւորութիւնը, յատկութիւնները»[12], իսկ ածականը նշանակում էր այդ գիտությանը վերաբերող, թեև որպես վերջին իմաստ Մալխասյանցը բերում է «*աստղաբաշխական թիւ*» կապակցությունը՝ «*շատ մեծ, բազմամիլիոնավոր թիւ*» նշանակությամբ: Արդեն Էդ. Աղայանի բացատրական բառարանում *աստղաբաշխական* միավորը առանձին բառհոդված չունի, այն համարվում է հնացած բառ: *Աստղաբաշխ* բառի բացատրության մեջ այն բերվում է սոսկ իբրև կայուն կապակցության բաղադրիչ՝ «աստղաբաշխական թիվ», որն ունի Մալխասյանցից վերցված բացատրությունը՝ «*շատ մեծ, բազմամիլիոնավոր թիվ*»[13]: Խ. Աբովյանի ուղեգրության մեջ այն արտահայտում է *աստղաբանությանը* բնորոշ իմաստը, այսինքն՝ վերաբերում է տիեզերական մարմինների շարժումների ուսումնասիրությանը: Վերոնշյալ ածականները վերջածանցավոր են՝ հիմնականում բաղադրված -*ական* ածանցով, որը ինչպես գրաբարում, այնպես էլ արդի արևելահայերենում ամենագործուն ածանցներից է, այն արտահայտում է որևէ հատկանիշի կրող լինելու իմաստը, ստեղծում է հարաբերական ածականներ, որոնք ունակ են դառնալու գոյականներ, այսպես օրինակ՝ *լյութերական > լյութերական հավատի կրող > լյութերական մարդ*: Լ. Հովսեփյանը գրաբարի բառակազմությանը վերաբերող իր աշխատության մեջ դրանք բնորոշում է որպես nomen agentis[14]: Մնացած բոլոր նորակազմ ածականներն արտահայտում են որակական հատկանիշ, *ա* հոդակապով միավորված գործունակ կաղապարներ են՝ **բնահոս, գետանման, գորովասիրտ, դառներերս, դժոխասաստ, համեստակենցաղ, հնաշէն, ձիւնասաստ, մարմանդաբեր, վտանգաբեր, վշտաբեր, քաջագետ**: ***Դառներերս, դժոխասաստ, ձիւնասաստ, վտանգաբեր, վշտաբեր*** ածականները գունեղ բնորոշում էին դեպի լյառը Մասիս տանող ճանապարհի դժվարությունները, տեղանքի ու եղանակի դժնի հանգամանքները:

---

[11] Հմմտ. **Ջահուկյան Գ.** (2010): Հայերենի ստուգաբանական բառարան, էջ 803:
[12] **Մալխասեանց Ստ.** (1944): Հայերէն բացատրական բառարան, Եր., հ. 1, էջ 263:
[13] **Աղայան Էդ.** (1976): Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., հ. 1, էջ 114:
[14] Տե՛ս **Հովսեփյան Լ.** (1987): Գրաբարի բառակազմությունը, էջ 188:

Ունենք երկու դիմավոր բայական ձևեր՝ **վերաճեմել, օթագայել** բայերից, և երկու դերբայ՝ **գերհանդիսացեալ, վերոյիշատակեալ**: **Վերաճեմել** բայի իմաստը թափանցիկ է՝ *վերև ելնել,* **օթագայել** նշանակում է բաց օդում շրջել. «Անագան ելեալ ի վանացն, հազիւ ուրեմն ժամանեցաք ի փոքրիկ անտառն՝ որ անկանի առ ստորոտովք նորա, ուր **օթագայեցաք** բազում քաղցրութեամբ՝ իբրև պարիսպ շրջապատ ունելով մեզ զծառաստանս անտառին» (20): Արդի հայերենում ունենք *բացօթյա* բառը, որ նշանակում է *բաց օդում:* **Վերաճեմել**-ը բարդաձանցավոր է՝ *վեր+ճեմ+ել,* օթագայել-ը ևս՝ *օթ +գայ, +ել,* որտեղ *գայ*-ը *գալ* բայի եզակի երրորդ դեմքի ձևն է: Վերջինս գեղեցիկ կազմություն էր, բայց ոչ կենսունակ: **Վերաճեմել** բառը Աբովյանը գործածում է ոգեշունչ նկարագրության մի հատվածում, երբ բազում դժվարություններ, անհաղթահարելի թվացող սառույցները **կացնահարութեամբ** կոտրելով (դարձյալ նորակազմ միավոր է), ձյան **սողոսկնութիւնը** (*սայթաքուն, դյուրասահ լինելը*. ՆՀԲ-ում վկայված *սողոսկիմ* և *սողոսկումն* բառերի արմատից *-ութիւն* ածանցով կազմված ածանցավոր նոր բառ է), ճանապարհի **նեղսակրութիւնը**, ծանրածանր վիճատությունը հաղթահարելով՝ արշավախմբի անդամներն ի վերջո ականատես են դառնում բաղձալի Արարատ լեռան բացվող պատկերին իր ողջ վեհությամբ. բիբլիական լեռը Աբովյանը կոչում է «*սիրալի*» մակդիրով, որի միայն տեսքից արշավախմբի անդամների բազմատանջ ոտքերը երկնային ուժ են ստանում **վերաճեմելու** դեպի սրբատեղի՝ ամբողջ աշխարհի ծննդատեղի և այնտեղ ամրացնելու խաչը. «Ոտք լքեալք և ծունկք կթուցեալք՝ վազս առեալ **վերաճեմէին** ի սքանչելի դիտարանն: Ետես զսխրալին, ետես և հրճուեցաւ ցանկութիւնն՝ որ ածեալ տանէր զմեզ ի հանդէս բերկրալւոյն, ի ծննդատեղին ամենայն աշխարհի» (18):

Արդի հայերենի բարձր ոճերում կիրառելի է Աբովյանի գործածած **վերոհիշատակյալ** դերբայական կազմությունը, որի ժամանակակից տարբերակն է՝ *վերը հիշատակված* հարադրությունը: **Գերհանդիսացեալ** հունաբան նախածանցով նորակազմ դերբայը Աբովյանը կիրառում է *տպավորիչ հանդես գալ* իմաստով՝ նույն նախադասության մեջ *յարգանք* ընդունված կազմության փոխարեն գործածելով նորագյուտ **յարգութիւն** կառույցը. «Եկեալ սոցա ի սուրբ Աթոռն էջմիածին, կացին անդէն զաւուրս երկու՝ որք ցուցանելով զինքեանս ըստ ամենայնի ի գեղեցիկ կրթութիւնս **գերհանդիսացեալ** ո՛չ սակաւ յարգութիւն ընկալան ի մեծամեծաց տեղւոյն» (14):

Պտույտ հայրենի եզերքով

Այժմ անցնենք «Առ բարեսնունդ եւ սիրելի աշակերտս իմ» երկի նորակազմություններին: Վերնագրից արդեն պարզ է, որ այս աշխատությունն Աբովյանը գրել է իր պաշտելի աշակերտների համար, որպեսզի նրանց սրտերում և մտքերում վառ պահի հայրենասիրությունը, որը կարող է ծնվել և ամրանալ միայն հայրենագիտությամբ: Կարճառոտ հուզումնառատ նախաբանում Աբովյանն ուսուցչական հիացումն ու գնահատանքն է արտահայտում ազնվա-

կան բարքով, առաքինի վարքով և համեստ բնույթով իր սաների հանդեպ: Ապա բացատրում, թե ինչու, Էջմիածնի մի փոքր խցում նստած, 300 վերստ հեռու նրանցից, գրում է իր այս կարոտալի թուղթ-նամակները: Նա տենչում է պատմել աշակերտներին իր ճանապարհորդությունների մասին երեք պատճառով. առաջին՝ մայիս ամսին հայոց դաշտերն ու ձորերը ցնծում են բյուրատեսակ ծաղիկներով ու բույսերով, երկրորդ՝ երևելի անձինք, որոնք իր զրուցակից ընկերներն են, ամեն րոպե հարստացնում են իր միտքը նորանոր գիտելիքներով, որոնք ինքը պետք է փոխանցի իր սաներին, և երրորդ՝ ամենից ցանկալին՝ մեր սիրելի հայրենիքի պատկերն ու քաղցրությունն է, որ հատկապես ուժգին է զգում երկար ժամանակ հայրենիքից հեռացած, զրկված հոգին: Ահա այս երեք զգացումերով առլեցուն՝ Աբովյանն իր ճանապարհորդական նոթերն է գրում, որպեսզի աշակերտները մանրամասն ծանոթանան հայրենի աշխարհի գեղեցկությանը՝ Կոդայի դաշտը, Շուլավերը, Լոռին, Փամբակը, Անին, Սարդարապատը, Էջմիածինը, Կողբը, Երևանը:

Տեղագրական բնույթի ուղեգրության մեջ 3 բայական նորակազմություն ունենք՝ **զուարճաբանել, վերակրկնել, սրավառեալ**: **Զուարճաբանել** գեղեցիկ կազմությունն առանձնացնենք, որովհետև **զուարաճաբան** արմատից Աբովյանը ստեղծել է համարմատ գոյական՝ **զուարճաբանութիւն**: Արդի արևելահայերենում այս բային փոխարինում է *զվարճախոսել* հոմանիշը, որից էլ *զվարճախոսություն* գոյականն ունենք: **Սրավառեալ** անցյալ դերբայը կազմվել է *սրավառել* անորոշի ձևից՝ *սրով զինվել* բովանդակությամբ: **Վերակրկնել** ածանցավոր բայն արդի հայերենում ևս գործածական է՝ վերստին կրկնել նշանակությամբ:

Ճանապարհորդական այս նոթերում 23 նորակազմ գոյական ենք գտել, որոնք բնութագրում են նշված վայրերի բնությունը, մարդկանց բարքերը, զբաղմունքը՝ **ազնուախոհութիւն, արտասուարան, արիաջանութիւն, բարեփայլութիւն, մաքսատուն**, **ձիարձակութիւն, հրացանարձակութիւն, զինաշարժութիւն, կիսալուսին, հայելադահլիճ, թնդանօթ, քարաշեղջ, սեղանատուն, պատկերագծութիւն, խաշնարածութիւն, տարաբախտութիւն, վարժատուն, կայսրուհի, հիմնաքար, զուարճաբանութիւն, չքադարան, զինուորականութիւն, սոպոռութիւն, իրաւարան, թութունաման:** Այս բառ-հասկացություններն արտահայտում էին Ռուսական կայսրության ռազմաքաղաքական, պետական, տնտեսական, իրավական հարաբերությունների հաստատումը Արևելյան Հայաստանում, որն աստիճանաբար դառնում էր համաշխարհային քաղաքակրթության, պետականաշինության զարգացումներին հաղորդակից միավոր, և հայոց լեզուն էլ համապատասխանաբար հարստանում էր նոր բառ-հասկացություններով: Բառակազմական տեսանկյունից կարող ենք արձանագրել, որ գոյական անունների դեպքում դարձյալ ամենակենսունակը *-ութիւն* գոյականակերտ ածանցն է, որն ավելանում էր հիմնականում բաղադրյալ հիմքերին՝ **հ*(ու)*ր/ա/ցան/արձակ+ություն, զին/ա/շարժ+ություն, զին/ուոր/ական+ութիւն,**

ազնու/ա/խոհ+ություն, բար/ե/փայլ+ություն, արի/ա/ջան+ություն, պատկեր/ա/-գծ+ություն, զուարճ/ ա/բան+ություն ևն: Բարդ բառերի կազմության ամենաարդյունավետ կաղապարը *գոյական+ա հոդակապ+գոյական* կառույցն է՝ **մաքս+ա+տուն, վարժ+ա+ տուն, սեղան+ա+տուն, հայել+ա+դահլիճ, կիս+ա+լուսին, հիմն+ա+քար:** *-ություն* ածանցով ունենք բարբառային *սոպո **բառից կազմված** սոպոռություն* կառույցը՝ *կոպտություն, ստահակություն* նաև *համառություն* իմաստային անցումներով[15]:

Նորակազմությունների առյուծի բաժինը 32 ածականներն են, որոնք առավել գունեղ և հիարժան են դարձնում հայրենի եզերքի նկարագրությունները՝ **ազգաշէն, ամենաթանկագին, ապաբախտ, արժանայիշատակ, բարձրանիստ, գազէտապատում, գոյնզգոյն, երկնաբարբառ, երկնատիպ, երկնամբարձ, երեխայական, թեթևահաւատ, խստակրօն, ծանրաշարժ, ծառազուրկ, ծիծաղադեմ, կենդանաբարբառ, ճարտարաշէն, հսկայաբազուկ, ձեզապիսի, մահաշունչ, շքեղաճեմ, շքեղապանծ, ռուսահանդերձ, սգապատում, տարաբախտ, տխրադէմ, տխրագին, չքնաղատիպ, չքնաղապաճոյճ, փլայատակ, քնքշասուն:** Աբովյանի կիրառած այս ածականները գերակշիռ մեծամասնությամբ արդի արևելահայերենում ամրակայված որականիշ բառեր են, որոնք, ինչպես և գոյականները, բաղադրվել են նախ՝ գոյական+ա+գոյական կաղապարով՝ **ազգ+ա+շէն, արժան+ա+յիշատակ, երկ(ի)ն+ա+բարբառ, երկ(ի)ն+ա+տիպ, ծիծաղ+ա+դեմ, հսկայ+ա+բազուկ, ճարտար+ա+շէն**, **մահ+ա+շունչ, ռուս+ա+հանդերձ, գազէտ+ա+պատում, ս(ու)գ+ա+պատում, տխ(ու)ր+ա+դէմ,** ապա՝ ածական+ա+բայարամատ կաղապարով՝ **շքեղ+ա+ճեմ, շքեղ+ա+պանծ, բարձր+ա+նիստ, ծանր+ա+շարժ, չքնաղ+ա+պաճոյճ, քնք(ու)շ+ա+սուն,** ինչպես նաև՝ ածական+ա+գոյական հիմքերով՝ **խ(ի)ստ+ա+կրօն, թեթև+ա+հաւատ, չքնաղ+ա+տիպ** ևն: Ունենք նաև նախածանցավոր և վերջածանցավոր կառույցներ, բայց դրանք փոքրաթիվ են՝ **տար+(ա)բախտ, տ(ու)ն+աւոր, ձեզ+(ա) +պիսի:** Վերջինս յուրօրինակ կազմություն է ձեզ նման իմաստով՝ երկրորդ դեմքի անձնական դերանվան, հոդակապի և պիսի ածանցից բաղադրված: Պէս-պիսի-ն Լ. Հովսեփյանը գրաբարում համարում է ածանցակերպ, քանի որ դրանք որոշ չափով պահպանում են իրենց բառային իմաստը և կարող են հանդես գալ որպես անկախ արմատներ[16]: Առանձնացնենք նաև **գազէտապատում**՝ թերթին հատուկ պատմություն նշանակությամբ կառույցը, որտեղ ունենք ռուսական փոխառություն+ա+բնիկ գոյական հիմքերը: Ունենք նաև մեկ մակբայ՝ **կատաղաբար,** որը ևս արդի արևելահայերենի բառապաշարում իր տեղն է գտել[17]:

---

[15] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան (2001): Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Եր., էջ 2141:

[16] Հմմտ. **Հովսեփյան Լ.** (1987): Գրաբարի բառակազմությունը, էջ 189:

[17] Տե՛ս **Աղայան Էդ.** (1976): Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 699:

Գրաբարագիր ուղեգրություններում Աբովյանը հազվադեպ է օտար բառեր գործածում՝ ապացուցելով մայրենի լեզվի բառապաշարային ճկունությունը թե՛ բնության, տեղանքի, թե՛ ժողովրդական վարքուբարքի, թե՛ կրոնական արարողությունների կամ մասնագիտական աշխատանքների նկարագրության ընթացքում հայեցի կառույցների կիրառության գեղարվեստական մեծ ներուժը: Օտար լեզուներից փոխառությունները կիրառված են ըստ խիստ անհրաժեշտության, դրանք հատկապես վերաբերում են պաշտոնների, մասնագիտությունների կամ կոչումների անվանումներին՝ **նռդվորնի սովետնիկ** (խորհրդական ռուսական ցարի արքունիքում), **բարոն / բարոնէս** (եվրոպական ազնվական տիտղոս կրող այր և կին), **սարդար** (պարսից շահի կողմից նշանակված կուսակալ Երևանի նահանգում), **մաքսատուն** (տամօժնի), **մեչիդ** (մզկիթ), **հարամխանէ** (հարեմի հարկաբաժին), հաճախ այդ բառերի կողքին հեղինակը փակագծերում բերում է հայերեն համարժեքներ՝ **ֆելդեդեր (գրատար)**, բայց ունենք նաև հակառակ երևույթը, այսպես՝ **ի պատշգամբէ** բացառականով կազմությունից հետո Աբովյանը բերում է **ի բալկոնէ** բառաձևը, կամ **«ռուս զօրականք, թուանքչի անուանեալ»** մեկնաբանությունը (նկատի ունի հրացանավորներին), որից կարող ենք եզրակացնել, թե որոշ գրական հայերեն բառեր ժողովրդախոսակցական լեզվում դուրս էին մղվել օտար կամ բարբառային համարժեքների բազմակի կիրառության պատճառով, և Աբովյանն այս կերպ փորձում էր և՛ ապահովել լեզվի անաղարտությունը, և՛ իր գրահյուսի հասկանալիությունը: Բնիկ հայերեն բառերի դուրս մղվելու այս իրողությունը մեծապես վերաբերում էր նաև տեղանուններին: Ազգային ինքնության պահպանմամբ մտահոգ Աբովյանը իր ուղեգրությունների տարբեր հատվածներում օտարների կողմից վերանվանված մեր բնակավայրերի հայոց տեղանուններն է վկայակոչում, ինչպես, օրինակ, «Երևան» հատվածում. «Ի Քարվանսարայ ասացեալ տեղւոջէ, ուր է Սուդագեան՝ բարոնն առեալ զիս ընդ իւր միայն՝ գնացաք ի **Գեօքչայ** կամ ի հին քաղաքն **Գեղարքունի**, ուր բնակին գաղթական Հայք Բայազետացիք…» (60): Աբովյանն ի սկզբանե տագնապում էր մեր տեղանունների համատարած աղճատման իրողությունից՝ հրաշալի գիտակցելով, որ թշնամին ոչ միայն տարածքներ է նվաճում, այլև հետևողական ճգնում է նվաճված տարածքում իսպառ ջնջել բնիկ ժողովրդի պատմական անվանումները, լեզուն, քանի որ դրանք կենդանի վկայություններ են այդ երկրի իրական տերերի մասին, ուստի թյուրքացված տեղանունների կողքին նա ամեն պատեհ առիթով հիշատակում է բնիկ անվանումը, բացատրում, թե այնտեղ որտեղից գաղթած հայեր են ապրում: Այսպես՝ «Շուլավեր» հատվածում գրողը նշում է. «Բնակիչքն բոլորովին Հայք են և խոսին զբարբառս Ղարաբաղացւոց» (42): Բնութագրական է նաև «Փամբակ» բաժնում Գյումրիին վերաբերող մեկնաբանությունը. «Նորին կայսերական մեծութիւն, ի լինելն աստ, բարեհաճ գտանելով ընդ բոլոր շինութիւնն, և ձեռամբ իւրով դնելով զհիմնաքար եկեղեցւոյն՝ որ

ի մէջ ամրոցին, հրամայեալ է կոչել զանունն քաղաքին ո՛չ **Գիւմրի**, այլ **Ալէք-սանդրապօլ**) յանուն կայսրուհւոյն» (46)։

Իր սիրելի աշակերտների համար մեր ոսկեղենիկ մայրենի գրաբարով բացահայտելով հայրենիքի պատմությունը՝ Աբովյանն ամենից առաջ նրանց ուսուցանում է տեղանունների ստուգաբանությունը. մեջբերենք Երևան տեղանվան մասին նրա գեղեցիկ ակնարկը Արարատի **երկնամբարձ** նորակազմ մակդիրով. «Երևան մինն ի հին քաղաքացն Հայաստանի, այժմ մայրաքաղաք նահանգին Հայոց՝ եթէ ո՛չ ընդդեմ լիցի ստուգաբանութեան պատմագրաց մերոց՝ որք զանուն նորա ասեն եղեալ ի Նոյէ ի հայիլն նորա ի տապանէ **երկնամբարձ** գագաթէ Արարատայ և ի տեսանիլն զցամաքն զառաջինն՝ որ և գոչէ՝ «Երևեցաւ ցամաքն»… այն զի իբրև ի հայելւոջ երևեցուցանէ զայն տեսարան չքնաղ, զոր ի սակաւ տեղիս տեսեալ է իմ յԵւրոպայ կամ յԱսիայ» (57-58)։

Մեր քննած ուղեգրությունների մեջ անընդմեջ վեր է հառնում Արարատ լեռը՝ որպես ազգային ինքնության անմահության խորհրդանիշ։ Արարատի հանդեպ պաշտամունքով տոգորված Աբովյանն իր սաներին սովորեցնում է հպարտ կանգնել սրբազան լեռան շուրջ սփռված հողի վրա, սովորել պատմությունը, այն ներկայացնել աշխարհին, չնսեմանալ, չվախենալ նվաճողներից, ինքնահաստատվել. «*Դէպ ի հարաւ արձանանայ քեզ երկնատիպն Արարատ (Մասիս)՝ սպիտակահեր վարսիւք զարդարեալ։ Չգիտեմ՝ ո՞ր զգացմունք տիրեն մարդոյ՝ ի տեսանելն զայս ահաւոր յիշատակարան այնքան երևելի անցից։ Աստ ազատեցաւ ազգն մարդկային յաշխարհածուփ ջրհեղեղէ։ Միմիայն Արարատ կարէր անմահ կացուցանել զանուն ազգի և աշխարհի մերոյ*» (49)։


Եզրակացություն

1829-1838 թթ. Խաչատուր Աբովյանի գրաբարով գրած ուղերգրություններում հին հայերենի բառապաշարը զգալի տեղաշարժերի է ենթարկվում։ Նորակազմությունների մի մեծ շերտ գալիս է համալրելու 19-րդ դարի գրական լեզուն, որն արդեն մաքուր գրաբարը չէր, այլ գրաբարի, բարբառների, որոնք առլեցուն էին թուրքերենից, պարսկերենից, նաև ռուսերենից ու եվրոպական տարբեր լեզուներից կատարված հախուռն, անհարկի մեծաթիվ փոխառություններով, յուրօրինակ համաձուլվածք էր, որն աստիճանաբար զտվում էր՝ վերածվելով նոր գրական արևելահայերենի։

Լեզուների ինքնության պահպանման կարևորագույն հիմքերից մեկը նրանց բառապաշարն է, որքան էլ պնդեն, թե լեզվի ինքնության մեջ առաջնային բաղադրիչը քերականություն է, միևնույնն է, օտար փոխառություններով խճողված լեզուները դատապարտված են ձուլման։ Ուստի պատահական չէր, որ Աբովյանն իր գրական երկերում եռանդուն դառնում է լեզվաշինարար՝ իր ժամանակի հայերենը հարստացնելով նորակազմ գոյականներով, ածականներով, բայերով և մակբայներով։ Ընդ որում՝ նորակազմությունները համապատասխանում են գրաբարի բառակազմական օրինաչափություններին, նորաբան հասկացություններին տրվող հայերեն համարժեքները ևս կազմվում

են լեզվում առկա, ընդունված միավորներով, համագործածական կաղապարներով, որոնք դյուրըմբռնելի են: Ուղեգրություններից առանձնացրել ենք շուրջ 113 նորակազմ միավոր, որոնցից 100-ը վկայված են արդի արևելահայերենի բառարաններում, այսինքն՝ հետագա դարերում կիրառելի և ընդունելի բառային միավորներ են: Այսինքն՝ Խաչատուր Աբովյանի որդեգրած ուղին՝ նոր հայերենի բառապաշարը համալրել գրաբարյան բառակազմության և իմաստաբանության հիմնական առանձնահատկությունների հաշվառմամբ, լիովին արդարացրել է իրեն՝ հաղթահարելով ժամանակի փորձությունը:

Հավարտ՝ հետազոտության արդյունքները ամփոփենք տրամագրով: Ըստ կատարած քննության՝ բերված 113 նորակազմ միավորներից 60-ը **ածականներ** են, 45-ը՝ **գոյականներ**, արձանագրել ենք 4 **բայ**, 3 **դերբայ և** 1 **մակբայ**:



НАРИНЕ ДИЛБАРЯН, МАНЕ АГАДЖАНЯН – *Новообразованные слова в путевых заметках Хачатура Абовяна.* – Хачатур Абовян, носящий почётное прозвание «Великий просветитель», вошёл в литературу не только произведениями, написанными на современном армянском языке (ашхарабаре) и канакерском диалекте, но и на древнеармянском языке (грабаре). Значительную часть его древнеармянского (грабарского) наследия составляют два ключевых произведения, принадлежащие жанру путевых записок, из которых первое описывает историю восхождения к священной горе Масис экспедиции под руководством Фридриха Паррота, а второе представляет собой адресованные его ученикам путевые заметки из Тифлиса в Армению вместе с тайным советником, сенатором бароном Ганом и его супругой - из Шулавери в Лори, Александрополь, Ани, затем - в Сардарапат, Армавир и Эчмиадзин. В этих небольших по объёму литературных произведениях, содержащих важнейшие топографические и демографические сведения, Абовян употребляет более ста новообразованных слов, значительная часть которых является неологизмами, то есть наименованиями новых понятий - наук, должностей, реалий государственной и общественной жизни, большинство из которых стало общеупотребительным в современном восточноармянском языке, вводит в обращение забытые исконные армянские формы топонимов, переименованных иностранными завоевателями, и даёт их этимологическое объяснение. Исследованные новообразования созданы в соответствии со словообразовательными и семантическими закономерностями грабара. Используя большой потенциал словообразования древнеармянского языка, писатель доказывает, что важным оплотом сохранения языковой самобытности является не только грамматическая система, но прежде всего словарный состав, способный отражать все изменения времени.

Ключевые слова: *Хачатур Абовян, путевые записки, грабар, современный восточноармянский язык, словарный состав, новообразования, неологизмы, термины*

NARINE DILBARYAN, MANE AGHAJANYAN – *Neologisms in Khachatur Abovyan's Travel Writings.* – Khachatur Abovyan, bearing the honorary epithet "Great Enlightener," entered literature not only with works written in Ashkharhabar and the Kanaker dialect, but also in Old Armenian (Grabar). A notable part of his Old Armenian (Grabar) heritage consists of two key works belonging to the genre of travel writing, the first of which describes the history of the ascent

to the sacred mountain Masis by the expedition led by Friedrich Parrot, while the second comprises travel notes addressed to his students from Tiflis to Armenia together with Privy Councillor Senator Baron Gan and his wife-from Shulaveri to Lori, Alexandropol, Ani, then to Sardarapat, Armavir, and Ejmiatsin. In these relatively small literary works containing highly important topographical and demographic information, Abovyan employs more than one hundred newly created words by the author, a considerable part of which are neologisms, that is, designations of new concepts—sciences, offices, and realities of state and social life, most of which have become commonly used in modern Eastern Armenian; he introduces into circulation the forgotten native Armenian forms of toponyms renamed by foreign conquerors and provides their etymological explanations. The examined newly created words were formed in accordance with the word-formation and semantic regularities of Grabar. By employing the great potential of word formation in Old Armenian, the writer proves that an important bulwark of preserving linguistic identity is not only the grammatical system but above all the vocabulary, which is capable of reflecting all the changes of the time.

Key words: *Khachatur Abovyan, travelogues, Old Armenian (Grabar), Modern Eastern Armenian, vocabulary, newly formed words, neologisms, terms*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակները հաստատում են, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակները հաստատում են, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Աբովյան Խ., Ուղեգրություններ, Խ.Աբովյանի տուն-թանգարան, Երևան, «Մռավ» պրինտ, 2025, 263 էջ: [Abovyan Kh., Ughegrut'yunner, Kh.Abovyani tun-t'angaran, Yerevan, Mrav print, 2025]:

Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, 7-րդ հատոր, Հայկական ՍՍՌ հրատարակչություն, Երևան, 1956, 523 էջ: [1956 Abovyan KH., Yerkeri liakatar zhoghovatsu, 7-rd hator, Haykakan SSR hratarakch'ut'yun, Yerevan, 1956]:

Աղայան Էդուարդ, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., հ. 1, 2, Երևան, 1976, 929 էջ, 1615 էջ: [Aghayan Eduard, Ardi hayereni bats'atrakan barraran, «Hayastan» hrat., h, 1, 2, Yerevan, 1976]:

Հայոց լեզվի բարբառային բառարան, Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Եր., 2001, էջ 2770: [Hayots' lezvi barbarrayin barraran, Hr.Acharryani anvan lezvi institut, HH GAA, Yer. 2001]:

Հայր Մկրտիչ Աւգերեան եւ Հայր Գրիգոր Ճէլալեան, Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865, էջ 856: [Hayr Mkrtich' Awgerean yev Hayr Grigor Chelalean 1865, Arrdzerrn barraran haykaznean lezui, Surb Ghazar, Venetik]:

Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Սիւրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, հ. 1, 2, 1979, 1981, էջ 1139, 1067: [Hayr Gabriel Awyetik'ean, Hayr Khach'atur Siwrmelean, Hayr Mkrtich' Awgerean, Nor barrgirk' haykazean lezui, Yerevan, Yerevani hamalsarani hratarakch'ut'yun, h. 1, 2, 1979, 1981]:

Հովսեփյան Լ. Ս., Գրաբարի բառակազմությունը, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1987, 374 էջ: [Hovsep'yan L.S., Grabari barakazmut'yuny, Yer., Haykakan SSR GA hratarakch'ut'yun, 1987]:

Մալխասեանց Ստեփան, Հայերէն բացատրական բառարան, Եր., Հայկական ՍՍՌ հրատարակչություն, 1944, հ. 1, 608 էջ: [Malkhaseants' Step'an, Hayeren bats'atrakan barraran, Yer., Haykakan SSR 1944, h.1]:

Ջահուկյան Գևորգ, Հայերենի ստուգաբանական բառարան, Եր., «Ասողիկ», հրատարակչություն, 2010, 819 էջ: [Jahukyan Gevorg, Hayereni stugabanakan barraran, Yer., «Asoghik» hratarakch'ut'yun, 2010].

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 107-119
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.107

ԲԱՅԻ ԺԽՏԱԿԱՆ ԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՉԼԻՆԵԼՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԼԵԶՎՈՒՄ

ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Հոդվածում վերաիմաստավորվում է բայական ժխտման ավանդական ընկալումը՝ ժխտումը ոչ թե որպես տրամաբանական մերժում դիտարկելով, այլ ժխտական միավորներին անվանողական գործառույթ վերագրելով: Ներկայացվում է, որ բնական լեզուներում բայական ժխտումը չի սահմանափակվում երկարժեք տրամաբանությամբ, դրսևորվում է իբրև բազմաշերտ, պրագմատիկ և իմաստաստեղծ մեխանիզմ, որը կարող է արտահայտել ոչ միայն բացակայություն, այլև իմաստային տարբեր դաշտեր: Առաջարկվում է տեսակետ, ըստ որի՝ ժխտական միավորները չեն վերացնում կամ մերժում իրողությունները, այլ անվանում են դրանց բացակայությունը՝ «չլինելը» դարձնելով ճանաչելի և հաղորդելի:
Երևութաբանական տեսանկյունից հիմնավորվում է, որ «չլինելը» միայն բացակայություն չէ, այլև գիտակցության մեջ տրված յուրահատուկ փորձառություն: Այսպիսով, լեզուն չի ոչնչացնում իրականությունը, այլ համակարգում և անվանում է դրա բոլոր հնարավոր վիճակները՝ ներառյալ բացակայությունը:

Բանալի բառեր - *ժխտում, չլինել, անվանողական գործառույթ, իմաստ, պրագմատիկա, երևութաբանություն, բացակայություն*

Ներածություն

Լեզվաբանական ավանդույթում ժխտումը թեև համարվում է տրամաբանական մերժում, այս մոտեցումը չի բացատրում ժխտման իմաստային և պրագմատիկ բազմաշերտ դրսևորումները բնական լեզուներում: Հետազոտության նպատակն է վերաիմաստավորել ժխտման լեզվաբանական բնույթը՝ այն ներկայացնելով որպես «չլինելու» անվանման մեխանիզմ:

* **Սիրանուշ Հովհաննիսյան,** բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի գիտաշխատող
Сирануш Оганесян, кандидат филологических наук, научный сотрудник Института языка им. Г. Ачаряна НАН РА
Siranush Hovhannisyan, Candidate of Philological Sciences, Researcher at the H. Acharyan Institute of Language of the NAS of the RA
Էլ. փոստ՝ siranush.hovhannisyan@yahoo.com ORCID ID: https://orcid.org/0000-0002-0429-278X

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 02.06.2026
Գրախոսվել է՝ 03.06.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

Առաջարկվում է տեսակետ, ըստ որի՝ ժխտական միավորները չեն մերժում իրականությունը, այլ անվանում են դրա բացակայությունը՝ դարձնելով «չլինելը» լեզվականորեն արտահայտելի: Հետազոտության նորույթն այն է, որ ժխտումը դիտարկվում է ոչ միայն լեզվաբանական, այլև երևութաբանական հարթությունում՝ որպես փորձառական և իմաստաստեղծ երևույթ: Ուսումնասիրության արդյունքները կարող են նպաստել ժխտման տեսության վերաիմաստավորմանը և ընդլայնել լեզվի ու գիտակցության փոխհարաբերության ուսումնասիրությունը: Այս ամենից ձևավորվում է ուսումնասիրության գլխավոր թեզը՝ այն, **որ բայական ժխտումը բնական լեզուներում ոչ թե տրամաբանական մերժում է, այլ անվանողական մեխանիզմ, որի միջոցով լեզուն անվանում է իրողությունների բացակայությունը՝ «չլինելը» դարձնելով ճանաչելի և հաղորդելի:**

Հոդվածը ներկայացված է հինգ բաժիններով, որոնցում համապատասխանաբար քննարկվում են ժխտման ավանդական ընկալումը, դրա անվանողական բնույթը, «չլինելու» գոյության խնդիրը և երևութաբանական մեկնաբանությունը:

Հետազոտությունն իրականացվել է համակցված մեթոդաբանական շրջանակում, որը ներառում է տեսական-վերլուծական, իմաստաբանական, պրագմատիկ և երևութաբանական մոտեցումները:

Տեսական-վերլուծական մեթոդը կիրառվել է լեզվաբանական և փիլիսոփայական գրականությունը վերանայելու և ժխտման ավանդական ընկալումը քննադատաբար վերաիմաստավորելու համար:

Իմաստաբանական վերլուծության միջոցով դիտարկվել են ժխտական միավորների իմաստային կառուցվածքը և «չլինելու»՝ որպես լեզվականորեն արտահայտվող վիճակի *ձևավորումը:*

Պրագմատիկ մոտեցումը թույլ է տվել բացահայտել ժխտման գործառույթները հաղորդակցական տարբեր իրավիճակներում և ցույց տալ, որ այն չի սահմանափակվում տրամաբանական մերժումով: Միևնույն ժամանակ երևութաբանական մեթոդի կիրառումով «չլինելը» դիտարկվել է գիտակցության մեջ տրված յուրահատուկ փորձառություն՝ հիմնվելով Էդմունդ Հուսերլի և Ժան-Պոլ Սարտրի տեսությունների վրա: Բացի այդ՝ հետազոտությունն իրականացվել է գործառույթային-լեզվաբանական տեսանկյունից՝ ժխտումը ներկայացնելով անվանողական գործառույթ ունեցող լեզվական միավոր:

Ժխտման ավանդական ընկալումը

Ժխտումը լեզվում ավանդաբար ընկալվում է այնպիսի գործընթաց, որի միջոցով մերժվում է որևէ իրողության, գործողության կամ հատկանիշի գոյությունը: Սակայն այս դասական ըմբռնումը ենթադրում է, որ լեզվական միավորները ունեն բացառելու կամ իմաստ ոչնչացնելու գործառույթ: Սույն հոդվածում առաջարկվում է մոտեցում, ըստ որի՝ ժխտական իմաստ արտահայտող լեզվական միավորները հատկապես գործողության առումով ոչ թե մերժում

կամ վերացնում են տվյալ իրողությունը, այլ անվանում են դրա չլինելը՝ պահպանվելով իբրև անվանողական (նոմինատիվ) բնույթի միավորներ:

Լեզվաբանության մեջ ժխտական միավորների կամ կարգերի ավանդական մոտեցումը տրամաբանական գործողությունն է, որի միջոցով հերքվում է դատողության ճշմարտացիությունը՝ այն վերածելով հակադիր արժեքի: Ժխտման գաղափարը արմատավորված է երկարժեք տրամաբանության (Frege, 1892/1948; Лайонс, 1977/1978) մեջ և ենթադրում է աշխարհընկալման բևեռացած մոդել՝ «կա - չկա», «ճիշտ - սխալ», «լինել - չլինել» և նմանատիպ հակադրություններով: Այսպիսի շրջանակում «նա կա» նախադասության «նա չկա» ժխտումը դիտվում է գոյության լիակատար բացառման ակտ՝ միանշանակ և փակ իմաստային արդյունքով, որը հնարավոր չէ շարունակել, հնարավոր չէ կամ իմաստ չունի հերքել, ապացուցել:

Լեզուն մարդկային գիտակցության և փորձառության արտահայտման հիմնական համակարգն է և չի սահմանափակվում սոսկ տրամաբանական կառուցվածքներով (Wittgenstein, 2009; Grice, 1975): Այն ոչ միայն դատողությունների ձևակերպման միջոց է, այլև իրականությունը բազմաշերտ ընկալելու, վերաիմաստավորելու և վերարտադրելու գործիք: Լեզվական նշանը չի գործում դատարկ տարածքում. այն մշտապես ներառված է հաղորդակցական, մշակութային և ճանաչողական համատեքստերում (Wittgenstein, 2009), որտեղ իմաստը չի կարող ամբողջությամբ հանգեցնել պարզ հակադրությունների այն պարզ պատճառով, որ իրականությունը բաղկացած չէ հակադրություններից, այն բաղկացած է գոյության հավասարաչափ դրսևորում ունեցող միավորներից և զարգացումներից: Այս տեսանկյունից ժխտումը չի կարելի դիտարկել միայն որպես հաստատվող ճշմարտության արժեքի շրջում: Այն բարդ իմաստային-պրագմատիկ մեխանիզմ է, որը կարող է ոչ միայն հերքել, այլև սահմանազատել, մեղմել, ենթադրել (Horn, 1989), նույնիսկ հաստատել գոյությունը այլ մակարդակում: «Նա չկա» արտահայտությունը միշտ չէ, որ նշանակում է բացարձակ բացակայություն. հաղորդակցական մասնավոր իրավիճակում այն կարող է ակնարկել ժամանակավոր բացակայություն, հասանելիության բացակայություն կամ հեռավորություն: Այսպիսով, ժխտումը հաճախ վերածվում է ոչ թե բացառման, այլ վերակոդավորման:

Ավելին, բնական լեզուներում ժխտումը հաճախ արտահայտվում է այլ բնույթ ունեցող քերականական և բառապաշարային միջոցների հետ՝ ձևավորելով ժխտման իմաստային բազմաստիճանություն: Այդ աստիճաններն են կրկնակի ժխտումը, ենթադրական *ժխտումը, հեգնական* կամ *հռետորական ժխտումը,* որոնք ցույց են տալիս, որ ժխտումը կարող է ծառայել ոչ միայն հերքելուն, այլև ընդգծելուն, խտացմանը կամ նույնիսկ հակառակ իմաստ ստեղծելուն (Horn, 1989; Грайс, 1975): Այս հանգամանքը վկայում է, որ բայական ժխտումը չի ենթարկվում ձևական տրամաբանության օրենքներին, այլ ինքնին շարժուն և ճկուն համակարգային միավոր է:

Ուրեմն անհրաժեշտ է վերաիմաստավորել ժխտման դերը լեզվական համակարգում՝ դիտելով այն ոչ թե որպես պարզ տրամաբանական օպերատոր, այլ իմաստաստեղծ գործընթացի ակտիվ մասնակից: Ժխտումը լեզվում սահմաններ գծելու, հնարավորություններ բացելու և իրականության բազմակի մեկնաբանություններ կազմակերպելու միջոց է: Այն վերաձևում է իմաստը՝ ներառելով նոր հարաբերություններ, ենթատեքստեր և մեկնաբանություններ:

Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս ասել, որ լեզուն, ի տարբերություն ձևական տրամաբանության, գործում է ոչ թե երկարժեք, այլ բազմարժեք և շարունակական համակարգի սկզբունքով, որտեղ ժխտումը ոչ թե վերջակետ է, այլ նոր իմաստների սկիզբ:

Ժխտումը որպես անվանման միջոց

Լեզվի ժխտական միավորները, ինչպես մյուս բոլոր միավորները, ունեն անվանողական բնույթ (Бенвенист, 1974 / 1971; Соссюр, 1916 / 1977): Երբ ասվում է «չկա», այդպիսով ոչ թե վերացվում է «լինել» երևույթը, այլ անվանում ենք դրա բացակայության վիճակը: Այսինքն՝ «չլինելը» դառնում է ինքնուրույն անվանվող իրողություն: Օրինակ՝ «Սենյակում մարդ չկա» նախադասությունը չի «ոչնչացնում» կամ «մերժում» գոյությունը, այլ նկարագրում է որոշակի տարածքում մարդու բացակայության վիճակը, «ես չեմ գնացել» արտահայտությունը չի մերժում «գնալ» գործողությունը ինքնին, այլ անվանում է տվյալ սուբյեկտի կողմից այդ գործողության չկատարած լինելը: Այսպիսով, ժխտումը ոչ թե հակադիր գործողություն է, այլ այլընտրանքային անվանում՝ ուղղված իրականության մեկ այլ վիճակի, և այդ երկու վիճակներն էլ հավասարաչափ գոյություն ունեն իրականության մեջ: Կան և՛ գնալու գործողությունը, և՛ այդ գործողության չլինելը: Սա զարգացնելու պարագայում հանգելու ենք իրողության և ոչնչի փիլիսոփայության՝ արդեն եղած տեսությունների ընդդիմադիր դիրքերում, և դա անխուսափելի է: Իհարկե, գայթակղելու աստիճանի համոզիչ է հատկապես Թեոդոր Ադորնոյի գաղափարը, թե բացասականը պահպանում է չհամընկնողը և չի թողնում, որ իրականությունը ամբողջությամբ լուծվի հասկացությունների մեջ, ինչպես նաև Հայդեգերի միտքը, որ «ոչինչը» գոյաբանական հարթությունում բացահայտում է լինելու պայմանները և ուղեկցում է գոյության փորձառությանը: Բայց լեզուն չի անվանի մի բան, որը ինքնին որևէ ձևով ճանաչելի սահմաններ չունի: Ուստի լինելը և չլինելը փոխպայմանավորված և փոխենթադրվող իրողություններ չեն, որովհետև յուրաքանչյուրն ունի իր արտահայտությունը այնպիսի ճշգրտությամբ, որ լեզվում հարացույցի, օրինաչափության է ենթարկվում: Իրականության զարգացումը՝ որպես առանձին իրողություն, արտահայտվում է բայ խոսքի մասով: Իրականության բոլոր տարրերին բնորոշ է զարգացումը տարածաժամանակային որոշակի տիրույթում: Այդ զարգացումը իրականում անկառավարելի է, քանի որ ենթարկվում է այնպիսի չափումների, որ կախված չեն մարդու կամքից:

Մինչդեռ բայը՝ որպես լեզվական միավոր, ճշգրիտ պայմանական վերացարկումով որսում և սահմանում է իրողության զարգացումը հատվածական (ֆրագմենտային) սկզբունքով, և դրա շնորհիվ հնարավոր է դառնում զարգացման տվյալ կտրվածքը վերցնել տարաճաժամանակային ամբողջությամբ, նույնիսկ ենթարկել կրկնակի վերացարկման՝ հասկացութային մակարդակում: Սա նման է այն մեխանիզմին, որ կիրառում է մաթեմատիկան. իրականությունը ամբողջությամբ զրկելով իմաստայնությունից և անհատականությունից՝ այն ենթարկում է նշանային այնպիսի վերացարկման, որի շնորհիվ հնարավոր է դառնում հասնել կատարյալ ճշգրտության և իրականությունը վերաձևել կամայականորեն: Առանց այս վերացարկման պարզապես պետք է ընդունել յուրաքանչյուր իրողության բացառիկությունը և անկրկնելիությունը, իսկ այդպիսի ընկալումը իրականության ուսումնասիրության այլ նպատակներ է հետապնդում, օրինակ՝ էության որոնումները և իրի սահմաններից անդին եղածի բացահայտումը:

Բայի քերականական կարգերը խոսում են այն մասին, թե իրականության որ չափումները և հատկանիշներն են լեզվի միջոցով վերացարկվում և հանգեցվում կատարյալ ճշգրտության: Բոլոր զարգացումները տեղի են ունենում ժամանակի ընթացքում (ժամանակ), բոլորը տեղի են ունենում որոշակի ներքին իմաստային վեկտորով (սեռ), բոլորը ենթակա են որոշակի ձևով կատարվելու (եղանակ), բոլոր զարգացումները սկսվում են մեկ կամ ավելի եզրերից (թիվ), և բոլորը սկսվում են միմյանց նկատմամբ որոշակի տարածության վրա դասավորված սուբյեկտային կետերից (դեմք): Եվ այս ամբողջը իրականում գոյություն ունի երկու եզրով՝ լինելու (դրական խոնարհում) և չլինելու (ժխտական խոնարհում): Եթե բայը իրականության զարգացման անվանումն է, ապա նրա խոնարհման երկու ձևերը անվանում են իրականության գոյության բևեռային երկու բնույթները:

Սա առանձնապես զարմանալի չպիտի թվա, եթե հաշվի առնենք, որ ցանկացած ամբողջ երկու հակակշիռ մասերի հավասարակշռությունն է, կամ ամբողջը երկու մասի հակադրամիասնություն է, եթե նույնիսկ այն բաղկացած է մի քանի մասից, ապա մի մասի դիմաց ընկած է մի չեղածություն՝ որպես հակադիր մաս:

Չլինելու գոյությունը

Նախորդ հատվածի վերջին միտքը չի նշանակում, որ իրականությունը հայելանման երկփեղկվածությամբ է օժտված: Այլ նկատի ունենք այն, որ իրականության զարգացումը՝ լինելու և չլինելու, այսինքն՝ զգայապես ընկալելի դրական և լինելության զրո աստիճանով դրսևորվող իրողությունների ներդաշնակ շղթա է: Աշխարհը բաղկացած չէ միայն լսելի-տեսանելի միշտ եղող ամեն ինչից, այն բաղկացած է նաև «կա-լինում է»-ների բացակայություններից:

Եթե ընդունենք, որ լեզուն արտացոլում է իրականության բազմազան վիճակները, ապա «չլինելը» նույնպես ճանաչելի և անվանվող վիճակ է: Այն հաղորդակցական իր արժեքը և իմաստային համագումարն ունի. ոչ թե իմաստ, այլ իմաստային համագումար (Арутюнова, 1988; Падучева, 1985), քանի որ ոչ մի ժխտական միավոր, որպես կանոն, բաղկացած չէ միասնական՝ մեկ արմատային միավորից, այլ սովորաբար առաջանում է որևէ այլ միավորի և ժխտականության ուղղակի ցուցիչի շնորհիվ: Սա ասես վկայում է, որ չլինելու գիտակցումը մարդուն տրվել է ավելի ուշ, քան պարզապես դրական գոյությունները: Եվ զարմանալի չէ. ավելի արագ և դյուրությամբ ընկալվում են այն իրողությունները, որոնք հնարավոր է որսալ զգայարաններով, կամ որոնց արդյունքը կարելի է «շոշափել», իսկ չլինելը գիտակցվում է միայն տվյալ իրողության լինելու բացակայությամբ. այսինքն՝ մինչև չի ընկալվում տվյալ իրողության գոյությունը, նրա չլինելը չի կարող ընկալվել: Բայց բնական հարց է առաջանում. այդ դեպքում ինչո՞ւ բացակայությունը՝ չլինելը, չի անվանվում նոր բառային արմատական միավորով, այլ պարզապես ժխտական մասնիկով է արտահայտվում: Հարցն այն է, որ ցանկացած իրողության չլինելը պարզապես նրա վիճակներից մեկն է, այլ ոչ թե լիովին նոր գոյաձև կամ էություն, ուստի պատահական չէ, որ բոլոր ժխտականություններն արտահայտվում են ընդամենը հիմնական իմաստին մասնիկի ավելացումով: Բայց մի տարբերություն. ժխտական մասնիկը, ի տարբերություն այլ մասնիկների, միայն հարաբերության ցուցիչ չէ, այն ունի ավելի արտահայտված, տարբերակելի իմաստային դաշտ, քան ցանկացած այլ քերականական ձևույթ:

Եթե ասվածի հիմնավորումը փնտրենք լեզվական միավորների և բովանդակության կանխատեսելիության ճանապարհով, պարզ կդառնա, որ, օրինակ, հոլովական ոչ մի վերջավորություն այնքան պարզորոշ ցույց չի տալիս իմաստային հատկանիշներ, որքան ժխտական ցանկացած մասնիկ: Այսպես. եթե ասում ենք «չ….» և հապաղում բուն իմաստակիր հատվածը արտաբերելիս, ապա հաղորդակցվող եզրը անմիջապես հասկանում է, որ հաջորդող հատվածը վերաբերելու է ինչ-որ «բացակայության», սակայն ոչ մի հոլովական վերջավորություն հնարավոր չէ նույնքան միանշանակ իմաստային կանխատեսման հնարավորությունով ներկայացնել հաղորդակցվելիս: Սա՝ ընդամենը ընկալողական և հաղորդակցության ամենատարրական և բնական պայմանների մեջբերումով: Մինչդեռ բավական է նկատել, որ ժխտական մասնիկների ավելացումը տեղի է ունենում ոչ թե հիմնական իմաստակիր հատվածներից հետո, այլ առաջ, այսինքն՝ դրանք միշտ նախադիր մասնիկներ են, և սա խոսում է այն մասին, որ տվյալ իմաստային հատվածը ուղիղ կախվածության մեջ է ավելացվող քերականական մասնիկից, ասել է թե՝ առաջին հերթին ամրացվում է այն գիտելիքը, թե ինչ-որ բան բացակայում է, և հետո դրվում այն, ինչ որ բացակա է: Այս առումով՝ կարելի է ժխտական մասնիկի գործառույթը

և բնույթը համեմատել ենթադրական և հարկադրական եղանակացուցիչ մասնիկների հետ. սրանք ևս նախադիր են, ունեն նույն տրամաբանությունը. առաջին հերթին ամրացնում են ասելիքի եղանակը, այնուհետև բուն իմաստը:

Բացակայությունը նույնքան նշանակալի է, որքան ներկայությունը, լռությունը նույնքան անվանվող է, որքան խոսքը, և չկատարելը նույնքան նկարագրելի է, որքան կատարելը: Ուստի ժխտական ձևերը պարզապես մատնանշում են իրականության մի այլ կողմ. ոչ թե բացառում են այն, այլ սահմանում են դրա՝ որպես առանձին իմաստային միավորի բացակայությունը: Լինելն ու չլինելը հավասարարժեք ընթացքներ են նույնիսկ արտադրողականության կամ արդյունավետության առումով. երկուսից էլ նոր զարգացում կարող է բխել: Ավելին, իրողության դրական գոյությունը կարող է նույնքան բացասական արդյունքի հանգեցնել, որքան բացասական գոյությունը՝ դրական արդյունքի: Օրինակ՝ «Անձրև չէր գալիս, և նա դուրս եկավ այգի» արտահայտության մեջ «չէր գալիս» չկատարված գործողությանը հաջորդում է տրամաբանորեն դրական արդյունք՝ «դուրս եկավ», և շրջենք իրավիճակը. «Անձրև էր գալիս, և նա դուրս չեկավ այգի», որտեղ «գալիս էր»-ը շարժման դրական գոյությունն է, որին հաջորդում է բացասական գոյություն «դուրս չեկավ»-ը:

Այս ամենը հանգեցնում է խիստ ընդհանրական եզրակացության. լեզվական բոլոր միավորները, անկախ ձևից կամ գործառույթից, ունեն անվանողական բնույթ: Դրանք չեն ներգործում իրականության վրա՝ ոչնչացնելով կամ ստեղծելով այն, այլ պարզապես անվանում և դասակարգում են տարբեր վիճակներ: Ուրեմն ժխտականությունը գործադրելիս լեզուն չի «պայքարում» իրողությունների դեմ, այլ ընդլայնում է դրանց նկարագրության միջոցները:

Իրականությունը կարող է երեք տեսակի զարգացում ապրել՝ գործողություն, շարժում, վիճակ, որոնցից յուրաքանչյուրը իր հակակշիռը ևս ունի: Այս երեքը և դրանց չգոյության եզրերը ձևայնացվում են բայական համապատասխան արտահայտություններով: Եվ ժխտման պլանում անվանվում են բայի եղանակի և ժամանակի քերականական կարգերը՝ որպես իրականության մեջ բացակայություններ: Սա հստակ երևում է հատկապես ենթադրական և հարկադրական եղանակների ժխտական խոնարհման ժամանակ, որովհետև եղանակային ցուցիչը առանձին միավոր է: Ասվում է «կանեմ – չեմ անի, պիտի անեմ – չպիտի անեմ»: Ենթադրական եղանակի ժխտական խոնարհման շնորհիվ երևում է, թե ինչպես է ժխտական մասնիկը փոխարինում դրական խոնարհման եղանակային ձևույթին, և թե ինչպես է ժամանակային կտրվածքը հստակ անցում կատարում շոշափելի ըղձականությունից (իմա՝ ապառնի մի ժամանակակետ) պարզապես վիճակային իմաստ ունեցող ժխտական դերբային: Ժխտական մասնիկը չի դրվում ժխտական դերբայի հատվածում, այլ օժանդակ բայի վրա: Սա ապացուցում է, որ ժխտական խոնարհումը գործողության «այդտեղ» և «այդպես» չլինելու փաստն է անվանում, այլ ոչ թե իմաստային դաշտը: Եվ փաստորեն, «Կանեմ» ասելիս սուբյեկտը անվանում է իր

անելու փաստը մի առաջիկա ժամանակակետում որոշակի պայմանային սահմանումով, իսկ «Չեմ անի» արտահայտությամբ անվանում է իր գործողության բացակայությունը առաջիկայում և այդ ձևով:

Ժխտման վերաիմաստավորումը՝ որպես անվանման ձև, թույլ է տալիս խորքայնորեն հասկանալ լեզվի բնույթը: Լեզուն ոչ թե գործիք է իրականությունը փոփոխելու կամ այն մերժելու համար, այլ համակարգ է, որը կոչված է անվանելու և արտացոլելու իրականության բոլոր հնարավոր վիճակները, այդ թվում՝ բացակայությունը: Ի վերջո, մեկին ասված «Գրիչը վերցրո՛ւ» արտահայտությունը ոչ թե նրա վերցնելը կառավարելն է, այլ հաղորդողի հորդորի անվանումը, իսկ «Գրիչը մի՛ վերցրու» արգելականը ոչ թե գործողությունն ընդհատելն է, այլ այդ գործողությունը չկատարելու անվանումը: Այդպես էլ «Ես կերա ոչ բոլոր մրգերը» արտահայտությունը ոչ թե մերժում է բոլոր մրգերի գոյությունը, այլ անվանում «բոլոր» հասկացության աղավաղումը՝ օբյեկտիվ դրական գոյություն՝ «ոչ» միավորով անվանելով այդ «բոլոր»-ի ամբողջականության բացակայությունը:

Ժխտումը և չգոյությունը երևութաբանության (ֆենոմենոլոգիա) տեսանկյունից

Ժխտման լեզվաբանական մեկնաբանությունը՝ որպես չլինելու անվանում, երևութաբանության (ֆենոմենոլոգիա) տեսանկյունից դիտարկելը ցույց է տալիս, որ չգոյությունը պարզապես բացակայություն կամ դատարկություն չէ, այլ փորձառության հատուկ տեսակ՝ իր սեփական իմաստային կառուցվածքով: Այդպես է, քանի որ անդրանցայնության ուշադրության կենտրոնում ոչ թե առարկաների օբյեկտիվ գոյությունն է, այլ այն, թե ինչպես են դրանք տրվում գիտակցությանը (Husserl, 1983):

Էդմունդ Հուսերլի մոտեցմամբ՝ գիտակցությունը միշտ ուղղված է ինչ-որ բանի (ինտենցիոնալություն) (Гуссерль, 2024): Սակայն այդ «ինչ-որ բան»-ը պարտադիր չէ, որ լինի ֆիզիկապես գոյություն ունեցող առարկա: Գիտակցությունը կարող է ուղղված լինել նաև բացակայությանը, բացին, չլինելուն: Օրինակ. երբ մարդը սպասում է մեկին և նկատում է, որ նա չի եկել, գիտակցությունը պարզապես չի արձանագրում «ոչինչ» կամ զրո արժեք. այն ուղղված է կոնկրետ «չգալու» փաստին: Այսինքն՝ «չլինելը» դառնում է գիտակցության առարկա՝ սեփական իմաստով և կառուցվածքով:

Երևութաբանության տեսանկյունից՝ չգոյությունը չի նշանակում բացարձակ դատարկություն: Այն հայտնվում է իբրև որոշակի ձևով տրված փորձառություն: Մենք տեսնում ենք, որ ինչ-որ բան չկա (օրինակ՝ դատարկ սենյակ ենք արձանագրում, բայց դա չի նշանակում, որ գոյությունն ինքնին զրո է, որովհետև սենյակը այնուամենայնիվ կա, պարզապես մեր ակնկալածը չկա իբրև նրա պարունակություն), կամ մենք «զգում ենք» բացակայություն (օրինակ՝ մարդու ներկայության բացը), բայց այդ մարդը կա ինչ-որ տեղում ինչ-որ ձևով, պարզապես մենք նրա գոյությունը չունենք որպես փորձառություն, և

կամ էլ մենք «գիտենք», որ ինչ-որ բան տեղի չի ունեցել, բայց դա մեր ընկալումն է, քանի որ տեղի չունենալը պարզապես մեր ակնկալիքի չիրականանալն է, իսկ տվյալ ինչ-որ բանի՝ պարզապես վիճակներից մեկը։

Այս բոլոր դեպքերում «չլինելը» ունի իր երևութաբանական ներկայությունը։ Այն չի վերանում առ ոչինչ կամ զրոյություն, այլ ներկայանում է իբրև բացակայության ձևով տրված իմաստ։

Այս գաղափարը զարգացնում է նաև Ժան-Պոլ Սարտրը, որ «ոչնչությունը» (néant) դիտարկում է որպես գիտակցության կողմից արտադրվող, բայց միևնույն ժամանակ՝ իրական փորձառական կառուցվածք (Sartre, 2003)։ Նրա հայտնի օրինակում, երբ մարդը սրճարանում փնտրում է Պիերին և «չի գտնում», այդ «չգտնելը» հենց փորձառության կենտրոնական բովանդակությունն է։

Եթե լեզվաբանական տեսանկյունից մենք ասում էինք, որ ժխտումը անվանում է «չլինելը», ապա երևութաբանությունն ավելացնում է, որ այդ «չլինելը» նաև **ապրվում է** որպես որոշակի եղելություն։ Այսինքն՝ «չկա»-ն պարզապես դատողություն չէ, այլ գիտակցության մեջ ձևավորված իրադարձություն, «չկատարվեց»-ը ոչ միայն փաստ է, այլ նաև ապրում, որը ունի ժամանակային, զգայական և իմաստային չափումներ։

Այստեղ «չգոյությունը» յուրահատուկ գոյություն է՝ ոչ թե առարկայական, այլ երևութաբանական (ֆենոմենալ) հարթության մեջ։

Այս տեսանկյունից վերլուծությունը ցույց է տալիս, որ «լինելը» և «չլինելը» չեն հակադրվում նույն հարթության վրա։ «Չլինելը» չի կարող չափվել նույն չափանիշներով, ինչ «լինելը»։ «Լինելը» կապված է առարկայական ներկայության հետ, իսկ «չլինելը»՝ բացակայության, սպասման, հնարավորության չիրականացման հետ։ Այս պատճառով «չգոյությունը» պահանջում է այլ չափում՝ ոչ թե օբյեկտիվ-ֆիզիկական, այլ իմաստաբանական և փորձառական։ Այն գոյություն ունի ոչ որպես առարկա, այլ **հորիզոն**, որի հետնապատկերում «լինելը» դառնում է ընկալելի։

Չլինելու լեզվական և երևութաբանական չափումներ

Այս ամենը վերադարձնում է մեզ լեզվաբանական սկզբնական թեզին. լեզուն, երբ օգտագործում է ժխտական ձևեր, չի «ոչնչացնում» իրականությունը։ Անվանում է այն, ինչ արդեն տրված է գիտակցության մեջ որպես բացակայություն։

Այսինքն՝ լեզուն արձանագրում է երևութաբանական փորձառությունը, «չ»-ով արտահայտված ձևերը անվանում են գիտակցության մեջ արդեն առկա «չլինելու» երևույթը։ Երևութաբանության տեսանկյունից «չգոյությունը» ոչ թե բացարձակ ոչինչ է, այլ գիտակցության մեջ տրված յուրահատուկ եղելություն։ Այն ունի իր ներկայությունը՝ որպես բացակայություն, իր իմաստը՝ որպես չկատարված կամ չիրականացած, և իր դերը՝ որպես այնպիսի հորիզոն, որի

միջոցով մենք հասկանում ենք «լինելը»: Եվ կարելի է ասել, որ ժխտական լեզվական միավորները ոչ միայն անվանում են «չլինելը», այլ նաև արտահայտում են այն երևութաբանական իրականությունը, որտեղ «չգոյությունը» ինքնին յուրահատուկ ձևով եղած է:

Ուստի «չգոյությունը» չի տրվում զգայական փորձով այնպես, ինչպես «լինող» իրողությունները, և դրա հաստատման միակ ձևը լեզվական անվանումն է: Եվ խնդիրը տեղափոխվում է այլ հարթություն. որո՞նք են մարդու զգայական փորձի սահմանները, և որտեղի՞ց է սկսվում այդ փորձի խաթարումը կամ անհասանելիությունը:


Մարդը իրականության «լինող» կողմերը ընկալում է զգայարաններով. տեսնում է առարկաներ, լսում ձայներ, շոշափում նյութական մարմիններ: Այսինքն՝ «լինելը» ունի դրական զգայական տրվածություն: Բայց փորձենք նույնը կիրառել «չլինելու» նկատմամբ. կարելի՞ է տեսնել չլինելը, կարելի՞ է շոշափել բացակայությունը, կարելի՞ է լսել ոչինչը: Ոչ, որովհետև զգայարանները երբեք չե՞ն արձանագրում «չլինելը» իբրև առանձին իրողություն, այլ պարզապես արձանագրում են որոշակի դաշտ, որտեղ ինչ-որ բան չկա, բայց այդ «չկա»-ն ինքը զգայական տվյալ չէ՞: Բայց չէ՞ որ զգայարաններին տրված փորձառությունը մեծ հնարավորություն ունի վերածվելու մշտական վիճակի կամ ակնկալիքի, որի բեկումը մարդը միանշանակ զգում է ոչ թե առարկայորեն, այլ սեփական զգայությունների կամ փորձառության փոփոխությամբ: Եվ ուրեմն, եթե իրողության դրական գոյությունը մարդուն տրվում է զգայելիորեն, ապա չլինելը մարդուն տրվում է դարձյալ ֆիզիկապես, բայց այս անգամ արդեն սեփական զգայարանների կուտակած գիտելիքի փոփոխությամբ: Սա բարդություն չի առաջացնում մարդու ճանաչողական հորիզոնի ընդլայնման համար, քանի որ, ի վերջո, բոլոր իրողությունները չեն, որ տրված են մարդուն ֆիզիկապես ընկալելի կերպով. մարդու մարդացման ընթացքը մեծապես պայմանավորված է, հակառակը, վերացական արժեքայիններով, մարդուն ֆիզիկապես տրված իրականությունը անհիշելի ժամանակներից նեղ է թվացել՝ խոսելու անատոմիական հնարավորությունը հասցնելով հաղորդակցվելու արվեստի և գրականության, ուտելը՝ խոհանոցի, մերկություն ծածկելը՝ նորաձևության և այլն: Մարդը սովոր է տրված ֆիզիկական սահմաններից դուրս գալուն և ուրեմն չլինելը ընկալելն ու անվանելը նույնքան բնական են, որքան զգայարաններից ստացված լինելության փաստն արձանագրելն ու վերլուծելը:

Երևութաբանությունը (Էդմունդ Հուսերլ, Ժան-Պոլ Սարտր) ցույց է տալիս, որ մենք ինչ-որ կերպ «ապրում ենք» բացակայությունը: Բայց այստեղ կարևոր տարբերակում կա. մարդը չի զգում չլինելը որպես ինքնուրույն իր, մարդը գիտակցում է այն՝ որպես սպասվածի բացակայություն: Այն ընկերը, որին սպասում էինք, և չեկավ, այն սենյակը, որի դատարկությունը տեսնում էինք, զգայական առարկայի արժեք են ստանում իմաստի աճման ակտում՝ բովանդակության ձևավորման ժամանակ:

Եթե ընդհանրացնենք, «լինող» իրողությունները կարող են հաստատվել զգայարաններով, «չլինող» իրողությունները կարող են հաստատվել միայն լեզվով։

Այսինքն՝ չգոյությունը չունի անմիջական օնտոլոգիական տրվածություն, այլ ունի լեզվական հաստատում։ Այստեղ լեզուն ոչ թե պարզապես նկարագրում է իրականությունը, այլ որոշ իմաստով ստեղծում է «չլինելու» ճանաչելիությունը։

Եթե ասում ենք, որ լեզուն անվանում է արդեն տրված «չլինելը», ապա այստեղ կարելի է ավելի կտրուկ ձևակերպել. չլինելը՝ որպես իմաստային միավոր, գոյություն ունի միայն այն դեպքում, երբ այն անվանվում է, «չլինելը» առանց լեզվի չի տրվում որպես որոշակիություն, այն դառնում է «իրողություն» միայն անվանման միջոցով։ Այսպիսով՝ «լինելը» զգացվում է, «չլինելը» անվանվում։



Նկար 1

Եվ հենց այդ անվանման ակտն է, որ «չլինելը» դարձնում է մտածելի, հաղորդելի և որոշ իմաստով՝ «եղած», բայց արդեն ոչ զգայական, այլ լեզվական-իմաստաբանական հարթության մեջ։ Ի վերջո, մարդը միշտ էլ կարող է ընկալել, վերլուծել և անվանել այն փաստը, թե ամբողջական խնձորից մի կտոր է պակասում, կամ էլ վերացարկել այդ խնձորը՝ բացակայող մասի չափի հիման վրա ուրվագծելով մյուս բաղկացուցիչ մասերը, և արձանագրել, որ խնձորից ոչ թե մեկ, այլ երկու թե երեք կտոր է պակասում՝ կախված այն բանից, թե խնձորը ինչ չափի շերտերից բաղկացած կպատկերացնենք։ Վերցնենք մի տրվածություն, ինչպես, օրինակ՝ նկար 1-ում է. այստեղ շրջանը բաղկացած է փաստացի 7 մասերից, որոնցից ակնհայտորեն բացակայում են 1-ինը և 5-րդը։ Բայց եթե ընդունում ենք, որ մեր առաջ շրջան է, նշանակում է, որ ընդունում ենք նաև այն մասերի գոյությունը, որոնք պարզապես իրենց գոյությամբ նման չեն մյուսներին։ Այսինքն՝ այս շրջանը բաղկացած է մի քանի գորշ և 2 սպիտակ մասերից, այս պնդումով մենք նկարագրում ենք բացակա մասերը, նույնիսկ եթե չօգտագործենք համարակալման սկզբունքը։ Այդ մասերից ոչ մեկի գոյությունը պարտավորված չէ մյուսի չգոյության առաջ, և հակառակը՝ բացակայող մասը ոչ մի պատասխանատվություն չունի մյուսների ներկայության համար։ Շրջանի մասերը բոլորը կան, պարզապես լինելության տարբեր չափումներով։ Ի վերջո, մարդը՝ ընկալողն է որոշում, թե իր փնտրածն ինչ է տվյալ շրջանի սահմաններում. եթե սպիտակ մասեր, ապա 1-ին և 5-րդ մասերը հենց դրական գոյություններն են, և այս դեպքում արդեն 5 գորշ մասերը բացասական գոյություններն են։ Անկախ բոլոր

մասերի չափերից և գունային հատկանիշներից՝ նրանք բոլորը կան որպես շրջանի եղած կամ ենթադրվող բաղադրիչներ. հակառակ դեպքում շրջանը շրջան չէր լինի, չէ՞ որ բացակայող մասով խնձորը դեռ խնձոր է:

Այսպիսով, մարդն ապրում է «եղել է – լինում է – լինելու է» եռանդամության աշխարհում, բայց գիտակցում է նաև այն, ինչ դուրս է այդ հոսքից՝ բացակայությունը: Եվ այդ բացակայությունն է, որ լեզվի ժխտական միավորների միջոցով դառնում է սահմանված, մտածելի և հաղորդելի: Այսուհանդերձ, լեզուն չի լրացնում բացակայությունը, այլ այն դարձնում է տեսանելի՝ հնարավորություն տալով մարդուն փոփոխելու իրականությունը՝ հանուն սեփական չարդարացած ակնկալիքների: Եվ պարադոքսային է գուցե, բայց նաև հնարավորություն է տալիս մարդուն համակերպվելու լինելիքի բացակայության հետ՝ իբրև իրականության անհերքելի բաղադրիչ, կամ սովորեցնում է մարդուն որպես օբյեկտիվ իրականության մաս ընդունել այն, ինչ թեև ցանկալի է, բայց երբեք չի լինելու:

СИРАНУШ ОГАНЕСЯН – *Феноменология глагольного отрицания: номинация небытия в языке.* – В статье переосмысливается традиционное понимание глагольного отрицания: отрицание рассматривается не как логическое отрицание, а как номинативная функция языковых единиц. Показано, что в естественных языках глагольное отрицание не ограничивается рамками двузначной логики, а выступает как многослойный, прагматический и смыслообразующий механизм, способный выражать не только отсутствие, но и различные смысловые поля.

Предлагается подход, согласно которому отрицательные единицы не устраняют и не отвергают реальность, а называют её отсутствие, тем самым делая «небытие» познаваемым и коммуницируемым.

С феноменологической точки зрения обосновывается, что «небытие» не сводится к простому отсутствию, а представляет собой особую структуру опыта, данную в сознании. Таким образом, язык не уничтожает реальность, а организует и номинирует все её возможные состояния, включая отсутствие.

Ключевые слова: *отрицание, небытие, номинация, значение, прагматика, феноменология, отсутствие*

SIRANUSH HOVHANNISYAN – *The Phenomenology of Verbal Negation: The Nomination of Non-Being in Language.* – This paper reinterprets the traditional understanding of verbal negation by approaching it not as a logical denial, but as a nominative function of linguistic units. It is argued that in natural languages verbal negation is not confined to the framework of bivalent logic; rather, it functions as a multi-layered, pragmatic, and meaning-generating mechanism capable of expressing not only absence but also a range of semantic domains.

The paper proposes that negative units do not eliminate or reject reality, but instead name its absence, thereby rendering “non-being” cognitively accessible and communicable.

From a phenomenological perspective, it is demonstrated that “non-being” cannot be reduced to mere absence, but constitutes a specific structure of experience given in consciousness. Thus, language does not annihilate reality; rather, it organizes and names all its possible states, including absence.

Key words: *negation, non-being, nomination, meaning, pragmatics, phenomenology, absence*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

Frege, G. (1892/1948). On Sense and Reference. *The Philosophical Review, 57*(3), 209–230.

Grice, H. P. (1975). Logic and Conversation. In *Syntax and Semantics, Vol. 3: Speech Acts* (pp. 41–58). New York: Academic Press.

Horn, L. R. (1989). *A Natural History of Negation*. Chicago: University of Chicago Press.

Husserl, E. (1983). *Ideas Pertaining to a Pure Phenomenology and to a Phenomenological Philosophy (Ideas I)*. The Hague: Martinus Nijhoff.

Sartre, J.-P. (2003). *Being and Nothingness*. London: Routledge.

Wittgenstein, L. (2009). *Philosophical Investigations*. Oxford: Wiley-Blackwell.

Арутюнова, Н. Д. (1988). *Типы языковых значений: Оценка, событие, факт*. Москва: Наука.

Бенвенист, Э. (1974). *Общая лингвистика*. Москва: Прогресс.

Гуссерль, Э. (2024). *Логические исследования*. Москва: Академический проект.

Лайонс, Дж. (1978). *Введение в теоретическую лингвистику*. Москва: Прогресс.

Падучева, Е. В. (1985). *Высказывание и его соотнесённость с действительностью*. Москва: Наука.

Соссюр, Ф. де (1977). *Курс общей лингвистики*. Москва: Прогресс.

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 120-130
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.120

СПОСОБЫ ВЫРАЖЕНИЯ ОПРОВЕРЖЕНИЯ В НАУЧНОМ ДИСКУРСЕ: МЕЖЪЯЗЫКОВОЕ СИНТАКСИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ В АНГЛИЙСКОМ, РУССКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

РУЗАННА КАРАПЕТЯН*
Ереванский государственный университет

В статье рассматриваются синтаксические способы выражения опровержения в научном дискурсе наматериале английского, русского и армянского языков. Актуальность исследования обусловлена тем, что при значительном внимании к лексическим и прагматическим средствам научной полемики синтаксическая организация опровержения до настоящего времени остаётся недостаточно изученной, особенно в межъязыковой перспективе и применительно к армянскому научному дискурсу.

Целью работы является выявление и сопоставительный анализ устойчивых синтаксических моделей, посредством которых в научных текстах оформляется опровержение и контраргументация. Исследование носит теоретико-аналитический характер и опирается на дискурсивно-функциональный подход к синтаксису, а также на положения теории аргументации. Материалом послужили фрагменты письменных научных текстов открытого доступа из различных дисциплин, отобранные для качественного анализа.

В результате исследования показано, что опровержение в научном дискурсе реализуется преимущественно через структурно организованные синтаксические механизмы, включающие уступительные и противопоставительные придаточные конструкции, подчинённые структуры с семантикой ограничения, синтаксическое дистанцирование и формы отрицания с модально-оценочной нагрузкой. Выявлены как универсальные тенденции, характерные для всех трёх языков, так и устойчивые языково-специфические различия, отражающие особенности национальных традиций научной аргументации.

Полученные результаты подтверждают положение о том, что синтаксис выступает одним из ключевых инструментов реализации научного опровержения и играет важную роль в обеспечении аргументативной строгости и дискурсивной кооперативности академического текста.

Ключевые слова: *научный дискурс, синтаксис опровержения, контраргументация, синтаксические модели, межъязыковой анализ, аргументативные конструкции, дискурсивно-функциональный подход*

* **Рузанна Карапетян** – кандидат филологических наук, доцент кафедры английского языка № 1 ЕГУ
Ռուզաննա Կարապետյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի դոցենտ
Ruzanna Karapetyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the YSU Chair of № 1 of English Language
E-mail: rkarapetyan@ysu.am https://orcid.org/0009-0007-8465-8852

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 17.02.2026
Գրախոսվել է՝ 19.02.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

1. Введение

Օրինակներ՝ «Երկու օր անց Վրաց թագավորը նամակ տվեց *սեպուհ* դեսպանին՝ Վարդանին ուղղած» (Դ. Դեմիրճյան, Վարդանանք): Բառն այստեղ ունի փոխաբերական նշանակություն՝ «գերադաս, գլխավոր»: «Իշխան, *սեպուհ* զենք-զրահով շողշողում են, ու կրկին/Հնչում են երգ, վին ու փանդիռ, աղջիկներն են կաքավում... Անրջանքից հիանում ես, արթանցումից ես ցավում» (Պ. Սևակ, Պոեմներ): «Մի փոքր հեռու գնա՛, տե՛ր սեպուհ, դեպի Երվանդունիք, այնտեղ կտեսնես նրա ձիաների, ջորիների և ավանակների երամակները և կհիանաս նրանց վրա նայելիս» (Րաֆֆի, Սամվել):

Արևմտյան Հայաստանում կա լեռ *Սեպուհ* անվանումով՝ «Արևը ծանրացել էր Սեպուհ լեռան ուսին, և արյուն էր ծորում հորիզոնի վրա» (Բ. Վերդյան, Ծաղիկներս մնացին հեռվում):

Սեպուհ-ը բառիմաստի նեղացումով՝ տղամարդու հատուկ անուն է՝ «Մելգոնեանի վաստակաշատ ուսուցիչ պրն. Սեպուհ Աբգարեանի առաջնորդութեամբ կ՚աշխատինք երգել Տէրունական աղօթքը….» (Ազգ, 2008.05.03): *Սեպուհ* արմատից հայերենում բաղադրված են *սեպուհական* (որից առաջացել է *սեփական* բառը), *սեպուհություն, սեպուհուհի* ՝ «1. կին սեպուհ, 2. սեպուհի կին» բառերը:

Վզուրկ/վզրուկ < պարսկ. buzurg՝ միջ. պարսկ. vuzurg՝ «մեծ»՝ պատվանուն հին Պարսկաստանում» (Միհրներսեհի տիտղոսը միջին պարսկերեն, որ թարգմանվել է հայերեն *մեծ*՝ Միհրներսեհի *մեծ* հազարապետ) (ՀԲԲ): Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկում Միհրներսեհի նամակի վերնագիրը կրում է նրա տիտղոսը՝ Վզուրկ հրամանատար Երան և Աներան», որ հայոց պատասխանում արտահայտված է արդեն հայերեն բառերով «մեծի հազարապետիդ Արեաց և Անարեաց»[14]: Մեկ այլ օրինակ՝ «Եւ ամենայն վզրուկքն և պատուական նախարարքն... ամաչացեալ կորանային և ընդ երկիր պշնուին» (Եղիշէ, 88):

Փադիշահ /փատիշահ < պարսկ. patishah՝ pati – տեր, պարոն + shah – շահ (ՕԲԲ, 589): «պատմ. Մերձավոր և Միջին Արևելքի պետությունների միապետները և նրանց տրվող տիտղոսները», հատկապես՝ պարսկական և օսմանյան թագավորներ: Հայերենում հանդիպում է նաև փատիշահ տարբերակը: ՀԲԲում *Փադիշահ* գլխաբառի բացատրությունը հղում է *Փատիշահ* -ին հետևյալ բացատրությամբ՝ *ընդհանրապես թագավոր, մասնավորապես՝ պարսից և օսմանցոց թագավորներ* (ՀԲԲ, 4, 490): ՀԱԲ-ում *փադիշահ* տարբերակը չի արձանագրված, այլ *փատիշահ* է, որն էլ հղված է *փաթշահ* տարբերակին՝ «թագավոր» նշանակությամբ: Ըստ Աճառյանի՝ պարսկերեն pādšāh կամ pādišāh բառերում *թ*-ն առաջացել է հաջորդ *շ*-ի ազդեցությամբ (ՀԱԲ, 4, 469):

Օրինակներ՝ «Մի անգամ փադիշահ Ակբարին ներկայացավ մի ոմն վաճառական և բերեց ազնվարյուն, արագավազ արաբական նժույգների մի ամբողջ երամակ» («Երեկոյան Երևան» (օրաթերթ), 1964.04.11):

Ժամանակակից պարսկահայ բանաստեղծուհի Վիոլետ Գրիգորյանը շատ հմտորեն գործածել է իրանական ծագման կոչում-տիտղոսներն իր մի պոեմում՝ «Բազմի՛ր գահիդ, իմ փադիշահ, ծոցիս շահիդ, գոգիս փաշա, շահինշահն ես այս գիշերվա, ա՛խ, մաշշալլա՛հ....» (Վիոլետ Գրիգորյան, Հարեմի վարդ, 2005):

Ժողովրդախոսակցական լեզվում գերիշխում է փադիշահ տարբերակը:

---

[14] Հայտնի է, որ հույները բարբարոսներ էին անվանում օտար ազգերին: Պարսիկներն օտարներին անվանում էին *անարիներ*՝ ոչ արիներ, իրանցիներ և ոչ իրանցիներ: *Երան և աներան* արտահայտությունը նշանակում էր Իրան և Ոչ-Իրան (տե՛ս **Եղիշե,** Վարդանի և հայոց պատերազմի մասին, «Հայաստան» հրատ., Եր., 1971, էջ 190, ծան. 18):

Ֆառաշ <պարսկ. farrāš՝ «պալատի ստորին պաշտոնյա, 2. Պարսիկ իշխանավորի տրամադրության տակ ծառա, որ նրա պատվերները կատարում է» (ՀԲԲ, 4, 623):

Օրինակները, ըստ «Արևակ» արևելահայերենի կորպուսի, հիմնականում Խ. Աբովյանի ստեղծագործություններից են:

Էսքան մեծամեծ մարդիկ՝ խաներ, բեկեր, աղեք, ֆառաշ, մոլլա, ախունդ, էս ի՞նչ են էստեղ կանգնել, հավաքվել, չե՞ս ուզում դու էլ մի աչքդ քցես, նայե՞ս» (Խ. Աբովյան.Վերք հայաստանի, 1841):

Մեկ այլ օրինակ՝

Տեր աղվեսին ասավ,
Ֆառաշ չի՞ պետքը, որ հարկն հավաքի,
Էդ գործն էլ թո՛ղ դու՝ իմ վզիս ըլի,
Բանը թամամեց (Խ.Աբովյան, Պարապ վախտի խաղալիք, 1841):

Բերենք վերոնշյալ բառերի քանակը ըստ «Արևակ» արևելահայերենի կորպուսի. բդեշխ՝ 49 համատեքստ, 21 տեքստ, խոջա՝ 656 համատեքստ, 86 տեքստ, մարզպան՝ 282 համատեքստ, 10 տեքստ, միրզա՝ 667 համատեքստ, 125 տեքստ, շահ՝ 3009 համատեքստ, 1192 տեքստ, շահիդ՝ 14 համատեքստ, 10 տեքստ, շահնա՝ 8 համատեքստ, 5 տեքստ, շահնշահ՝ 67 համատեքստ, 25 տեքստ, սարդար՝ 168 համատեքստ, 76 տեքստ, սեպուհ՝ 692 համատեքստ, 235 տեքստ, վզուրկ/վզրուկ՝ 2 համատեքստ, 2 տեքստ, փադիշահ՝ 31 համատեքստ, 17 տեքստ, ֆառաշ՝ 4 համատեքստ, 3 տեքստ (բերված են բառերի միայն ուղիղ ձևերը):

Եզրակացություն

Հատկական փոխառությունները սովորաբար տվյալ երկրին, ժողովրդին բնորոշ բառեր են՝ իրույթներ, որ փոխառվում են՝ տվյալ ժողովրդի մտածողության, մշակույթի, կենցաղի յուրահատկությունները նշելու համար: Իրանական ժողովուրդների հետ հայերի կապը շատ սերտ է եղել, որ գնում է դեպի դարերի խորքը: Բնականաբար, շատ բառեր, հատկապես պետական կառավարման մարմինների, կոչումների անվանումներն ընդհանուր են եղել, քանի որ վարչատարածքային անվանումներն ընդհանուր էին երկու երկրների համար պարսկական տիրապետության ժամանակ, որ տևել է բավականին երկար ժամանակ:

Ինչպես բոլոր բառերը, այնպես էլ հատկական փոխառություններն իրենց կենսագրությունն ունեն: Որոշ բառեր յուրացվում են փոխառու ժողովրդի կողմից, դառնում նրա բառապաշարի անբաժան մասը, մի մասն էլ կա՛մ իմաստափոխվում, ձեռք է բերում իմաստային նրբերանգներ, կա՛մ դառնում է միջազգային բառապաշարի մաս:

Դիտարկված բառերի մի մասը հայերենում արդեն յուրացված փոխառություն է՝ *բդեշխ, միրզա, մարզպան, սեպուհ, սարդար* և այլն, մյուս մասը համեմատաբար քիչ է հանդիպում՝ *խոջա, շահնա, շահնշահ, փադիշահ* և այլն: Շահիդ բառով այժմ անվանում են մահապարտ-ահաբեկիչներին:

СИЛЬВА ПАПИКЯН – *Наблюдения за некоторыми экзотизмами семантической группы «форма обращения – звание – титул» иранского происхождения.* – В армянской лингвистике исследованию экзотизмов уделено мало внимания. Их также называют *инородными словами, иностранными словами, экзотизмами*. Экзотизмами обычно пользуются при отсылке к явлениям (реалиям), характерным для того или иного народа, относящимся к его истории, географии, обычаям. Они встречаются главным образом в переводной литературе, прессе или в произведениях, посвященных данному народу: исторических трудах, учебниках и т. д. Эти заимствования можно классифицировать по различным характеристикам – происхождению, семантическим группам, частоте, времени и т. д. Среди экзотизмов, проникших в армянский язык значительное количество составляют слова семантической группы «форма обращения – звание – титул» заимствованных из разных языков – русского, турецкого, иранских, арабского и европейских. В статье впервые рассматриваются перешедшие из иранских языков в армянский заимствованные слова семантической группы «форма обращения – звание – титул», имеющие определенную частоту употребления.

Ключевые слова: *экзотизм, реалия, переводческая литература, иранские языки, интернациональные слова*

SILVA PAPIKYAN – *Observations on Some Exoticisms of Iranian Origin in the Semantic Group "Form of Address – Rank – Title".* – Little attention has been paid to the study of specific borrowings in Armenian linguistics. They are also called foreign words, loanwords, or exoticisms. Exoticisms are usually used when referring to phenomena (realia) characteristic of a particular people, relating to its history, geography, and customs. They are found mainly in translated literature, the press, or in works dedicated to that nation - historical works, textbooks, etc. These borrowings can be classified according to various characteristics – origin, semantic groups, frequency, time, etc. Among the exoticisms that have penetrated the Armenian language, a significant number are words from the semantic group "form of address - rank - title" borrowed from various languages - Russian, Turkish, Iranian, Arabic and European. The article examines for the first time the borrowed words of the semantic group "form of address - rank - title" that passed from Iranian languages into Armenian and have a certain frequency of use.

Key words: *exoticism, realia, translated literature, Iranian languages, international words*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները:

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ:

Գրականության ցանկ / References

«Արևակ» արևելահայերենի կորպուս [*Arevak* arevelahayereni korpus. http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am]:

Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Եր. , 1984 [Aghayan Ed., Yndhanur ev haykakan baragitutʿun, Yerevani hamalsarani hrat., Yer., 1984] (in Armenian):

Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1976 [Aghayan Ed., Ardi hayereni batctrakan bararan, «Hayastan» hrat., Yer., 1976 (in Armenian)]:

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., հ. 3, Եր., 1977 [Acharyan H., Hayeren armatakan bararan, Yerevani hamalsarani hrat., 3, Yer., 1977] (in Armenian):

Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ., Ավետիսյան Լ. , Հայոց լեզվի ուղեցույց, ԵՊՀ հրատ., Եր., 2017 [Avetisyan Yu., Telyan L. Sargsyan L., Avetisyan L., Hajotc lezvi ughetcuytc, YPH hrat., 2017] (in Armenian):

Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, «Հայաստան» հրատ., Եր., 1971 [Egishe,Vardani ev hayotc paterazmi masin, «Hayastan» hrat., Yer., 1971] (in Armenian):

Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, «Զանգակ» հրատ., Եր., 1987 [Khlghatyan F., Zhamanakakitc hayotc lezu, «Zangak-97» hrat.,Yer., 2009] (in Armenian):

Խորենացի Մովսես, Հայոց պատմություն, Երևանի համալսարանի հրատ., Եր., 1981 [Khorenaci Movses, Hayotc patmuťyun, Yerevani hamalsarani hrat., Yer.,1981] (in Armenian):

Հայկական սովետական հանրագիտարան, ՀՍՍՌ պետհրատ, հ. 2, Եր., 1976 [Haykakan sovetakan hanragitaran, HSSR pethrat., h.2, 1976, 7, 1981] (in Armenian):

Հայոց լեզվի բարբառային բառարան, «Գիտություն» հրատ., հ. 3, Եր., 2004 [Hayotc lezvi barbarayin bararan, «Gituťyun» hrat., h 3, Yer., 2004] (in Armenian):

Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Եր., հեղինակային հրատ., 2011 [Hayrapetyan A., Otar bareri bararan, Heghinakayin hrat., Yer., 2011] (in Armenian):

Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, ՀՍՍՌ պետհրատ, Եր., 1944-45 թթ. [Malkhaseantc S., Hayeren batcatrakan bararan, HSSR pethrat., Yer., 1944-1945] (in Armenian):

Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր. համալսարանի հրատ., Եր., 1993 [Margaryan A., Zhamanakakitc hayotc lezu, Yerevani hamalsarani hrat., Yer., 1993 (in Armenian):

Գյանջևի Նիզամի, Լեյլի և Մեջնուն, Եր., 1947 [Gyanjievi Nizami, Leyli yv Mejnun, Yer., 1947] (in Armenian):

Պապիկյան Ս., Դիտարկումներ «հատկական փոխառություն» տերմինի մասին, «Բառագիտության արդի խնդիրներ» (հանրապետական գիտաժողով), Եր., 2025, էջ 89-95 [Papikyan S., Ditarkumner *hatkakan pʿokharutʿyun* termini masin, Baragituťyan ardi khndirner (hanrapetakan gitazhoghov), Yer., 2025, ej 89-95] (in Armenian):

Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1987 [Petrosyan H., Hayerenagitakan bararan, «Hayastan» hrat., Yer., 1987 (in Armenian):

Абаев В., О принципах этимологического словаря, Вопросы языкознания, 1952, № 5 [Abaev V.I, O printcipach etimologicheskogo slovarya. Voprosi yazikoznaniya, 1952, № 5, s. 56-69] (in Russian).

Адонц Н., Армения в эпоху Юстиниана: Политическое состояние на основе нахарарскаго строя. СПб., типография Императорской Академии Наук, 1908 [Adontc N., Armenia v epokhu Yustiniana: Politicheskoe sostoyanie na osnsove nakhararskogo stroya. Sankt-Peterburg, tipografiya Impertorskoy Akademi nauk, 1908] (in Russian).

Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն
2026, Vol. 17, No. 2 (50), հունիս, 142-154
https://doi.org/10.46991/BYSU.B/2026.17.2.142

ՆՇԱՆԱՅԻՆ ԲԱԶՄԱՇԵՐՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ. ԼԵԶՈՒ, ՊԱՏԿԵՐ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏՂԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

Հոդվածում վերլուծվում է Հայաստանում թվային մեդիայի նշանագիտական (սեմիոտիկ) տարածքը՝ որպես ինքնուրույն հետազոտական ոլորտ: Հայկական թվային մեդիան դիտարկվում է որպես անցումային հասարակության պայմաններում ինքնության կառուցման, հասարակական տրավմատիկ փորձի թվային յուրացման և գլոբալ մեդիա հոսքերի հետ փոխազդեցության ձևավորման առանցքային միջավայր:

Ուշադրության կենտրոնում են թվային հարթակներում ձևավորվող հաղորդակցական և բովանդակային գործելակերպերը, որոնք համադրում են ավանդական պատկերագրական կոդերը (արմենագիր, խաչքարային զարդամոտիվներ, պատմական կերպարներ) թվային մշակույթի լեզվական և տեսողական ձևերի հետ (մեմեր, հաջողության պատմություններ, կարճ տեսահոլովակներ):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայկական թվային մեդիայի նշանագիտական համակարգը բնութագրվում է քաղաքականացված բազմաձևությամբ, պատմական ինդեքսների համադրական կիրառմամբ և տեղական հաղորդակցական գործելակերպերի արագ ձևավորմամբ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը նշանագիտության և թվային միջավայրի հումանիտար հետազոտությունների սկզբունքներն են: Տվյալների բազան ներառում է սոցիալական ցանցերում լայնորեն տարածված բովանդակության, առցանց մեդիա նախագծերի և պետական թվային հաղորդակցության նյութերի որակական վերլուծությունը:

* **Աստղիկ Ավետիսյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ մեդիաուսումնասիրությունների և նշանագիտության ամբիոնի դոցենտ, Հայկական PR ասոցիացիայի նախագահ
Астхик Аветисян – кандидат филологических наук, доцент кафедры медиаисследований и семиотики ЕГУ, президент Армянской ассоциации связей с общественностью
Astghik Avetisyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at the YSU Chair of Media Studies and Semiotics, President of the Armenian PR Association
astghikavetisyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0009-0009-9564-2105

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.04.2026
Գրախոսվել է՝ 18.04.2026
Հաստատվել է՝ 09.06.2026
© The Author(s) 2026

Բանալի բառեր – *Հայաստան, թվային մեդիա, նշանագիտություն, թվային մշակույթ, սոցիալական ցանցեր, մեմեր, ինքնություն, բազմաձևություն, պատմական նարատիվ, հաղորդակցություն, հանրային հաղորդակցություն*

Ներածություն

Ժամանակակից Հայաստանում թվային մեդիան վերածվել է ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոցի, այլև հանրային իրականության կառուցման, սոցիալական իմաստների ձևավորման և քաղաքական գործընթացների մեկնաբանման առանցքային միջավայրի: Թվային հարթակներն այսօր գործում են որպես մասնակցային հաղորդակցության տարածք, որտեղ օգտատերերը միաժամանակ և՛ բովանդակության սպառողներ են, և՛ ստեղծողներ՝ ձևավորելով հանրային քննարկումների նոր ձևաչափեր (Jenkins, Ito & boyd, 2015):

1. **Հայկական թվային մեդիան որպես հետազոտական առարկա**

Հայկական թվային միջավայրը ձևավորվել է անկախությունից հետո համացանցի տարածման, սոցիալական ցանցերի ինտենսիվ զարգացման և հասարակական շարժումների ազդեցությամբ: Հատկապես 2018 թվականի հանրային, քաղաքական շարժումների ընթացքում Facebook-ի ուղիղ հեռարձակումները, Twitter-ի հեշթեգային քննարկումները և Telegram ալիքների արագ տեղեկատվական հոսքերը դարձան հանրային մասնակցության և մոբիլիզացիայի կարևոր գործիքներ: Այս իրադարձությունները ցույց տվեցին, որ թվային մեդիան կարող է վերափոխել ավանդական քաղաքական հաղորդակցությունը և ստեղծել նոր հանրային միջավայր՝ ապակենտրոնացված և արագ արձագանքող (Avetisyan A.Sh., 2024):

Հետագա տարիներին տարածաշրջանային անվտանգային զարգացումները, մասնավորապես 2020 թվականի պատերազմը, ուժեղացրին թվային հարթակների դերը՝ դրանք դարձնելով տեղեկատվական պայքարի և խորհրդանշական ներկայացումների միջավայր: Սոցիալական ցանցերում տարածվող լուսանկարները, տեսանյութերը և հիշատակի հրապարակումները ձևավորեցին թվային հիշողության նոր մշակույթ, որտեղ անհատական պատմությունները միավորվում էին հավաքական պատմության մեջ: Այս գործընթացը համապատասխանում է մեդիացված իրականության կառուցման այն մոդելներին, որոնք նկարագրում են Couldry-ն և Hepp-ը՝ ընդգծելով մեդիայի դերը սոցիալական իրականության վերարտադրության մեջ (Couldry & Hepp, 2017):

Հայկական թվային մեդիայի առանձնահատկությունն այն է, որ գլոբալ թվային մշակույթի ձևերն այստեղ ակտիվորեն տեղայնացվում են: Օրինակ՝ միջազգային մեմային ձևաչափերը հաճախ համադրվում են հայկական պատմական կերպարների կամ քաղաքական իրադարձությունների հետ՝ ստեղծելով տեղական մշակութային հումոր և քննադատություն: TikTok-ում և

Instagram-ում տարածված կարճ տեսանյութերում հաճախ օգտագործվում են ազգային երաժշտություն, բարբառային խոսք կամ ավանդական խորհրդանիշներ՝ միաժամանակ պահպանելով գլոբալ ձևաչափերը: Նման երևույթները կարելի է մեկնաբանել որպես թվային մշակույթի տեղայնացման գործընթաց, որը նկարագրված է Shifman-ի մեմային մշակույթի տեսություններում (Shifman, 2014):

Հայկական թվային միջավայրի նշանագիտական կառուցվածքը պայմանավորված է մի շարք փոխկապակցված գործոններով.

Լեզվական և տարածքային առանձնահատկություններ – փոքր լեզվական համայնքը նպաստում է բովանդակության արագ տարածմանը և հանրային թեմաների արագ համախմբմանը: Օրինակ՝ հանրային իրադարձությունների շուրջ ձևավորվող հեշթեգները հաճախ կարճ ժամանակում դառնում են համազգային քննարկման գործիք:

Սփյուռքի ակտիվ ներգրավվածություն – արտերկրի հայ համայնքները մասնակցում են նույն թվային հարթակներին՝ ստեղծելով բազմակենտրոն հաղորդակցական տարածք, որտեղ նույն թեմաները քննարկվում են տարբեր մշակույթների տեսանկյուններից:

Հակամարտային և անվտանգային միջավայր – ռազմական և քաղաքական ճգնաժամերը ուժեղացնում են խորհրդանշական հաղորդակցության դերը՝ թվային պատկերներն ու պատմությունները վերածելով հավաքական ինքնության կառուցման գործիքների:

Քաղաքական անցումային գործընթացներ – հասարակական բևեռացվածությունը և ակտիվ քաղաքացիական մասնակցությունը խթանում են քննադատական և մասնակցային հաղորդակցական ձևերի զարգացումը՝ ստեղծելով նոր հանրային քննարկումների մշակույթ:

Այս համատեքստում հոդվածի նպատակն է համակարգված վերլուծել հայկական թվային մեդիայի նշանագիտական դինամիկան՝ ուսումնասիրելով լեզվական և տեսողական նշանների փոխգործակցությունը, ինքնության կառուցման մեխանիզմները, հավաքական հիշողության թվային ձևավորումը և հանրային քաղաքական հաղորդակցության նոր ձևերը:

2. Հայկական թվային մեդիայի նշանագիտական մոդելի հիմնական բնորոշիչները

Հայկական թվային մեդիան ձևավորում է բազմաշերտ նշանագիտական համակարգ, որտեղ լեզվական, տեսողական և մշակութային կոդերը գործում են փոխկապակցված՝ ստեղծելով հանրային իմաստաստեղծման յուրահատուկ միջավայր: Այս համակարգը միաժամանակ ներառում է գլոբալ թվային մշակույթի ձևերը և տեղական պատմական ու մշակութային խորհրդանիշները՝ ձևավորելով **հիբրիդային հաղորդակցական մոդել**:

Նշանագիտության տեսանկյունից թվային միջավայրում ձևավորվող հաղորդակցական միավորները կարող են դիտարկվել որպես բազմաստիճան

նշաններ, որոնք ունեն ինդեքսային (պատմական կամ իրադարձային հղումներ), խորհրդանշական (մշակութային իմաստներ) և պատկերային (տեսողական ներկայացումներ) գործառույթներ (Peirce, 1998; Kress & van Leeuwen, 2006)։ Հայկական թվային տարածքում այդ տարրերը հաճախ միավորվում են մեկ հաղորդագրության մեջ, օրինակ՝ քաղաքական մեմերում կամ հիշատակի հրապարակումներում, որտեղ համատեղվում են պատմական հղումներ, ազգային խորհրդանիշներ և ժամանակակից հումորային ձևեր։ Թվային հաղորդակցության այս հիբրիդային բնույթը նպաստում է հանրային խոսույթի արագ փոփոխությանը, նոր հաղորդակցական գործելակերպերի ձևավորմանը և հասարակական ինքնության վերաիմաստավորմանը։ Հայկական թվային միջավայրում առանձնանում են հետևյալ հիմնական նշանագիտական բնորոշիչները.

♦ **Պատմական ինդեքսների ինտեգրում**

Թվային տեքստերում պատմական հղումները (Ցեղասպանություն, Արցախյան հակամարտություն, պատմական տարածքներ) օգտագործվում են որպես քաղաքական և մշակութային գործող ինդեքսներ (Peirce, 1998)։ Օրինակ՝ 2020 թվականի պատերազմին #Սարդարապատ և #Մայիսյանհաղթանակ հեշթեգների տարածումը ստեղծեց սեմիոտիկ կամուրջ՝ ներկա իրադարձություններին հաղորդելով պատմական նշանակություն։

♦ **Պատկերագրական և գրաֆիկական ժառանգության թվայնացում**

Հայկական թվային մեդիայի նշանագիտական համակարգում կարևոր դեր ունի ազգային պատկերագրական ժառանգության՝ հատկապես զարդանախշային, խորհրդանշական և դեկորատիվ-գրաֆիկական կոդերի թվային վերարտադրությունն ու վերաիմաստավորումը։ Թվային միջավայրում մշակութային նշանները հանդես են գալիս ոչ միայն որպես էսթետիկ տարրեր, այլև որպես ինքնության, պատմական շարունակականության և խորհրդանշական կապիտալի հաղորդիչներ (Barthes, 1977; Chandler, 2017)։ Դրանք ձևավորում են վիզուալ դիսկուրս, որտեղ ազգային մշակույթը վերակոդավորվում է նոր մեդիայի բազմառեժիմային լեզվով (Kress & van Leeuwen, 2006)։

Հայկական թվային հարթակներում կարելի է առանձնացնել ազգային պատկերագրության թվայնացման երկու հիմնական միտում.

ա) Պահպանողական-կանոնական թվայնացում

Այս մոդելը բնորոշ է պետական և ինստիտուցիոնալ հաղորդակցությանը, որտեղ ավանդական զարդանախշերը, ազգային խորհրդանիշները և պատմական պատկերագրական կոդերը կիրառվում են իրենց ավանդական իմաստային դաշտի պահպանմամբ։ Պաշտոնական կայքերում, մշակութային ծրագրերի վիզուալներում և պետական միջոցառումների դիզայնում հաճախ օգտագործվում են խաչքարային նախշեր, ձեռագրային մանրանկարների մոտիվներ, ազգային գունային համակարգեր։ Նման մոտեցումը նպատակ ունի

հաստատել ինստիտուցիոնալ լեգիտիմություն, մշակութային շարունակականություն և ազգային ինքնության կայուն նարատիվ (Hall, 1997)։

բ) Ստեղծագործական-դեկոնստրուկտիվ թվայնացում

Սոցիալական մեդիայի, բրենդային հաղորդակցության և ժամանակակից դիզայնի ոլորտում ազգային զարդանախշերը վերաիմաստավորվում են գրաֆիկական նոր լեզվով՝ ստանալով հիբրիդային, երբեմն խաղային կամ մինիմալիստական ձևեր։ Օրինակ՝ հայկական գինու բրենդների (օր.՝ Areni) ապրանքապիտակներում միջնադարյան պատկերագրական տարրերը համադրվում են ժամանակակից տպագրության և մոդեռն կոմպոզիցիայի հետ՝ ձևավորելով գլոբալ շուկայում ճանաչելի, բայց ազգային ինքնությամբ բրենդային պատկեր։ Նման մոտեցումը բնորոշ է նաև սոցիալական ցանցերի հայկական էջերին, որտեղ ավանդական զարդանախշերը վերածվում են թվային ֆոնային ձևերի, ինֆոգրաֆիկական տարրերի կամ մեմային վիզուալների՝ ընդլայնելով դրանց սեմիոտիկ գործառույթը։

Այսպիսով, հայկական թվային մեդիայում զարդանախշային և պատկերագրական կոդերի թվայնացումը երկակի գործընթաց է՝ միաժամանակ պահպանելով մշակութային ժառանգությունը և ձևավորելով նոր, դինամիկ վիզուալ ինքնություն, որը համադրում է ազգային ավանդույթն ու գլոբալ թվային մշակույթը։

♦ Քաղաքականացված բազմառեժիմայնություն

Թվային մեդիայի բազմառեժիմայնությունը (multimodality)՝ լեզվական տեքստերի, տեսանյութերի, աուդիո հաղորդագրությունների, ստատիկ պատկերների, ինֆոգրաֆիկաների և ինտերակտիվ ձևաչափերի համատեղ կիրառումը, հայկական տեղեկատվական միջավայրում հաճախ ստանում է քաղաքական բնույթ։ Ըստ Kress և van Leeuwen-ի (2006)՝ բազմառեժիմային հաղորդակցությունը ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոց է, այլև իմաստների կառուցման համակարգ, որտեղ տարբեր նշանային ռեժիմները միասին ձևավորում են համոզման և ազդեցության մեխանիզմներ։

Հայկական քաղաքական դիսկուրսում բազմառեժիմայնությունը հատկապես ակտիվանում է ընտրական գործընթացների, սոցիալական շարժումների և ճգնաժամային իրավիճակների ընթացքում։

2018 թվականի քաղաքացիական շարժումը օրինակելի դեպք է, որտեղ քաղաքական հաղորդակցությունը կառուցվեց բազմառեժիմային հարթության վրա.

- Facebook Live և YouTube ուղիղ միացումներ՝ իրական ժամանակում իրադարձությունների սիմվոլիկ ներկայացում,
- մեմեր և հումորային վիզուալներ՝ քաղաքական քննադատության դյուրամարս ձև,
- փողոցային պաստառների թվայնացված տարբերակներ, որոնք լայնորեն տարածվում էին սոցցանցերում,

- երաժշտական տեսահոլովակներ և քաղաքացիական երգեր՝ շարժման հուզական մոբիլիզացիայի համար։

2020 թվականի պատերազմական շրջանը ևս ցուցադրեց քաղաքականացված բազմառեժիմայնության ուժեղացում.

- ինֆոգրաֆիկա և քարտեզներ՝ ռազմաքաղաքական իրադարձությունների պարզաբանման համար,
- հայրենասիրական տեսահոլովակներ և վիզուալ արշավներ,
- հեշթեգային արշավներ (#ArtsakhStrong, #StopAzerbaijaniAggression), որոնք միավորում էին տեքստային և պատկերային հաղորդակցությունը։

Ընտրական քարոզարշավների ընթացքում կուսակցությունները հաճախ համադրում են կարճ տեսանյութեր, անիմացիոն գրաֆիկա, մեմային հաղորդագրություններ և ուղիղ եթերներ՝ ստեղծելով **ինտեգրված հաղորդակցական դիսկուրս**, որը նպատակ ունի ոչ միայն տեղեկացնել, այլև ձևավորել քաղաքական ինքնություն և համախմբել ընտրազանգվածը։

Այսպիսով, հայկական թվային միջավայրում բազմառեժիմայնությունը հանդես է գալիս որպես քաղաքական սեմիոտիկ ռազմավարություն, որտեղ տարբեր մեդիա ռեժիմները փոխլրացնում են միմյանց՝ ստեղծելով համոզիչ և էմոցիոնալ ազդեցություն ունեցող հաղորդակցություն (Jewitt, 2014; Wodak, 2015)։

Ներքևից-վերև հաղորդակցական մշակույթի ձևավորում

Հայկական թվային մեդիան առանձնանում է «ներքևից-վերև» (bottom-up) հաղորդակցական մշակույթի զարգացմամբ, որտեղ հաղորդակցության նոր կանոնները ձևավորվում են ոչ թե միայն ինստիտուցիոնալ դերակատարների, այլև հիմնականում օգտատերերի ստեղծած բովանդակության միջոցով։ Jenkins-ի (2006) մասնակցային մշակույթի տեսության համաձայն՝ թվային միջավայրում օգտատերերը դառնում են ոչ միայն սպառող, այլև իմաստ արտադրողներ, որոնք վերաձևակերպում են մշակութային նշանները։

Հայկական թվային հաղորդակցությունում կարելի է առանձնացնել մի քանի առանցքային ուղղություն.

ա) Հայկական մեմաբանություն և քաղաքական հումոր

Գլոբալ մեմային ձևաչափերը տեղայնացվում են հայկական քաղաքական և մշակութային համատեքստում։

- 2018 թվականի շարժման ընթացքում լայն տարածում գտան քաղաքական կերպարների լուսանկարների վրա կառուցված մեմերը,
- խորհրդարանական քննարկումների հատվածներից ստեղծված հումորային տեսանյութեր,
- հանրային գործիչների արտահայտությունները վերածվում էին կրկնվող մեմային նշանների։ Այս երևույթը ստեղծում է «ժողովրդական սեմիոտիկա», որտեղ քաղաքական քննադատությունը տարածվում է ոչ պաշտոնական լեզվով։

բ) Հայերենի լեզվական բազմաձևություն թվային միջավայրում

Թվային հարթակներում նկատվում է լեզվական հիբրիդացում.

- գրաբարյան արտահայտությունների օգտագործում հումորային կամ խորհրդանշական համատեքստում,
- աշխարհաբարի, բարբառների և խոսակցական լեզվի համադրություն,
- հայերեն-անգլերեն խառը տեքստեր («հայթեք» բառապաշար)՝ հատկապես երիտասարդական քաղաքական քննարկումներում: Լեզվի այս ճկուն օգտագործումը ձևավորում է նոր հաղորդակցական ինքնություն և խմբային պատկանելության նշաններ (Androutsopoulos, 2014):

գ) Վիրուսային ձևաչափերի տեղայնացում

TikTok, Instagram և YouTube հարթակներում գլոբալ վիդեո ձևաչափերը հաճախ հարմարեցվում են ազգային և քաղաքական թեմաներին.

- ազգային տոների (Անկախության օր, Վարդավառ) շուրջ տեղեկատվական և ժամանցային տեսանյութեր,
- ավանդական խոհանոցը և մշակութային խորհրդանիշները քաղաքական կամ հասարակական ուղերձների համատեքստում,
- սոցիալական ակցիաների և բողոքների մասին կարճ, արագ տարածվող տեսանյութեր:

Այս գործընթացների արդյունքում ձևավորվում են հաղորդակցական նոր կոնվենցիաներ, որոնք համադրում են ավանդական մշակութային կոդերը և գլոբալ թվային մշակույթի ձևաչափերը՝ ստեղծելով հայկական թվային հանրային դիսկուրսի ինքնատիպ սեմիոտիկ միջավայր (Castells, 2012; Papacharissi, 2015):

3. Թվային մեդիայի սեմիոտիկ գործառույթները հայկական միջավայրում

Հայկական թվային մեդիան չի սահմանափակվում միայն տեղեկատվության փոխանցմամբ. այն **նշանագիտական համակարգ** է, որտեղ նշաններն ու պատկերները ծառայում են սոցիալական, քաղաքական և մշակութային մի շարք գործառույթների: Այս բաժնում քննարկվում են հայկական թվային միջավայրում սեմիոտիկ գործառույթների հիմնական ուղղությունները՝ կիրառված օրինակներով:

♦ **Կոլեկտիվ հոգեբանական ցնցումների (տրավմատիկ փորձերի) թվային յուրացում**

Հայկական թվային միջավայրում սեմիոտիկան հաճախ ուղղված է **կոլեկտիվ տրավմաների յուրացմանը և մշակմանը**, մասնավորապես 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո: Սա ընթանում է մի քանի մակարդակով:

ա. Տեսողական (վիզուալ) փաստաթղթավորում

Պատերազմի ընթացքում և դրանից հետո թվային հարթակները համալրվում են լուսանկարներով, տեսանյութերով և դրվագներով, որոնք ներկայացնում են իրական ռազմական գործողություններ, քաղաքացիական ենթակառուցվածքների վնասներ և տեղացի բնակչության փորձը: Այս պատկերները

հանդես են գալիս որպես ուժեղ ինդեքսային նշաններ՝ անմիջականորեն ազդելով դիտողի զգայական ընկալման վրա և ստեղծելով կոնկրետ ժամանակ-վայրի հետ կապ: Օրինակ՝ սոցիալական ցանցերում տարածված տեսանյութերը, որտեղ երևում էին դիրքային գործողություններ կամ տեղացիների ու զինվորների առօրյան պատերազմի օրերին, ստեղծում էին ոչ միայն տեղեկատվական արժեք, այլև կոլեկտիվ արձագանք՝ աջակցություն կամ համերաշխություն արտահայտելու համար:

բ. Կոլեկտիվ սգո և հիշատակի պրակտիկաներ

Թվային միջավայրը ծառայեց հիշողության մշակութային տարածք ստեղծելուն: Վիրտուալ հուշակամարները, զոհերի հիշատակի գրառումները և հիշատակի էֆեմերային բովանդակությունը (օրինակ՝ սոցիալական ցանցերում #պատերազմ, #զոհեր, #անմահ_հերոս և այլ հեշթեգներ) թույլ են տալիս հասարակությանը համատեղ կիսել սգո և հիշողության փորձը՝ ստեղծելով թվային «հուշապատ» կամ հիշողության օնլայն հարթակ: Այս պրակտիկաները հաճախ ներառում են նաև լուսանկարներ զոհերի զինվորական ծառայության, հերոսական գործողությունների կամ համայնքային հուշ-միջոցառումների մասին, ինչը օգնում է թվային համայնքին պահպանելու և փոխանցելու ազգային հիշողությունը:

գ. Հումորի և երգիծանքի միջոցով հոգեբանական հաղորդակցում

Մեմերը, կարճ տեսանյութերը և հումորային այլ բովանդակությունը կատարում են կատարսիսի (հոգեբանական թոթափման) գործառույթ՝ թույլ տալով հասարակությանը արտահայտել սթրեսային և ծանր տրավմատիկ փորձը՝ առանց անմիջականորեն դիպչելու զգայարաններին: Օրինակ՝ 2020 թվականի պատերազմից հետո տարածված «Պատերազմից տուն» կամ «Հակառակորդը չի պատկերացնում» մեմերը համադրում էին կարճ տեսարաններ, կատակային տեքստեր և հայկական առօրյա համատեքստ, որոնք հնարավորություն էին տալիս բացելու քննարկում սոցիալական ցանցերում՝ նվազեցնելով անհանգստությունը և նպաստելով կոլեկտիվ հոգեբանական մշակմանը:

Այս երեք ուղղությունները միասին ստեղծում են թվային միջավայրում կոլեկտիվ տրավմայի յուրացման համալիր համակարգ, որտեղ **տեսողական, հիշողության և հումորային նշանները** համատեղ ձևավորում են նոր հաղորդակցական պրակտիկա՝ հիշողությունը վերափոխելով և ապահովելով սոցիալական մասնակցություն:

♦ Այլընտրանքային հանրային միջավայրի ձևավորում

Հայկական թվային մեդիան դարձել է **այլընտրանքային հանրային միջավայրի** հիմնական դաշտը, որտեղ ձևավորվում են հաղորդակցման նոր պրակտիկաներ և նշանային ռազմավարություններ՝ ավանդական լրատվամիջոցների սահմանափակումների և վստահելիության խնդիրների համապատկերում: Այս միջավայրը տալիս է հասարակական քննարկումների բազմազանության,

օգտատերերի անմիջական մասնակցության և քաղաքականացված հաղորդակցության հնարավորություն։

ա. Անմիջականության և ինքնահաստատման նշաններ

Թվային հարթակները հնարավորություն են տալիս օգտատերերին անմիջապես հաղորդակցվելու և ներկայացնելու իրենց տեսակետը առանց լրատվամիջոցի միջնորդության։ Օրինակ՝ ուղիղ հեռարձակումները («լայվ»-հեռարձակումներ) և բլոգերների իրադարձային ռեպորտաժները ծառայում են հենց այդ նպատակին։ 2018 թվականի «Թավշյա հեղափոխության» ժամանակ սոցիալական ցանցերում ուղիղ հեռարձակումներով ցուցադրվել է ցույցերի ընթացքը, ինչը օգտատերերին թույլ է տվել հետևել իրադարձություններին տեղում և անմիջականորեն արձագանքել՝ մեկնաբանություններով կամ հեշթեգների միջոցով։ Այս պրակտիկաները ստեղծում են ուղիղ կապ իրական իրադարձությունների հետ՝ նվազեցնելով լրատվամիջոցի միջնորդությունը։

բ. Բազմակողմանիության կրկնօրինակում

Այլընտրանքային հանրային միջավայրը հնարավորություն է տալիս միևնույն հարթակում ներկայացնելու հակամարտող կողմերի տեսակետները, նույնիսկ երբ ավանդական մեդիան քաղաքական կամ տնտեսական պատճառներով սահմանափակված է։ Օրինակ՝ Արցախյան հիմնահարցի վերաբերյալ թվային հարթակներում տարածվել են հայկական, ինչպես նաև միջազգային դիտորդների տեսանյութերն ու հոդվածները, որոնք օգտատերերին հնարավորություն են տալիս տեսնելու տարբեր կողմերի մեկնաբանություններն ու գնահատականները։ Այս կրկնօրինակումն ապահովում է **վիրտուալ բազմակարծություն**, որտեղ հասարակությունը կարող է ձևավորել սեփական եզրակացությունները՝ հիմնված բազմաթիվ աղբյուրների վրա։

գ. Քաղաքական ազդեցության նոր ձևեր

Թվային մեդիան դարձել է քաղաքական ազդեցության նոր լաբորատորիա։ Հեշթեգ արշավները, լայն տարածում ունեցող բաց նամակները և առցանց ստորագրահավաքները ծառայում են քաղաքացիների տեսակետների հանրայնացման, հանրային ճնշման և քաղաքական գործընթացներին մասնակցության նպատակին։ Օրինակ՝ 2020–2021 թվականներին՝ Արցախյան պատերազմից հետո, սոցիալական ցանցերում կազմակերպված #ՕգնիրՀայաստան, #ԿանգնեցրեքՊատերազմը հեշթեգ արշավները հրավիրեցին միջազգային հանրության ուշադրությունը, հավաքեցին նյութական աջակցություն և ստեղծեցին նոր թվային նշանային պրակտիկա՝ քաղաքականության և հանրային կարծիքի ձևավորման համար։

Այս երեք ուղղությունները միասին ստեղծում են հայկական թվային մեդիայի **այլընտրանքային հանրային միջավայրի** համակարգ, որտեղ օգտատերերի անմիջական ներգրավվածությունը, բազմակողմանի տեղեկատվության հասանելիությունը և թվային քաղաքական մասնակցության նոր մեթոդները համատեղ ձևավորում են հասարակական և քաղաքական գործընթացների նոր դինամիկա։

♦ **Մշակութային ինքնության պահպանություն և զարգացում**

Հայկական թվային մեդիան կարևոր գործառույթ է իրականացնում նաև **մշակութային ինքնության պահպանության և տարածման գործում**: Թվային հարթակները ծառայում են որպես հայաստանյան և սփյուռքահայ համայնքների հաղորդակցական, կրթական և հիշողության տարածք, որտեղ մշակութային, լեզվային և պատմական ռեսուրսները վերաիմաստավորվում և հարմարվում են նոր պայմաններին:

ա. Ժառանգության թվային վերափոխում

Թվային տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ավանդական մշակութային ժառանգությունը ներկայացնելու նոր ձևաչափերով: Վիրտուալ թանգարանների ստեղծումը, պատմական կերպարների թվային անիմացիաները և դասական գրականության էլեկտրոնային տարբերակները ոչ միայն դարձնում են ժառանգությունը մատչելի լայն լսարանի համար, այլև ապահովում են այնպիսի միջավայր, որտեղ օգտատերը կարող է ակտիվորեն ներգրավվել՝ ուսումնասիրելով պատմությունը և մշակույթը սեփական տեմպով ու հետաքրքրությամբ: Օրինակ՝ թվային թանգարանների վիրտուալ շրջագայությունները և «Հայաստանի պատմության» թվայնացված նյութերը թույլ են տալիս սփյուռքահայ երիտասարդությանը ծանոթանալ հայ մշակույթի և պատմության կարևոր դրվագներին առանց ֆիզիկական այցելության:

բ. Լեզվի պահպանման նոր ձևեր

Հայերենով բլոգների, վլոգերի և փոդքաստների ստեղծումը նպաստում է լեզվի **թվային կենսունակությանը**: Այս միջոցները թույլ են տալիս ոչ միայն պահել լեզուն, այլև ապահովել դրա ժամանակակից հոսքը՝ ինտեգրվելով գլոբալ թվային մշակույթի մեջ: Օրինակ՝ հայկական ավանդական խոհանոցի, ժողովրդական տոների կամ չափածո ստեղծագործությունների մասին հայերեն տեսաբլոգները ստեղծում են մի առցանց միջավայր, որտեղ լեզուն և մշակույթը տարածվում են սփյուռքահայ լսարանի շրջանում:

գ. Սփյուռքահայ-հայաստանցի հաղորդակցություն և սեմիոտիկ փոխազդեցություն

Հայկական թվային միջավայրը հնարավորություն է տալիս ձևավորելու և ամրապնդելու **հիբրիդային մշակութային և ինքնության մոդելներ**: Այստեղ համադրվում են ինքնության տարբեր ընկալումներ ինչպես հայրենիքում ապրող, այնպես էլ սփյուռքահայ օգտատերերի շրջանում: Օրինակ՝ սոցիալական ցանցերում տարածված ազգային հերոսների կամ պատմական իրադարձությունների վերաբերյալ կոլաբորատիվ նախագծերը միավորում են թվային արվեստը, պատմական գիտելիքը և առօրյա համայնքային դիսկուրսը: Այս փոխազդեցությունները ստեղծում են հիբրիդային սեմիոտիկ ձևեր, որտեղ ավանդական նշանները (խաչքարեր, պատմական կերպարներ, ազգագրական

տարրեր) համատեղվում են թվային լեզվի և նոր մեդիայի խորհրդանշական միջոցների հետ՝ պահպանելով մշակութային ինքնությունը և ապահովելով հասարակության միջև շարունակական հաղորդակցություն:

Այս երեք բաղադրիչները՝ **ժառանգության թվայնացում, լեզվի պահպանության նոր ձևեր և սփյուռքահայ-հայաստանցի փոխազդեցություն**, միասին ապահովում են հայկական թվային մեդիայի դերը որպես մշակութային ինքնության պահապան, նորարարական և բազմաշերտ հանրային միջավայր՝ հարմարեցված ժամանակակից թվային պայմաններին:

Եզրակացություն

Հայկական թվային մեդիան ներկայումս ձևավորվում է որպես ինքնուրույն հաղորդակցական և նշանային համակարգ՝ սեփական օրինաչափություններով, արագ զարգացող դինամիկայով և բազմաշերտ հասարակական ազդեցությամբ: Այն այլևս միայն տեղեկատվության տարածման հարթակ չէ, այլև դարձել է հասարակական ինքնարտահայտման, հիշողության կառուցման և քաղաքական ներգրավվածության նոր միջավայր:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հայկական թվային մեդիայի հիմնական գործառույթները կարելի է համակարգել հետևյալ առանցքային ուղղություններով.

1. **Նոր հանրային միջավայրի ձևավորում** – թվային հարթակները ստեղծում են մասնակցային, արագ արձագանքող և տարածքային սահմաններից հարաբերականորեն ազատ հաղորդակցական դաշտ, որտեղ օգտատերերը դառնում են ոչ միայն տեղեկատվության սպառող, այլև ստեղծող ու տարածող:
2. **Հասարակական տրավմատիկ փորձի թվային յուրացում և մշակում –** նոր թվային հիշողության, սգո և կոլեկտիվ ապրումների արտահայտման ձևերի միջոցով թվային միջավայրը նպաստում է հասարակական փորձառության վերաիմաստավորմանը և հոգեբանական հաղորդակցությանը:
3. **Մշակութային ինքնության պահպանություն և արդիականացում –** ժառանգության թվայնացումը, հայերեն լեզվամշակութային բովանդակության ակտիվացումը և Հայրենիք–Սփյուռք թվային կապերի զարգացումը ձևավորում են շարունակական մշակութային տարածք՝ հարմարեցված ժամանակակից հաղորդակցական միջավայրին:
4. **Քաղաքական խոսույթի և ազդեցության նոր ձևերի ձևավորում –** թվային հարթակները հանդես են գալիս որպես ներքևից վերև ուղղված հաղորդակցման մոդելների տարածք, որտեղ ձևավորվում են քաղաքացիական նախաձեռնություններ, առցանց ազդեցության մեխանիզմներ և նոր մասնակցային քաղաքական մշակույթ:

Միևնույն ժամանակ, հայկական թվային մեդիայի զարգացումը ուղեկցվում է մի շարք նշանային և հաղորդակցական ռիսկերով. տեղեկատվական հակամարտությունների սրման վտանգ, պատմական հիշողության քաղաքականացման հնարավորություններ և մշակութային ինքնության մակերեսային

ներկայացման միտումներ՝ արագ սպառվող թվային բովանդակության պայմաններում։

АСТХИК АВЕТИСЯН – *Семиотическая многослойность в армянской цифровой среде: язык, изображение и публичная коммуникация*. – В статье анализируется семиотическое пространство цифровых медиа Армении как самостоятельный объект научного осмысления. Армянская цифровая медиасреда рассматривается как ключевая платформа конструирования идентичности, цифровой репрезентации и переработки коллективной травмы, а также как пространство взаимодействия с глобальными медиапотоками в условиях трансформационного общества.
Особое внимание уделяется коммуникативным и контентным практикам, формирующимся в цифровой среде, в которых происходит синтез традиционных знаково-символических кодов (армянская письменность, мотивы хачкаров, образы исторических деятелей) и современных форм цифровой культуры (мемы, нарративы успеха, короткие видеоролики).
В результате анализа выявлено, что семиотическая система армянских цифровых медиа характеризуется политизированной мультимодальностью, комбинаторным использованием исторических индексов и интенсивным развитием локально детерминированных коммуникативных практик. Данные процессы отражают гибридизацию национальных символических ресурсов и универсальных цифровых форматов.
Методологическая база исследования основана на положениях семиотики и подходах цифровых гуманитарных наук. Эмпирическую основу составляют результаты качественного анализа контента социальных сетей, онлайн-медиапроектов и материалов государственной цифровой коммуникации.

Ключевые слова: *Армения, цифровые медиа, семиотика, цифровая культура, социальные сети, мемы, идентичность, мультимодальность, исторический нарратив, коммуникация, публичная коммуникация*

ASTGHIK AVETISYAN – *Semiotic Multilayering in the Armenian Digital Environment: Language, Image, and Public Communication.*– The study focuses on communicative and content practices emerging on digital platforms, which synthesize traditional pictorial codes (Armenian script, khachkar motifs, historical figures) with the linguistic and visual forms of digital culture (memes, success stories, short video clips).
The analysis demonstrates that the semiotic system of Armenian digital media is characterized by politicized multimodality, the combinatory use of historical indices, and the rapid development of locally grounded communicative practices.
The study is methodologically based on the principles of semiotics and digital humanities research. The data corpus includes qualitative analyses of widely circulated social media content, online media projects, and materials of governmental digital communication.

Key words: *Armenia, digital media, semiotics, digital culture, social networks, memes, identity, multimodality, historical narrative, communication, public communication*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ։

Գրականության ցանկ / References

Ավետիսյան Ա.Շ., Նոր մեդիա և հաղորդակցություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2024 թ., https://doi.org/10.46991/YSUPH/9785808426597 Avetisyan, A. Š. 2024. *Nor media ev halordakcutʿyun*. EPH hrat., Erevan. DOI: https://doi.org/10.46991/YSUPH/9785808426597

Հարությունյան Ժ., Թվային հասարակության տեսական հիմքերը և զարգացումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում, Գիտական *Արցախ, № 4(15), 2022, DOI: 10.52063/25792652-2022.4.15-104* Harutʿyunyan, Ž. 2022. *Tʿvayin hasarakutʿyan tesakan himkʿery ev zargačʿumy čʿorrord ardyunaberakan hełašrjapʿoxutʿyan hamatekstum*. *Gitakan Arcʿax*, No. 4(15). DOI: 10.52063/25792652-2022.4.15-104

Avetisyan A. Sh. New media and art: processes of interaction, Journal for Armenian Studies, Vol. 1 No. 68 (2025), https://doi.org/10.24234/journalforarmenianstudies.v1i68.159

Avetisyan, A. Sh., The Impact of New Media In The Context Of The Transformation Of The Network Economy, Journal Economics, Finance and Accounting, https://doi.org/10.59503/29538009-2024.1.13-5

Peirce C. S., *The Essential Peirce: Selected Philosophical Writings*, Indiana University Press,1998.

Jenkins, H., Ito M., & Boyd D., *Participatory Culture in a Networked Era*. Polity Press., 2015, jenkins-ito-boyd-ch1.pdf

Couldry N., Hepp A., *The Mediated Construction of Reality*, Polity Press, 2017

Shifman L., *Memes in Digital Culture*, Cambridge, MA, The MIT Press, 2014.

Barthes, R. (1977). *Image–Music–Text.*

Chandler, D. (2017). *Semiotics: The Basics.*

Hall, S. (1997). *Representation: Cultural Representations and Signifying Practices.*

Kress, G., & van Leeuwen, T. (2006). *Reading Images: The Grammar of Visual Design.*

Jewitt, C. (2014). *The Routledge Handbook of Multimodal Analysis.*

Jenkins, H. (2006). *Convergence Culture.*

Papacharissi, Z. (2015). *Affective Publics.*

Castells, M. (2012). *Networks of Outrage and Hope.*

Androutsopoulos, J. (2014). *Mediatization and Sociolinguistic Change.*

Wodak, R. (2015). *The Politics of Fear.*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а
Address: 52a, Kh. Abovyanstr., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հրատարակչական խմբագիր և թողարկման պատասխանատու՝ Արմեն Հովակիմյան
Издательский редактор и ответственный выпуска Армен Овакимян
Publishing Editor and Issued by Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝ Գայանե Գրիգորյան
Контрольный корректор Гаяне Григорян
Proofreader Gayane Grigoryan

Ստորագրված է տպագրության՝ 09. 06. 2026: